30/10/2007
համար 344 Ն

«Ապահովագրության ոլորտում լիցենզավորման, գրանցման, համաձայնության, թույլտվության տրամադրման, մասնագիտական համապատասխանության ստուգման և որակավորման կարգը» Կանոնակարգ 3/01-ը հաստատելու մասին
(վերնագիրը խմբ. 20.12.11թ. թիվ 355Ն)

Սույն կանոնակարգում ներառված է ՀՀ ԿԲ խորհրդի
08.04.08թ. թիվ 104Ն, 24.06.08թ. թիվ 180 Ն, 01.07.08թ. թիվ 188-Ն, 10.03.2009թ. թիվ 57-Ն, 22.09.09թ. թիվ 278-Ն, 01.12.09թ. թիվ 360-Ն, 26.10.10թ. թիվ 281 Ն, 29.11.10թ. թիվ 315 Ն, 29.03.11թ. թիվ 79 Ն, 02.05.11թ. թիվ 120 Ն, 20.12.11թ. թիվ 355 Ն, 07.02.12թ. թիվ 38 Ն, 13.11.12թ. թիվ 311 Ն, 25.12.12թ. թիվ 372 Ն որոշմամբ կատարված փոփոխությունները

Կանոնակարգը փոփոխվել է՝

Հիմք ընդունելով «Լիցենզավորման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 10-րդ հոդվածի 4-րդ մասը, 17-րդ հոդվածի 2-րդ մասը, «Ապահովագրության և ապահովագրական գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 17-րդ հոդվածի 2-րդ մասը, 4-րդ մասը, 21-րդ հոդվածի 3-րդ մասը, 22-րդ հոդվածի 1-ին մասը, 23-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետը, 38-րդ հոդվածի 4-րդ մասը, 8-րդ մասը, 40-րդ հոդվածի 6-րդ մասը, 44-րդ հոդվածի 3-րդ մասը, 46-րդ հոդվածի 4-րդ մասը, 5-րդ մասի 4-րդ կետը, 10-րդ մասը, 47-րդ հոդվածի 1-ին մասը, 2-րդ մասը, 3-րդ մասը, 4-րդ մասը, 49-րդ հոդվածի 1-ին մասը, 51-րդ հոդվածի 1-ին և 4-րդ մասը, 88-րդ հոդվածի 3-րդ մասի 3-րդ կետը, 90-րդ հոդվածի 4-րդ մասը, 5-րդ մասի 2-րդ կետը, 97-րդ հոդվածի 2-րդ մասը, 100-րդ հոդվածը, 103-րդ հոդվածի 1-ին մասը, 107-րդ հոդվածը, «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 2-րդ հոդվածի 3-րդ մասը և 20-րդ հոդվածի «ե» կետը՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհուրդը
**(Նախաբանը փոխ. 02.05.11թ. թիվ 120Ն)**

**Ո ր ո շ ու մ է.**

1. Հաստատել «Ապահովագրության ոլորտում լիցենզավորման, գրանցման, համաձայնության, թույլտվության տրամադրման, մասնագիտական համապատասխանության ստուգման և որակավորման կարգը» Կանոնակարգ 3/01-ը՝ համաձայն Հավելվածի:

**(1-ին կետը խմբ. 20.12.11թ. թիվ 355Ն)**

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

3. Սույն որոշումն ուժի մեջ մտնելու օրվանից ուժը կորցրած ճանաչել Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2006 թվականի օգոստոսի 1-ի ««Ապահովագրական գործունեություն իրականացնողի լիցենզավորման, մասնաճյուղերի գրանցման և ապահովագրական գործունեություն իրականացնողի կանոնադրական կապիտալում բաժնեմաս (բաժնետոմս) կամ փայամասնակցություն ձեռք բերելու համար նախնական համաձայնություն ստանալու կարգը», «Ապահովագրական գործունեություն իրականացնողների ղեկավարների, ակտուարի և գործակալի մասնագիտական

որակավորման պահանջներն ու որակավորման ստուգման կարգը», «Ապահովագրողի գործունեության երեք տարվա գործարար ծրագրի ներկայացման կարգը» հաստատելու մասին» թիվ 476 Ն որոշումը, Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2006 թվականի օգոստոսի 1-ի «Ապահովագրական գործունեություն իրականացնողների ղեկավարների, ինչպես նաև գործակալի թեկնածուների մասնագիտական որակավորման ստուգման թեմաների ցանկը հաստատելու մասին» թիվ 477 Ն որոշումը:

**Հայաստանի Հանրապետության**
**կենտրոնական բանկի նախագահ** **Տ. Սարգսյան**

Հավելված
Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի
2007 թվականի հոկտեմբերի 30-ի թիվ 344 Ն որոշման

# «ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏՈՒՄ ԼԻՑԵՆԶԱՎՈՐՄԱՆ, ԳՐԱՆՑՄԱՆ, ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅԱՆ, ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅԱՆ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ, ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՍՏՈՒԳՄԱՆ ԵՎ ՈՐԱԿԱՎՈՐՄԱՆ ԿԱՐԳԸ» ԿԱՆՈՆԱԿԱՐԳ 3/01

(վերնագիրը խմբ. 20.12.11թ. թիվ 355Ն)

## ԲԱԺԻՆ I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

### ԳԼՈՒԽ 1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Սույն կանոնակարգը սահմանում է.

1) Հայաստանի Հանրապետության տարածքում ապահովագրական ընկերության (վերաապահովագրական ընկերության), օտարերկրյա ապահովագրական ընկերության (վերաապահովագրական ընկերության) մասնաճյուղի գրանցման և լիցենզավորման կարգը,

2) օտարերկրյա ապահովագրական ընկերության (վերաապահովագրական ընկերության) ներկայացուցչության, ապահովագրական ընկերության (վերաապահովագրական ընկերության)՝ Հայաստանի Հանրապետության տարածքում մասնաճյուղի և ներկայացուցչության գրանցման կարգը,

3) ապահովագրական ընկերության (վերաապահովագրական ընկերության)՝ Հայաստանի Հանրապետության տարածքից դուրս մասնաճյուղ և ներկայացուցչություն ստեղծելու համաձայնություն ստանալու կարգը,

4) Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի կողմից գրանցվող կանոնադրություններում, ղեկավարների կազմում կատարված փոփոխությունների գրանցման կարգը,

5) ապահովագրական ընկերության (վերաապահովագրական ընկերության) մասնաճյուղի և ներկայացուցչության գործունեության դադարեցման (ներառյալ՝ ժամանակավոր դադարեցման) կարգը և պայմանները,

6) ապահովագրական ընկերության (վերաապահովագրական ընկերության) կանոնադրական կապիտալում նշանակալից մասնակցություն ձեռք բերելու համար նախնական համաձայնություն ստանալու կարգը,

7) ապահովագրական ընկերության (վերաապահովագրական ընկերության) ֆինանսական վիճակի վատթարացման դեպքերը,

8) ապահովագրական ընկերության (վերաապահովագրական ընկերության), օտարերկրյա ապահովագրական ընկերության (վերաապահովագրական ընկերության) մասնաճյուղի, ապահովագրական ընկերության (վերաապահովագրական ընկերության) մասնաճյուղի և ապահովագրական բրոքերային ընկերության գործունեության տարածքի և տեխնիկական հագեցվածության նկատմամբ պահանջները,

9) ապահովագրական ընկերության (վերաապահովագրական ընկերության), օտարերկրյա ապահովագրական ընկերության (վերաապահովագրական

ընկերության), ապահովագրական ընկերության (վերաապահովագրական ընկերության) մասնաճյուղի գործարար ծրագրի ձևը, ինչպես նաև գործարար ծրագրի և դրանում կատարվող փոփոխությունների ներկայացման կարգը և ժամկետները,

10) ապահովագրական ընկերության (վերաապահովագրական ընկերության), օտարերկրյա ապահովագրական ընկերության (վերաապահովագրական ընկերության) մասնաճյուղի կողմից պարբերաբար ներկայացվող հաշվետվությունները և տեղեկությունները,

11) ապահովագրական բրոքերային գործունեության լիցենզավորման կարգը, ապահովագրական բրոքերային ընկերության՝ Հայաստանի Հանրապետությունում կամ օտարերկրյա պետությունում մասնաճյուղ և ներկայացուցչություն ստեղծելու թույլտվություն ստանալու կարգը,

12) ապահովագրական բրոքերային ընկերության կողմից փոփոխությունների ներկայացման կարգը և ձևը,

13) ապահովագրական գործակալների հաշվառման կարգը, ապահովագրական գործակալի՝ Հայաստանի Հանրապետությունում կամ օտարերկրյա պետությունում մասնաճյուղ և ներկայացուցչություն ստեղծելու թույլտվություն ստանալու կարգը,

14) ապահովագրական միջնորդի ապահովագրական պատասխանատվության չափը, ապահովագրական գործակալ համարվելու համար տարեկան ապահովագրավճարների գումարը,

15) ղեկավարներին, պատասխանատու անձանց ներկայացվող մասնագիտական համապատասխանության և որակավորման չափանիշները, մասնագիտական համապատասխանության ստուգման և որակավորման կարգը, ղեկավարների ու պատասխանատու անձանց գրանցման, ղեկավարների ու պատասխանատու անձանց թեկնածուների մասնագիտական որակավորման ստուգման թեմաների ցանկը,

16) ներդրումային գործունեության հետ կապված գործարքի կամ գործառնության իրականացման վերաբերյալ Կենտրոնական բանկի նախնական համաձայնությունը ստանալու կարգը:

**(1-ին կետը խմբ. 20.12.11թ. թիվ 355Ն)**

2. (2-րդ կետը ուժը կորցրել է 20.12.11թ. թիվ 355 Ն որոշմամբ):

3. Սույն կանոնակարգով պահանջվող բոլոր փաստաթղթերը Կենտրոնական բանկ են ներկայացվում տպագիր և հայերեն՝ պատվիրված նամակով կամ առձեռն մուտքագրվում են Կենտրոնական բանկ կամ ներկայացվում են էլեկտրոնային տարբերակով՝ Սի-Բի-Էյ-նեթ համակարգի միջոցով, եթե այլ բան նախատեսված չէ սույն կանոնակարգով: Ընդ որում, տպագիր եղանակով ներկայացվող փաստաթղթերի պատճենները պետք է ստորագրված լինեն համապատասխան իրավասու անձի կողմից և ներկայացվեն «իսկականի հետ ճիշտ է» մակագրությամբ:

**(3-րդ կետը լրաց. 10.03.09թ. թիվ 57Ն, խմբ. 20.12.11թ. թիվ 355Ն)**

3.1 Գործող ապահովագրական ընկերությունների, օտարերկրյա

ապահովագրական ընկերությունների մասնաճյուղերի, օտարերկրյա ապահովագրական ընկերությունների ներկայացուցչությունների, ապահովագրական ընկերությունների՝ Հայաստանի Հանրապետությունում տարածքային ստորաբաժանումների կանոնադրությունները (դրանցում փոփոխությունները, լրացումները) Կենտրոնական բանկ են ներկայացվում էլեկտրոնային եղանակով «Փի Դի Էֆ» ֆորմատով էլեկտրոնային-թվային ստորագրությամբ՝ Սի-Բի-Էյ-նեթ համակարգի միջոցով, իսկ անհնարինության դեպքում՝ էլեկտրոնային կրիչով: Նոր ստեղծվող ապահովագրական ընկերությունները, օտարերկրյա ապահովագրական ընկերությունների մասնաճյուղերը, օտարերկրյա ապահովագրական ընկերությունների ներկայացուցչությունները կանոնադրությունները ներկայացնում են թղթային եղանակով, իսկ Կենտրոնական բանկի կողմից գրանցվելուց և/կամ լիցենզավորվելուց հետո, երբ արդեն միացված են Սի-Բի-Էյ-նեթ ցանցին և ստացել են անվտանգության համապատասխան հավաստագրերը, արդեն Կենտրոնական բանկի կողմից գրանցված կանոնադրությունները կրկին ներկայացնում են Կենտրոնական բանկ էլեկտրոնային եղանակով «Փի Դի Էֆ» ֆորմատով էլեկտրոնային-թվային ստորագրությամբ՝ Սի-Բի-Էյ-նեթ համակարգի միջոցով, իսկ անհնարինության դեպքում՝ էլեկտրոնային կրիչով: Ընդ որում, սույն կետով սահմանված կանոնադրությունները (դրանցում փոփոխությունները, լրացումները) պետք է ունենան սույն կանոնակարգի Հավելված 12-ով սահմանված ձևի տիտղոսաթերթ:

**(3.1 կետը լրաց. 01.07.08թ. թիվ 188Ն, փոխ., խմբ. 20.12.11թ. թիվ 355Ն)**

3.2 (3.2 կետը լրաց. 01.12.09թ. թիվ 360Ն, ուժը կորցրել է 20.12.11թ. թիվ 355 Ն որոշմամբ):

3.3. Սույն կանոնակարգով նախատեսված կարգով Կենտրոնական բանկ ներկայացված ապահովագրական ընկերությունների, օտարերկրյա ապահովագրական ընկերությունների մասնաճյուղերի, օտարերկրյա ապահովագրական ընկերությունների ներկայացուցչությունների, ապահովագրական ընկերությունների՝ Հայաստանի Հանրապետությունում տարածքային ստորաբաժանումների կանոնադրությունները (դրանցում փոփոխությունները, լրացումները) տեղադրվում են file.cba.am ինտերնետային կայքում՝ կանոնադրությունները (դրանցում փոփոխությունները, լրացումները) Կենտրոնական բանկում գրանցվելուց հետո 3 աշխատանքային օրվա ընթացքում: Ընդ որում, գրանցված կանոնադրությունները տրամադրվում են համապատասխան անձին էլեկտրոնային տարբերակով՝ Սի-Բի-Էյ-նեթ համակարգի միջոցով, իսկ անհնարինության դեպքում՝ էլեկտրոնային կրիչով: Նոր ստեղծվող ապահովագրական ընկերությունների, օտարերկրյա ապահովագրական ընկերությունների մասնաճյուղերի, օտարերկրյա ապահովագրական ընկերությունների ներկայացուցչությունների համար սույն կետով սահմանված եռօրյա ժամկետը հաշվարկվում է կանոնադրությունների էլեկտրոնային տարբերակները Կենտրոնական բանկ ներկայացնելու օրվանից:

**(3.3 կետը լրաց. 20.12.11թ. թիվ 355Ն)**

3.4. Սույն կանոնակարգի 61-րդ կետի 5-րդ ենթակետով, 103-րդ կետի 1-ին ենթակետի «ա» պարբերությամբ, 186.1 կետի 6-րդ ենթակետի «ա» պարբերությամբ պահանջվող կանոնադրությունները 2012 թվականի հուլիսի 1-ից ներկայացվում են միայն օտարերկրյա իրավաբանական անձանց համար: 2012 թվականի հուլիսի 1-ից սույն կանոնակարգի 100.1 կետով պահանջվող փաստաթղթի փոխարեն ներկայացվում է ապահովագրական բրոքերի մասնաճյուղի կամ ներկայացուցչության պետական գրանցման համարը, սույն կանոնակարգի 102.3-րդ կետի 3-րդ ենթակետով պահանջվող փաստաթուղթը չի ներկայացվում, իսկ սույն կանոնակարգի 45-րդ կետի 3-րդ ենթակետով պահանջվող կանոնադրությունները մինչև 2012 թվականի մարտի 1-ը ներկայացվում են 3 օրինակից:

**(3.4 կետը լրաց. 20.12.11թ. թիվ 355Ն)**

3.5. Սույն կանոնակարգով սահմանված դեպքերում վարկանշող կազմակերպությունների կողմից տրված վարկանիշերը կիրառելիս անհրաժեշտ է առաջնորդվել հետևյալ սկզբունքով, եթե այլ բան նախատեսված չէ սույն կանոնակարգով.

1) Եթե կազմակերպությունն ունի սույն կանոնակարգում նշված միայն մեկ վարկանշող կազմակերպության կողմից տրված վարկանիշ, ապա հիմք է ընդունվում միայն տվյալ վարկանիշը,

2) Եթե կազմակերպությունն ունի երկու տարբեր վարկանիշ՝ տրամադրված սույն կանոնակարգում նշված տարբեր վարկանշող կազմակերպությունների կողմից, ապա հիմք է ընդունվում ամենացածր վարկանիշը,

3) Եթե կազմակերպությունն ունի երեք և ավելի վարկանիշ՝ տրամադրված սույն կանոնակարգում նշված տարբեր վարկանշող կազմակերպությունների կողմից, ապա հիմք է ընդունվում երկու ամենաբարձր վարկանիշերից առավել ցածր վարկանիշը:

**(3.5 կետը լրաց. 20.12.11թ. թիվ 355Ն)**

3.6. Սույն կանոնակարգով սահմանված ապահովագրական ընկերության գործադիր տնօրենի որակավորման պահանջները և ընթացակարգերը տարածվում են նաև ապահովագրական ընկերության լուծարային հանձնաժողովի նախագահի և անդամների, ինչպես նաև ապահովագրական ընկերության ադմինիստրացիայի ղեկավարի և լուծարային կառավարչի վրա:

**(3.6 կետը լրաց. 20.12.11թ. թիվ 355Ն)**

3.7. Սույն կանոնակարգով սահմանված ապահովագրական ընկերության գործադիր տնօրենի, ներքին աուդիտի, գլխավոր հաշվապահի, պատասխանատու ակտուարի մասնագիտական համապատասխանության, որակավորման և Կենտրոնական բանկում գրանցման պահանջները և ընթացակարգերը տարածվում են համապատասխանաբար «Հայաստանի ավտոապահովագրողների բյուրո» իրավաբանական անձանց միության (այսուհետ՝ Բյուրո) գործադիր տնօրենի, ներքին աուդիտի, գլխավոր

հաշվապահի, պատասխանատու ակտուարի վրա:

**(3.7 կետը լրաց. 20.12.11թ. թիվ 355Ն)**

3.8. Օրենքով և այլ իրավական ակտերով սահմանված դեպքերում կանոնադրական կապիտալի համալրումը (կանոնադրական կապիտալի յուրաքանչյուր ավելացումը) Կենտրոնական բանկում բացվող կուտակային հաշվի միջոցով իրականացնելու դեպքում ապահովագրական ընկերության հիմնադիրները (ապահովագրական ընկերությունը) Կենտրոնական բանկ են ներկայացնում կուտակային հաշիվ բացելու վերաբերյալ դիմում՝ համաձայն սույն կանոնակարգի Հավելված 2զ-ի:

**(3.8 կետը լրաց. 20.12.11թ. թիվ 355Ն)**

3.9. Սույն կանոնակարգով սահմանված լիցենզավորման, գրանցման, հաշվառման, համաձայնության ստացման, նախնական համաձայնության ստացման, թույլտվության ստացման համար Կենտրոնական բանկ ներկայացված փաստաթղթերում ոչ էական թերությունների (վրիպումներ, ոչ իրավաբանական անճշտություններ, թվաբանական սխալներ և/կամ նման այլ բացթողումներ) առկայության դեպքում Կենտրոնական բանկի կողմից համապատասխան որոշումը կայացվում է այդ թերությունները վերացնելուց հետո: Այդ դեպքում համապատասխան դիմումը ներկայացված է համարվում փոփոխված տեղեկությունները և փաստաթղթերը Կենտրոնական բանկի կողմից ստանալու պահից:

**(3.9 կետը լրաց. 20.12.11թ. թիվ 355Ն)**

3.10. Կենտրոնական բանկ սույն կանոնակարգի համաձայն փաստաթղթեր ներկայացնելիս ներկայացվող փաստաթղթերին կից ներկայացվում է նաև «Ներկայացվող փաստաթղթերի ցանկը»՝ համաձայն սույն կանոնակարգի Հավելված 2թ-ի՝ ստորագրված և կնքված (կնիքի առկայության դեպքում) իրավասու անձի կողմից: Ցանկում նշվում են սույն կանոնակարգով համապատասխան գործընթացի համար սահմանված փաստաթղթերը հերթական դասավորությամբ:

**(3.10 կետը լրաց. 20.12.11թ. թիվ 355Ն)**

## ԳԼՈՒԽ 2. ՍՈՒՅՆ ԿԱՆՈՆԱԿԱՐԳՈՒՄ ՕԳՏԱԳՈՐԾՎՈՂ ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

4. Սույն կանոնակարգի իմաստով՝
   1) «ապահովագրական ընկերություն»՝ ապահովագրական և վերաապահովագրական ընկերություն,
   2) «ղեկավար»՝ ապահովագրական ընկերության ղեկավարը և ապահովագրական բրոքերային ընկերության պատասխանատու անձը,
   3) «հանձնաժողով»՝ Կենտրոնական բանկի լիցենզավորման և վերահսկողության հանձնաժողովը,
   4) «Կենտրոնական բանկի կողմից վերահսկվող անձ»՝ , «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» Հայաստանի

Հանրապետության օրենքի կամ այլ օրենքների համաձայն Կենտրոնական բանկի կողմից վերահսկվող անձ,

5) «թեկնածու»՝ որակավորման ստուգում անցնելու համար դիմած անձ,
6) «ֆինանսական խումբ (միություն)»՝ որևէ երկրի օրենսդրության իմաստով՝ ֆինանսական խումբ կամ ֆինանսական միություն,
7) «ֆինանսական կազմակերպություն»՝ բանկ, վարկային կազմակերպություն, ապահովագրական ընկերություն, ներդրումային ընկերություն, ներդրումային ֆոնդի կառավարիչ, կորպորատիվ ֆոնդ, Բյուրո, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության օրենքների և (կամ) այլ իրավական ակտերի համաձայն ֆինանսական կազմակերպություն համարվող այլ անձինք,
8) «սեփական մասնակցության առավելագույն չափ»՝ ապահովագրության առանձին դասի (և/կամ ենթադասի) գծով կնքվող ապահովագրության պայմանագրերի (այդ թվում՝ համաապահովագրության պայմանագրերի և վերաապահովագրության ընդունած պայմանագրերի) գծով ստանձնած ռիսկի մաս (տոկոսային արտահայտությամբ կամ բացարձակ մեծությամբ), որն ապահովագրական ընկերությունը կարող է ստանձնել ինքնուրույն՝ չխաթարելով իր ֆինանսական կայունությունը և բնականոն գործունեությունը,
9) «Հավաստագիր»՝ Մեծ Բրիտանիայի ակտուարների միության կողմից անցկացվող ակտուարական որակավորման դասընթացների հիմնական փուլի հավաստագիր:

**(4-րդ կետը լրաց., խմբ. 01.12.09թ. թիվ 360Ն, փոխ. խմբ. 20.12.11թ. թիվ 355Ն)**

## ԳԼՈՒԽ 3. ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՎԻՃԱԿԻ ՎԱՏԹԱՐԱՑՈՒՄ

5. Սույն կանոնակարգի իմաստով՝ ապահովագրական ընկերության ֆինանսական վիճակի առկա կամ հնարավոր վատթարացում են համարվում հետևյալ դեպքերը, երբ.

1) **(1-ին ենթակետը ուժը կորցրել է 01.12.09թ. թիվ 360 Ն որոշմամբ)**
2) ապահովագրական ընկերությունը խախտել է հիմնական տնտեսական նորմատիվը (նորմատիվները), կամ հավանական է հիմնական տնտեսական նորմատիվի (նորմատիվների) խախտումը, և (կամ)
3) ապահովագրական ընկերության մոտ հավանական է «Բանկերի, վարկային կազմակերպությունների և ապահովագրական ընկերությունների սնանկության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 2-րդ հոդվածում սահմանված անվճարունակության հիմքերի առաջացումը:

# ԲԱԺԻՆ II. ԼԻՑԵՆԶԱՎՈՐՄԱՆ (ԳՐԱՆՑՄԱՆ, ՀԱՇՎԱՌՄԱՆ) ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

**(Բաժին II-ի վերնագիրը խմբ. 20.12.11թ. թիվ 355Ն)**

## ԳԼՈՒԽ 4. ԼԻՑԵՆԶԻԱՅԻ (ԳՐԱՄՑՄԱՆ, ՀԱՇՎԱՌՄԱՆ ՎԿԱՅԱԿԱՆԻ) ԵՎ ԼԻՑԵՆԶԻԱՅԻ (ԳՐԱՆՑՄԱՆ< ՀԱՇՎԱՌՄԱՆ ՎԿԱՅԱԿԱՆԻ) ԿՐԿՆՕՐԻՆԱԿԻ ՏՐԱՄԱԴՐՈՒՄԸ

6. Ապահովագրական ընկերությանը, օտարերկրյա ապահովագրական ընկերության մասնաճյուղին, ապահովագրական բրոքերային ընկերությանը լիցենզիան տրվում է՝ համաձայն սույն կանոնակարգի համապատասխանաբար հավելված 1ա-ի, հավելված 1բ-ի, հավելված 1գ-ի և հավելված 1դ-ի: Ընդ որում, սույն կանոնակարգի հավելված 1ա-ում և հավելված 1բ-ում «Ապահովագրության դասը» տողում լրացվում են ապահովագրության այն դասերը, որոնց իրականացման համար ապահովագրական ընկերությունը, օտարերկրյա ապահովագրական ընկերության մասնաճյուղը ստացել է լիցենզիա:

6.1. Ապահովագրական ընկերության գրանցման վկայականը տրվում է համաձայն սույն կանոնակարգի հավելված 7ա-ի, օտարերկրյա ապահովագրական ընկերության մասնաճյուղի (ներկայացուցչության) գրանցման վկայականը՝ համաձայն հավելված 7բ-ի, ապահովագրական ընկերության՝ Հայաստանի Հանրապետության տարածքում ստեղծվող տարածքային ստորաբաժանման գրանցման վկայականը՝ համաձայն հավելված 7գ-ի, իսկ ապահովագրական գործակալի հաշվառման վկայականը՝ համաձայն հավելված 7դ-ի:

**(6.1 կետը փոխ. 13.11.12թ. թիվ 311Ն)**

7. Լիցենզիան (գրանցման, հաշվառման վկայականը) տրվում է մեկ օրինակով:

8. Կենտրոնական բանկը լիցենզավորված անձին լիցենզիան տրամադրելիս ծանուցում է, որ ապահովագրական գործունեությունը կարգավորող նորմատիվ իրավական ակտերի ցանկը գտնվում է Կենտրոնական բանկի պաշտոնական ինտերնետային կայքում:

9. Լիցենզիայի (գրանցման, հաշվառման վկայականի) կորստի կամ ոչնչացման դեպքում համապատասխան անձը Կենտրոնական բանկ դիմում է ներկայացնում լիցենզիայի (գրանցման, հաշվառման վկայականի) կրկնօրինակը ստանալու համար՝ նախօրոք լիցենզիայի (գրանցման, հաշվառման վկայականի) կորստի կամ ոչնչացման մասին հայտարարություն տալով զանգվածային լրատվության միջոցով: Լիցենզիայի կրկնօրինակը ստանալու համար դիմելու դեպքում դիմումին կցվում է լիցենզիայի կրկնօրինակը ստանալու համար պետական տուրքի վճարման անդորրագիրը:

10. Կենտրոնական բանկը կորած կամ ոչնչացած լիցենզիայի (գրանցման, հաշվառման վկայականի) կրկնօրինակը համապատասխան անձին տալիս է համապատասխան դիմումը Կենտրոնական բանկ ներկայացնելու օրվան հաջորդող 10-օրյա ժամկետում:

11. Կորած լիցենզիան (գրանցման, հաշվառման վկայականը) գտնելու դեպքում համապատասխան անձը գտնված լիցենզիան (գրանցման, հաշվառման վկայականը) վերադարձնում է Կենտրոնական բանկ:

12. Լիցենզիան (գրանցման, հաշվառման վկայականը) օգտագործման համար ոչ պիտանի դառնալու (վնասվելու, պատռվելու, տառերը ջնջվելու և այլն)

դեպքում համապատասխան անձը դիմում է ներկայացնում Կենտրոնական բանկ (լիցենզիայի (գրանցման, հաշվառման վկայականի) կրկնօրինակը ստանալու համար)՝ կցելով լիցենզիայի (գրանցման, հաշվառման վկայականի) բնօրինակը, իսկ լիցենզիայի կրկնօրինակը ստանալու համար՝ նաև պետական տուրքի վճարման անդորրագիրը:

13. Կենտրոնական բանկը ոչ պիտանի դարձած լիցենզիայի (գրանցման, հաշվառման վկայականի) կրկնօրինակը համապատասխան անձին տալիս է նրա կողմից պահանջվող բոլոր փաստաթղթերը Կենտրոնական բանկ ներկայացնելու օրվանից հետո տասնօրյա ժամկետում:

13.1. Լիցենզիայի (գրանցման, հաշվառման վկայականի) կրկնօրինակի վերին աջ անկյունում կատարվում է «Կրկնօրինակ» նշագրումը:

14. Լիցենզիայի (գրանցման, հաշվառման վկայականի) կրկնօրինակի կորստի. ոչնչացման, օգտագործման համար ոչ պիտանի դառնալու դեպքում լիցենզիայի (գրանցման, հաշվառման վկայականի) նոր կրկնօրինակը տրվում է սույն գլխով սահմանված կարգով:

(Գլուխ 4-ը լրաց., փոխ. խմբ. **01.07.08թ. թիվ 188Ն, խմբ. 20.12.11թ. թիվ 355Ն)**

## ԳԼՈՒԽ 5. ԼԻՑԵՆԶԻԱՅԻ ՎԵՐԱՁԵՎԱԿԵՐՊՈՒՄԸ, ԳՐԱՆՑՄԱՆ, ՀԱՇՎԱՌՄԱՆ ՎԿԱՅԱԿԱՆՆԵՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՏԱՐՈՒՄԸ

15. Լիցենզիայի վերաձևակերպման համար լիցենզավորված անձը Կենտրոնական բանկ ներկայացնում է լիցենզիայի վերաձևակերպման մասին դիմում՝ կցելով համապատասխան փոփոխությունները կատարելու համար հիմք հանդիսացող փաստաթղթերը և լիցենզիայի վերաձևակերպման համար նախատեսված պետական տուրքի վճարման անդորրագիրը:

16. Լիցենզիայի վերաձևակերպումն իրականացվում է Կենտրոնական բանկի որոշմամբ՝ հանձնաժողովի դրական եզրակացության հիման վրա, լիցենզավորված անձի համապատասխան դիմումը Կենտրոնական բանկ ներկայացնելուց հետո երեսուն օրվա ընթացքում: Ընդ որում՝ սույն կետով նախատեսված Կենտրոնական բանկի որոշման ընդունումից հետո լիցենզիայի նոր օրինակը տրամադրվում է լիցենզավորված անձին լիցենզիայի հին օրինակը Կենտրոնական բանկ վերադարձնելու դեպքում:

16.1. Կենտրոնական բանկը կարող է կասեցնել լիցենզիայի վերաձևակերպման 30-օրյա ժամկետը մինչև մեկ ամիս ժամկետով, եթե լիցենզիայի վերաձևակերպումը պայմանավորված է օրենքով կամ սույն կանոնակարգով նախատեսված այլ գործընթացների իրականացմամբ

17. Ապահովագրական գործակալի հաշվառման վկայականում փոփոխություններ կատարելու համար ապահովագրական ընկերությունը կարող է Կենտրոնական բանկ ներկայացնել հաշվառման վկայականում փոփոխություններ կատարելու դիմում՝ կցելովհամապատասխան փոփոխությունը կատարելու համար հիմք հանդիսացող փաստաթղթերը: Հաշվառման վկայականում փոփոխությունները կատարվում են անձի կողմից սույն կետով

սահմանված փաստաթղթերը Կենտրոնական բանկ ներկայացնելուց հետո 10 աշխատանքային օրվա ընթացքում: Ընդ որում՝ համապատասխան փոփոխությունները կատարելուց հետո հաշվառման վկայականի նոր օրինակը դիմում ներկայացրած ապահովագրական ընկերության միջոցով տրամադրվում է ապահովագրական գործակալին հաշվառման վկայականի հին օրինակը Կենտրոնական բանկ վերադարձնելու դեպքում:

17.1. Եթե կանոնադրության փոփոխությունը ենթադրում է նաև գրանցման վկայականի փոփոխություն, ապա Կենտրոնական բանկի կողմից կանոնադրությունը գրանցելուց հետո անձը 3-օրյա ժամկետում հին գրանցման վկայականը ներկայացնում է Կենտրոնական բանկ և ստանում գրանցման վկայականի նոր օրինակը:

**(Գլուխ 5-ը լրաց. 22.09.09թ. թիվ 278Ն, խմբ. 20.12.11թ. թիվ 355Ն)**

## ԳԼՈՒԽ 6. ԼԻՑԵՆԶԻԱՆ (ԳՐԱՆՑՄԱՆ, ՀԱՇՎԱՌՄԱՆ ՎԿԱՅԱԿԱՆԸ) ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿ ՎԵՐԱԴԱՐՁՆԵԼՈՒ ԿԱՐԳԸ

18. Օրենքով սահմանված հիմքերով ապահովագրական ընկերության, օտարերկրյա ապահովագրական ընկերության մասնաճյուղի և ապահովագրական բրոքերային գործունեության լիցենզիան ուժը կորցրած ճանաչվելու դեպքում եռօրյա ժամկետում ապահովագրական ընկերությունը, օտարերկրյա ապահովագրական ընկերության մասնաճյուղը կամ ապահովագրական բրոքերային ընկերությունը կից գրությամբ լիցենզիան, իսկ օտարերկրյա ապահովագրական ընկերության մասնաճյուղի դեպքում՝ նաև օտարերկրյա ապահովագրական ընկերության մասնաճյուղի գրանցման վկայականը վերադարձնում է Կենտրոնական բանկ:

18.1. Ապահովագրական ընկերության լուծարային հաշվեկշիռը Կենտրոնական բանկի կողմից հաստատելու մասին որոշումը կայացնելու պահից երեք աշխատանքային օրվա ընթացքում ապահովագրական ընկերությունը կից գրությամբ ապահովագրական ընկերության, ապահովագրական ընկերության՝ Հայաստանի Հանրապետությունում գործող տարածքային ստորաբաժանումների, ինչպես նաև ապահովագրական ընկերության ֆիրմային անվանման գրանցման վկայականները վերադարձնում է Կենտրոնական բանկ:

18.2. Օտարերկրյա ապահովագրական ընկերության ներկայացուցչության, ապահովագրական ընկերության՝ Հայաստանի Հանրապետության տարածքում ստեղծված տարածքային ստորաբաժանման գործունեության դադարման դեպքում երեք աշխատանքային օրվա ընթացքում կից գրությամբ Կենտրոնական բանկ են վերադարձվում համապատասխան գրանցման վկայականները:

18.3. Օրենքով և այլ իրավական ակտերով սահմանված հիմքերով ապահովագրական գործակալին ապահովագրական միջնորդների ռեգիստրի հաշվառումից հանելու վերաբերյալ Կենտրոնական բանկի ծանուցումը ստանալուց հետո երեք աշխատանքային օրվա ընթացքում տվյալ ապահովագրական գործակալի հետ ապահովագրական գործակալի գործառնություններ իրականացնելու պայմանագիր կնքած ապահովագրական ընկերությունը Կենտրոնական բանկ է վերադարձնում ապահովագրական

գործակալի հաշվառման վկայականը: Ընդ որում, եթե ապահովագրական գործակալը ապահովագրական միջնորդային գործունեություն է իրականացնում մի քանի ապահովագրական ընկերության անունից, ապա սույն կետով սահմանված պահանջը յուրաքանչյուր ապահովագրական ընկերության մասով համարվում է կատարված, եթե նրանցից որևէ մեկը սույն կանոնակարգով սահմանված կարգով Կենտրոնական բանկ է վերադարձրել ապահովագրական գործակալի հաշվառման վկայականը:

18.4. Եթե ապահովագրական ընկերությունը ապահովագրական գործակալի անունից դիմում է Կենտրոնական բանկ ապահովագրական գործակալին ապահովագրական միջնորդների ռեգիստրից հանելու միջնորդությամբ, ապա դիմումին կից Կենտրոնական բանկ է վերադարձվում ապահովագրական գործակալի հաշվառման վկայականը:

19. Լիցենզիան ուժը կորցրած ճանաչելու, ապահովագրական ընկերության լուծարային հաշվեկշիռը հաստատելու, տարածքային ստորաբաժանման գործունեությունը դադարելու, ապահովագրական գործակալին միջնորդների ռեգիստրից հանելու մասին Կենտրոնական բանկի որոշման բողոքարկումը հիմք չէ սահմանված ժամկետում համապատասխան լիցենզիան (գրանցման, հաշվառման վկայականը) չվերադարձնելու համար:

**(Գլուխ 6-ը լրաց. 01.07.08թ. թիվ 188Ն, խմբ. 20.12.11թ. թիվ 355Ն)**

## ԳԼՈՒԽ 7. ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ, ՕՏԱՐԵՐԿՐՅԱ ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՄԱՍՆԱՃՅՈՒՂԻ, ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՄԱՍՆԱՃՅՈՒՂԻ, ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԲՐՈՔԵՐԻ, ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԲՐՈՔԵՐԻ ՄԱՍՆԱՃՅՈՒՂԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔԻ ԵՎ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՀԱԳԵՑՎԱԾՈՒԹՅԱՆ ՆԿԱՏՄԱՄԲ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ

(վերնագիրը լրաց. 20.12.11թ. թիվ 355Ն)

20. Ապահովագրական ընկերությունը, օտարերկրյա ապահովագրական ընկերության մասնաճյուղը կամ ապահովագրական ընկերության մասնաճյուղը պետք է ունենան`

1) ապահովագրական ընկերությանը (իսկ օտարերկրյա ապահովագրական ընկերության մասնաճյուղի դեպքում` հիմնադիր ապահովագրական ընկերությանը) սեփականության իրավունքով պատկանող, վարձակալությամբ (ենթավարձակալությամբ) կամ անհատույց օգտագործման իրավունքով իրեն պատկանող Հայաստանի Հանրապետության տարածքում գտնվող առանձնացված տարածք,
2) կանխիկ դրամով գործառնություններ կատարելու դեպքում ապահովադիրների դրամարկղային սպասարկումն իրականացնելու, կանխիկ դրամի հուսալի պահպանության համար դրամարկղային հանգույց (առանձնացված ապահովագրական ընկերության, օտարերկրյա ապահովագրական ընկերության մասնաճյուղի կամ ապահովագրական ընկերության մասնաճյուղի մյուս կառուցվածքային ստորաբաժանումներից)` դրամապահոց և գործառնական դրամարկղ: Դրամապահոցը կանխիկ դրամի պահպանման հիմնական վայրն է` իր նախադրամապահոցով: Դրամապահոցի բացակայության դեպքում

անհրաժեշտ է ինկասացիոն ծառայության հետ կնքված պայմանագիր՝ նշված միջոցների ամենօրյա տեղափոխման, հանձնման համար, ինչպես նաև որևէ բանկի կամ վարկային կազմակերպության հետ կնքված պայմանագիր, եթե նշված միջոցները պահպանման են հանձնվելու բանկ, վարկային կազմակերպություն կամ դրանց տարածքային ստորաբաժանում: Դրամապահոցի բացակայության պարագայում ապահովագրական ընկերությունը, օտարերկրյա ապահովագրական ընկերության մասնաճյուղը կամ ապահովագրական ընկերության մասնաճյուղը կարող են չիրականացնել դրամարկղում առկա կանխիկ դրամի ինկասացում, եթե դրամարկղում կանխիկ դրամի տվյալ օրվա մնացորդը չի գերազանցում 5 միլիոն ՀՀ դրամը և ապահովագրական ընկերությունում, օտարերկրյա ապահովագրական ընկերության մասնաճյուղում կամ ապահովագրական ընկերության մասնաճյուղում տեղադրված է հատուկ չհրկիզվող պահարան, որն ամրացված է դրամարկղի հատակին ու պատին: Սույն ենթակետը չի տարածվում այն ապահովագրական ընկերության, օտարերկրյա ապահովագրական ընկերության մասնաճյուղերի կամ ապահովագրական ընկերության մասնաճյուղի վրա, որոնց կանոնադրությամբ սահմանված է, որ գործառնություններն իրականացվում են բացառապես անկանխիկ ձևով:

3) ապահովագրության վկայագրերի պահպանման համար առանձին պահոց,
4) պահպանիչ-հակահրդեհային ազդարարման, անվտանգության ահազանգման համակարգ, որի էլեկտրասնուցումը կատարվում է տարբեր աղբյուրներից, որոնցից մեկը կարող է լինել տեղային (լոկալ): Սույն ենթակետը չի տարածվում ապահովագրական ընկերության մասնաճյուղի վրա:

**(20-րդ կետը լրաց. 01.12.09թ. թիվ 360Ն, լրաց. 20.12.11թ. թիվ 355Ն)**

20.1. Ապահովագրական ընկերության գրանցման և լիցենզավորման ժամանակ նոր ստեղծվող ապահովագրական ընկերությունը համարվում է սույն կանոնակարգի 20-րդ կետի 1-ին ենթակետով սահմանված պահանջին բավարարող, եթե համապատասխան առանձնացված տարածքի նկատմամբ իրավունքներ ունեցող անձը տրամադրել է պարտավորագիր, որով պարտավորվել է ապահովագրական ընկերության գրանցման և լիցենզավորման պահից այդ տարածքը նրան տրամադրել սեփականության կամ անհատույց օգտագործման իրավունքով կամ վարձակալությամբ (ենթավարձակալությամբ): Ընդ որում, ենթավարձակալության դեպքում ներկայացվում է նաև հիմնական վարձակալության պայմանագրի պատճենը կամ այդ պայմանագրի առկայությունը, ինչպես նաև հիմնական միջոցը ենթավարձակալության տալու իրավունքը հավաստող փաստաթուղթը:

**(20.1 կետը լրաց. 20.12.11թ. թիվ 355Ն)**

20.2. Այն դեպքում, երբ ապահովագրական ընկերությունները, Կենտրոնական բանկի նախնական համաձայնության հիման վրա, կնքել են միացման պայմանագիր, ապա միացող և պահպանվող ապահովագրական ընկերությունների գլխամասային գրասենյակների և տարածքային ստորաբաժանումների միջև տարածքների առանձնացվածության սույն գլխով

սահմանված պահանջը պարտադիր չէ՝ միացման պայմանագիրը կնքելու օրվանից սկսած 6 ամսվա ընթացքում:

**(20.2 կետը լրաց. 20.12.11թ. թիվ 355Ն)**

21. Ապահովագրական բրոքերի, ապահովագրական բրոքերի մասնաճյուղի գործունեության տարածքի և տեխնիկական հագեցվածության համար սահմանվում են սույն կանոնակարգի 20-րդ կետով ներկայացված պահանջները, բացառությամբ սույն կանոնակարգի 20-րդ կետի 3-րդ և 4-րդ ենթակետերի պահանջների: Ընդ որում, սույն կանոնակարգի 20-րդ կետի 2-րդ ենթակետի պահանջները չեն տարածվում այն ապահովագրական բրոքերի, ապահովագրական բրոքերի մասնաճյուղի վրա, որոնց կանոնադրությամբ սահմանված է, որ «Ապահովագրության և ապահովագրական գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 3-րդ հոդվածի 12-րդ կետի «գ» ենթակետով սահմանված գործառնություններն իրականացվում են բացառապես անկանխիկ ձևով:

**(21-րդ կետը խմբ. 20.12.11թ. թիվ 355Ն)**

22. Օտարերկրյա ապահովագրական ընկերության մասնաճյուղի, ինչպես նաև ապահովագրական ընկերության, ապահովագրական բրոքերի՝ Հայաստանի Հանրապետության տարածքից դուրս ստեղծված մասնաճյուղի գործունեության տարածքը և տեխնիկական հագեցվածությունը պետք է համապատասխանեն Կենտրոնական բանկի խորհրդի և օտարերկրյա վերահսկող մարմնի կողմից սահմանված տարածքի և տեխնիկական հագեցվածության պահանջներից ամենախստին:

**(22-րդ կետը լրաց. 01.07.08թ. թիվ 188Ն, լրաց. 20.12.11թ. թիվ 355Ն)**

22.1. Եթե ապահովագրական ընկերությունը, ապահովագրական բրոքերը կամ օտարերկրյա ապահովագրական ընկերության մասնաճյուղը օգտագործում են տեղեկատվական համակարգեր, ապա դրանք պետք է համապատասխանեն Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2008 թվականի մարտի 11-ի թիվ 71Ն որոշմամբ հաստատված «Բանկերի ներքին հսկողության իրականացման նվազագույն պայմանների» գլուխ VII-ով բանկերի համար սահմանված տեղեկատվական համակարգերի պահանջներին:

**(22.1 կետը լրաց. 08.04.08թ. թիվ 104Ն, խմբ. 20.12.11թ. թիվ 355Ն)**

22.2 Ապահովագրական ընկերությունը, նրա մասնաճյուղը, օտարերկրյա ապահովագրական ընկերության մասնաճյուղը, ապահովագրական բրոքերը կարող են սույն կանոնակարգի 20-րդ կետի 2-րդ, 3-րդ, 4-րդ ենթակետերով սահմանված տեխնիկական հագեցվածության պահանջների փոխարեն կնքել ապահովագրության պայմանագիր, որը պետք է ներառի առնվազն հետևյալ պատահարները՝ ապահովագրական ընկերության, նրա մասնաճյուղի, օտարերկրյա ապահովագրական ընկերության մասնաճյուղի, ապահովագրական բրոքերին սեփականության, վարձակալությամբ կամ անհատույց օգտագործման իրավունքով պատկանող առանձնացված տարածքում գտնվող գույքի, այդ թվում և կանխիկ դրամի, արժեթղթերի, ապահովագրության վկայագրերի, վճարային փաստաթղթերի և այլ արժեքավոր գույքի՝ հրդեհի, ավազակության, գողության, կողոպուտի հետևանքով կորուստը կամ վնասվածքը: Նշված ապահովագրական ռիսկերի գծով

ապահովագրական գումարը չի կարող փոքր լինել ընկերության բոլոր ակտիվների 1 տոկոսից:

Ընդ որում վերոնշյալ ապահովագրություն իրականացնող ոչ ռեզիդենտ ապահովագրական ընկերությունը պետք է ունենա ստորև նշված միջազգային վարկանշող կազմակերպություններից առնվազն մեկի կողմից տրված վարկանիշ, որը պետք է ցածր չլինի՝

- Ստանդարտ և Փուրզ «A-»
- Մուդիզ «A3»
- Ա. Մ. Բեստ «A-»
- Ֆիտչ «A-»:

**(22.2 կետը լրաց. 01.07.08թ. թիվ 188Ն, փոխ. 01.12.09թ. թիվ 360Ն)**

## ԲԱԺԻՆ III. ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԼԻՑԵՆԶԱՎՈՐՈՒՄ

### ԳԼՈՒԽ 8. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

23. Հայաստանի Հանրապետության տարածքում ապահովագրական ընկերության, օտարերկրյա ապահովագրական ընկերության մասնաճյուղի գրանցման և լիցենզավորման, օտարերկրյա ապահովագրական ընկերության ներկայացուցչության գրանցման, ապահովագրական ընկերության՝ Հայաստանի Հանրապետությունում ստեղծվող մասնաճյուղի և ներկայացուցչության գրանցման, ապահովագրական ընկերության կողմից Հայաստանի Հանրապետությունից դուրս մասնաճյուղի և ներկայացուցչության ստեղծմանը համաձայնություն տալու գործընթացն իրականացվում է «Ապահովագրության և ապահովագրական գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի և սույն կանոնակարգի համաձայն:

**(23-րդ կետը փոխ. 01.07.08թ. թիվ 188Ն, խմբ. 20.12.11թ. թիվ 355Ն)**

### ԳԼՈՒԽ 9. ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱՆՑՄԱՆ ԵՎ ԼԻՑԵՆԶԱՎՈՐՄԱՆ ՀԱՄԱՐ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԸ

24. Ապահովագրական ընկերության պետական գրանցման և լիցենզավորման համար Կենտրոնական բանկ են ներկայացվում հետևյալ փաստաթղթերը.

1) «Ապահովագրության և ապահովագրական գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 40-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված փաստաթղթերը, ընդ որում՝

ա. գրանցման և լիցենզավորման մասին դիմումը ներկայացվում է դիմումատուի կանոնադրությամբ ամրագրված իրավասու կառավարման մարմնի որոշմամբ վավերացված՝ համաձայն սույն կանոնակարգի Հավելված 2ա-ի,

բ. ապահովագրական ընկերության ղեկավարների գործունեության մասին տեղեկանքը (միջնորդագրի տեսքով) ներկայացվում է համաձայն սույն

կանոնակարգի Հավելված 3-ի,

գ. գործարար ծրագիրը ներկայացվում է համաձայն սույն կանոնակարգի Հավելված 9-ի,

դ. ապահովագրական ընկերության գործունեության տարածքը Կենտրոնական բանկի սահմանած չափանիշներին համապատասխանելու մասին հայտարարությունը ներկայացվում է համաձայն սույն կանոնակարգի Հավելված 13-ի,

ե. ապահովագրական ընկերության (վերաապահովագրական ընկերության) ֆիրմային անվանման գրանցման հայտը (օտարերկրյա բանկի ֆիրմային անվանման գրանցման վկայականի պատճենը, ինչպես նաև դրա՝ նոտարական կարգով վավերացված հայերեն թարգմանությունը) և այլ պահանջվող փաստաթղթերը՝ համաձայն «Ապահովագրության և ապահովագրական գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 40-րդ հոդվածի 1-ին մասի 3.1 կետով սահմանված՝ Հայաստանի Հանրապետության Կենտրոնական բանկի խորհրդի և Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարի կողմից համատեղ սահմանված կարգի,

զ. «Ապահովագրության և ապահովագրական գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 40-րդ հոդվածի 1-ին մասի 12-րդ կետի համաձայն Կենտրոնական բանկ են ներկայացվում առնվազն այն բոլոր կանոնակարգերը (այդ թվում՝ ապահովագրության պայմանները), որոնց առկայությունը օրենքի կամ նորմատիվ իրավական ակտի համաձայն պարտադիր է գործող ապահովագրական ընկերության համար՝ լիցենզիա ստանալու դիմումը ներկայացնելու օրվա դրությամբ:

2) եթե դիմումատուն հանդես է գալիս լիազոր ներկայացուցչի միջոցով, ապա նաև նրան պատշաճ կարգով տրված լիազորագիրը,

3) փոստային հասցեի վերաբերյալ տեղեկանք, որում նշված հասցեով լիցենզավորվող անձը համաձայն կլինի ստանալ ապահովագրական գործունեության լիցենզիան,

4) ապահովագրական ընկերության տարածքի սեփականության, վարձակալության (ենթավարձակալության) կամ անհատույց օգտագործման իրավունքի պետական գրանցման վկայականի պատճենը (համապատասխան առանձնացված տարածքի նկատմամբ իրավունքներ ունեցող անձի՝ ապահովագրական ընկերության գրանցման և լիցենզավորման դեպքում տարածքը նրան անհատույց օգտագործման, վարձակալությամբ (ենթավարձակալությամբ) կամ ի սեփականություն հանձնելու վերաբերյալ պարտավորությունը ամրագրող փաստաթուղթ): Ենթավարձակալության դեպքում ներկայացվում է նաև հիմնական վարձակալության պայմանագրի պատճենը կամ այդ պայմանագրի առկայությունը, ինչպես նաև հիմնական միջոցը ենթավարձակալության տալու իրավունքը հավաստող փաստաթուղթը,

5) ապահովագրական ընկերության հետ փոխկապակցված իրավաբանական և ֆիզիկական անձանց վերաբերյալ տեղեկություններ՝ համաձայն սույն կանոնակարգի համապատասխանաբար հավելված 17ա-ի և հավելված 17բ-ի,

6) ապահովագրական ընկերության հետ փոխկապակցված իրավաբանական և ֆիզիկական անձանց հետ փոխկապակցված իրավաբանական և ֆիզիկական անձանց վերաբերյալ տեղեկություններ՝ համաձայն սույն կանոնակարգի համապատասխանաբար Հավելված 17ա-ի և Հավելված 17բ-ի,

7) ապահովագրական ընկերության հետ փոխկապակցված իրավաբանական անձանց վերջին ֆինանսական տարվա ֆինանսական հաշվետվությունները (մեկ տարուց պակաս գործունեություն իրականացրած իրավաբանական անձինք նշված տեղեկությունները ներկայացնում են իրականացրած գործունեության ողջ ժամկետի համար),

8) անկախ աուդիտորական եզրակացությունը, որը հավաստում է սույն կետի 7-րդ ենթակետով սահմանված ֆինանսական հաշվետվությունների համապատասխանությունը հաշվապահական հաշվառման այն ստանդարտներին, որոնք համաձայն «Հաշվապահական հաշվառման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի պետք է կիրառվեն տվյալ կազմակերպության կողմից հաշվապահական հաշվառում վարելիս և ֆինանսական հաշվետվություններ կազմելիս և ներկայացնելիս, իսկ օտարերկրյա իրավաբանական անձանց համար՝ ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտներին կամ միջազգայնորեն ճանաչված այլ ստանդարտներին (առկայության դեպքում): Ընդ որում, օտարերկրյա իրավաբանական անձանց համար անկախ աուդիտորական եզրակացության բացակայության դեպքում Կենտրոնական բանկ է ներկայացվում հղում այդ պետության որևէ պաշտոնական ինտերնետային էջին, որտեղ նշված է, որ տվյալ պետության հաշվապահական հաշվառման ստանդարտները համապատասխանում են ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտներին կամ միջազգայնորեն ճանաչված այլ ստանդարտներին:

**(24-րդ կետը փոխ. 22.09.09թ. թիվ 278Ն, փոխ., լրաց. 01.12.09թ. թիվ 360Ն, խմբ. 20.12.11թ. թիվ 355Ն, խմբ. 13.11.12թ. թիվ 311Ն)**

24.1 (24.1 կետը լրաց. 01.07.08թ. թիվ 188Ն, խմբ. 01.12.09թ. թիվ 360Նուժը կորցրել է 20.12.11թ. թիվ 355Ն որոշմամբ)

24.2. Սույն կանոնակարգի 24-րդ կետի 5-րդ և 6-րդ ենթակետերով սահմանված տեղեկությունները չեն ներկայացվում տվյալ ենթակետերում նշված այն անձանց համար, որոնք հանդիսանում են.

1) ապահովագրական ընկերության կանոնադրական կապիտալում նշանակալից մասնակցություն ձեռք բերող անձ և որոնց համար ներկայացվում են սույն կանոնակարգով նշանակալից մասնակցություն ձեռք բերող անձի համար պահանջվող փաստաթղթերը (տեղեկությունները),
2) Կենտրոնական բանկի կողմից վերահսկվող անձ,
3) միջազգային կազմակերպություն, կամ
4) միջազգային համբավ և (կամ) Ստանդարտ և Փուրզ կամ Ֆիտչ կամ

Ա.Մ. Բեստ վարկանշող կազմակերպությունների կողմից «A-» կամ ավելի բարձր կամ Մուդիզ վարկանշող կազմակերպության կողմից «A3» կամ ավելի բարձր վարկանիշ ունեցող կազմակերպություններ (Կենտրոնական բանկի խորհրդի համաձայնության առկայության դեպքում):

**(24.2 կետը լրաց. 20.12.11թ. թիվ 355Ն)**

24.3. Սույն կանոնակարգի 24-րդ կետի 7-րդ և 8-րդ ենթակետերով սահմանված տեղեկությունները չեն ներկայացվում տվյալ ենթակետերում նշված այն անձանց համար, որոնք հանդիսանում են.

1) ապահովագրական ընկերության կանոնադրական կապիտալում նշանակալից մասնակցություն ձեռք բերող անձ և որոնց համար ներկայացվում են սույն կանոնակարգով նշանակալից մասնակցություն ձեռք բերող անձի համար պահանջվող փաստաթղթերը (տեղեկությունները),
2) Կենտրոնական բանկի կողմից վերահսկվող անձ, որը օրենքով կամ այլ իրավական ակտերով սահմանված պարբերականությամբ և կարգով Կենտրոնական բանկ է ներկայացնում հաշվապահական հաշվեկշիռը, ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունը, կամ
3) Կենտրոնական բանկի կողմից «Ա» կամ «Բ» վարկանիշ ստացած կազմակերպություն՝ վերջինիս կողմից Կենտրոնական բանկ ներկայացված սույն կանոնակարգի 24-րդ կետի 7-րդ և 8-րդ ենթակետերով սահմանված տեղեկությունները վերահսկողական նպատակներով օգտագործելու վերաբերյալ գրավոր համաձայնության դեպքում:

**(24.3 կետը լրաց. 20.12.11թ. թիվ 355Ն)**

24.4. Ապահովագրական ընկերությունը Կենտրոնական բանկ է ներկայացնում սույն կանոնակարգի 24.3.-րդ կետի 1-ին և 2-րդ ենթակետերով նշված փոխկապակցված իրավաբանական անձանց անվանումները, գրանցման համարները և գտնվելու վայրերը, ինչպես նաև փոխկապակցված ֆիզիկական անձանց անունները, ազգանունները, անձնագրի սերիաները և համարները ներառող ցուցակը:

**(24.4 կետը լրաց. 20.12.11թ. թիվ 355Ն)**

24.5. Ապահովագրական ընկերության հետ փոխկապակցված իրավաբանական անձանց համար, որոնք ընդգրկված են որևէ խմբի (միության) կամ ցանկացած այլ հիմքով իրենց ֆինանսական հաշվետվությունները համախմբող անձանց կազմում, չեն ներկայացվում սույն կանոնակարգի 24-րդ կետի 7-րդ և 8-րդ ենթակետերով սահմանված տեղեկությունները, փոխարենը ներկայացվում են սույն կետի 1-3 ենթակետերում նշված հաշվետվությունը (տեղեկությունները), ընդ որում, միևնույն խմբում (միությունում) կամ ցանկացած այլ հիմքով իրենց ֆինանսական հաշվետվությունները համախմբող անձանց

կազմում այլ փոխկապակցված անձի կամ նշանակալից մասնակցի առկայության դեպքում սույն կետի 1-ին, 2-րդ և 3-րդ ենթակետերով պահանջվող հաշվետվությունը (տեղեկությունները) ներկայացվում է նրանցից որևէ մեկի կողմից

1) խմբի (միության) կառուցվածքը,
2) խմբի (միության) վերջին ֆինանսական տարվա ֆինանսական հաշվետվությունները (մեկ տարուց պակաս գործունեություն իրականացրած իրավաբանական անձինք նշված տեղեկությունները ներկայացնում են իրականացրած գործունեության ողջ ժամկետի համար):
3) անկախ աուդիտորական եզրակացությունը, որը հավաստում է խմբի (միության) վերջին տարեկան ֆինանսական հաշվետվությունների համապատասխանությունը հաշվապահական հաշվառման այն ստանդարտներին, որոնք համաձայն «Հաշվապահական հաշվառման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի պետք է կիրառվեն տվյալ խմբի (միության) կողմից հաշվապահական հաշվառում վարելիս և ֆինանսական հաշվետվություններ կազմելիս և ներկայացնելիս, իսկ օտարերկրյա խմբի (միության) համար՝ ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտներին կամ միջազգայնորեն ճանաչված այլ ստանդարտներին (առկայության դեպքում): Ընդ որում, օտարերկրյա խմբի (միության) համար անկախ աուդիտորական եզրակացության բացակայության դեպքում Կենտրոնական բանկ է ներկայացվում հղում այդ պետության որևէ պաշտոնական ինտերնետային էջին, որտեղ նշված է, որ տվյալ պետության հաշվապահական հաշվառման ստանդարտները համապատասխանում են ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտներին կամ միջազգայնորեն ճանաչված այլ ստանդարտներին:

**(24.5 կետը լրաց. 20.12.11թ. թիվ 355Ն)**

24.6. Կենտրոնական բանկը կարող է ապահովագրական ընկերության գրանցման և լիցենզավորման գործընթացի ժամանակ ապահովագրական ընկերության հետ փոխկապակցված անձանց հետ փոխկապակցված իրավաբանական անձանց մասով պահանջել սույն կանոնակարգի 24-րդ կետի 7-րդ և 8-րդ ենթակետերով, իսկ եթե ապահովագրական ընկերության հետ փոխկապակցված անձանց հետ փոխկապակցված իրավաբանական անձն ընդգրկված է որևէ խմբի (միության) կամ ցանկացած այլ հիմքով իրենց ֆինանսական հաշվետվությունները համախմբող անձանց կազմում, ապա սույն կանոնակարգի 24.5-րդ կետով սահմանված հաշվետվությունները (տեղեկությունները):

**(24.6 կետը լրաց. 20.12.11թ. թիվ 355Ն)**

24.7. Եթե սույն կանոնակարգի 24-րդ կետի 7-րդ և 8-րդ ենթակետերով կամ 24.5-րդ կետով սահմանված հաշվետվությունները (տեղեկությունները)

տեղակայված են համապատասխանաբար իրավաբանական անձի կամ խմբի (միության) ինտերնետային կայքում, ապա դրանց փոխարեն Կենտրոնական բանկ ներկայացվում է համապատասխան կայքի (տնային էջի) հասցեն:

**(24.7 կետը լրաց. 20.12.11թ. թիվ 355Ն)**

24.8. Եթե սույն կանոնակարգի 24-րդ կետով նախատեսված կարգով ապահովագրական ընկերության գրանցման և լիցենզավորման ժամանակ ներկայացվել է համապատասխան առանձնացված տարածքի նկատմամբ իրավունքներ ունեցող անձի՝ ապահովագրական ընկերության գրանցման և լիցենզավորման դեպքում տարածքը նրան անհատույց օգտագործման, վարձակալությամբ (ենթավարձակալությամբ) կամ ի սեփականություն հանձնելու վերաբերյալ պարտավորությունը ամրագրող փաստաթուղթ, ապահովագրական ընկերությունը սահմանված կարգով գրանցվելուց և լիցենզավորվելուց հետո՝ եռամսյա ժամկետում, Կենտրոնական բանկ է ներկայացնում տվյալ տարածքի իր սեփականության իրավունքի գրանցման վկայականի պատճենը կամ նոտարական կարգով վավերացված վարձակալության (ենթավարձակալության) կամ անհատույց օգտագործման պայմանագրի պատճենը և վարձակալության (ենթավարձակալության) կամ անհատույց օգտագործման իրավունքի գրանցման վկայականի պատճենը: Ենթավարձակալության պայմանագրի դեպքում ներկայացվում է նաև հիմնական վարձակալության պայմանագրի պատճենը կամ այդ պայմանագրի առկայությունը, ինչպես նաև հիմնական միջոցը ենթավարձակալության տալու իրավունքը հավաստող փաստաթուղթը:

**(24.8 կետը լրաց. 20.12.11թ. թիվ 355Ն)**

25. (25-րդ կետը ուժը կորցրել է 01.12.09թ. թիվ 360 Ն որոշմամբ)

26. (26-րդ կետը լրաց. 01.07.08թ. թիվ 188Ն, ուժը կորցրել է 20.12.11թ. թիվ 355 Ն որոշմամբ):

## ԳԼՈՒԽ 9.1. ՕՏԱՐԵՐԿՐՅԱ ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍՆԱՃՅՈՒՂԵՐԻ ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱՆՑՄԱՆ ԵՎ ԼԻՑԵՆԶԱՎՈՐՄԱՆ ՀԱՄԱՐ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԸ

26.1. Օտարերկրյա ապահովագրական ընկերությունը մասնաճյուղի պետական գրանցման և լիցենզավորման համար Կենտրոնական բանկ է ներկայացնում հետևյալ փաստաթղթերը՝

1) «Ապահովագրական և ապահովագրական գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 47-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված փաստաթղթերը, ընդ որում՝

ա. գրանցման և լիցենզավորման համար դիմումը ներկայացվում է դիմող կազմակերպության կանոնադրությամբ ամրագրված իրավասու կառավարման մարմնի որոշմամբ վավերացված՝ համաձայն սույն կանոնակարգի Հավելված 2ա-ի,

բ. գործարար ծրագիրը ներկայացվում է՝ համաձայն սույն կանոնակարգի Հավելված 9-ի,

գ. օտարերկրյա ապահովագրական ընկերության կանոնադրական կապիտալում նշանակալից մասնակցություն ունեցող իրավաբանական և ֆիզիկական անձանց վերաբերյալ տեղեկանքը ներկայացվում է՝ համաձայն սույն կանոնակարգի՝ համապատասխանաբար Հավելված 4ա-ի և Հավելված 4բ-ի,

դ. օտարերկրյա ապահովագրական ընկերության մասնաճյուղի ղեկավարների գործունեության մասին տեղեկանքը (միջնորդագրի տեսքով) ներկայացվում է՝ համաձայն սույն կանոնակարգի Հավելված 3-ի,

ե. օտարերկրյա ապահովագրական ընկերության մասնաճյուղի գործունեության տարածքը Կենտրոնական բանկի սահմանած չափանիշներին համապատասխանելու մասին հայտարարությունը ներկայացվում է համաձայն սույն կանոնակարգի Հավելված 13-ի,

զ. «Ապահովագրության և ապահովագրական գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 47-րդ հոդվածի 2-րդ մասի 4-րդ կետի համաձայն Կենտրոնական բանկ են ներկայացվում առնվազն այն բոլոր կանոնակարգերը (այդ թվում՝ ապահովագրության պայմանները), որոնց առկայությունը օրենքի կամ նորմատիվ իրավական ակտի համաձայն պարտադիր է օտարերկրյա ապահովագրական ընկերության գործող մասնաճյուղի համար՝ լիցենզիա ստանալու դիմումը ներկայացնելու օրվա դրությամբ:

2) մասնաճյուղի տարածքի սեփականության, վարձակալության (ենթավարձակալության) կամ անհատույց օգտագործման իրավունքի պետական գրանցման վկայականի պատճենը: Ենթավարձակալության դեպքում անհրաժեշտ է ներկայացնել նաև հիմնական վարձակալության պայմանագրի պատճենը կամ այդ պայմանագրի առկայությունը, ինչպես նաև հիմնական միջոցը ենթավարձակալության տալու իրավունքը հավաստող փաստաթուղթը,

3) օտարերկրյա ապահովագրական ընկերության հետ փոխկապակցված իրավաբանական և ֆիզիկական անձանց վերաբերյալ տեղեկություններ՝ համաձայն սույն կանոնակարգի համապատասխանաբար Հավելված 17ա-ի և Հավելված 17բ-ի,

4) օտարերկրյա ապահովագրական ընկերության հետ փոխկապակցված իրավաբանական և ֆիզիկական անձանց հետ փոխկապակցված իրավաբանական և ֆիզիկական անձանց վերաբերյալ տեղեկություններ՝ համաձայն սույն կանոնակարգի համապատասխանաբար Հավելված 17ա-ի և Հավելված 17բ-ի,

5) օտարերկրյա ապահովագրական ընկերության հետ փոխկապակցված իրավաբանական անձանցվերջին ֆինանսական տարվա ֆինանսական

հաշվետվությունները (մեկ տարուց պակաս գործունեություն իրականացրած իրավաբանական անձինք նշված տեղեկությունները ներկայացնում են իրականացրած գործունեության ողջ ժամկետի համար),

6) անկախ աուդիտորական եզրակացությունը, որը հավաստում է սույն կետի 5-րդ ենթակետով սահմանված ֆինանսական հաշվետվությունների համապատասխանությունը հաշվապահական հաշվառման այն ստանդարտներին, որոնք համաձայն «Հաշվապահական հաշվառման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի պետք է կիրառվեն տվյալ կազմակերպության կողմից հաշվապահական հաշվառում վարելիս և ֆինանսական հաշվետվություններ կազմելիս և ներկայացնելիս, իսկ օտարերկրյա իրավաբանական անձանց համար՝ ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտներին կամ միջազգայնորեն ճանաչված այլ ստանդարտներին (առկայության դեպքում): Ընդ որում, օտարերկրյա իրավաբանական անձանց համար անկախ աուդիտորական եզրակացության բացակայության դեպքում Կենտրոնական բանկ է ներկայացվում հղում այդ պետության որևէ պաշտոնական ինտերնետային էջին, որտեղ նշված է, որ տվյալ պետության հաշվապահական հաշվառման ստանդարտները համապատասխանում են ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտներին կամ միջազգայնորեն ճանաչված այլ ստանդարտներին,

7) հիմնավորող փաստաթուղթ առ այն, որ մասնաճյուղ ստեղծող օտարերկրյա ապահովագրական ընկերության վարկանիշն ըստ Ստանդարտ և Փուրզ/ Ֆիտչ վարկանշային գործակալությունների կողմից տրամադրված վարկանիշների առնվազն եղել է «AA-» կամ Մուդիզ վարկանշային գործակալությունների կողմից տրամադրված վարկանիշների առնվազն եղել է «Aa3» կամ Ա.Մ.Բեստ վարկանշային գործակալությունների կողմից տրամադրված վարկանիշների առնվազն եղել է «A+»՝ սույն կետում նշված դիմումը Կենտրոնական բանկ ներկայացնելու օրվա դրությամբ: Ընդ որում, եթե մասնաճյուղ ստեղծող օտարերկրյա ապահովագրական ընկերությունն ունի երկու և ավելի վարկանշող կազմակերպությունների կողմից տրված վարկանիշներ, ապա սույն ենթակետի իմաստով հիմք է ընդունվում դրանցից խստագույնը (ամենացածրը),

8) հիմնավորող փաստաթուղթ առ այն, որ մասնաճյուղ ստեղծող օտարերկրյա ապահովագրական ընկերության գրանցման վայրի երկրի ապահովագրության ոլորտի կարգավորումն ու վերահսկողությունը բավարարում է Ապահովագրական վերահսկողների միջազգային ասոցիացիայի (IAIS) կողմից մշակված «Ապահովագրության հիմնարար սկզբունքներին»: Երկրի ապահովագրության ոլորտի կարգավորումն ու վերահսկողությունը համարվում է «Ապահովագրության հիմնարար սկզբունքներին» բավարարող, եթե այն,

Արժույթի միջազգային հիմնադրամի և Համաշխարհային բանկի կողմից ֆինանսական հատվածի գնահատման ծրագրի շրջանակներում (ԷՖՍԱՓ) տրված գնահատականի համաձայն, բավարարում է բոլոր հիմնարար սկզբունքներին՝ Ապահովագրական վերահսկողների միջազգային ասոցիացիայի կողմից սահմանված գնահատման սանդղակի առաջին (բավարարված) կամ երկրորդ (մեծամասամբ բավարարված) մակարդակով: Ընդ որում, սույն ենթակետում նշված գնահատականը պետք է տրված լինի սույն կետում նշված դիմումը Կենտրոնական բանկ ներկայացնելու օրվանից ոչ շուտ, քան 5 տարվա ընթացքում,

9) մասնաճյուղ ստեղծող օտարերկրյա ապահովագրական ընկերության կողմից տրված պարտավորագիր (երաշխավորագիր)՝ Հայաստանի Հանրապետության տարածքում օտարերկրյա ապահովագրական ընկերության մասնաճյուղի կողմից այդ մասնաճյուղի գործունեությունից բխող պարտավորությունները չկատարելու դեպքում այդ պարտավորությունները օտարերկրյա ապահովագրական ընկերության կողմից առանց որևէ պայմանի (նախապայմանի) անհապաղ կատարելու վերաբերյալ,

10) մասնաճյուղ ստեղծող օտարերկրյա ապահովագրական ընկերության գրանցման վայրի երկրի ապահովագրության ոլորտի վերահսկողություն իրականացնող մարմնի կողմից տրված հավաստումն առ այն, որ օտարերկրյա ապահովագրական ընկերությունը չի խախտել տվյալ երկրի ապահովագրական գործունեության կարգավորումը և (կամ) վերահսկողությունն իրականացնող մարմնի կողմից սահմանված տնտեսական նորմատիվների պահանջները՝ սույն կետում նշված դիմումը Կենտրոնական բանկ ներկայացնելու օրվան նախորդող երկու տարվա ընթացքում, իսկ եթե մասնաճյուղ ստեղծող օտարերկրյա ապահովագրական ընկերության գործունեությունը պակաս է երկու տարուց, ապա՝ գործունեության ողջ ընթացքում,

11) Կենտրոնական բանկում կամ Կենտրոնական բանկի համաձայնությամբ Հայաստանի Հանրապետության տարածքում գործող որևէ բանկում մասնաճյուղ ստեղծող օտարերկրյա ապահովագրական ընկերության անունով ավանդի ներդրումը հավաստող փաստաթղթեր: Ընդ որում, սույն ենթակետով սահմանված ավանդը պետք է առնվազն կազմի.

ա. 40 000 000 Հայաստանի Հանրապետության դրամ կամ ավանդը ներդրվելու օրվա դրությամբ 40 000 000 Հայաստանի Հանրապետության դրամին համարժեք արտարժույթ, եթե օտարերկրյա ապահովագրական ընկերությունը դիմել է «Ապահովագրության և ապահովագրական գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 7-րդ հոդվածի 2-րդ մասի «1-9»-րդ, «16-18»-րդ կետերով սահմանված ոչ կյանքի ապահովագրության մեկ կամ մի քանի դասերով ապահովագրական գործունեության իրականացման լիցենզիա ստանալու համար,

բ. 60 000 000 Հայաստանի Հանրապետության դրամ կամ ավանդը

ներդրվելու օրվա դրությամբ 60 000 000 Հայաստանի Հանրապետության դրամին համարժեք արտարժույթ, եթե օտարերկրյա ապահովագրական ընկերությունը դիմել է «Ապահովագրության և ապահովագրական գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 7-րդ հոդվածի 2-րդ մասի «10-15»-րդ կետերով, նույն հոդվածի 4-րդ մասի «1-6»-րդ կետերով, 5-րդ մասի 1-ին կամ 2-րդ կետերով սահմանված ապահովագրության մեկ կամ մի քանի դասերով ապահովագրական գործունեության իրականացման լիցենզիա ստանալու համար,

գ. միաժամանակ մի քանի դասերով ապահովագրություն իրականացնելու համար դիմած օտարերկրյա ապահովագրական ընկերության կողմից ներդրված ավանդի մեծությունը պետք է բավարարի սույն ենթակետով տվյալ դասերի համար սահմանված չափերից առավելագույնին,

դ. ընդ որում, սույն ենթակետով սահմանված ավանդի պայմանագրով պետք է նախատեսված լինի, որ ավանդը ավանդատուի պահանջով ենթակա է վերադարձման բացառապես Կենտրոնական բանկի նախնական համաձայնության դեպքում: Միևնույն ժամանակ, մասնաճյուղ ստեղծող օտարերկրյա ապահովագրական ընկերությունը ստանձնել է անվերապահ պարտավորություն, համաձայն որի՝ այն դեպքում, երբ օրենքի համաձայն, ավանդի գումարը ենթակա է անվերապահ վերադարձման՝ անկախ կողմերի համաձայնությունից, վերադարձված գումարը համապատասխան բանկից ստանալուց հետո պարտավոր է 5 աշխատանքային օրվա ընթացքում որպես ավանդ մուծել Կենտրոնական բանկում կամ Հայաստանի Հանրապետության տարածքում գործող այլ բանկում՝ սույն ենթակետով սահմանված պայմաններով,

12) Հայտարարություն այն մասին, որ մասնաճյուղ ստեղծող օտարերկրյա ապահովագրական ընկերության գրանցման վայրի երկիրը համարվում է փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի իմաստով համագործակցող երկիր և/կամ տվյալ երկրի համար ՖԱԹՖ-ի կամ նմանատիպ գործունեությամբ զբաղվող այլ միջազգային կառույցի կողմից փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման համակարգի անհամապատասխանության վերաբերյալ որևէ հայտարարություն չի հրապարակվել,

13) օտարերկրյա ապահովագրական ընկերության կանոնադրական կապիտալում նշանակալից մասնակցություն ունեցող անձանց վերաբերյալ սույն կանոնակարգի 17-րդ և 18-րդ գլուխներով սահմանված փաստաթղթերը, բացառությամբ սույն կանոնակարգի 61-րդ կետի 1-ին, 2-րդ, 3-րդ, 4-րդ, 7-րդ, 13-րդ, 16-րդ ենթակետերով, 67-րդ կետի 1-ին, 2-րդ, 3-րդ, 4-րդ, 6-րդ, 10-րդ ենթակետերով, 68-րդ կետով սահմանված փաստաթղթերի,

14) եթե դիմումատուն հանդես է գալիս լիազոր ներկայացուցչի միջոցով, ապա ներկայացվում է նաև դիմումատուի կողմից նրան պատշաճ կարգով տրված լիազորագիրը:

26.2 Սույն կանոնակարգի 26.1-րդ կետի 3-րդ և 4-րդ ենթակետերով սահմանված տեղեկությունները չեն ներկայացվում տվյալ ենթակետերում նշված

այն անձանց համար, որոնք հանդիսանում են

1) ապահովագրական ընկերության կանոնադրական կապիտալում նշանակալից մասնակցություն ձեռք բերող անձ և որոնց համար ներկայացվում են սույն կանոնակարգով նշանակալից մասնակցություն ձեռք բերող անձի համար պահանջվող փաստաթղթերը (տեղեկությունները),
2) Կենտրոնական բանկի կողմից վերահսկվող անձ,
3) միջազգային կազմակերպություն, կամ
4) միջազգային համբավ և (կամ) Ստանդարտ և Փուրզ կամ Ֆիտչ կամ Ա.Մ.Բեստ վարկանշող կազմակերպությունների կողմից «A-» կամ ավելի բարձր կամ Մուդիզ վարկանշող կազմակերպության կողմից «A3» կամ ավելի բարձր վարկանիշ ունեցող կազմակերպություններ (Կենտրոնական բանկի խորհրդի համաձայնության առկայության դեպքում):

26.3. Սույն կանոնակարգի 26.1-րդ կետի 5-րդ և 6-րդ ենթակետերով սահմանված տեղեկությունները չեն ներկայացվում տվյալ ենթակետերում նշված այն անձանց համար, որոնք հանդիսանում են.

1) ապահովագրական ընկերության կանոնադրական կապիտալում նշանակալից մասնակցություն ձեռք բերող անձ և որոնց համար ներկայացվում են սույն կանոնակարգով նշանակալից մասնակցություն ձեռք բերող անձի համար պահանջվող փաստաթղթերը (տեղեկությունները),
2) Կենտրոնական բանկի կողմից վերահսկվող անձ, որը օրենքով կամ այլ իրավական ակտերով սահմանված պարբերականությամբ և կարգով Կենտրոնական բանկ է ներկայացնում հաշվապահական հաշվեկշիռը, ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունը, կամ
3) Կենտրոնական բանկի կողմից «Ա» կամ «Բ» վարկանիշ ստացած կազմակերպություն՝ վերջինիս կողմից Կենտրոնական բանկ ներկայացված սույն կանոնակարգի 26.1-րդ կետի 5-րդ և 6-րդ ենթակետերով սահմանված տեղեկությունները վերահսկողական նպատակներով օգտագործելու վերաբերյալ գրավոր համաձայնության դեպքում:

26.4. Օտարերկրյա ապահովագրական ընկերությունը Կենտրոնական բանկ է ներկայացնում սույն կանոնակարգի 26.3.-րդ կետի 1-ին և 2-րդ ենթակետերով նշված փոխկապակցված իրավաբանական անձանց անվանումները, գրանցման համարները և գտնվելու վայրերը, ինչպես նաև փոխկապակցված ֆիզիկական անձանց անունները, ազգանունները, անձնագրի սերիաները և համարները ներառող ցուցակը:

26.5. Օտարերկրյա ապահովագրակական ընկերության հետ փոխկապակցված իրավաբանական անձանց համար, որոնք ընդգրկված են որևէ խմբի (միության) կամ ցանկացած այլ հիմքով իրենց ֆինանսական հաշվետվությունները համախմբող անձանց կազմում, չեն ներկայացվում սույն կանոնակարգի 26.1-րդ կետի 5-րդ և 6-րդ ենթակետերով սահմանված

տեղեկությունները, փոխարենը ներկայացվում են սույն կետի 1-3 ենթակետերում նշված հաշվետվությունը (տեղեկությունները), ընդ որում՝ միևնույն խմբում (միությունում) կամ ցանկացած այլ հիմքով իրենց ֆինանսական հաշվետվությունները համախմբող անձանց կազմում այլ փոխկապակցված անձի կամ նշանակալից մասնակցի առկայության դեպքում սույն կետի 1-ին, 2-րդ և 3-րդ ենթակետերով պահանջվող հաշվետվությունը (տեղեկությունները) ներկայացվում է նրանցից որևէ մեկի կողմից

1) խմբի (միության) կառուցվածքը,
2) խմբի (միության) վերջին ֆինանսական տարվա ֆինանսական հաշվետվությունները (մեկ տարուց պակաս գործունեություն իրականացրած իրավաբանական անձինք նշված տեղեկությունները ներկայացնում են իրականացրած գործունեության ողջ ժամկետի համար),
3) անկախ աուդիտորական եզրակացությունը, որը հավաստում է խմբի (միության) վերջին տարեկան ֆինանսական հաշվետվությունների համապատասխանությունը հաշվապահական հաշվառման այն ստանդարտներին, որոնք համաձայն «Հաշվապահական հաշվառման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի պետք է կիրառվեն տվյալ խմբի (միության) կողմից հաշվապահական հաշվառում վարելիս և ֆինանսական հաշվետվություններ կազմելիս և ներկայացնելիս, իսկ օտարերկրյա խմբի (միության) համար՝ ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտներին կամ միջազգայնորեն ճանաչված այլ ստանդարտներին (առկայության դեպքում): Ընդ որում, օտարերկրյա խմբի (միության) համար անկախ աուդիտորական եզրակացության բացակայության դեպքում Կենտրոնական բանկ է ներկայացվում հղում այդ պետության որևէ պաշտոնական ինտերնետային էջին, որտեղ նշված է, որ տվյալ պետության հաշվապահական հաշվառման ստանդարտները համապատասխանում են ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտներին կամ միջազգայնորեն ճանաչված այլ ստանդարտներին:

26.6. Կենտրոնական բանկը կարող է օտարերկրյա ապահովագրական ընկերության մասնաճյուղի գրանցման և լիցենզավորման գործընթացի ժամանակ օտարերկրյա ապահովագրական ընկերության հետ փոխկապակցված անձանց հետ փոխկապակցված իրավաբանական անձանց մասով պահանջել սույն կանոնակարգի 26.1-րդ կետի 5-րդ և 6-րդ ենթակետերով, իսկ եթե օտարերկրյա ապահովագրական ընկերության հետ փոխկապակցված անձանց հետ փոխկապակցված իրավաբանական անձն ընդգրկված է որևէ խմբի (միության) կամ ցանկացած այլ հիմքով իրենց ֆինանսական հաշվետվությունները համախմբող անձանց կազմում, ապա սույն կանոնակարգի 26.5-րդ կետով սահմանված հաշվետվությունները (տեղեկությունները):

26.7. Եթե սույն կանոնակարգի 26.1-րդ կետի 5-րդ և 6-րդ ենթակետերով կամ 26.5-րդ կետով սահմանված հաշվետվությունները (տեղեկությունները) տեղակայված են համապատասխանաբար իրավաբանական անձի կամ խմբի (միության) ինտերնետային կայքում, ապա դրանց փոխարեն Կենտրոնական բանկ ներկայացվում է համապատասխան կայքի (տնային էջի) հասցեն:

(Գլուխ 9.1-ը լրաց. **լրաց. 20.12.11թ. թիվ 355Ն)**

## ԳԼՈՒԽ 10. ՆՈՐ ԴԱՍՈՎ ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԼԻՑԵՆԶԱՎՈՐՈՒՄԸ

27. Գործող ապահովագրական ընկերությունը նոր դասով ապահովագրական գործունեության լիցենզիա ստանալու համար Կենտրոնական բանկ է ներկայացնում հետևյալ փաստաթղթերը.

1) «Ապահովագրության և ապահովագրական գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 159-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված փաստաթղթերը,
2) ապահովագրական գործառույթների պատվիրակման պայմանագրերում կատարված փոփոխությունների և/կամ լրացումների նախագծերը, եթե այդպիսիք առկա են և այդ պայմանագրերում փոփոխությունների և/կամ լրացումների կատարման անհրաժեշտություն է առաջանում նոր դասով ապահովագրական գործունեություն իրականացնելու դեպքում,
3) ապահովագրական ընկերության գործունեության կանոնակարգերում կատարված փոփոխությունների և/կամ լրացումների նախագծերը, եթե այդ կանոնակարգերում փոփոխությունների և/կամ լրացումների կատարման անհրաժեշտություն է առաջանում նոր դասով ապահովագրական գործունեություն իրականացնելու դեպքում, ինչպես նաև նոր ընդունված կանոնակարգերը (այդ թվում՝ նոր դասի ապահովագրության պայմանները),
4) պետական տուրքի վճարման անդորրագիրը,
5) ապահովագրական ընկերության կանոնադրական կապիտալը Կենտրոնական բանկում կամ Հայաստանի Հանրապետության տարածքում գործող ապահովագրական ընկերության հետ չփոխկապակցված որևէ բանկում բացված կուտակային հաշվին մուծումը հավաստող փաստաթուղթը, եթե ընդհանուր կապիտալի նվազագույն չափի նորմատիվի՝ Կենտրոնական բանկի նորմատիվ իրավական ակտերով սահմանված նվազագույն չափի պահպանման համար անհրաժեշտ է կանոնադրական կապիտալի համալրում,
6) ապահովագրական ընկերության կանոնադրության փոփոխության գրանցման համար սույն կանոնակարգով պահանջվող փաստաթղթերը:

27.1 Օտարերկրյա ապահովագրական ընկերության՝ Հայաստանի Հանրապետության տարածքում գործող մասնաճյուղը նոր դասով ապահովագրական գործունեության լիցենզիա ստանալու համար Կենտրոնական բանկ է ներկայացնում հետևյալ փաստաթղթերը.

1) «Ապահովագրական և ապահովագրական գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 159-րդ հոդվածի 3-րդ մասով սահմանված փաստաթղթերը,
2) նոր դասով ապահովագրական գործունեության լիցենզիա ստանալու վերաբերյալ օտարերկրյա ապահովագրական ընկերության կառավարման իրավասու մարմնի որոշումը,

3) ապահովագրական գործառույթների պատվիրակման պայմանագրերում կատարված փոփոխությունների և/կամ լրացումների նախագծերը, եթե այդպիսիք առկա են և այդ պայմանգրերում փոփոխությունների և/կամ լրացումների կատարման անհրաժեշտություն է առաջանում նոր դասով ապահովագրական գործունեություն իրականացնելու դեպքում, ինչպես նաև նոր ընդունված կանոնակարգերը (այդ թվում՝ նոր դասի ապահովագրության պայմանները),
4) մասնաճյուղի գործունեության կանոնակարգերում կատարված փոփոխությունների և/կամ լրացումների նախագծերը, եթե այդ կանոնակարգերում փոփոխությունների և/կամ լրացումների կատարման անհրաժեշտություն է առաջանում նոր դասով ապահովագրական գործունեություն իրականացնելու դեպքում,
5) պետական տուրքի վճարման անդորրագիրը,
6) սույն կանոնակարգի 26.1 կետի 14-րդ ենթակետի համաձայն ներդրված ավանդի համալրումը հավաստող փաստաթղթեր, եթե սույն կանոնակարգի 26.1 կետի 11-րդ ենթակետով սահմանված ավանդի նվազագույն չափի բավարարման համար անհրաժեշտ է ավանդի համալրում:,
7) օտարերկրյա ապահովագրական ընկերության մասնաճյուղի կանոնադրության փոփոխության գրանցման համար սույն կանոնակարգով պահանջվող փաստաթղթերը:

**(27.1 կետը լրաց. 01.07.08թ. թիվ 188Ն)**

27.2 Գործող ապահովագրական ընկերությունը, օտարերկրյա ապահովագրական ընկերության մասնաճյուղը նոր դասով ապահովագրական գործունեության լիցենզիա ստանալու համար սույն կանոնակարգի 5-րդ գլխով սահմանված կարգով դիմում է Կենտրոնական բանկ լիցենզիան ապահովագրական գործունեության նոր դասով վերաձևակերպելու համար:

(Գլուխ 10-ը լրաց. 01.07.08թ. թիվ 188Ն, խմբ. 20.12.11թ. թիվ 355Ն)

## ԳԼՈՒԽ 11. ԼԻՑԵՆԶԻԱՅԻ ՏՐԱՄԱԴՐՈՒՄԸ

28. Կենտրոնական բանկի խորհուրդը բավարարում է ապահովագրական ընկերության, օտարերկրյա ապահովագրական ընկերության մասնաճյուղի պետական գրանցման և լիցենզիա ստանալու, ինչպես նաև նոր դասով լիցենզիա ստանալու դիմումը՝ օրենքով և սույն կանոնակարգով սահմանված կարգով: Ընդ որում, Կենտրոնական բանկի կողմից օտարերկրյա ապահովագրական ընկերության մասնաճյուղին տրամադրվում է լիցենզիա, եթե Կենտրոնական բանկի և մասնաճյուղ ստեղծող օտարերկրյա ապահովագրական ընկերության գրանցման երկրի ապահովագրության ոլորտի կարգավորումն ու վերահսկողությունն իրականացնող մարմնի միջև առկա է համաձայնագիր (փոխըմբռնման հուշագիր) ապահովագրության ոլորտում համագործակցության վերաբերյալ:

29. Ապահովագրական ընկերության, օտարերկրյա ապահովագրական

ընկերության մասնաճյուղի գրանցման և լիցենզավորման մասին Կենտրոնական բանկի խորհրդի որոշման կայացման պահից՝ հինգ աշխատանքային օրվա ընթացքում հիմնադիրներին տրվում է ապահովագրական ընկերության (օտարերկրյա ապահովագրական ընկերության մասնաճյուղի) գրանցման վկայականը՝ համաձայն Հավելված 7ա-ի (Հավելված 7բ-ի) և ապահովագրական ընկերության (օտարերկրյա ապահովագրական ընկերության մասնաճյուղի) լիցենզիան՝ համաձայն Հավելված 1ա-ի, Հավելված 1բ-ի և Հավելված 1գ-ի:

**(29-րդ կետը փոխ. 13.11.12թ. թիվ 311Ն)**

30. Ապահովագրական ընկերության (օտարերկրյա ապահովագրական ընկերության մասնաճյուղի) գրանցումը կատարվում է, ինչպես նաև լիցենզիան, նոր դասով լիցենզիան Կենտրոնական բանկի խորհրդի կողմից տրվում է հանձնաժողովի եզրակացության հիման վրա:

31. Լիցենզիայի տրամադրումից հետո ապահովագրական ընկերության (օտարերկրյա ապահովագրական ընկերության մասնաճյուղի) ղեկավարները գրանցվում են համաձայն սույն կանոնակարգի:

32. Կենտրոնական բանկը կարող է մերժել ապահովագրական ընկերության (օտարերկրյա ապահովագրական ընկերության մասնաճյուղի) լիցենզիայի տրամադրումը «Ապահովագրության և ապահովագրական գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 42-րդ հոդվածում, 48-րդ հոդվածի 1-ին մասում և 159-րդ հոդվածի 4-րդ մասում նշված հիմքերով:

33. (33-րդ կետը ուժը կորցրել է 01.07.08թ. թիվ 188 Ն որոշմամբ)

(Գլուխ 11-ը լրաց. 22.09.09թ. թիվ 278, փոխ. 01.07.08թ. թիվ 188Ն, խմբ. 20.12.11թ. թիվ 355Ն)

## ԳԼՈՒԽ 12. ՕՏԱՐԵՐԿՐՅԱ ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑՉՈՒԹՅԱՆ ԳՐԱՆՑՈՒՄԸ

(Գլուխ 12-ի վերնագիրը փոխ. 20.12.11թ. թիվ 355Ն)

**34. (34-րդ կետը ուժը կորցրել է 22.09.09թ. թիվ 278Ն)**

35. Օտարերկրյա ապահովագրական ընկերությունը ներկայացուցչության գրանցման համար Կենտրոնական բանկ է ներկայացնում հետևյալ փաստաթղթերը՝

1) «Ապահովագրության և ապահովագրական գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 47-րդ հոդվածի 4-րդ մասով սահմանված փաստաթղթերը, ընդ որում,

ա. գրանցման համար դիմումը ներկայացվում է դիմող կազմակերպության կանոնադրությամբ ամրագրված իրավասու կառավարման մարմնի որոշմամբ

վավերացված՝ համաձայն սույն կանոնակարգի Հավելված 2բ-ի,

բ. օտարերկրյա ապահովագրական ընկերության կանոնադրական կապիտալում նշանակալից մասնակցություն ունեցող իրավաբանական և ֆիզիկական անձանց վերաբերյալ տեղեկանքը ներկայացվում է սույն կանոնակարգի համապատասխանաբար Հավելված 4ա-ի և Հավելված 4բ-ի,

2) ներկայացուցչության տարածքի սեփականության, վարձակալության (ենթավարձակալության) կամ անհատույց օգտագործման իրավունքի պետական գրանցման վկայականի պատճենը: Ենթավարձակալության դեպքում անհրաժեշտ է ներկայացնել նաև հիմնական վարձակալության պայմանագրի պատճենը կամ այդ պայմանագրի առկայությունը, ինչպես նաև հիմնական միջոցը ենթավարձակալության տալու իրավունքը հավաստող փաստաթուղթը,
3) ներկայացուցչություն բացելու հիմնավորումը,
4) ներկայացուցչության գրանցման պետական տուրքի վճարման անդորրագրի պատճենը,
5) եթե դիմումատուն հանդես է գալիս լիազոր ներկայացուցչի միջոցով, ապա ներկայացվում է նաև դիմումատուի կողմից նրան պատշաճ կարգով տրված լիազորագիրը,
6) միջնորդագիր ներկայացուցչության ղեկավարի վերաբերյալ՝ համաձայն սույն կանոնակարգի Հավելված 18-ի:

**(35-րդ կետը խմբ., լրաց. 20.12.11թ. թիվ 355Ն, լրաց. 25.12.12թ. թիվ 372Ն)**

35.1. Ներկայացուցչության ղեկավարին փոփոխելու դեպքում օտարերկրյա ապահովագրական ընկերությունը պարտավոր է ներկայացուցչության ղեկավարին փոփոխելու վերաբերյալ որոշում կայացնելուց հետո 5-օրյա ժամկետում Կենտրոնական բանկ ներկայացնել ներկայացուցչության նոր նշանակված ղեկավարի վերաբերյալ միջնորդագիր՝ համաձայն սույն կանոնակարգի Հավելված 18-ի:

**(35.1 կետը լրաց. 25.12.12թ. թիվ 372Ն)**

36. Օտարերկրյա ապահովագրական ընկերության մասնաճյուղի կամ ներկայացուցչության գրանցման մասին Կենտրոնական բանկի որոշումը ընդունելուց հետո հնգօրյա (աշխատանքային) ժամկետում` հիմնադիրներին տրվում է օտարերկրյա ապահովագրական ընկերության ներկայացուցչության գրանցման վկայական` համաձայն հավելված 7բ-ի:

**(36-րդ կետը փոխ. 20.12.11թ. թիվ 355Ն)**

## ԳԼՈՒԽ 13. ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ` ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ՍՏԵՂԾՎՈՂ ՄԱՍՆԱՃՅՈՒՂԻ ԵՎ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑՉՈՒԹՅԱՆ ԳՐԱՆՑՈՒՄԸ

(Գլուխ 13-ի վերնագիրը փոխ. **20.12.11թ. թիվ 355Ն)**

37. Հայաստանի Հանրապետության տարածքում գործող ապահովագրական ընկերության՝ Հայաստանի Հանրապետության տարածքում ստեղծվող մասնաճյուղերը գրանցվում են Կենտրոնական բանկի կողմից: Գրանցման համար Կենտրոնական բանկ ներկայացվում են հետևյալ

փաստաթղթերը՝

1) «Ապահովագրության և ապահովագրական գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 46-րդ հոդվածի 4-րդ մասով ներկայացված փաստաթղթերը, ընդ որում՝

ա. ապահովագրական ընկերության միջնորդագիրը ներկայացվում է համաձայն սույն կանոնակարգի Հավելված 2գ-ի,

բ. մասնաճյուղի ղեկավարների գործունեության մասին տեղեկանքը (միջնորդագրի տեսքով) ներկայացվում է համաձայն սույն կանոնակարգի Հավելված 3-ի,

գ. գործարար ծրագիրը ներկայացվում է համաձայն սույն կանոնակարգի Հավելված 9.1-ի,

դ. մասնաճյուղի տեխնիկական հագեցվածությունը Կենտրոնական բանկի սահմանած չափանիշներին համապատասխանելու մասին հայտարարությունը ներկայացվում է համաձայն սույն կանոնակարգի Հավելված 13-ի,

2) ապահովագրական ընկերության կառավարման իրավասու մարմնի որոշումը կամ արձանագրությունից քաղվածք՝ մասնաճյուղի ղեկավարներ ընտրելու կամ նշանակելու մասին,

3) մասնաճյուղի ղեկավարների ստորագրությունների նմուշները,

4) մասնաճյուղի գրանցման պետական տուրքի վճարման անդորրագրի պատճենը,

5) եթե դիմումատուն հանդես է գալիս լիազոր ներկայացուցչի միջոցով, ապա ներկայացվում է նաև դիմումատուի կողմից նրան պատշաճ կարգով տրված լիազորագիրը,

6) մասնաճյուղի տարածքի սեփականության, վարձակալության (ենթավարձակալության) կամ անհատույց օգտագործման իրավունքի պետական գրանցման վկայականի պատճենը: Ենթավարձակալության դեպքում անհրաժեշտ է ներկայացնել նաև հիմնական վարձակալության պայմանագրի պատճենը կամ այդ պայմանագրի առկայությունը, ինչպես նաև հիմնական միջոցը ենթավարձակալության տալու իրավունքը հավաստող փաստաթուղթը,

7) մասնաճյուղի գործունեության կանոնակարգերը, ընդ որում սույն ենթակետի համաձայն Կենտրոնական բանկ են ներկայացվում առնվազն այն բոլոր կանոնակարգերը, որոնց առկայությունը օրենքի կամ նորմատիվ իրավական ակտի համաձայն պարտադիր է ապահովագրական ընկերության՝ Հայաստանի Հանրապետության տարածքում ստեղծված մասնաճյուղի համար՝ գրանցման դիմումը ներկայացնելու օրվա դրությամբ (բացառությամբ այն դեպքերի, երբ մասնաճյուղի գործունեությունը կանոնակարգվում է ապահովագրական ընկերության գործունեության կանոնակարգերով և այդ կանոնակարգերն արդեն իսկ ներկայացվել են Կենտրոնական բանկ):

**(37-րդ կետը փոփ. 01.07.08թ. թիվ 188Ն, խմբ. 20.12.11թ. թիվ 355Ն)**

38. Հայաստանի Հանրապետության տարածքում գործող ապահովագրական ընկերության՝ Հայաստանի Հանրապետության տարածքում ստեղծվող ներկայացուցչությունները գրանցվում են Կենտրոնական բանկի կողմից: Գրանցման համար Կենտրոնական բանկ ներկայացվում են հետևյալ փաստաթղթերը՝

1) «Ապահովագրության և ապահովագրական գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 46-րդ հոդվածի 5-րդ մասով ներկայացված փաստաթղթերը: Ընդ որում ապահովագրական ընկերության ներկայացուցչության գրանցման համար դիմումը ներկայացվում է համաձայն սույն կանոնակարգի հավելված 2գ-ի,
2) ներկայացուցչության տարածքի սեփականության, վարձակալության (ենթավարձակալության) կամ անհատույց օգտագործման իրավունքի պետական գրանցման վկայականի պատճենը: Ենթավարձակալության դեպքում անհրաժեշտ է ներկայացնել նաև հիմնական վարձակալության պայմանագրի պատճենը:
3) Ներկայացուցչություն բացելու հիմնավորումը:
4) Ներկայացուցչության գրանցման պետական տուրքի վճարման անդորրագրի պատճենը:
5) Եթե դիմումատուն հանդես է գալիս լիազոր ներկայացուցչի միջոցով, ապա ներկայացվում է նաև պատշաճ կարգով տրված լիազորագիրը:
6) միջնորդագիր ներկայացուցչության ղեկավարի վերաբերյալ՝ համաձայն սույն կանոնակարգի Հավելված 18-ի:

**(38-րդ կետը լրաց. 20.12.11թ. թիվ 355Ն, լրաց 25.12.12թ. թիվ 372Ն)**

38.1. Ներկայացուցչության ղեկավարին փոփոխելու դեպքում ապահովագրական ընկերությունը պարտավոր է ներկայացուցչության ղեկավարին փոփոխելու վերաբերյալ որոշում կայացնելուց հետո 5-օրյա ժամկետում Կենտրոնական բանկ ներկայացնել ներկայացուցչության նոր նշանակված ղեկավարի վերաբերյալ միջնորդագիր՝ համաձայն սույն կանոնակարգի Հավելված 18-ի:

39. Ապահովագրական ընկերության մասնաճյուղի կամ ներկայացուցչության գրանցման մասին Կենտրոնական բանկի որոշումն ընդունելուց հետո հնգօրյա (աշխատանքային) ժամկետում հիմնադիրներին տրվում է ապահովագրական ընկերության մասնաճյուղի կամ ներկայացուցչության գրանցման վկայական՝ համաձայն հավելված 7գ-ի:

## ԳԼՈՒԽ 14. ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔԻՑ ԴՈՒՐՍ ՄԱՍՆԱՃՅՈՒՂ ԵՎ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑՉՈՒԹՅՈՒՆ ՍՏԵՂԾԵԼՈՒ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՍՏԱՆԱԼԸ

40. Հայաստանի Հանրապետության տարածքում գործող ապահովագրական ընկերությունը Հայաստանի Հանրապետության տարածքից դուրս մասնաճյուղ և ներկայացուցչություն ստեղծելիս Կենտրոնական բանկի համաձայնությունն ստանալու համար Կենտրոնական բանկ է ներկայացնում հետևյալ փաստաթղթերը՝

1) «Ապահովագրության և ապահովագրական գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 49-րդ հոդվածի 1-ին մասով ներկայացված փաստաթղթերը, ընդ որում՝ գործարար ծրագիր ներկայացվում է միայն մասնաճյուղի համար՝ սույն կանոնակարգի Հավելված 9.1-ի համաձայն
2) ապահովագրական ընկերության խորհրդի որոշումը մասնաճյուղ կամ ներկայացուցչություն բացելու մասին կամ խորհրդի նիստի արձանագրությունից քաղվածք,
3) մասնաճյուղի կամ ներկայացուցչության կանոնադրությունը,
4) մասնաճյուղի ղեկավարների գործունեության վերաբերյալ տեղեկանք՝

(միջնորդագրի տեսքով) համաձայն հավելված 3-ի, ղեկավարների ստորագրությունների նմուշները կամ միջնորդագիր ներկայացուցչության ղեկավարի վերաբերյալ՝ համաձայն սույն կանոնակարգի Հավելված 18-ի,

5) ապահովագրական ընկերության խորհրդի որոշումը մասնաճյուղի ղեկավարներ ընտրելու կամ նշանակելու մասին կամ խորհրդի նիստի արձանագրությունից քաղվածք,
6) մասնաճյուղի կամ ներկայացուցչության տարածքի սեփականության, վարձակալության (ենթավարձակալության) կամ անհատույց օգտագործման իրավունքի պետական գրանցման վկայականի պատճենը: Ենթավարձակալության դեպքում անհրաժեշտ է ներկայացնել նաև հիմնական վարձակալության պայմանագրի պատճենըկամ այդ պայմանագրի առկայությունը, ինչպես նաև հիմնական միջոցը ենթավարձակալության տալու իրավունքը հավաստող փաստաթուղթը:
7) ներկայացուցչություն բացելու հիմնավորումը,
8) մասնաճյուղի գործունեության կանոնակարգերը, ընդ որում սույն ենթակետի համաձայն Կենտրոնական բանկ են ներկայացվում առնվազն այն բոլոր կանոնակարգերը, որոնց առկայությունը օրենքի կամ նորմատիվ իրավական ակտի համաձայն պարտադիր է ապահովագրական ընկերության՝ Հայաստանի Հանրապետության տարածքից դուրս ստեղծված մասնաճյուղի համար՝ գրանցման դիմումը ներկայացնելու օրվա դրությամբ (բացառությամբ այն դեպքերի, երբ մասնաճյուղի գործունեությունը կանոնակարգվում է ապահովագրական ընկերության գործունեության կանոնակարգերով և այդ կանոնակարգերն արդեն իսկ ներկայացվել են Կենտրոնական բանկ):

**(40-րդ կետը լրաց. 20.12.11թ. թիվ 355Ն, լրաց. 25.12.12թ. թիվ 372Ն)**

40.1. Ներկայացուցչության ղեկավարին փոփոխելու դեպքում ապահովագրական ընկերությունը պարտավոր է ներկայացուցչության ղեկավարին փոփոխելու վերաբերյալ որոշում կայացնելուց հետո 5-օրյա ժամկետում Կենտրոնական բանկ ներկայացնել ներկայացուցչության նոր նշանակված ղեկավարի վերաբերյալ տեղեկանք՝ համաձայն սույն կանոնակարգի Հավելված 18-ի:

**(40.1-րդ կետը լրաց. 25.12.12թ. թիվ 372Ն)**

41. Կենտրոնական բանկը տալիս է Հայաստանի Հանրապետության տարածքում գործող ապահովագրական ընկերության` Հայաստանի Հանրապետության տարածքից դուրս մասնաճյուղ կամ ներկայացուցչություն ստեղծելու համաձայնությունը կամ մերժում է միջնորդագիրը այն Կենտրոնական բանկ ներկայացնելու օրվանից 30-օրյա ժամկետում:

42. Ապահովագրական ընկերության մասնաճյուղի կամ ներկայացուցչության ստեղծելու համաձայնության մասին Կենտրոնական բանկի որոշումն ընդունելուց հետո այն տրվում է հիմնադիրներին հնգօրյա (աշխատանքային) ժամկետում:

42.1. Ապահովագրական ընկերությունը համապատասխան երկրի օրենսդրությամբ սահմանված կարգով այլ երկրում մասնաճյուղ կամ

ներկայացուցչություն գրանցելուց (լիցենզավորելուց, արտոնագրելուց) հետո 5 աշխատանքային օրվա ընթացքում Կենտրոնական բանկ է ներկայացնում գրանցման (լիցենզավորման, արտոնագրման) փաստը վկայող փաստաթուղթը՝ կցելով մասնաճյուղի կամ ներկայացուցչության գրանցված կանոնադրությունը:
**(42.1 կետը լրաց. 20.12.11թ. թիվ 355Ն)**

42.2. Կենտրոնական բանկը ապահովագրական ընկերության՝ Հայաստանի Հանրապետության տարածքից դուրս մասնաճյուղի կամ ներկայացուցչության գրանցման (լիցենզավորման, արտոնագրման) փաստը վկայող փաստաթուղթը ստանալուց հետո 5 աշխատանքային օրվա ընթացքում այդ մասին ծանուցում է իրավաբանական անձանց գրանցումն իրականացնող պետական լիազորված մարմնին՝ վերջինիս կողմից ապահովագրական ընկերության՝ Հայաստանի Հանրապետության տարածքից դուրս մասնաճյուղի կամ ներկայացուցչության գրանցման մասին համապատասխան գրառում կատարելու համար:
**(42.2 կետը լրաց. 20.12.11թ. թիվ 355Ն)**

## ԳԼՈՒԽ 15. ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԳՐԱՆՑՄԱՆ ՆԵՐԿԱՅԱՑՄԱՆ ԿԱՐԳԸ ԵՎ ՁԵՎԸ

43. Հայաստանի Հանրապետության տարածքում գործող ապահովագրական ընկերությունները, օտարերկրյա ապահովագրական ընկերությունների մասնաճյուղերն ու ներկայացուցչությունները փոփոխությունները տեղի ունենալուց հետո 10 օրվա ընթացքում Կենտրոնական բանկի գրանցմանն են ներկայացնում.

1) սույն կանոնակարգի համաձայն Կենտրոնական բանկի գրանցմանը ենթակա ղեկավարների կազմում կատարված փոփոխությունները,

2) ապահովագրական ընկերության, օտարերկրյա ապահովագրական ընկերության մասնաճյուղի, օտարերկրյա ապահովագրական ընկերության ներկայացուցչության, ապահովագրական ընկերության՝ Հայաստանի Հանրապետությունում տարածքային ստորաբաժանման կանոնադրությունում կատարված փոփոխությունները:

**(43-րդ կետը խմբ. 20.12.11թ. թիվ 355Ն)**

44. Ղեկավարների կազմում կատարված փոփոխությունները Կենտրոնական բանկում գրանցվում են սույն կանոնակարգով սահմանված կարգով:

45. Ապահովագրական ընկերության, օտարերկրյա ապահովագրական ընկերության մասնաճյուղի, օտարերկրյա ապահովագրական ընկերության ներկայացուցչության, ապահովագրական ընկերության՝ Հայաստանի Հանրապետությունում տարածքային ստորաբաժանման կանոնադրություններում կատարված փոփոխությունները Կենտրոնական բանկում գրանցելու համար ներկայացվում են հետևյալ փաստաթղթերը.

1) կատարված փոփոխությունները գրանցելու մասին միջնորդագիր՝ ապահովագրական ընկերության կառավարման մարմնի լիազոր անձի ստորագրությամբ՝ վավերացված ապահովագրական ընկերության կնիքով (առկայության դեպքում),
2) ապահովագրական ընկերության իրավասու մարմնի որոշումը կամ արձանագրությունից քաղվածք՝ ապահովագրական ընկերության, օտարերկրյա ապահովագրական ընկերության մասնաճյուղի, օտարերկրյա ապահովագրական ընկերության ներկայացուցչության, ապահովագրական ընկերության՝ Հայաստանի Հանրապետությունում տարածքային ստորաբաժանման կանոնադրությունում կատարված փոփոխությունների վերաբերյալ,
3) ապահովագրական ընկերության, օտարերկրյա ապահովագրական ընկերության մասնաճյուղի, օտարերկրյա ապահովագրական ընկերության ներկայացուցչության, ապահովագրական ընկերության՝ Հայաստանի Հանրապետությունում տարածքային ստորաբաժանման փոփոխված կանոնադրությունը,
4) եթե կանոնադրության փոփոխությունը առաջացնում է լիցենզիայի վերաձևակերպման անհրաժեշտություն, ապա ներկայացվում են նաև սույն կանոնակարգի 5-րդ գլխով պահանջվող փաստաթղթերը:

**(45-րդ կետը լրաց. 01.12.09թ. թիվ 360Ն, խմբ. 20.12.11թ. թիվ 355Ն)**

46. Եթե ապահովագրական ընկերության, օտարերկրյա ապահովագրական ընկերության մասնաճյուղի, օտարերկրյա ապահովագրական ընկերության ներկայացուցչության, ապահովագրական ընկերության՝ Հայաստանի Հանրապետությունում տարածքային ստորաբաժանման կանոնադրության փոփոխությունը պայմանավորված է գործունեության վայրի փոփոխությամբ, ապա սույն կանոնակարգի 45-րդ կետում նշված փաստաթղթերից բացի Կենտրոնական բանկ պետք է ներկայացվեն նաև՝

1) տարածքի սեփականության, վարձակալության (ենթավարձակալության) կամ անհատույց օգտագործման իրավունքի պետական գրանցման վկայականի պատճենը: Ենթավարձակալության դեպքում անհրաժեշտ է ներկայացնել նաև հիմնական վարձակալության պայմանագրի պատճենը կամ այդ պայմանագրի առկայությունը, ինչպես նաև հիմնական միջոցը ենթավարձակալության տալու իրավունքը հավաստող փաստաթուղթը,
2) տարածքի և տեխնիկական հագեցվածության՝ սույն

կանոնակարգի գլուխ 7-ով սահմանված չափանիշներին համապատասխանելու մասին փաստաթղթերը,

3) հայտարարություն՝ համաձայն սույն կանոնակարգի Հավելված 13-ի:

**(46-րդ կետը լրաց. 01.07.08թ. թիվ 188Ն, խմբ. 20.12.11թ. թիվ 355Ն)**

46.1 Եթե ապահովագրական ընկերության կանոնադրության փոփոխությունը պայմանավորված է ապահովագրական ընկերության ֆիրմային անվանման փոփոխությամբ, ապա բացի սույն կանոնակարգի 45-րդ կետում նշված փաստաթղթերից Կենտրոնական բանկ պետք է ներկայացվեն նաև.

1) ֆիրմային անվանման գրանցման հայտ և այլ պահանջվող փաստաթղթերը՝ համաձայն Ապահովագրության և ապահովագրական գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 40-րդ հոդվածի 1-ին մասի 3.1 կետով սահմանված՝ Հայաստանի Հանրապետության Կենտրոնական բանկի խորհրդի և Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարի կողմից համատեղ սահմանված կարգի,

2) **(2-րդ ենթակետը ուժը կորցրել է 13.11.12թ. թիվ 311 Ն որոշմամբ):**

**(46.1 կետը լրաց. 22.09.09թ. թիվ 278Ն, խմբ. 20.12.11թ. թիվ 355Ն, խմբ. 13.11.12թ. թիվ 311Ն)**

47. Ապահովագրական ընկերության կանոնադրական հիմնադրամի ավելացման դեպքում ապահովագրական ընկերության փոփոխված կանոնադրության գրանցման համար ապահովագրական ընկերությունը Կենտրոնական բանկ է ներկայացնում սույն կանոնակարգի 45-րդ կետով նախատեսված փաստաթղթերը, ինչպես նաև բաժնետոմսերի վերջին թողարկման հայտարարագրի գրանցման վերաբերյալ որոշման պատճենը (բաց բաժնետիրական ապահովագրական ընկերության համար):

48. Կենտրոնական բանկը պարտավոր է սույն գլխում սահմանված փոփոխությունների գրանցման համար սույն գլխով սահմանված փաստաթղթերն ստանալու պահից 30-օրյա ժամկետում գրանցել փոփոխությունները կամ մերժել գրանցումը: Փոփոխությունները գրանցվում են, կամ փոփոխությունների գրանցումը մերժվում է Կենտրոնական բանկի որոշմամբ:

49. Կենտրոնական բանկի կողմից պահանջվող որոշակի փաստեր պարզաբանելու նպատակով 30-օրյա ժամկետը կարող է կասեցվել մինչև մեկ ամիս ժամկետով:

**(49 կետը խմբ. 22.09.09թ. թիվ 278Ն)**

## ԳԼՈՒԽ 15.1. ՖԻՐՄԱՅԻՆ ԱՆՎԱՆՄԱՆ ԳՐԱՆՑՈՒՄԸ, ՖԻՐՄԱՅԻՆ ԱՆՎԱՆՄԱՆ ԳՐԱՆՑՄԱՆ ՀԱՅՏԸ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ ԿՈՂՄԻՑ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ ՆԵՐԿԱՅԱՑՆԵԼՈՒ ԿԱՐԳԸ

**(Գլուխ 15.1-ը լրաց. 22.09.09թ. թիվ 278Ն, փոխ. 20.12.11թ. թիվ 355Ն, ուժը կորցրել է 13.11.12թ. թիվ 311Ն)**

## ԳԼՈՒԽ 16. ՄԱՍՆԱՃՅՈՒՂԵՐԻ ԵՎ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑՉՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԴԱԴԱՐԵՑՄԱՆ (ՆԵՐԱՌՅԱԼ՝ ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ԴԱԴԱՐԵՑՄԱՆ) ԿԱՐԳԸ ԵՎ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

50. Ապահովագրական ընկերությունը կարող է ժամանակավորապես դադարեցնել իր մասնաճյուղի կամ ներկայացուցչության գործունեությունը, բայց ոչ ավելի, քան մեկ տարի ժամանակով: Ընդ որում, մասնաճյուղի կամ ներկայացուցչության գործունեությունը ժամանակավորապես դադարեցնելու վերաբերյալ իրավասու մարմնի որոշման մեջ անհրաժեշտ է հստակ նշել այն ժամկետը, որի ավարտից հետո մասնաճյուղի կամ ներկայացուցչության գործունեությունը համարվում է վերսկսված կամ գործունեությունը վերսկսելուց առնվազն 20 օր առաջ այդ մասին գրավոր տեղեկացնել Կենտրոնական բանկին:
**(50-րդ կետը խմբ. 20.12.11թ. թիվ 355Ն)**

51. Ապահովագրական ընկերության մասնաճյուղի կամ ներկայացուցչության գործունեության ժամանակավոր դադարեցման թույլտվություն ստանալու նպատակով ապահովագրական ընկերությունը Կենտրոնական բանկ է ներկայացնում հետևյալ փաստաթղթերը՝

1) մասնաճյուղի կամ ներկայացուցչության գործունեության ժամանակավոր դադարեցման թույլտվություն ստանալու միջնորդագիր՝ ապահովագրական ընկերության կառավարման մարմնի կողմից լիազորված անձի ստորագրությամբ,
2) ապահովագրական ընկերության իրավասու մարմնի որոշումը՝ մասնաճյուղի կամ ներկայացուցչության գործունեության ժամանակավոր դադարեցման մասին,
3) մասնաճյուղի կամ ներկայացուցչության գործունեության ժամանակավոր դադարեցման հիմնավորումները,
4) մասնաճյուղի ակտիվների և պարտավորությունների փոխանցումը հավաստող փաստաթուղթ:

52. Կենտրոնական բանկը, Կենտրոնական բանկի որոշմամբ կարող է մերժել մասնաճյուղի կամ ներկայացուցչության ժամանակավոր դադարեցումը, եթե՝

1) ներկայացված փաստաթղթերում արտացոլված տվյալները անարժանահավատ են կամ կեղծ,
2) ներկայացված փաստաթղթերը թերի են,
3) Կենտրոնական բանկի հիմնավոր կարծիքով՝ ապահովադիրների կամ ապահովագրված անձանց կամ շահառուների հետագա բնականոն սպասարկումն ապահոված չէ,
4) տվյալ տարածաշրջանում բացակայում է ապահովագրական ծառայությունների մատուցումը որևէ այլ ապահովագրական ընկերության կողմից:

53. Սույն կանոնակարգի 51-րդ կետով նախատեսված փաստաթղթերը ներկայացնելուց հետո 20-օրյա ժամկետում Կենտրոնական բանկը տալիս է իր համաձայնությունը մասնաճյուղի կամ ներկայացուցչության գործունեության ժամանակավոր դադարեցման մասին կամ մերժում՝ մերժման հիմքերի մասին տասնօրյա ժամկետում տեղեկացնելով ապահովագրական ընկերությանը: Կենտրոնական բանկի կողմից պահանջվող որոշակի տեղեկություններ ստանալու համար ապահովագրական ընկերության տարածքային ստորաբաժանման գործունեության ժամանակավոր դադարեցման դիմումի քննության 20-օրյա ժամկետը կարող է կասեցվել: Անհրաժեշտ տեղեկությունների ստացումից հետո միջնորդագրով

ներկայացված փաստաթղթերի քննության ժամկետը չպետք է գերազանցի մինչև կասեցումն ընկած օրերի և 20-օրյա ժամկետի տարբերությամբ առաջացող օրերի քանակը:

54. Կենտրոնական բանկի կողմից 20-օրյա ժամկետում դիմումը չմերժելու կամ նշված ժամկետում կասեցնելու մասին ապահովագրական ընկերությանը չտեղեկացնելու դեպքում մասնաճյուղի կամ ներկայացուցչության գործունեությունը համարվում է ժամանակավորապես դադարեցված:

55. Մասնաճյուղի կամ ներկայացուցչության գործունեությունը ժամանակա-վորապես դադարեցնելու վերաբերյալ Կենտրոնական բանկի նախագահի որոշումն ստանալուց հետո եռօրյա ժամկետում ապահովագրական ընկերությունը մասնաճյուղի գործունեությունը ժամանակավորապես դադարեցնելու մասին տեղեկատվությունը հրապարակում է առնվազն հազար տպաքանակ ունեցող հանրապետական մամուլում և Կենտրոնական բանկ է ներկայացնում այդ տեղեկատվությունը պարունակող թերթի (ամսագրի) օրինակը, ինչպես նաև տեղակայում այդ տեղեկատվությունը ապահովագրական ընկերության ինտերնետային կայքում:

**(55-րդ կետը լրաց. 01.07.08թ. թիվ 188Ն)**

56. (56-րդ կետը ուժը կորցրել է 01.07.08թ. թիվ 188 Ն որոշմամբ)

57. Մասնաճյուղի կամ ներկայացուցչության գործունեության դադարեցման դեպքում ապահովագրական ընկերությունը Կենտրոնական բանկ է ներկայացնում հետևյալ փաստաթղթերը՝

1) մասնաճյուղը կամ ներկայացուցչությունը գրանցումից հանելու մասին միջնորդագիր՝ ապահովագրական ընկերության կառավարման մարմնի կողմից լիազորված անձի ստորագրությամբ,
2) մասնաճյուղի կամ ներկայացուցչության գործունեության դադարեցման մասին ապահովագրական ընկերության իրավասու մարմնի որոշումը կամ արձանագրությունը,
3) մասնաճյուղի կամ ներկայացուցչության գործունեության դադարեցման հիմնավորումները,
4) (4-րդ ենթակետը ուժը կորրել է 20.12.11թ. թիվ 355 Ն որոշմամբ),
5) մասնաճյուղի ակտիվների և պարտավորությունների փոխանցումը հաստատող փաստաթուղթ,
6) (6-րդ ենթակետը ուժը կորցրել է 01.07.08թ. թիվ 188-Ն որոշմամբ)

58. Կենտրոնական բանկը կարող է մերժել մասնաճյուղի կամ ներկայացուցչության գործունեության դադարեցման, ժամանակավոր դադարեցման գրանցումը, եթե՝

1) ներկայացված փաստաթղթերում արտացոլված տվյալները անարժանահավատ են կամ կեղծ,
2) ներկայացված փաստաթղթերը թերի են,
3) Կենտրոնական բանկի հիմնավոր կարծիքով՝ ապահովադիրների կամ ապահովագրված անձանց կամ շահառուների հետագա բնականոն սպասարկումն ապահովված չէ,
4) տվյալ տարածաշրջանում բացակայում է ապահովագրական ծառայությունների մատուցումը որևէ այլ ապահովագրական ընկերության կողմից:

**(58-րդ կետը խմբ. 20.12.11թ. թիվ 355Ն)**

59. Կենտրոնական բանկը՝ Կենտրոնական բանկի որոշմամբ գրանցում է մասնաճյուղի գործունեության դադարեցումը, եթե մասնաճյուղը Կենտրոնական բան-կում գրանցվելու պահից վեց ամսվա ընթացքում չի իրականացրել ապահովագրական գործունեություն:

60. Մասնաճյուղի կամ ներկայացուցչության գործունեության դադարեցման վերաբերյալ Կենտրոնական բանկի որոշումը ուժի մեջ մտնելուց հետո ապահովագրական ընկերությունը եռօրյա ժամկետում մասնաճյուղի կամ ներկայացուցչության գործունեությունը դադարեցնելու մասին տեղեկատվությունը հրապարակում է առնվազն հազար օրինակ տպաքանակ ունեցող հանրապետական մամուլում և Կենտրոնական բանկ է ներկայացնում այդ տեղեկատվությունը պարունակող թերթի (ամսագրի) օրինակը, ինչպես նաև տեղակայում այդ տեղեկատվությունը ապահովագրական ընկերության ինտերնետային կայքում:

60.1 Հայաստանի Հանրապետության տարածքից դուրս ստեղծված մասնաճյուղը կամ ներկայացուցչությունը այլ երկրի համապատասխան իրավասու մարմնի կողմից գրանցումից հանելուց հետո 5 աշխատանքային օրվա ընթացքում ապահովագրական ընկերությունը Կենտրոնական բանկ է ներկայացնում այդ փաստը վկայող փաստաթուղթը: Սույն կետով նշված փաստաթուղթը ստանալուց հետո 5 աշխատանքային օրվա ընթացքում Կենտրոնական բանկը այդ մասին ծանուցում է իրավաբանական անձանց գրանցումն իրականացնող պետական լիազորված մարմնին՝ վերջինիս կողմից համապատասխան գրառում կատարելու համար:

**(60.1 կետը լրաց. 01.07.08թ. թիվ 188Ն, խմբ. 20.12.11թ. թիվ 355Ն)**

## ԳԼՈՒԽ 17. ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԿԱՆՈՆԱԴՐԱԿԱՆ ԿԱՊԻՏԱԼՈՒՄ ՈՒՂՂԱԿԻ ՆՇԱՆԱԿԱԼԻՑ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅԱՆ ՆԱԽՆԱԿԱՆ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՍՏԱՆԱԼԸ ԵՎ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԸ

61. Ինչպես գործող, այնպես էլ նորաստեղծ ապահովագրական ընկերությունների կանոնադրական կապիտալում նշանակալից մասնակցություն ձեռք բերելու մտադրություն ունեցող իրավաբանական անձ հանդիսացող ուղղակի մասնակիցը, մինչև տվյալ մասնակցությունը ձեռք բերելը, նախնական համաձայնություն ստանալու համար Կենտրոնական բանկ է ներկայացնում հետևյալ փաստաթղթերը՝

1) իրավաբանական անձի կողմից ապահովագրական ընկերության կանոնադրական կապիտալում նշանակալից մասնակցություն ձեռք բերելու համար իրավաբանական անձի միջնորդագիրը,
2) ապահովագրական ընկերության միջնորդությունը՝ իրավաբանական անձի կողմից ապահովագրական ընկերության կանոնադրական կապիտալում նշանակալից մասնակցություն ձեռք բերելուն համաձայնություն տալու վերաբերյալ՝ ապահովագրական ընկերության կառավարման մարմնի կողմից լիազորված անձի ստորագրությամբ՝ վավերացված ապահովագրական ընկերության կնիքով (առկայության դեպքում),
3) ապահովագրական ընկերության գործադիր տնօրենի գրավոր հավաստիացումը, որ ընկերության կանոնադրական կապիտալում ընկերության մասնակցի բաժնեմասը (բաժնետոմսը) գնելու նախապատվության իրավունքի կիրառման՝ օրենքով և այլ իրավական ակտերով նախատեսված կանոնները պահպանված են,
4) կանոնադրական կապիտալում նշանակալից մասնակցություն ձեռք բերող իրավաբանական անձի իրավասու մարմնի որոշումը,
5) կանոնադրական կապիտալում նշանակալից մասնակցություն ձեռք բերող իրավաբանական անձի կանոնադրությունը,
6) կանոնադրական կապիտալում նշանակալից մասնակցություն ձեռք բերող

իրավաբանական անձի մասնակիցների ցուցակը` նշելով նրանց մասնակցության չափը (տոկոսով) կանոնադրական կապիտալի մեջ,

7) տեղեկանք` ապահովագրական ընկերության կանոնադրական կապիտալում նշանակալից մասնակցություն ձեռք բերող իրավաբանական անձի վերաբերյալ` համաձայն սույն կանոնակարգի հավելված 4ա-ի,

8) իրավաբանական անձի` վերջին երեք տարիների և վերջին միջանկյալ` հաշվապահական հաշվեկշիռը, ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունը, դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվությունը, սեփական կապիտալում փոփոխությունների մասին հաշվետվությունը, ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրությունները (երեք տարուց պակաս գործունեություն իրականացրած իրավաբանական անձանց նշված տեղեկությունները ներկայացնում են իրականացրած գործունեության ողջ ժամկետի համար):.

9) անկախ աուդիտորական եզրակացությունը, որը հավաստում է վերջին տարեկան ֆինանսական հաշվետվությունների համապատասխանությունը հաշվապահական հաշվառման այն ստանդարտներին, որոնք համաձայն «Հաշվապահական հաշվառման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի պետք է կիրառվեն տվյալ կազմակերպության կողմից հաշվապահական հաշվառում վարելիս և ֆինանսական հաշվետվություններ կազմելիս և ներկայացնելիս, իսկ օտարերկրյա իրավաբանական անձանց համար` ֆինանսական հաշվետվությունների միջազգային,

10) (10-րդ ենթակետը ուժը կորցրել է 01.07.08թ. թիվ 188-Ն որոշմամբ)

11) Տեղեկանք` տրված իրավասու մարմնի կողմից բյուջեի և կենսաթոշակային հիմնադրամի նկատմամբ ունեցած պարտքերի կամ դրանց բացակայության վերաբերյալ (ռեզիդենտների համար):

12) Ներդրվող միջոցների ծագման օրինականության վերաբերյալ բավարար և ամբողջական հիմնավորումներ (փաստաթղթեր, տեղեկություններ և այլն):

13) Նշանակալից մասնակցություն ակնկալող իրավաբանական անձի հայտարարագիրը` ապահովագրական ընկերության կողմից Կենտրոնական բանկ ներկայացված գործարար ծրագրում իր կողմից առաջարկվող փոփոխությունների վերաբերյալ:

14) Հայտարարություն «Ապահովագրության և ապահովագրական գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ և 6-րդ կետով նախատեսված հիմքերի բացակայության կամ առկայության մասին:

15) Հայտարարություն այն մասին, որ իր միջոցով որևէ այլ անձ ապահովագրական ընկերությունում անուղղակի նշանակալից մասնակցություն ունեցող անձի կարգավիճակ ձեռք չի բերում` համաձայն հավելված 6ա-ի, հակառակ դեպքում` իր միջոցով անուղղակի նշանակալից մասնակցություն ձեռք բերող անձի վերաբերյալ սույն կանոնակարգի գլուխ 18-ով սահմանված փաստաթղթերը: Սույն կետում նշված հայտարարությունը պետք է ներկայացվի Կենտրոնական բանկ այն ապահովագրական ընկերության միջնորդությամբ, որում անձը նախատեսել է ձեռք բերել կամ ձեռք է բերել նշանակալից մասնակցություն:

16) կանոնադրական կապիտալում նշանակալից մասնակցություն ձեռք բերող անձի հետ փոխկապակցված իրավաբանական և ֆիզիկական անձանց վերաբերյալ տեղեկություններ՝ համաձայն սույն

կանոնակարգի համապատասխանաբար Հավելված 5ա-ի և Հավելված 5բ-ի:

**(61-րդ կետը խմբ., փոխ., լրաց. 01.07.08թ. թիվ 188Ն, փոխ., լրաց. 01.12.09թ. թիվ 360Ն, փոխ., խմբ., լրաց. 20.12.11թ. թիվ 355Ն)**

62. Եթե իրավաբանական անձ հանդիսացող ուղղակի մասնակիցն ընդգրկված է որևէ խմբի (միության) կամ ցանկացած այլ հիմքով իրենց ֆինանսական հաշվետվությունները համախմբող անձանց կազմում, ապա Կենտրոնական բանկ են ներկայացվում (միևնույն խմբում (միությունում) կամ ցանկացած այլ հիմքով իրենց ֆինանսական հաշվետվությունները համախմբող անձանց կազմում այլ նշանակալից մասնակցի կամ փոխկապակցված անձի առկայության դեպքում սույն կետի 1-ին, 2-րդ և 3-րդ ենթակետերով պահանջվող հաշվետվությունը (տեղեկությունները) ներկայացվում է նրանցից որևէ մեկի կողմից) սույն կանոնակարգի 61-րդ կետով ներկայացված փաստաթղթերը (բացառությամբ 61-րդ կետի 8-րդ, 9-րդ ենթակետերով սահմանված փաստաթղթերի), ինչպես նաև՝

1) խմբի (միության) կառուցվածքը,
2) խմբի (միության) վերջին ֆինանսական տարվա՝
   ա. հաշվապահական հաշվեկշիռը,
   բ. ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունը,
   գ. դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվությունը,
   դ. սեփական կապիտալում փոփոխությունների մասին հաշվետվությունը,
   ե. ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրությունները (մեկ տարուց պակաս գործունեություն իրականացրած իրավաբանական անձինք նշված տեղեկությունները ներկայացնում են իրականացրած գործունեության ողջ ժամկետի համար),

անկախ աուդիտորական եզրակացությունը, որը հավաստում է խմբի (միության) վերջին տարեկան ֆինանսական հաշվետվությունների համապատասխանությունը հաշվապահական հաշվառման այն ստանդարտներին, որոնք համաձայն «Հաշվապահական հաշվառման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի պետք է կիրառվեն տվյալ խմբի (միության) կողմից հաշվապահական հաշվառում վարելիս և ֆինանսական հաշվետվություններ կազմելիս և ներկայացնելիս, իսկ օտարերկրյա խմբի (միության) համար՝ ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտներին կամ միջազգայնորեն ճանաչված այլ ստանդարտներին (առկայության դեպքում): Ընդ որում, օտարերկրյա խմբի (միության) համար անկախ աուդիտորական եզրակացության բացակայության դեպքում Կենտրոնական բանկ է ներկայացվում հղում այդ պետության որևէ պաշտոնական ինտերնետային էջին, որտեղ նշված է, որ տվյալ պետության հաշվապահական հաշվառման ստանդարտները համապատասխանում են ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտներին կամ միջազգայնորեն ճանաչված այլ ստանդարտներին:

**(62-րդ կետը փոխ. 01.07.08թ. թիվ 188Ն, խմբ. 20.12.11թ. թիվ 355Ն)**

63. Եթե սույն կանոնակարգի 62-րդ կետի 2-րդ ենթակետով նախատեսված ֆինանսական հաշվետվությունները կազմված են օտարերկրյա պետության ազգային ստանդարտների համաձայն, ապա Կենտրոնական բանկ են ներկայացվում նաև.

1) տվյալ կազմակերպության ֆինանսական հաշվետվությունները հաստատող անկախ աուդիտորական կազմակերպության հայտարարությունն այն մասին, որ ներկայացված հաշվետվությունները համապատասխանում են հաշվապահական հաշվառման միջազգային ստանդարտներին, կամ
2) հղում այդ պետության որևէ պաշտոնական ինտերնետային էջի, որտեղ նշված է, որ տվյալ պետության հաշվապահական հաշվառման ստանդարտները համապատասխանում են հաշվապահական հաշվառման միջազգային ստանդարներին:

**(63-րդ կետը լրաց. 01.07.08թ. թիվ 188Ն, խմբ. 01.12.09թ. թիվ 360Ն)**

64. Եթե սույն կանոնակարգի 61-րդ կետի 8-րդ, 9-րդ ենթակետերով կամ 62-րդ կետով սահմանված հաշվետվությունները (տեղեկությունները) տեղակայված են համապատասխանաբար իրավաբանական անձի կամ խմբի (միության) ինտերնետային կայքում, ապա Կենտրոնական բանկին ներկայացվում է համապատասխան կայքի (տնային էջի) հասցեն:

**(64-րդ կետը խմբ. 20.12.11թ. թիվ 355Ն)**

65. Եթե ապահովագրական ընկերության կանոնադրական կապիտալում նշանակալից մասնակցություն ձեռք է բերվելու միջազգային կազմակերպությունների կողմից, ապա նրանց կողմից Կենտրոնական բանկ պետք է ներկայացվեն սույն կանոնակարգի 61-րդ կետի 1-ին, 2-րդ, 3-րդ, 4-րդ, 5-րդ, 8-րդ, 9-րդ, 13-րդ, 15-րդ ենթակետերով պահանջվող փաստաթղթերը: Կենտրոնական բանկի խորհրդի համաձայնությամբ սույն կետը կարող է տարածվել նաև միջազգային համբավ և (կամ) Ստանդարտ և Փուրզ կամ Ֆիտչ կամ Ա.Մ.Բեստ վարկանշող կազմակերպությունների կողմից «A-» կամ ավելի բարձր կամ Մուդիզ վարկանշող կազմակերպության կողմից «A3» կամ ավելի բարձր վարկանիշ ունեցող կազմակերպությունների վրա:

**(65-րդ կետը փոխ. 20.12.11թ. թիվ 355Ն)**

66. Եթե ապահովագրական ընկերության կանոնադրական կապիտալում նշանակալից մասնակցությունը ձեռք է բերում Կենտրոնական բանկի կողմից վերահսկվող անձը, ապա նա Կենտրոնական բանկ չի ներկայացնում սույն կանոնակարգի 61-րդ կամ 67-րդ կետերով սահմանված այն փաստաթղթերը, որոնք արդեն իսկ ներկայացվել են Կենտրոնական բանկ:

**(66-րդ կետը փոխ. 20.12.11թ. թիվ 355Ն)**

66.1. Եթե ապահովագրական ընկերության կանոնադրական կապիտալում ուղղակի նշանակալից մասնակցություն ձեռք է բերում Կենտրոնական բանկի կողմից «Ա» կամ «Բ» վարկանիշ ստացած կազմակերպությունը, ապա վերջինս Կենտրոնական բանկ պետք է ներկայացնի սույն կանոնակարգի 61-րդ կետով

սահմանված 1-ին, 2-րդ, 3-րդ, 4-րդ, 6-րդ, 7-րդ, 11-րդ, 12-րդ, 13-րդ, 14-րդ, 15-րդ և 16-րդ ենթակետերով պահանջվող փաստաթղթերը, իսկ նշված կազմակերպությունների կողմից Կենտրոնական բանկ ներկայացված սույն կանոնակարգի 61-րդ կետի 8-րդ և 9-րդ ենթակետերով սահմանված տեղեկությունները վերահսկողական նպատակներով օգտագործելու վերաբերյալ գրավոր համաձայնություն չտալու դեպքում ներկայացվում են նաև սույն կանոնակարգի 61-րդ 8-րդ և 9-րդ ենթակետորով սահմանված տեղեկությունները:

**(66.1-րդ կետը լրաց. 20.12.11թ. թիվ 355Ն)**

67. Ինչպես գործող, այնպես էլ նորաստեղծ ապահովագրական ընկերության կանոնադրական կապիտալում նշանակալից մասնակցություն ձեռք բերելու մտադրություն ունեցող ֆիզիկական անձ-ուղղակի մասնակիցը, մինչև տվյալ մասնակցությունը ձեռք բերելը, նախնական համաձայնություն ստանալու համար Կենտրոնական բանկ է ներկայացնում հետևյալ փաստաթղթերը՝

1) ֆիզիկական անձի կողմից ապահովագրական ընկերության կանոնադրական կապիտալում նշանակալից մասնակցություն ձեռք բերելու համար դիմում,
2) ապահովագրական ընկերության միջնորդությունը՝ ֆիզիկական անձի կողմից ապահովագրական ընկերության կանոնադրական կապիտալում նշանակալից մասնակցություն ձեռք բերելուն համաձայնություն տալու վերաբերյալ՝ ապահովագրական ընկերության կառավարման մարմնի կողմից լիազորված անձի ստորագրությամբ՝ վավերացված ապահովագրական ընկերության կնիքով (առկայության դեպքում),
3) ապահովագրական ընկերության գործադիր տնօրենի գրավոր հավաստիացումը, որ ընկերության կանոնադրական կապիտալում ընկերության մասնակցի բաժնեմասը (բաժնետոմսը) գնելու նախապատվության իրավունքի կիրառման՝ օրենքով և այլ իրավական ակտերով նախատեսված կանոնները պահպանված են,
4) տեղեկանք ապահովագրական ընկերության կանոնադրական կապիտալում նշանակալից մասնակցություն ձեռք բերող ֆիզիկական անձի վերաբերյալ՝ համաձայն սույն կանոնակարգի հավելված 4բ-ի,
5) **(5-րդ ենթակետը ուժը կորցրել է 20.12.11թ. թիվ 355 Ն որոշմամբ),**
6) նշանակալից մասնակցություն ակնկալող ֆիզիկական անձի հայտարարագիրը՝ ապահովագրական ընկերության կողմից Կենտրոնական բանկ ներկայացված գործարար ծրագրում իր կողմից առաջարկվող փոփոխությունների վերաբերյալ,
7) հայտարարություն «Ապահովագրության և ապահովագրական գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 3-րդ, 4-րդ, 5-րդ, 6-րդ կետերով նախա-տեսված հիմքերի բացակայության կամ առկայության մասին,
8) հայտարարություն այն մասին, որ իր միջոցով որևէ այլ անձ ապահովագրական ընկերությունում անուղղակի նշանակալից մասնակցություն ունեցող անձի կարգավիճակ ձեռք չի բերում՝ համաձայն հավելված 6ա-ի, հակառակ դեպքում՝ իր միջոցով անուղղակի նշանակալից մասնակցություն ձեռք բերող անձի վերաբերյալ սույն կանոնակարգի գլուխ 18-ով սահմանված փաստաթղթերը: Սույն կետում նշված հայտարարությունը պետք է ներկայացվի Կենտրոնական բանկ այն ապահովագրական ընկերության միջնորդությամբ, որում անձը

նախատեսել է ձեռք բերել կամ ձեռք է բերել նշանակալից մասնակցություն,

9) Ներդրվող միջոցների ծագման օրինականության վերաբերյալ բավարար և ամբողջական հիմնավորումներ (փաստաքղթեր, տեղեկություններ և այլն),

10) կանոնադրական կապիտալում նշանակալից մասնակցություն ձեռք բերող անձի հետ փոխկապակցված իրավաբանական և ֆիզիկական անձանց վերաբերյալ տեղեկություններ՝ համաձայն սույն կանոնակարգի համապատասխանաբար Հավելված 5ա-ի և Հավելված 5բ-ի:

**(67-րդ կետը խմբ., փոխ. 01.07.08թ. թիվ 188Ն, փոխ. 01.12.09թ. թիվ 360Ն, խմբ., լրաց. 20.12.11թ. թիվ 355Ն)**

68. Ապահովագրական ընկերության կանոնադրական կապիտալում նշանակալից մասնակցություն ձեռք բերել ցանկացող պետությունը մինչև տվյալ մասնակցությունը ձեռք բերելը, նախնական համաձայնություն ստանալու համար դիմում է Կենտրոնական բանկ՝ ներկայացնելով հետևյալ փաստաքղթերը.

1) ապահովագրական ընկերության կանոնադրական կապիտալում նշանակալից մասնակցություն ձեռք բերելու համար դիմում՝ պետության անունից հանդես գալու իրավունք ունեցող մարմնից,
2) կանոնադրական կապիտալում նշանակալից մասնակցություն ձեռք բերող պետության իրավասու մարմնի որոշումը՝ տվյալ ապահովագրական ընկերությունում նշանակալից մասնակցություն ձեռք բերելու մասին,
3) ապահովագրական ընկերության միջնորդությունը՝ պետության կողմից ապահովագրական ընկերության կանոնադրական կապիտալում նշանակալից մասնակցություն ձեռք բերելուն համաձայնություն տալու վերաբերյալ՝ ապահովագրական ընկերության կառավարման մարմնի կողմից լիազորված անձի ստորագրությամբ՝ վավերացված ապահովագրական ընկերության կնիքով (առկայության դեպքում),
4) ապահովագրական ընկերության գործադիր տնօրենի գրավոր հավաստիացումը, որ ընկերության կանոնադրական կապիտալում ընկերության մասնակցի բաժնեմասը (բաժնետոմսը) գնելու նախապատվության իրավունքի կիրառման՝ օրենքով և այլ իրավական ակտերով նախատեսված կանոնները պահպանված են,
5) նշանակալից մասնակցություն ակնկալող պետության իրավասու մարմնի կողմից լրացվող հայտարարագիրը՝ ապահովագրական ընկերության կողմից Կենտրոնական բանկ ներկայացված գործարար ծրագրում իր կողմից առաջարկվող փոփոխությունների վերաբերյալ:

**(68-րդ կետը խմբ. 01.07.08թ. թիվ 188Ն, լրաց. 01.12.09թ. թիվ 360Ն)**

68.1. Եթե նշանակալից մասնակցությունը ձեռք են բերում իրար հետ փոխկապակցված անձինք կամ ապահովագրական ընկերության մասնակցի հետ փոխկապակցված անձինք, ապա սույն գլխով պահանջվող փաստաթղթերը պահանջվում են նրանցից յուրաքանչյուրից:

**(68.1 կետը լրաց. 20.12.11թ. թիվ 355Ն)**

## ԳԼՈՒԽ 18. ԱՆՈՒՂՂԱԿԻ ՆՇԱՆԱԿԱԼԻՑ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅՈՒՆ ՁԵՌՔ ԲԵՐՈՂ ԱՆՁԱՆՑ ԿՈՂՄԻՑ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԸ ԵՎ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

69. Եթե նշանակալից մասնակցությունը ձեռք են բերում իրար հետ փոխկապակցված անձինք կամ ապահովագրական ընկերության մասնակցի հետ փոխկապակցված անձինք, ապա սույն գլխով պահանջվող փաստաթղթերը պահանջվում են նրանցից յուրաքանչյուրից:

70. Ապահովագրական ընկերությունում անուղղակի նշանակալից մասնակցություն ակնկալող անձի վերաբերյալ Կենտրոնական բանկ են ներկայացվում իրավաբանական անձի համար՝ սույն կանոնակարգի 61-րդ կետի 1-ին, 5-րդ, 6-րդ, 7-րդ, 8-րդ, 9-րդ, 11-րդ, 12-րդ, 13-րդ, 14-րդ, 15-րդ, 16-րդ ենթակետերով սահմանված փաստաթղթերը, իսկ ֆիզիկական անձի համար՝ սույն կանոնակարգի 67-րդ կետի 1-ին, 4-րդ, 6-րդ, 7-րդ, 8-րդ, 9-րդ և 10-րդ ենթակետերով սահմանված փաստաթղթերը:

**(70-րդ կետը փոխ. 01.07.08թ. թիվ 188Ն, խմբ. 20.12.11թ. թիվ 355Ն)**

71. Եթե ապահովագրական ընկերությունում անուղղակի նշանակալից մասնակցությունը ձեռք է բերվում ուղղակի նշանակալից մասնակցի միջոցով, ապա սույն կանոնակարգի 70-րդ կետում նշված փաստաթղթերը Կենտրոնական բանկ է ներկայացնում ուղղակի նշանակալից մասնակիցը, այլ դեպքերում՝ ապահովագրական ընկերությունը:

72. Եթե ապահովագրական ընկերության կանոնադրական կապիտալում անուղղակի նշանակալից մասնակցություն ձեռք է բերում Կենտրոնական բանկի կողմից վերահսկվող անձը, ապա նա Կենտրոնական բանկ չի ներկայացնում սույն կանոնակարգի 70-րդ կետով սահմանված այն փաստաթղթերը, որոնք արդեն իսկ ներկայացվել են Կենտրոնական բանկ:

**(72-րդ կետը փոխ. 01.07.08թ. թիվ 188Ն, խմբ. 20.12.11թ. թիվ 355Ն)**

73. Եթե ապահովագրական ընկերության կանոնադրական կապիտալում անուղղակի նշանակալից մասնակցություն ձեռք է բերում Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի կողմից «Ա» և «Բ» վարկանիշ ստացած կազմակերպությունը, ապա նա Կենտրոնական բանկ պետք է ներկայացնի սույն կանոնակարգի 61-րդ կետի 1-ին, 6-րդ, 7-րդ, 11-րդ, 12-րդ, 13-րդ, 14-րդ, 15-րդ և 16-րդ ենթակետերով պահանջվող փաստաթղթերը, իսկ նշված կազմակերպությունների կողմից Կենտրոնական բանկ ներկայացված սույն կանոնակարգի 61-րդ կետի 8-րդ և 9-րդ ենթակետերով սահմանված տեղեկությունները վերահսկողական նպատակներով օգտագործելու վերաբերյալ գրավոր համաձայնություն չտալու դեպքում ներկայացվում են նաև սույն կանոնակարգի 61-րդ 8-րդ և 9-րդ ենթակետերով սահմանված տեղեկությունները:

**(73-րդ կետ կետը փոխ. 01.07.08թ. թիվ 188Ն, խմբ. 20.12.11թ. թիվ 355Ն)**

74. Եթե ապահովագրական ընկերության կանոնադրական կապիտալում անուղղակի նշանակալից մասնակիցը և ապահովագրական ընկերությունում ուղղակի նշանակալից մասնակցություն ձեռք բերող իրավաբանական անձը

ընդգրկված են որևէ խմբի (միության) կամ ցանկացած այլ հիմքով ֆինանսական հաշվետվությունները համախմբող անձանց կազմում, ապա ուղղակի մասնակիցը անուղղակի նշանակալից մասնակցի համար Կենտրոնական բանկ պետք է ներկայացնի սույն կանոնակարգի 61-րդ կետի 1-ին, 5-րդ, 6-րդ, 7-րդ, 11-րդ, 12-րդ, 13-րդ, 14-րդ, 15-րդ և 16-րդ ենթակետերով պահանջվող փաստաթղթերը, ինչպես նաև 62-րդ կետի 1-ին, 2-րդ, 3-րդ ենթակետերով պահանջվող փաստաթղթերը (միևնույն խմբում (միությունում) կամ ցանկացած այլ հիմքով իրենց ֆինանսական հաշվետվությունները համախմբող անձանց կազմում այլ նշանակալից մասնակցի կամ փոխկապակցված անձի առկայության դեպքում 62-րդ կետի 1-ին, 2-րդ և 3-րդ ենթակետերով պահանջվող հաշվետվությունը (տեղեկությունները) ներկայացվում է նրանցից որևէ մեկի կողմից):
**(74-րդ կետը փոխ. 01.07.08թ. թիվ 188Ն, խմբ. 20.12.11թ. թիվ 355Ն)**

74.1. Եթե ապահովագրական ընկերության կանոնադրական կապիտալում անուղղակի նշանակալից մասնակցություն ձեռք է բերվելու միջազգային կազմակերպությունների կողմից, ապա վերջիններիս կողմից Կենտրոնական բանկ պետք է ներկայացվեն սույն կանոնակարգի 61-րդ կետի 1-ին, 5-րդ, 8-րդ, 9-րդ, 13-րդ, 15-րդ ենթակետերով պահանջվող փաստաթղթերը: Կենտրոնական բանկի խորհրդի համաձայնությամբ սույն կետը կարող է տարածվել նաև միջազգային համբավ և (կամ) Ստանդարտ և Փուրզ կամ Ֆիտչ կամ Ա.Մ.Բեստ վարկանշող կազմակերպությունների կողմից «A-» կամ ավելի բարձր կամ Մուդիզ վարկանշող կազմակերպության կողմից «A3» կամ ավելի բարձր վարկանիշ ունեցող կազմակերպությունների վրա:
**(74.1 կետը լրաց. 01.07.08թ. թիվ 188Ն, խմբ. 20.12.11թ. թիվ 355Ն)**

74.2. Եթե ապահովագրական ընկերության կանոնադրական կապիտալում նշանակալից մասնակցություն ձեռք բերելու մտադրություն ունեցող անձի միջոցով ապահովագրական ընկերության կանոնադրական կապիտալում անուղղակի նշանակալից մասնակցություն ձեռք են բերում միաժամանակ մի քանի անձիք, ապա անուղղակի նշանակալից մասնակցություն ձեռք բերելու համաձայնություն ստանալու համար ներկայացվում են «Ապահովագրության և ապահովագրական գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով և սույն կանոնակարգով պահանջվող փաստաթղթերը միայն այն ֆիզիկական անձի վերաբերյալ, որի միջոցով որևէ այլ անձ այդ ապահովագրական ընկերությունում նշանակալից մասնակցություն ձեռք չի բերում: Անհրաժեշտության դեպքում Կենտրոնական բանկը կարող է պահանջել փաստաթղթեր նաև այն անձանցից, որոնց միջոցով ապահովագրական ընկերությունում նշանակալից մասնակցություն է ձեռք բերվում:
**(74.2 կետը լրաց. 20.12.11թ. թիվ 355Ն)**

## ԳԼՈՒԽ 19. ՆՇԱՆԱԿԱԼԻՑ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅԱՆ ՁԵՌՔԲԵՐՄԱՆԸ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼԸ

75. Կենտրոնական բանկը նշանակալից մասնակցության ձեռքբերման համար Կենտրոնական բանկի խորհրդի նախնական համաձայնությունը ստանալու համար պահանջվող բոլոր փաստաթղթերն ստանալուց հետո 30-օրյա ժամկետում որոշում է կայացնում նշանակալից մասնակցությանը համաձանություն տալու կամ այն մերժելու վերաբերյալ: Ընդ որում, ապահովագրական ընկերության կանոնադրական կապիտալում նշանակալից մասնակցություն ունենալուն նախնական համաձայնություն տալու ընթացքում Կենտրոնական բանկը գնահատում է նշանակալից մասնակիցների հնարավորությունը և պատրաստակամությունը՝ ապահովագրական ընկերության ֆինանսական վիճակի վատթարացման դեպքում (օրինակ՝ կապիտալի կտրուկ նվազում, իրացվելիության խնդիրների առաջացում, խոշոր վնասներ, արտակարգ իրավիճակներ) ապահովագրական ընկերությանը լրացուցիչ ֆինանսական օժանդակություն տրամադրելու տեսանկյունից:
**(75-րդ կետը լրաց. 01.07.08թ. թիվ 188Ն, լրաց. 20.12.11թ. թիվ 355Ն)**

76. Կենտրոնական բանկի կողմից 30-օրյա ժամկետում դիմումը չմերժելու մասին անձին չտեղեկացնելու դեպքում համաձայնությունը համարվում է տրված:

77. Ուղղակի նշանակալից մասնակցի միջոցով ձեռք բերվող անուղղակի նշանակալից մասնակցությունը ապահովագրական ընկերության կանոնադրական կապիտալում համարվում է մերժված, եթե մերժվել է ուղղակի նշանակալից մասնակցության միջնորդագիրը:

78. Անձի և նրա հետ փոխկապակցված անձանց՝ ապահովագրական ընկերության կանոնադրական կապիտալում նշանակալից մասնակցություն ձեռք բերելուն նախնական համաձայնությունը Կենտրոնական բանկի կողմից տրվում է եռամսյա ժամկետով, եթե գործողության ավելի երկար ժամկետ տվյալ որոշմամբ նախատեսված չէ: Գործարքի իրականացումը հաստատող փաստաթղթերը ներկայացվում են Կենտրոնական բանկ: Եթե Կենտրոնական բանկի որոշմամբ սահմանված ժամկետում գործարքը չի իրականացվում, Կենտրոնական բանկի նախնական համաձայնությունը համարվում է ուժը կորցրած:

78.1. Եթե ապահովագրական ընկերությունը տիրապետում է իր կանոնադրական կապիտալում նշանակալից մասնակություն ձեռք բերող կամ ունեցող անձանց վերաբերյալ այնպիսի տեղեկատվության, որը Կենտրոնական բանկի կողմից տիրապատելու դեպքում կարող էր հանգեցնել ապահովագրական ընկերության կանոնադրական կապիտալում նշանակալից մասնակցության ձեռքբերման նախնական համաձայնություն ստանալու դիմումի մերժմանը կամ նշանակալից մասնակցության ձեռքբերման նախնական համաձայնության գործողության դադարեցմանը օրենքով սահմանված կարգով, ապա ապահովագրական ընկերությունը տեղեկատվությունը ստանալուց հետո երեք աշխատանքային օրվա ընթացքում տեղյակ է պահում Կենտրոնական բանկին:
**(78.1 կետը լրաց. 20.12.11թ. թիվ 355Ն)**

## ԳԼՈՒԽ 19.1. ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ, ՕՏԱՐԵՐԿՐՅԱ ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՄԱՍՆԱՃՅՈՒՂԻ ԿՈՂՄԻՑ ՊԱՐԲԵՐԱԲԱՐ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

78.2. Ապահովագրական ընկերությունները (օտարերկրյա ապահովարական ընկերության մասնաճյուղերը) հետևյալ հաշվետվությունները (տեղեկությունները) Կենտրոնական բանկ են ներկայացնում մինչև յուրաքանչյուր տարվա հունիսի 1-ը՝ ռեզիդենտների համար, մինչև յուրաքանչյուր տարվա օգոստոսի 1-ը՝ ոչ ռեզիդենտների համար.

1) ապահովագրական ընկերության (օտարերկրյա ապահովագրական ընկերության) կանոնադրական կապիտալում նշանակալից մասնակցություն ունեցող իրավաբանական անձի վերջին ֆինանսական տարվա ֆինանսական հաշվետվությունները,

2) անկախ աուդիտորական եզրակացությունը, որը հավաստում է սույն կետի 1-ին ենթակետում նշված ֆինանսական հաշվետվությունների համապատասխանությունը հաշվապահական հաշվառման այն ստանդարտներին, որոնք համաձայն «Հաշվապահական հաշվառման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի պետք է կիրառվեն տվյալ կազմակերպության կողմից հաշվապահական հաշվառում վարելիս և ֆինանսական հաշվետվություններ կազմելիս և ներկայացնելիս, իսկ օտարերկրյա իրավաբանական անձանց համար՝ ֆինանսական հաշվետվությունների համապատասխանությունը միջազգային ստանդարտներին կամ միջազգայնորեն ճանաչված այլ ստանդարտներին,

3) եթե ապահովագրական ընկերության (օտարերկրյա ապահովագրական ընկերության մասնաճյուղերը) կանոնադրական կապիտալում նշանակալից մասնակցություն ունեցող իրավաբանական անձն ընդգրկված է որևէ խմբի (միության) կամ ցանկացած այլ հիմքով իրենց ֆինանսական հաշվետվությունները համախմբող անձանց կազմում, ապա սույն կետի 1-ին և 2-րդ ենթակետերով սահմանված հաշվետվությունների (տեղեկությունների) փոխարեն Կենտրոնական բանկ են ներկայացվում հետևյալ տեղեկությունները (հաշվետվությունները).

ա. խմբի (միության) կառուցվածքը,

բ. խմբի (միության) վերջին ֆինանսական տարվա ֆինանսական հաշվետվությունները (մեկ տարուց պակաս գործունեություն իրականացրած իրավաբանական անձինք նշված տեղեկությունները ներկայացնում են իրականացրած գործունեության ողջ ժամկետի համար),

գ. անկախ աուդիտորական եզրակացությունը, որը հավաստում է խմբի (միության) վերջին տարեկան ֆինանսական հաշվետվությունների համապատասխանությունը հաշվապահական հաշվառման այն ստանդարտներին, որոնք համաձայն «Հաշվապահական հաշվառման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի պետք է կիրառվեն տվյալ խմբի (միության) կողմից հաշվապահական հաշվառում վարելիս և ֆինանսական հաշվետվություններ կազմելիս և ներկայացնելիս, իսկ օտարերկրյա խմբի (միության) համար՝ ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտներին կամ միջազգայնորեն ճանաչված այլ ստանդարտներին (առկայության դեպքում): Ընդ որում, օտարերկրյա խմբի (միության) համար անկախ

աուդիտորական եզրակացության բացակայության դեպքում Կենտրոնական բանկ է ներկայացվում հղում այդ պետության որևէ պաշտոնական ինտերնետային էջին, որտեղ նշված է, որ տվյալ պետության հաշվապահական հաշվառման ստանդարտները համապատասխանում են ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտներին կամ միջազգայնորեն ճանաչված այլ ստանդարտներին:

4) ապահովագրական ընկերության (օտարերկրյա ապահովագրական ընկերության) հետ փոխկապակցված իրավաբանական անձանց վերջին ֆինանսական տարվա ֆինանսական հաշվետվությունները (մեկ տարուց պակաս գործունեություն իրականացրած իրավաբանական անձինք նշված տեղեկությունները ներկայացնում են իրականացրած գործունեության ողջ ժամկետի համար):

5) անկախ աուդիտորական եզրակացությունը, որը հավաստում է սույն կետի 4-րդ ենթակետում նշված ֆինանսական հաշվետվությունների համապատասխանությունը հաշվապահական հաշվառման այն ստանդարտներին, որոնք համաձայն «Հաշվապահական հաշվառման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի պետք է կիրառվեն տվյալ կազմակերպության կողմից հաշվապահական հաշվառում վարելիս և ֆինանսական հաշվետվություններ կազմելիս և ներկայացնելիս, իսկ օտարերկրյա իրավաբանական անձանց համար՝ ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտներին կամ միջազգայնորեն ճանաչված այլ ստանդարտներին (առկայության դեպքում): Ընդ որում, օտարերկրյա իրավաբանական անձանց համար անկախ աուդիտորական եզրակացության բացակայության դեպքում Կենտրոնական բանկ է ներկայացվում հղում այդ պետության որևէ պաշտոնական ինտերնետային էջին, որտեղ նշված է, որ տվյալ պետության հաշվապահական հաշվառման ստանդարտները համապատասխանում են ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտներին կամ միջազգայնորեն ճանաչված այլ ստանդարտներին:

6) եթե ապահովագրական ընկերության (օտարերկրյա ապահովագրական ընկերության) հետ փոխկապակցված իրավաբանական անձը ընդգրկված է որևէ խմբի (միության) կամ ցանկացած այլ հիմքով իրենց ֆինանսական հաշվետվությունները համախմբող անձանց կազմում, ապա սույն կետի 4-րդ և 5-րդ ենթակետերով սահմանված հաշվետվությունների (տեղեկությունների) փոխարեն Կենտրոնական բանկ են ներկայացվում հետևյալ տեղեկությունները (հաշվետվությունը).

ա) խմբի (միության) կառուցվածքը,

բ) խմբի (միության) վերջին ֆինանսական տարվա ֆինանսական հաշվետվությունները (մեկ տարուց պակաս գործունեություն իրականացրած իրավաբանական անձինք նշված տեղեկությունները ներկայացնում են իրականացրած գործունեության ողջ ժամկետի համար),

գ) անկախ աուդիտորական եզրակացությունը, որը հավաստում է խմբի (միության) վերջին տարեկան ֆինանսական հաշվետվությունների

համապատասխանությունը հաշվապահական հաշվառման այն ստանդարտներին, որոնք համաձայն «Հաշվապահական հաշվառման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի պետք է կիրառվեն տվյալ խմբի (միության) կողմից հաշվապահական հաշվառում վարելիս և ֆինանսական հաշվետվություններ կազմելիս և ներկայացնելիս, իսկ օտարերկրյա խմբի (միության) համար՝ ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտներին կամ միջազգայնորեն ճանաչված այլ ստանդարտներին (առկայության դեպքում): Ընդ որում, օտարերկրյա խմբի (միության) համար անկախ աուդիտորական եզրակացության բացակայության դեպքում Կենտրոնական բանկ է ներկայացվում հղում այդ պետության որևէ պաշտոնական ինտերնետային էջին, որտեղ նշված է, որ տվյալ պետության հաշվապահական հաշվառման ստանդարտները համապատասխանում են ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտներին կամ միջազգայնորեն ճանաչված այլ ստանդարտներին:

7) ապահովագրական ընկերության (օտարերկրյա ապահովագրական ընկերության) հետ փոխկապակցված իրավաբանական անձանց, ինչպես նաև ապահովագրական ընկերության հետ փոխկապակցված անձանց հետ փոխկապակցված իրավաբանական անձանց ղեկավարների անունը, ազգանունը, պաշտոնը ներառող ցուցակը (բացառությամբ սույն կանոնակարգի 24.2-րդ (26.2-րդ) կետով սահմանված դեպքերի):

8) ապահովագրական ընկերության (օտարերկրյա ապահովագրական ընկերության) հետ փոխկապակցված ֆիզիկական անձանց, ինչպես նաև ապահովագրական ընկերության հետ փոխկապակցված անձանց հետ փոխկապակցված ֆիզիկական անձանց անունը, ազգանունը ներառող ցուցակը (բացառությամբ սույն կանոնակարգի 24.2-րդ (26.2-րդ) կետով սահմանված դեպքերի):

78.3. Սույն կանոնակարգի 78.2 կետի 1-ին, 2-րդ ենթակետերով սահմանված հաշվետվությունները (տեղեկությունները) Կենտրոնական բանկ չեն ներկայացվում, եթե ապահովագրական ընկերության (օտարերկրյա ապահովագրական ընկերության) կանոնադրական կապիտալում նշանակալից մասնակցություն ունեցող իրավաբանական անձը հանդիսանում է

1) Կենտրոնական բանկի կողմից վերահսկվող անձ, որը օրենքով կամ այլ իրավական ակտերով սահմանված պարբերականությամբ և կարգով Կենտրոնական բանկ է ներկայացնում հաշվապահական հաշվեկշիռը, ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունը, կամ
2) Կենտրոնական բանկի կողմից «Ա» և «Բ» վարկանիշ ստացած կազմակերպություն՝ վերջինիս կողմից Կենտրոնական բանկ ներկայացված սույն կանոնակարգի 78.2-րդ կետի 1-ին և 2-րդ ենթակետերով սահմանված տեղեկությունները վերահսկողական նպատակներով օգտագործելու վերաբերյալ գրավոր համաձայնության դեպքում:

78.4. Սույն կանոնակարգի 78.2 կետի 4-րդ, 5-րդ ենթակետերով սահմանված հաշվետվությունները (տեղեկությունները) Կենտրոնական բանկ չեն

ներկայացվում, եթե ապահովագրական ընկերության (օտարերկրյա ապահովագրական ընկերության) հետ փոխկապակցված իրավաբանական անձը հանդիսանում է

1) ապահովագրական ընկերության (օտարերկրյա ապահովարական ընկերության) կանոնադրական կապիտալում նշանակալից մասնակցություն ձեռք բերող անձ և որի համար ներկայացվում են սույն կանոնակարգով նշանակալից անձի համար պահանջվող փաստաթղթերը (տեղեկությունները),
2) Կենտրոնական բանկի կողմից վերահսկվող անձ, որը օրենքով կամ այլ իրավական ակտերով սահմանված պարբերականությամբ և կարգով Կենտրոնական բանկ է ներկայացնում հաշվապահական հաշվեկշիռը, ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունը, կամ
3) Կենտրոնական բանկի կողմից «Ա» կամ «Բ» վարկանիշ ստացած կազմակերպություն՝ վերջինիս կողմից Կենտրոնական բանկ ներկայացված սույն կանոնակարգի 78.2-րդ կետի 4-րդ և 5-րդ ենթակետերով սահմանված տեղեկությունները վերահսկողական նպատակներով օգտագործելու վերաբերյալ գրավոր համաձայնության դեպքում:

78.5. Սույն կանոնակարգի 78.4. կետում սահմանված դեպքերում Կենտրոնական բանկ է ներկայացվում այդ անձանց անվանումները ներառող ցուցակ:

78.6. Կենտրոնական բանկը կարող է պահանջել ապահովագրական ընկերությունից (օտարերկրյա ապահովագրական ընկերության մասնաճյուղից) սույն կանոնակարգի 78.2-րդ կետի 4-րդ, 5-րդ և 6-րդ ենթակետերով սահմանված հաշվետվությունները (տեղեկությունները) սահմանված պարբերականությամբ ներկայացնել Կենտրոնական բանկ նաև ապահովագրական ընկերության (օտարերկրյա ապահովագրական ընկերության) հետ փոխկապակցված անձանց հետ փոխկապակցված իրավաբանական անձանց մասով:

78.7. Ապահովագրական ընկերությունը լիցենզիա ստանալուց հետո յուրաքանչյուր փոփոխության դեպքում՝ փոփոխության օրվան հաջորդող 10 աշխատանքային օրվա ընթացքում Կենտրոնական բանկ է ներկայացնում հետևյալ տեղեկությունները.

1) պետական գրանցման և լիցենզավորման համար համաձայն «Ապահովագրության և ապահովագրական գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 40-րդ հոդվածի 1-ին մասի 12-րդ կետի ներկայացվող ապահովագրական ընկերության գործունեության կանոնակարգերի նախագծերի հաստատված տարբերակները, նոր ընդունված կանոնակարգերը, Կենտրոնական բանկ ներկայացված կանոնակարգերի հետագա փոփոխությունները և այդ փոփոխությունները ներառող փոփոխված ներքին կանոնակարգերը:

2) ապահովագրական ընկերության, ապահովագրական ընկերության մասնաճյուղի՝ սույն կանոնակարգի գլուխ 7-ով սահմանված տարածքի և տեխնիկական հագեցվածության փոփոխությունների վերաբերյալ գրություն՝ ներկայացնելով նաև ապահովագրական ընկերության, ապահովագրական ընկերության մասնաճյուղի գործունեության տարածքի և տեխնիկական հագեցվածության՝ սույն կանոնակարգի գլուխ 7-ով սահմանված չափանիշներին համապատասխանելու մասին փաստաթղթերը և հայտարարություն՝ համաձայն սույն կանոնակարգի Հավելված 13-ի:
3) ապահովագրական ընկերության՝ Հայաստանի Հանրապետության տարածքից դուրս ստեղծված մասնաճյուղի կամ ներկայացուցչության կանոնադրության փոփոխությունները:

78.8. Օտարերկրյա ապահովագրական ընկերության մասնաճյուղը լիցենզիա ստանալուց հետո յուրաքանչյուր փոփոխության դեպքում՝ փոփոխության օրվան հաջորդող 10 աշխատանքային օրվա ընթացքում Կենտրոնական բանկ է ներկայացնում հետևյալ տեղեկությունները.

1) մասնաճյուղի գործունեության նոր ընդունված կանոնակարգերը, Կենտրոնական բանկ ներկայացված կանոնակարգերի հետագա փոփոխությունները և այդ փոփոխությունները ներառող փոփոխված ներքին կանոնակարգերը,

2) օտարերկրյա ապահովագրական ընկերության մասնաճյուղի՝ սույն կանոնակարգի գլուխ 7-ով սահմանված տարածքի և տեխնիկական հագեցվածության փոփոխությունների վերաբերյալ գրություն՝ ներկայացնելով նաև օտարերկրյա ապահովագրական ընկերության մասնաճյուղի գործունեության տարածքի և տեխնիկական հագեցվածության՝ սույն կանոնակարգի գլուխ 7-ով սահմանված չափանիշներին համապատասխանելու մասին փաստաթղթերը և հայտարարություն՝ համաձայն սույն կանոնակարգի Հավելված 13-ի:

78.9. Եթե սույն գլխով սահմանված հաշվետվությունները (տեղեկությունները) տեղակայված են իրավաբանական անձի կամ խմբի (միության) ինտերնետային կայքում (տնային էջում), ապա ապահովագրական ընկերությունը տեղեկացնում է այդ մասին Կենտրոնական բանկին մինչև տվյալ հաշվետվությունները (տեղեկությունները) Կենտրոնական բանկ ներկայացնելու վերջնաժամկետը: Ընդ որում, սույն գլխով սահմանված հաշվետվությունները (տեղեկությունները) ինտերնետային կայքում (տնային էջում) տեղադրելու դեպքում իրավաբանական անձինք ապահովում են պահանջվող տեղեկությունների առկայությունը առնվազն 1 տարվա ընթացքում:

78.10. Եթե տեղի է ունեցել սույն գլխի շրջանակներում Կենտրոնական բանկ ներկայացված իրավաբանական անձանց և (կամ) խմբի (միության) ինտերնետային կայքերի (տնային էջերի) հասցեների փոփոխություն, ապա այդ փոփոխությունից հետո 10 աշխատանքային օրվա ընթացքում ապահովագրական ընկերությունն այդ մասին տեղեկացնում է Կենտրոնական բանկին:

78.11. Կենտրոնական բանկը հաշվետվությունների (տեղեկությունների) պարզաբանման և մեկնաբանման կարիք ունեցող կետերի վերաբերյալ, ինչպես նաև առանձին վերլուծական կամ վերահսկողական նպատակներից ելնելով կարող է պահանջել լրացուցիչ տեղեկություններ և պարզաբանումներ:

78.12. Սույն գլխով սահմանված հաշվետվությունները (տեղեկությունները) կարող են ներկայացվել (ինտերնետային կայքում (տնային էջում) տեղադրվել) հայերեն կամ ռուսերեն կամ անգլերեն լեզուներով:

**(Գլուխ 19.1-ը լրաց. 20.12.11թ. թիվ 355Ն)**

## ԲԱԺԻՆ IV. ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ (ՕՏԱՐԵՐԿՐՅԱ ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՄԱՍՆԱՃՅՈՒՂԻ, ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՄԱՍՆԱՃՅՈՒՂԻ) ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԱՐԱՐ ԾՐԱԳՐԻ ՁԵՎԸ ԵՎ ԴՐԱՆՈՒՄ ԿԱՏԱՐՎՈՂ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԵՐԿԱՅԱՑՄԱՆ ԿԱՐԳԸ ԵՎ ԺԱՄԿԵՏՆԵՐԸ

## ԳԼՈՒԽ 20. ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ (ՕՏԱՐԵՐԿՐՅԱ ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՄԱՍՆԱՃՅՈՒՂԻ, ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՄԱՍՆԱՃՅՈՒՂԻ) ԳՈՐԾԱՐԱՐ ԾՐԱԳՐԻ ՁԵՎԸ, ՆԵՐԿԱՅԱՑՄԱՆ ԿԱՐԳԸ ԵՎ ԺԱՄԿԵՏՆԵՐԸ

79. Սույն գլուխը սահմանում է նոր ստեղծվող և գործող ապահովագրական ընկերության, օտարերկրյա ապահովագրական ընկերության մասնաճյուղի երեք տարվա, իսկ ապահովագրական ընկերության մասնաճյուղի դեպքում՝ երկու տարվա գործարար ծրագիրը (այսուհետ՝ ծրագիր) Կենտրոնական բանկ ներկայացնելու կարգը:

80. Ծրագիրը ամբողջական փաստաթուղթ է, որի խնդիրներն են.

1) ծառայել շահագրգիռ անձանց (մասնակիցներ, ներդրողներ, ապահովագրական ընկերության ղեկավարներ և այլ շահագրգիռ անձինք)՝ որպես մի ամփոփ փաստաթուղթ, որով կարող են գնահատվել ապահովագրական ընկերության (օտարերկրյա ապահովագրական ընկերության մասնաճյուղի, ապահովագրական ընկերության մասնաճյուղի) գործունեության բնույթը և առանձնահատկությունները,

2) օգնել ապահովագրական ընկերության (օտարերկրյա ապահովագրական ընկերության մասնաճյուղի) ղեկավարներին՝ պարզաբանել, հստակեցնել և հետազոտել ապահովագրական ընկերության (օտարերկրյա ապահովագրական ընկերության մասնաճյուղի, ապահովագրական ընկերության մասնաճյուղի) գործունեության զարգացման հնարավոր հեռանկարները և ծառայել ապահովագրական ընկերության (օտարերկրյա ապահովագրական ընկերության մասնաճյուղի) ղեկավարներին՝ որպես հիմք, որով կարող են գնահատվել ապահովագրական ընկերության (օտարերկրյա ապահովագրական ընկերության մասնաճյուղի, ապահովագրական ընկերության մասնաճյուղի)

փաստացի գործունեության արդյունքները և արդյունավետությունը,

3) օգնել ապահովագրական ընկերությանը (օտարերկրյա ապահովագրական ընկերության մասնաճյուղին)՝ հետևողականորեն իրականացնել նախանշված նպատակները և խնդիրները պլանավորվող ժամանակահատվածում,

4) Կենտրոնական բանկին ներկայացնել ապահովագրական ընկերության (օտարերկրյա ապահովագրական ընկերության մասնաճյուղի, ապահովագրական ընկերության մասնաճյուղի) կողմից պլանավորված գործունեությունը, որը Կենտրոնական բանկը կարող է օգտագործել ապահովագրական ընկերության (օտարերկրյա ապահովագրական ընկերության մասնաճյուղի, ապահովագրական ընկերության մասնաճյուղի) ընտրած ռազմավարությունը, ռիսկերի կառավարման մակարդակը գնահատելու, ինչպես նաև օրենքով և սույն կանոնակարգով վերաապահովագրությանը ներկայացվող պահանջների կատարման նկատմամբ վերահսկողություն իրականացնելու համար:

81. Ծրագրի հիմքում դրվում են հետևյալ հիմնական սկզբունքները՝

1) իրատեսություն (առաջադրված նպատակների և խնդիրների իրականացման բավարար հիմնավորումների առկայություն),

2) գնահատելիություն (կատարման արդյունքների գնահատման հնարավորություն),

3) համահունչություն (ծրագրի առանձին բաժինների և բաժինների գլուխների միջև պատճառահետևանքային կապի, ծրագրի ընդհանուր տրամաբանական ընթացքի առկայություն),

4) կոնկրետություն (վերնագրի ըստ էության ներկայացում, վերնագրից դուրս ավելորդ տեղեկատվության բացակայություն, խնդիրների ըստ էության դիտարկում),

5) ծրագրի հիմքում կարող են դրվել նաև այլ, սակայն նշված սկզբունքներին չհակասող սկզբունքներ:

82. Ապահովագրական ընկերությունը, օտարերկրյա ապահովագրական ընկերության մասնաճյուղը լիցենզավորման փաստաթղթերը Կենտրոնական բանկ ներկայացնելիս, ինչպես նաև մինչև յուրաքանչյուր օրացուցային տարվա փետրվարի 15-ը Կենտրոնական բանկ է ներկայացնում հաջորդող երեք տարիների իր ծրագիրը (բացառությամբ ծրագրի V.1-րդ բաժնի, որը ներկայացվում է միայն հաջորդ մեկ տարվա համար)՝ համաձայն սույն կանոնակարգի հավելված 9-ի: Ընդ որում, «Ապահովագրության և ապահովագրական գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 44-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված գործարար ծրագրի իրականացման վերաբերյալ հաշվետվությունը ներառվում է ծրագրի կազմում:

82.1. Սույն կանոնակարգի 82-րդ կետում նշված ծրագրին կից ապահովագրական ընկերությունը, օտարերկրյա ապահովագրական ընկերության մասնաճյուղը ներկայացնում է ապահովագրական ընկերության, օտարերկրյա ապահովագրական ընկերության մասնաճյուղի պատասխանատու ակտուարի դիրքորոշումը ներկայացվող ծրագրի V.1-րդ բաժնի («Վերաապահովագրության ծրագիր») վերաբերյալ՝ հաստատված

պատասխանատու ակտուարի ստորագրությամբ:

82.2. Ապահովագրական ընկերությունը, օտարերկրյա ապահովագրական ընկերության մասնաճյուղը Կենտրոնական բանկ է ներկայացնում սույն կանոնակարգի 82-րդ կետում նշված ծրագրի փոփոխված տարբերակը՝ փոփոխությունը տեղի ունենալուց հետո 10 աշխատանքային օրվա ընթացքում, եթե տեղի է ունեցել ապահովագրական ընկերության, օտարերկրյա ապահովագրական ընկերության մասնաճյուղի գործունեության ռազմավարության փոփոխություն: Վերանայված ծրագրում նշվում է ռազմավարության փոփոխության հիմնավորումը: Ընդ որում, ծրագրին կից աղյուսակներում փոփոխություն կարող է կատարվել միայն մինչև հունիս ամսվա վերջին օրը: Նշված ժամանակահատվածից հետո փոփոխություն կարող է կատարվել միայն մակրոտնտեսական միջավայրի էական տատանումների կամ ապահովագրական ընկերության, օտարերկրյա ապահովագրական ընկերության մասնաճյուղի գործունեության էական փոփոխությունների (օրինակ՝ Համախառն ներքին արդյունքի, գների, փոխարժեքի էական տատանումներ, իրականացվող ապահովագրության դասերի փոփոխություն) դեպքում:

82.3. Առավելագույն ծածկույթի աղյուսակում փոփոխություններ կատարելու դեպքում փոփոխությունը ապահովագրական ընկերության, օտարերկրյա ապահովագրական ընկերության խորհրդի կողմից հաստատելուց հետո 10 աշխատանքային օրվա ընթացքում ապահովագրական ընկերությունը, օտարերկրյա ապահովագրական ընկերության մասնաճյուղը փոփոխված ծրագիրը ներկայացնում է Կենտրոնական բանկ՝ կից ներկայացնելով փոփոխությունների հիմնավորումը, ինչպես նաև ապահովագրական ընկերության, օտարերկրյա ապահովագրական ընկերության մասնաճյուղի պատասխանատու ակտուարի դիրքորոշումը ներկայացվող փոփոխության վերաբերյալ՝ հաստատված պատասխանատու ակտուարի ստորագրությամբ:

82.4. Ապահովագրական ընկերությունը մասնաճյուղի գրանցման փաստաթղթերը Կենտրոնական բանկ ներկայացնելիս ներկայացնում է նաև երկու տարիների գործարար ծրագիրը՝ համաձայն սույն կանոնակարգի Հավելված 9.1-ի: Ապահովագրական ընկերությունը Կենտրոնական բանկ է ներկայացնում նաև սույն կետում նշված ծրագրի փոփոխված տարբերակը՝ փոփոխությունը տեղի ունենալուց հետո 10 աշխատանքային օրվա ընթացքում, եթե տեղի է ունեցել ապահովագրական ընկերության մասնաճյուղի գործունեության ռազմավարության փոփոխություն: Վերանայված ծրագրում նշվում է ռազմավարության փոփոխության հիմնավորումը:

83. Ծրագիրը հաստատվում է ապահովագրական ընկերության, օտարերկրյա ապահովագրական ընկերության խորհրդի կողմից, բացառությամբ նոր ստեղծվող ապահովագրական ընկերությունների, որոնց ծրագրերը հաստատվում են ընկերության հիմնադիր ժողովի կողմից:

83.1. Ծրագրում ընդգրկված ֆինանսական հաշվետվությունների փաստացի և կանխատեսվող ցուցանիշները ներկայացվում են Կենտրոնական բանկ ներկայացվող վերահսկողական հաշվետվությունների տրամաբանությամբ: Ծրագրին կից աղյուսակները կազմվում են ցուցանիշների ծրագրային կանխատեսումների հիման վրա: Բոլոր կանխատեսվող ցուցանիշները,

բացառությամբ մակրոտնտեսական ցուցանիշների, պետք է հիմնավորված լինեն կոնկրետ հաշվարկներով և արտացոլեն ծրագրում ամրագրված քաղաքականությունը: Ապահովագրական ընկերությունը, օտարերկրյա ապահովագրական ընկերության մասնաճյուղը ծրագրի մշակման ժամանակ հիմնական կանխատեսումներն իրականացնելիս կարող են կիրառել նաև ստրես տեստեր:

84. Ծրագիրը և ծրագրով նախատեսված տվյալները, ինչպես նաև վերանայված ծրագիրը Կենտրոնական բանկ են ներկայացվում էլեկտրոնային տարբերակով՝ Սի-Բի-Էյ-նեթ համակարգի միջոցով, իսկ անհնարինության դեպքում՝ էլեկտրոնային կրիչով:

85. Ապահովագրական ընկերության, օտարերկրյա ապահովագրական ընկերության մասնաճյուղի ծրագիրը պարունակում է սույն կանոնակարգի Հավելված 9-ով, իսկ ապահովագրական ընկերության մասնաճյուղի դեպքում՝ սույն կանոնակարգի Հավելված 9.1-ով սահմանված ծրագրի ձևի տվյալները: Ծրագիրը կարող է ներառել սույն կանոնակարգի Հավելված 9-ով կամ Հավելված 9.1-ով սահմանված ծրագրի ձևի տվյալներից բացի լրացուցիչ տվյալներ:

86. Ապահովագրական ընկերության, օտարերկրյա ապահովագրական ընկերության մասնաճյուղի ներկայացրած ծրագիրը սույն կանոնակարգի Հավելված 9-ով սահմանված ծրագրի ձևում նշված ծավալը զգալի չափով գերազանցելու դեպքում լրացուցիչ տվյալները պետք է էական և հիմնավոր դեր կատարեն ծրագրում:

87. (ուժը կորցրել է 20.12.11թ. թիվ 355 Ն որոշմամբ)

88. (ուժը կորցրել է 20.12.11թ. թիվ 355 Ն որոշմամբ):

(Բաժին IV-ը **լրաց., խմբ. 01.07.08թ. թիվ 188Ն, փոխ., լրաց., խմբ. 01.12.09թ. թիվ 360Ն, խմբ. 20.12.11թ. թիվ 355Ն)**

## ԲԱԺԻՆ V. ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԲՐՈՔԵՐԱՅԻՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԼԻՑԵՆԶԱՎՈՐՈՒՄ ԵՎ ՀԱՇՎԱՌՈՒՄ

### ԳԼՈՒԽ 21. ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԲՐՈՔԵՐԱՅԻՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԼԻՑԵՆԶԱՎՈՐՄԱՆ ՀԱՄԱՐ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԸ

89. Ապահովագրական բրոքերային գործունեության լիցենզիա ստանալու համար առևտրային կազմակերպությունը Կենտրոնական բանկ է ներկայացնում հետևյալ փաստաթղթերը.

1) «Ապահովագրության և ապահովագրական գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 97-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված փաստաթղթերը, ընդ որում.

ա. լիցենզիա ստանալու միջնորդագիրը ներկայացվում է դիմող կազմակերպության կանոնադրությամբ ամրագրված իրավասու կառավարման մարմնի որոշմամբ վավերացված՝ համաձայն սույն կանոնակարգի Հավելված 2դ-ի,

բ. ապահովագրական բրոքերային ընկերության պատասխանատու

անձանց գործունեության մասին տեղեկանքը՝ (միջնորդագրի տեսքով) համաձայն Հավելված 3-ի,

գ. «Ապահովագրության և ապահովագրական գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 97-րդ հոդվածի 2-րդ մասի 6-րդ կետի համաձայն Կենտրոնական բանկ են ներկայացվում առնվազն այն բոլոր կանոնակարգերը, որոնց առկայությունը օրենքի կամ նորմատիվ իրավական ակտի համաձայն պարտադիր է գործող ապահովագրական բրոքերային կազմակերպության համար լիցենզիա ստանալու դիմումը ներկայացնելու օրվա դրությամբ,

դ. ապահովագրական բրոքերի գործունեության տարածքը Կենտրոնական բանկի սահմանած չափանիշներին համապատասխանելու մասին հայտարարությունը ներկայացվում է համաձայն սույն կանոնակարգի Հավելված 13-ի:

2) **(2-րդ ենթակետը ուժը կորցրել է 20.12.11թ. թիվ 355 Ն որոշմամբ),**
3) **(3-րդ ենթակետը ուժը կորցրել է 20.12.11թ. թիվ 355 Ն որոշմամբ),**
4) եթե դիմումատուն հանդես է գալիս լիազոր ներկայացուցչի միջոցով, ապա ներկայացվում է նաև դիմումատուի կողմից պատշաճ կարգով տրված լիազորագիրը,
5) ընկերության տարածքի սեփականության, վարձակալության (ենթավարձակալության) կամ անհատույց օգտագործման իրավունքի պետական գրանցման վկայականի պատճենը: Ենթավարձակալության դեպքում անհրաժեշտ է ներկայացնել նաև հիմնական վարձակալության պայմանագրի պատճենը կամ այդ պայմանագրի առկայությունը, ինչպես նաև հիմնական միջոցը ենթավարձակալության տալու իրավունքը հավաստող փաստաթուղթը:

**(89-րդ կետը փոխ. 01.07.08թ. թիվ 188Ն, փոխ. 01.12.09թ. թիվ 360Ն, խմբ., լրաց. 20.12.11թ. թիվ 355Ն)**

90. **(90-րդ կետը ուժը կորցրել է 20.12.11թ. թիվ 355 Ն որոշմամբ):**

91. **(91-րդ կետը ուժը կորցրել է 01.12.09թ. թիվ 360 Ն որոշմամբ)**

92. Ապահովագրական բրոքերային գործունեության լիցենզիա ստանալու պահից 10-օրվա ընթացքում ապահովագրական բրոքերային կազմակերպությունը ներկայացնում է նաև «Ապահովագրության և ապահովագրական գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 90-րդ հոդվածի 5-րդ մասով սահմանված փաստաթուղթը՝ պատասխանատվության ապահովագրության պայմանագրի պատճենը:

93. Կենտրոնական բանկը կարող է պահանջել լրացուցիչ տեղեկություններ, որոնք անհրաժեշտ են սույն կանոնակարգի 89-րդ, 92-րդ կետերում նշված տեղեկատվության հավաստիությունը գնահատելու համար:

**(93-րդ կետը փոխ. 20.12.11թ. թիվ 355Ն)**

94. Այն դեպքում, երբ սույն կանոնակարգի 89-րդ կետով սահմանված միջնորդագիրը ներկայացնելուց հետո ներկայացված տեղեկությունների մեջ կատարվել են փոփոխություններ, ապա դիմումատուն պարտավոր է ներկայացնել նաև փոփոխված տեղեկությունները՝ մինչև Կենտրոնական բանկի կողմից լիցենզիա տրամադրելու կամ լիցենզիայի տրամադրումը մերժելու մասին որոշման կայացումը:

95. Կենտրոնական բանկը պարտավոր է լիցենզիայի տրամադրման մասին որոշումը կայացնելու պահից հնգօրյա ժամկետում լիցենզիան հանձնել ապահովագրական բրոքերային ընկերությանը:

## ԳԼՈՒԽ 22. ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԲՐՈՔԵՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԿԱՄ ՕՏԱՐԵՐԿՐՅԱ ՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ՄԱՍՆԱՃՅՈՒՂ ԵՎ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑՉՈՒԹՅՈՒՆ ՍՏԵՂԾԵԼՈՒ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՍՏԱՆԱԼԸ

96. Հայաստանի Հանրապետության տարածքում գործող ապահովագրական բրոքերային ընկերությունը Հայաստանի Հանրապետությունում կամ օտարերկրյա պետությունում մասնաճյուղ և ներկայացուցչություն ստեղծելիս Կենտրոնական բանկի թույլտվությունն ստանալու համար Կենտրոնական բանկ է ներկայացնում հետևյալ փաստաթղթերը՝

1) ապահովագրական բրոքերային ընկերության մասնաճյուղ կամ ներկայացուցչություն ստեղծելու թույտվություն ստանալու միջնորդագիրը,
2) ապահովագրական բրոքերային ընկերության իրավասու մարմնի որոշումը կամ արձանագրությունից քաղվածք՝ մասնաճյուղ կամ ներկայացուցչություն բացելու համար,
3) մասնաճյուղ կամ ներկայացուցչություն բացելու հիմնավորումը,
4) մասնաճյուղի կանոնադրությունը,
5) մասնաճյուղի պատասխանատու անձանց գործունեության վերաբերյալ տեղեկանք՝ (միջնորդագրի տեսքով) համաձայն հավելված 3-ի, պատասխանատու անձանց վավերացված ստորագրությունների նմուշները,
6) ապահովագրական բրոքերային ընկերության իրավասու մարմնի որոշումը կամ արձանագրությունից քաղվածք՝ մասնաճյուղի պատասխանատու անձանց ընտրելու կամ նշանակելու մասին,
7) միայն Հայաստանի Հանրապետությունում մասնաճյուղ կամ ներկայացուցչություն ստեղծելու դեպքում՝ մասնաճյուղի կամ ներկայացուցչության տարածքի սեփականության, վարձակալության (ենթավարձակալության) կամ անհատույց օգտագործման իրավունքի պետական գրանցման վկայականի պատճենը: Ենթավարձակալության դեպքում անհրաժեշտ է ներկայացնել նաև հիմնական վարձակալության պայմանագրի պատճենը կամ այդ պայմանագրի առկայությունը, ինչպես նաև հիմնական միջոցը ենթավարձակալության տալու իրավունքը հավաստող փաստաթուղթը,
8) եթե դիմումատուն հանդես է գալիս լիազոր ներկայացուցչի միջոցով, ապա ներկայացվում է նաև դիմումատուի կողմից պատշաճ կարգով նրան տրված լիազորագիրը,
9) ապահովագրական բրոքերի մասնաճյուղի գործունեության տարածքը Կենտրոնական բանկի սահմանած չափանիշներին համապատասխանելու մասին հայտարարություն՝ համաձայն սույն կանոնակարգի Հավելված 13-ի:

**(96-րդ կետը փոխ., լրաց. 20.12.11թ. թիվ 355Ն)**

97. Կենտրոնական բանկը որոշում է ընդունում ապահովագրական բրոքերային ընկերության՝ Հայաստանի Հանրապետությունում կամ օտարերկրյա

պետությունում մասնաճյուղ և ներկայացուցչություն ստեղծմանը թույլտվություն տալու մասին, եթե ներկայացված փաստաթղթերը և տեղեկությունները համապատասխանում են սույն կանոնակարգին, այլ օրենքներին և իրավական ակտերին, նրանցում ներկայացված տեղեկությունները ստույգ են ու արժանահավատ, և առկա չեն ապահովագրական բրոքերային ընկերությանը Հայաստանի Հանրապետությունում կամ օտարերկրյա պետությունում մասնաճյուղի և ներկայացուցչության ստեղծմանը թույլտվություն տալու՝ սույն կանոնակարգով կամ Կենտրոնական բանկի նորմատիվ իրավական ակտերով սահմանված մերժման հիմքերը:

98. Կենտրոնական բանկի նախագահը մերժում է ապահովագրական բրոքերային ընկերության՝ Հայաստանի Հանրապետությունում կամ օտարերկրյա պետությունում մասնաճյուղի և ներկայացուցչության ստեղծման թույլտվությունը, եթե՝

1) ներկայացվել են կեղծ կամ թերի փաստաթղթեր կամ ներկայացված փաստաթղթերում արտացոլվել են անարժանահավատ կամ կեղծ տվյալներ, և (կամ)
2) Հայաստանի Հանրապետության տարածքից դուրս մասնաճյուղ ստեղծելու դեպքում Կենտրոնական բանկի հիմնավորված կարծիքով օտարերկրյա պետությունում ապահովագրական հատվածի վերահսկողության համար պատասխանատու մարմինը պատշաճ և միջազգային չափանիշներին համապատասխան վերահսկողություն չի իրականացնում տվյալ պետությունում գրանցված ապահովագրական բրոքերային ընկերության մասնաճյուղի գործունեության նկատմամբ, կամ տվյալ պետությունը Կենտրոնական բանկին հնարավորություն չի ընձեռնում վերստուգել կամ պատշաճ վերահսկողություն իրականացնել ստեղծվելիք մասնաճյուղի նկատմամբ, և (կամ)
3) Հայաստանի Հանրապետության տարածքից դուրս մասնաճյուղ կամ ներկայացուցչություն ստեղծելու դեպքում ապահովագրական բրոքերային ընկերությունը չի հիմնավորում տվյալ երկրում մասնաճյուղ կամ ներկայացուցչություն ստեղծելու անհրաժեշտությունը կամ Կենտրոնական բանկի հիմնավորված կարծիքով՝ ծրագրավորում է շրջանառել հանցավոր ճանապարհով ձեռք բերված միջոցներ կամ օժանդակել դրանց շրջանառմանը
4) ապահովագրական բրոքերի պատասխանատու անձինք չեն բավարարում օրենքով և սույն կանոնակարգով նրանց նկատմամբ սահմանված պահանջներին:

**(98-րդ կետը փոխ. 01.07.08թ. թիվ 188Ն, լրաց.** 20.12.11թ. թիվ 355Ն)

99. Կենտրոնական բանկը, կենտրոնական բանկի նախագահի որոշմամբ տալիս է ապահովագրական բրոքերային ընկերության՝ Հայաստանի Հանրապետությունում և օտարերկրյա պետությունում մասնաճյուղի և ներկայացուցչության ստեղծելու թույլտվությունը կամ մերժում է միջնորդագիրը այն Կենտրոնական բանկ ներկայացնելու պահից 30-օրյա ժամկետում: 30-օրյա ժամկետը կարող է կասեցվել է ոչ ավելի, քան 30 օրով՝ Կենտրոնական բանկի կողմից պահանջվող որոշակի տեղեկություններ ստանալու համար:

**(99-րդ կետը փոխ. 01.07.08թ. թիվ 188Ն)**

100. Եթե նշված ժամկետում Կենտրոնական բանկը որոշում չի կայացնում ապահովագրական բրոքերային ընկերության՝ Հայաստանի Հանրապետությունում և օտարերկրյա պետությունում մասնաճյուղի և ներկայացուցչության թույլտվության տրամադրման վերաբերյալ, ապա թույլտվությունը համարվում է տրված:

100.1. Ապահովագրական բրոքերը սույն գլխի համաձայն Հայաստանի Հանրապետությունում մասնաճյուղ կամ ներկայացուցչություն ստեղծելու վերաբերյալ Կենտրոնական բանկի համաձայնությունը ստանալուց հետո մասնաճյուղը կամ ներկայացուցչությունը իրավաբանական անձանց գրանցումն իրականացնող պետական լիազորված մարմնի կողմից գրանցելուց հետո 5 աշխատանքային օրվա ընթացքում Կենտրոնական բանկ է ներկայացնում մասնաճյուղի կամ ներկայացուցչության գրանցված կանոնադրությունը:

(100.1 կետը լրաց. 20.12.11թ. թիվ 355Ն)

101. Ապահովագրական բրոքերային ընկերությունը համապատասխան երկրի օրենսդրությամբ սահմանված կարգով այլ երկրում մասնաճյուղ կամ ներկայացուցչություն գրանցելուց (լիցենզավորելուց, արտոնագրելուց) հետո պարտավոր է 10-օրյա ժամկետում հաշվառել այն Կենտրոնական բանկում՝ ներկայացնելով գրանցման (լիցենզավորման, արտոնագրման) փաստը վկայող փաստաթուղթ:

102. Կենտրոնական բանկը ապահովագրական բրոքերային ընկերության՝ Հայաստանի Հանրապետության տարածքից դուրս մասնաճյուղի և ներկայացուցչության հաշվառումից հետո հնգօրյա ժամկետում այդ մասին ծանուցում է իրավաբանական անձանց գրանցումն իրականացնող պետական լիազորված մարմնին՝ վերջինիս կողմից ապահովագրական բրոքերային ընկերության մասնաճյուղի կամ ներկայացուցչության գրանցման մասին համապատասխան գրառում կատարելու համար:

102.1. Ապահովագրական բրոքերի կողմից մասնաճյուղ կամ ներկայացուցչություն ստեղծելու վերաբերյալ Կենտրոնական բանկի թույլտվությունը Կենտրոնական բանկի որոշմամբ կարող է համարվել չտրված, եթե

1) հետագայում պարզվում է, որ Կենտրոնական բանկ ներկայացվել են կեղծ կամ թերի փաստաթղթեր կամ ներկայացված փաստաթղթերում արտացոլվել են անարժանահավատ կամ կեղծ տվյալներ, և/կամ,

իրավաբանական անձանց գրանցումն իրականացնող պետական լիազորված մարմնի կամ օտարերկրյա համապատասխան իրավասու մարմնի կողմից գրանցված փաստաթղթերը տարբերվում են Կենտրոնական բանկի թույլտվությունը ստանալու համար ներկայացված փաստաթղթերից:

(102.1 կետը լրաց. 20.12.11թ. թիվ 355Ն)

## ԳԼՈՒԽ 22.1. ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԲՐՈՔԵՐԻ ԿՈՂՄԻՑ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԵՐԿԱՅԱՑՄԱՆ ԿԱՐԳԸ ԵՎ ՁԵՎԸ

102.2. Լիցենզիայի տրամադրումից հետո Հայաստանի Հանրապետության տարածքում գործող ապահովագրական բրոքերը Կենտրոնական բանկի գրանցմանն է ներկայացնում ապահովագրական բրոքերի պատասխանատու անձանց կազմում կատարված փոփոխությունները: Այդ փոփոխությունները Կենտրոնական բանկում գրանցվում են սույն կանոնակարգով սահմանված կարգով:

102.3. Լիցենզիայի տրամադրումից հետո Հայաստանի Հանրապետության տարածքում գործող ապահովագրական բրոքերը յուրաքանչյուր փոփոխության

դեպքում՝ փոփոխության օրվան հաջորդող 10 աշխատանքային օրվա ընթացքում Կենտրոնական բանկ է ներկայացնում հետևյալ փաստաթղթերը (տեղեկությունները).

1) ապահովագրական բրոքերի գործունեության նոր ընդունված կանոնակարգերը, Կենտրոնական բանկ ներկայացված կանոնակարգերի հետագա փոփոխությունները և այդ փոփոխությունները ներառող փոփոխված ներքին կանոնակարգերը,

2) «Ապահովագրության և ապահովագրական գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 90-րդ հոդվածի 5-րդ մասով սահմանված ապահովագրության պայմանագրում կատարված փոփոխությունները,

3) ապահովագրական բրոքերի փոփոխված կանոնադրությունը:

102.4. Ապահովագրական բրոքերը մասնաճյուղի կամ ներկայացուցչության գործունեությունը դադարեցնելու դեպքում այդ մասին տեղեկացնում է Կենտրոնական բանկ՝ մասնաճյուղի կամ ներկայացուցչության դադարեցումը իրավաբանական անձանց գրանցումն իրականացնող պետական լիազորված մարմնի կամ օտարերկրյա համապատասխան իրավասու մարմնի կողմից գրանցվելուց հետո 10 աշխատանքային օրվա ընթացքում:

**(Գլուխ 22.1-ը լրաց. 20.12.11թ. թիվ 355Ն)**

## ԲԱԺԻՆ VI. ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԳՈՐԾԱԿԱԼԻ ՀԱՇՎԱՌՈՒՄ

## ԳԼՈՒԽ 23. ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԳՈՐԾԱԿԱԼԻ ՀԱՇՎԱՌՈՒՄԸ

103. Ապահովագրական գործակալների ռեգիստրում անձին հաշվառելու համար ապահովագրական ընկերությունը անձի անունից Կենտրոնական բանկ է ներկայացնում հետևյալ փաստաթղթերը.

1) իրավաբանական անձ դիմումատուի համար՝

ա. «Ապահովագրության և ապահովագրական գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 103-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով սահմանված փաստաթղթերը (բացառությամբ 1-ին մասի 1-ին կետի «ե» ենթակետի): Ընդ որում,

1. հաշվառման դիմումը ներկայացվում է համաձայն սույն կանոնակարգի հավելված 2ե-ի,
2. «Ապահովագրության և ապահովագրական գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 103-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի «գ» ենթակետով պահանջվող տեղեկությունները ներկայացվում են ապահովագրական գործակալի պատասխանատու անձանց վերաբերյալ,
3. «Ապահովագրության և ապահովագրական գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 103-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի «է» ենթակետով սահմանված հայտարարությունը ներկայացվում է ապահովագրական գործակալի պատասխանատու անձանց համար:

բ. եթե դիմումատուն հանդես է գալիս լիազոր ներկայացուցչի միջոցով, ապա ներկայացվում է նաև պատշաճ կարգով տրված լիազորագիրը,

գ. լիազոր մարմնի կողմից տրված հարկ վճարողի հաշվառման վկայականի պատճենը,

դ. իրավաբանական անձի մասնաճյուղերի (որոնց միջոցով իրավաբանական անձը մտադիր է իրականացնել ապահովագրական գործակալի գործառնություններ) և ներկայացուցչությունների ցանկը,

ե. ապահովագրական ընկերության հայտարարությունը (հավաստումը) այն մասին, որ ապահովագրական գործակալի գործառույթներ իրականացնող ֆիզիկական անձինք տիրապետում են սույն կանոնակարգի Հավելված 14-ով սահմանված թեմաներին՝ ըստ սահմանված խորության:

2) անհատ ձեռնարկատեր հայտատուի համար՝

ա. «Ապահովագրության և ապահովագրական գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 103-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով սահմանված փաստաթղթերը (բացառությամբ 1-ին մասի 2-րդ կետի «դ» ենթակետի): Ընդ որում.

1. Հաշվառման դիմումը ներկայացվում է համաձայն սույն կանոնակարգի Հավելված 2ե-ի,

2. «Ապահովագրության և ապահովագրական գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 103-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի «բ» ենթակետով նախատեսված տեղեկատվությունը ներկայացվում է ապահովագրական գործակալի պատասխանատու անձանց համար:

3. «Ապահովագրության և ապահովագրական գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 103-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի «ե» ենթակետով սահմանված հայտարարությունը ներկայացվում է ապահովագրական գործակալի պատասխանատու անձանց համար:

բ. եթե դիմումատուն հանդես է գալիս լիազոր ներկայացուցչի միջոցով, ապա ներկայացվում է նաև պատշաճ կարգով տրված լիազորագիրը,

գ. լիազոր մարմնի կողմից տրված հարկ վճարողի հաշվառման վկայականի պատճենը,

դ. Անձնագրի պատճենը, սոցիալական քարտի պատճենը, իսկ սոցիալական քարտ ստանալուց հրաժարվելու դեպքում՝ սոցիալական քարտ ստանալուց հրաժարվելու մասին տեղեկանքի պատճենը,

ե. ապահովագրական ընկերության հայտարարությունը (հավաստումը) այն մասին, որ ապահովագրական գործակալի գործառույթներ իրականացնող ֆիզիկական անձինք տիրապետում են սույն կանոնակարգի Հավելված 14-ով սահմանված թեմաներին՝ ըստ սահմանված խորության:

2.1) ֆիզիկական անձ հայտատուի համար՝

ա. հաշվառման դիմում՝ համաձայն սույն կանոնակարգի Հավելված 2ե-ի,

բ. ապահովագրական ընկերության հայտարարությունը (հավաստումը) այն մասին, որ ապահովագրական գործակալի գործառույթներ իրականացնող ֆիզիկական անձինք տիրապետում են սույն կանոնակարգի Հավելված 14-ով սահմանված թեմաներին՝ ըստ սահմանված խորության:

գ. եթե դիմումատուն հանդես է գալիս լիազոր ներկայացուցչի միջոցով,

ապա ներկայացվում է նաև պատշաճ կարգով տրված լիազորագիրը,

դ. անձնագրի պատճենը, սոցիալական քարտի պատճենը, սոցիալական քարտ ստանալուց հրաժարվելու դեպքում՝ սոցիալական քարտ ստանալուց հրաժարվելու մասին տեղեկանքի պատճենը,

ե. ապահովագրական ընկերության հետ գործակալի գործառնություններ իրականացնելու պայմանագրի պատճենը, որում պետք է նշված լինեն, թե «Ապահովագրության և ապահովագրական գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 3-րդ հոդվածի 12-րդ կետով սահմանված որ գործառնություններն են թույլատրված գործակալին, որ ապահովագրության դասի գծով, իսկ 12-րդ կետի «գ» ենթակետով սահմանված գործառնության դեպքում՝ նաև գործակալին ապահովագրավճարների հավաքագրման և հատուցումների փոխանցման իրականացման՝ ապահովագրական ընկերության կողմից թույլատրված չափերը,

զ. «Ապահովագրության և ապահովագրական գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 90-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ, 3-րդ, 4-րդ, 5-րդ, 6-րդ կետերով սահմանված հիմքերի բացակայության մասին հայտարարությունը:

3) Ապահովագրական ընկերությունը սույն կանոնակարգի 103-րդ կետի 1-ին, 2-րդ և 2.1-րդ ենթակետերում նշված փաստաթղթերի հետ միասին Կենտրոնական բանկ է ներկայացնում ապահովագրական ընկերության (որի հետ աշխատելու է գործակալը) կողմից պատշաճ ձևով տրված փաստաթուղթն այն մասին, որ ապահովագրական գործակալի մասնագիտական անփութության հետևանքով պատճառված վնասի հատուցումն ապահովելու պատասխանատվությունը ստանձնել է տվյալ ապահովագրական ընկերությունը: Ապահովագրական ընկերության կողմից ապահովագրական գործակալի մասնագիտական անփութության հետևանքով պատճառված վնասի հատուցումն ապահովելու պատասխանատվությունը չստանձնելու դեպքում անձին ապահովագրական գործակալների ռեգիստրում Կենտրոնական բանկի կողմից հաշվառելու պահից 10 օրվա ընթացքում ապահովագրական ընկերությունը ներկայացնում է սույն կանոնակարգի 112-րդ կետով սահմանված մասնագիտական անփութության հետևանքով պատճառված վնասի հատուցումն ապահովելու համար կնքված պատասխանատվության ապահովագրության պայմանագրի պատճենը:

4) Սույն կետով նախատեսված դիմումին կից ներկայացվում է նաև ապահովագրական ընկերության իրավասու մարմնի կողմից հաստատված ներքին կանոնակարգը, որով առնվազն սահմանված են ապահովագրական ընկերության կողմից ապահովագրական գործակալի գործառույթներ իրականացնող ֆիզիկական անձանց գիտելիքների ստուգման, նրանց մասնագիտական որակի բարձրացման մեխանիզմները, ներառյալ տեղեկություններ այն անձանց վերաբերյալ, որոնց կողմից կազմակերպված դասընթացների և/կամ քննությունների վրա է հիմնվում ապահովագրական ընկերության կողմից ապահովագրական գործակալների գիտելիքների ստուգման գործընթացը (նման դասընթացներ կամ քննություններ

կազմակերպվելու դեպքում): Ընդ որում, սույն ենթակետով սահմանված կանոնակարգը ապահովագրական գործակալի հաշվառման ժամանակ չի ներկայացվում, եթե այն նախկինում արդեն իսկ ներկայացվել է Կենտրոնական բանկ:

**(103-րդ կետը փոխ., լրաց. 01.07.08թ. թիվ 188Ն, լրաց. փոխ. 26.10.10թ. թիվ 281Ն, լրաց. 29.11.10թ. թիվ 315Ն, խմբ 20.12.11թ. թիվ 355Ն)**

104. Կենտրոնական բանկը կարող է պահանջել լրացուցիչ տեղեկություններ, որոնք անհրաժեշտ են սույն կանոնակարգի 103-րդ կետում նշված տեղեկատվության հավաստիությունը գնահատելու համար:

104.1 Կենտրոնական բանկի կողմից վերահսկվող անձանց կամ այլ անձանց օրենքով սահմանված կարգով ապահովագրական գործակալ հաշվառելու համար կարող են չներկայացվել այն փաստաթղթերը և (կամ) տեղեկությունները, որոնք նախկինում ներկայացվել են Կենտրոնական բանկ:

**(104.1 կետը լրաց. 01.07.08թ. թիվ 188Ն, 29.11.10թ. թիվ 315Ն, փոխ. 20.12.11թ. թիվ 355Ն)**

105. Կենտրոնական բանկի նախագահը ապահովագրական գործակալների ռեգիստրում ապահովագրական գործակալի հաշվառման մասին որոշումը կայացնելու պահից երեք աշխատանքային օրվա ընթացքում ապահովագրական գործակալին հաշվառելու դիմում ներկայացրած ապահովագրական ընկերության միջոցով հանձնում է հաշվառման վկայական՝ համաձայն սույն կանոնակարգի Հավելված 7դ-ի:

**(105-րդ կետը լրաց. 01.07.08թ. թիվ 188Ն, փոխ. 20.12.11թ. թիվ 355Ն)**

105.1. Ֆիզիկական անձ կամ անհատ ձեռնարկատեր ապահովագրական գործակալը Կենտրոնական բանկում հաշվառվելուց հետո այլ ապահովագրական ընկերության հետ գործակալի գործառնություններ իրականացնելու պայմանագիր կնքելու դեպքում տվյալ ապահովագրական ընկերությունը 5 աշխատանքային օրվա ընթացքում Կենտրոնական բանկ է ներկայացնում սույն կանոնակարգի 103-րդ կետի 2.1 ենթակետի «բ» և «ե» պարբերություններով, ինչպես նաև նույն կետի 3-րդ, 4-րդ ենթակետերով պահանջվող փաստաթղթերը:

**(105.1 կետը լրաց. 20.12.11թ. թիվ 355Ն)**

105.2. «Ապահովագրության և ապահովագրական գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 90-րդ հոդվածի 3-րդ, 5-րդ և 7-րդ մասերով ապահովագրական գործակալի և ապահովագրական գործակալի պատասխանատու անձանց համար սահմանված պահանջներին չբավարարելու դեպքում տվյալ ապահովագրական գործակալի հետ ապահովագրական գործակալի գործառնություններ իրականացնելու պայմանագիր կնքած ապահովագրական ընկերությունը 5 աշխատանքային օրվա ընթացքում դադարեցնում է տվյալ գործակալի հետ կնքված ապահովագրական գործակալի գործառնություններ իրականացնելու պայմանագիրը և սույն կանոնակարգի 105.3 կետով սահմանված կարգով ապահովագրական միջնորդների ռեգիստրում համապատասխան փոփոխություն կատարելու միջնորդությամբ դիմում է Կենտրոնական բանկ՝ նշելով ապահովագրական գործակալի

գործառնություններ իրականացնելու պայմանագրի դադարեցման պատճառը:
**(105.2 կետը լրաց. 20.12.11թ. թիվ 355Ն)**

105.3. Ապահովագրական գործակալի վերակազմակերպման, անվանափոխության կամ ապահովագրական միջնորդների ռեգիստրում արտացոլված այլ տեղեկատվության (Կենտրոնական բանկի ինտերնետային կայքում հրապարակված հաշվառված գործակալների վերաբերյալ տվյալներ, գործակալի հաշվառման վկայականում արտացոլված տվյալներ) փոփոխության դեպքում տվյալ ապահովագրական գործակալի հետ ապահովագրական գործակալի գործառնություններ իրականացնելու պայմանագիր կնքած ապահովագրական ընկերությունը ապահովագրական միջնորդների ռեգիստրում համապատասխան փոփոխություն կատարելու միջնորդությամբ դիմում է Կենտրոնական բանկ՝ փոփոխությունը տեղի ունենալուց հետո 10 աշխատանքային օրվա ընթացքում՝ կցելով փոփոխությունը կատարելու հիմք հանդիսացող փաստաթղթերը:
**(105.3 կետը լրաց. 20.12.11թ. թիվ 355Ն)**

105.4. Ընդ որում, եթե ապահովագրական գործակալը ապահովագրական միջնորդային գործունեություն է իրականացնում մի քանի ապահովագրական ընկերության անունից և սույն գլխի համաձայն յուրաքանչյուր ապահովագրական ընկերություն Կենտրոնական բանկ պետք է ներկայացնի միևնույն տեղեկատվությունը, ապա այդ պահանջը յուրաքանչյուր ապահովագրական ընկերության մասով համարվում է կատարված, եթե նրանցից որևէ մեկը սույն կանոնակարգով սահմանված կարգով ներկայացրել է այդ տեղեկատվությունը:
**(105.4 կետը լրաց. 20.12.11թ. թիվ 355Ն)**

## ԳԼՈՒԽ 24. ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԳՈՐԾԱԿԱԼԻ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԿԱՄ ՕՏԱՐԵՐԿՐՅԱ ՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ՄԱՍՆԱՃՅՈՒՂ ԵՎ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑՉՈՒԹՅՈՒՆ ՍՏԵՂԾԵԼՈՒ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՍՏԱՆԱԼԸ

106. Հայաստանի Հանրապետության տարածքում գործող ապահովագրական գործակալի կողմից Հայաստանի Հանրապետությունում կամ օտարերկրյա պետությունում մասնաճյուղ և ներկայացուցչություն տեղծելիս տվյալ գործակալի հետ ապահովագրական գործակալի գործառնություններ իրականացնելու պայմանագիր կնքած ապահովագրական ընկերությունը ապահովագրական գործակալի անունից Կենտրոնական բանկ է ներկայացնում հետևյալ փաստաթղթերը.

1) ապահովագրական գործակալի մասնաճյուղ կամ ներկայացուցչություն ստեղծելու թույտվություն ստանալու միջնորդագիրը,
2) ապահովագրական գործակալի իրավասու մարմնի որոշումը կամ արձանագրությունից քաղվածք՝ մասնաճյուղ կամ ներկայացուցչություն բացելու համար,
3) մասնաճյուղի պատասխանատու անձանց ցանկը, որը ներառում է նաև

նրանց վերաբերյալ տվյալներ, պատասխանատու անձանց վավերացված ստորագրությունների նմուշները,

4) եթե դիմումատուն հանդես է գալիս լիազոր ներկայացուցչի միջոցով, ապա ներկայացվում է նաև դիմումատուի կողմից պատշաճ կարգով նրան տրված լիազորագիրը:

**(106-րդ կետը խմբ. 20.12.11թ. թիվ 355Ն)**

107. Կենտրոնական բանկի նախագահը որոշում է ընդունում ապահովագրական գործակալի՝ Հայաստանի Հանրապետությունում կամ օտարերկրյա պետությունում մասնաճյուղ և (կամ) ներկայացուցչություն ստեղծմանը թույլտվություն տալու մասին, եթե ներկայացված փաստաթղթերը և տեղեկությունները համապատասխանում են սույն կանոնակարգին, այլ օրենքներին և իրավական ակտերին, դրանցում ներկայացված տեղեկությունները ստույգ են ու արժանահավատ, և առկա չեն ապահովագրական գործակալի՝ Հայաստանի Հանրապետությունում կամ օտարերկրյա պետությունում մասնաճյուղի և (կամ) ներկայացուցչության ստեղծմանը համաձայնություն տալու՝ սույն կանոնակարգով կամ Կենտրոնական բանկի նորմատիվ իրավական ակտերով սահմանված մերժման հիմքերը: Ընդ որում, Կենտրոնական բանկի թույլտվությունը համարվում է տրված ապահովագրական գործակալի այն մասնաճյուղերի և ներկայացուցչությունների համար, որոնց ցանկը ներկայացվել է Կենտրոնական բանկ ապահովագրական գործակալի հաշվառման համար Կենտրոնական բանկ դիմելիս:

**(107-րդ կետը փոխ. 01.07.08թ. թիվ 188Ն, լրաց. 20.12.11թ. թիվ 355Ն)**

108. Կենտրոնական բանկի նախագահը մերժում է ապահովագրական գործակալի՝ Հայաստանի Հանրապետությունում կամ օտարերկրյա պետությունում մասնաճյուղի և ներկայացուցչության ստեղծման թույլտվությունը, եթե՝

1) ներկայացվել են կեղծ կամ թերի փաստաթղթեր կամ ներկայացված փաստաթղթերում արտացոլվել են անարժանահավատ կամ կեղծ տվյալներ, և (կամ)
2) Հայաստանի Հանրապետության տարածքից դուրս մասնաճյուղ կամ ներկայացուցչություն ստեղծելու դեպքում Կենտրոնական բանկի հիմնավորված կարծիքով՝ օտարերկրյա պետությունում ապահովագրական հատվածի վերահսկողության համար պատասխանատու մարմինը պատշաճ և միջազգային չափանիշներին համապատասխան վերահսկողություն չի իրականացնում տվյալ պետությունում գրանցված ապահովագրական գործակալի մասնաճյուղի գործունեության նկատմամբ, կամ տվյալ պետությունը Կենտրոնական բանկին հնարավորություն չի ընձեռում վերստուգել կամ պատշաճ վերահսկողություն իրականացնել ստեղծվելիք մասնաճյուղի կամ ներկայացուցչության նկատմամբ, և (կամ)
3) Հայաստանի Հանրապետության տարածքից դուրս մասնաճյուղ կամ ներկայացուցչություն ստեղծելու դեպքում ապահովագրական գործակալը Կենտրոնական բանկի հիմնավորված կարծիքով՝ ծրագրավորում է շրջանառել հանցավոր ճանապարհով ձեռք բերված միջոցներ կամ օժանդակել դրանց շրջանառմանը:

**(108-րդ կետը փոխ. 01.07.08թ. թիվ 188Ն)**

109. Կենտրոնական բանկի նախագահը տալիս է ապահովագրական գործակալի՝ Հայաստանի Հանրապետությունում և օտարերկրյա պետությունում մասնաճյուղի և (կամ) ներկայացուցչության ստեղծելու թույլտվությունը կամ մերժում է

միջնորդագիրը այն Կենտրոնական բանկ ներկայացնելու պահից 30-օրյա ժամկետում:
**(109-րդ կետը փոխ. 01.07.08թ. թիվ 188Ն)**

110. Եթե նշված ժամկետում Կենտրոնական բանկը որոշում չի ընդունում ապահովագրական գործակալի՝ Հայաստանի Հանրապետությունում և օտարերկրյա պետությունում մասնաճյուղի և ներկայացուցչության ստեղծման թույլտվության տրամադրման վերաբերյալ, ապա թույլտվությունը համարվում է տրված:

111. Ապահովագրական գործակալի կողմից համապատասխան երկրի օրենսդրությամբ սահմանված կարգով այլ երկրում մասնաճյուղ կամ ներկայացուցչություն գրանցելուց (լիցենզավորելուց, արտոնագրելուց) հետո 10-օրյա ժամկետում տվյալ գործակալի հետ ապահովագրական գործակալի գործառնություններ իրականացնելու պայմանագիր կնքած ապահովագրական ընկերությունը այդ մասին տեղեկացնում է Կենտրոնական բանկին՝ ներկայացնելով գրանցման (լիցենզավորման, արտոնագրման) փաստը վկայող փաստաթուղթ:

**(111-րդ կետը խմբ. 20.12.11թ. թիվ 355Ն)**

111.1. Ապահովագրական գործակալը Կենտրոնական բանկի թույլտվությունը ստանում է միայն այն մասնաճյուղերի ստեղծման համար, որոնց միջոցով իրականացնելու է ապահովագրական գործակալի գործունեություն կամ միայն այն ներկայացուցչությունների ստեղծման համար, որոնք կանոնադրությամբ իրենց վերապահված գործառույթներն իրականացնելու են նաև ապահովագրական գործակալության մասով:

**(111.1 կետը լրաց. 20.12.11թ. թիվ 355Ն)**

111.2. Ընդ որում, եթե ապահովագրական գործակալը ապահովագրական միջնորդային գործունեություն է իրականացնում մի քանի ապահովագրական ընկերության անունից և սույն գլխի համաձայն յուրաքանչյուր ապահովագրական ընկերություն Կենտրոնական բանկ պետք է ներկայացնի միևնույն տեղեկատվությունը, ապա այդ պահանջը յուրաքանչյուր ապահովագրական ընկերության մասով համարվում է կատարված, եթե նրանցից որևէ մեկը սույն կանոնակարգով սահմանված կարգով ներկայացրել է այդ տեղեկատվությունը:

**(111.2 կետը լրաց. 20.12.11թ. թիվ 355Ն)**

## ԲԱԺԻՆ VII. ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՄԻՋՆՈՐԴԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՊԱՀԱՆՋՆԵՐ

### ԳԼՈՒԽ 25. ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՄԻՋՆՈՐԴԻ ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ՉԱՓԸ

112. «Ապահովագրության և ապահովագրական գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 90-րդ հոդվածի 5-րդ մասով սահմանված ապահովագրական միջնորդի մասնագիտական անփութության հետևանքով պատճառված վնասի հատուցումն ապահովելու համար պատասխանատվության ապահովագրության պայմանագիրը պետք է ունենա առնվազն 100 միլիոն դրամ ապահովագրական ծածկույթ (գումար) մեկ տարվա համար բոլոր ապահովագրական

պատահարների համար՝ ապահովագրական բրոքերային ընկերության համար, 2 միլիոն դրամ՝ իրավաբանական անձ ապահովագրական գործակալի համար, 1 միլիոն դրամ՝ ֆիզիկական անձ կամ անհատ ձեռնարկատեր գործակալի համար: Ընդ որում, մասնագիտական պատասխանատվության պայմանագիրը չպետք է ունենա մեկ ապահովագրական պատահարի գծով ապահովագրական գումարի, ինչպես նաև աշխարհագրական սահմանափակում:

**(112-րդ կետը լրաց. 29.11.10թ. թիվ 315Ն)**

113. Սույն կանոնակարգի 112-րդ կետի դրույթները չեն տարածվում այն ապահովագրական գործակալների վրա, որոնց մասնագիտական անփութության հետևանքով պատճառված վնասի հատուցումն ապահովելու պատասխանատվությունը ստանձնել է այն ապահովագական ընկերությունը, ում անունից հանդես է գալիս ապահովագրական գործակալը:

114. Սույն կանոնակարգի 112-րդ կետում նշված մասնագիտական անփութության հետևանքով պատճառված վնասի հատուցումն ապահովելու համար պատասխանատվության ապահովագրության պայմանագիրը կարող է փոխարինվել այլ անձի կողմից տրված նույն չափի երաշխիքի պայմանագրով:

## ԳԼՈՒԽ 26. ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԳՈՐԾԱԿԱԼ ՀԱՄԱՐԵԼՈՒ ՀԱՄԱՐ ՏԱՐԵԿԱՆ ԱՊԱՀՈՎԱԳՐԱՎՃԱՐՆԵՐԻ ԳՈՒՄԱՐԸ

115. «Ապահովագրության և ապահովագրական գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 88-րդ հոդվածի 3-րդ մասի 3-րդ կետով սահմանված ապահովագրության մեկ պայմանագրով նախատեսված ապահովագրավճարների տարեկան գումարը սահմանվում է 10 հազար դրամ, իսկ բոլոր ապահովագրության պայմանագրերով նախատեսված ապահովագրավճարների տարեկան գումարը սահմանվում է 500 հազար դրամ:

**(115-րդ կետը լրաց. 01.07.08թ. թիվ 188Ն)**

# ԲԱԺԻՆ VIII. ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՂԵԿԱՎԱՐՆԵՐԻՆ, ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԲՐՈՔԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ ԱՆՁԱՆՑ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՈՐԱԿԱՎՈՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ, ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՍՏՈՒԳՄԱՆ ԵՎ ՈՐԱԿԱՎՈՐՄԱՆ ԿԱՐԳԸ

## ԳԼՈՒԽ 27. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

116. Սույն բաժնով կարգավորվում են «Ապահովագրության և ապահովագրական գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված ապահովագրական ընկերության, օտարերկրյա ապահովագրական ընկերության ղեկավարների, ապահովագրական բրոքերի պատասխանատու անձանց մասնագիտական համապատասխանության չափանիշները, մասնագիտական որակավորման ստուգման և ղեկավարների ու պատասխանատու անձանց՝ Կենտրոնական բանկում գրանցման գործընթացը:

**(116-րդ կետը լրաց. 20.12.11թ. թիվ 355Ն)**

117. «Ապահովագրության և ապահովագրական գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 21-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված ապահովագրական ընկերության ղեկավարը և 90-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերով սահմանված ապահովագրական միջնորդի պատասխանատու անձը օրենքով

նախատեսված դեպքերում այդ անձանց գործառույթների պատվիրակման դեպքում այն անձը կամ անձինք, որոնք պատասխանատու են պատվիրակված գործառույթների համար, բացառությամբ կառուցվածքային ստորաբաժանումների (դեպարտամենտի, վարչության, բաժնի, խմբի կամ այլ միավորի) ղեկավարների, մասնաճյուղի տնօրենի տեղակալի, մասնաճյուղի գլխավոր հաշվապահի տեղակալի, ապահովագրական ընկերության ներկայացուցչության տնօրենի և գլխավոր հաշվապահի, ապահովագրական գործակալի խորհրդի այն անդամի և գործադիր մարմնի կամ դրան համարժեք այլ մարմնի անդամի, որոնք պատասխանատու են ապահովագրական գործակալի գործառույթների համար, ապահովագրական գործակալի գործառնություններ իրականացնող ֆիզիկական անձի, պետք է ունենան սույն կանոնակարգով սահմանված կարգով ստացած որակավորում:

**(117-րդ կետը լրաց. 01.07.08թ. թիվ 188Ն, խմբ. 01.12.09թ. թիվ 360Ն, լրաց. 20.12.11թ. թիվ 355Ն)**

117.1 (117.1 կետը լրաց. 01.12.09թ. թիվ 360Ն, ուժը կորցրել է 20.12.11թ. թիվ 355 Ն որոշմամբ):

118. Սույն կանոնակարգի 117-րդ կետով սահմանված ապահովագրական ընկերության օտարերկրյա ապահովագրական ընկերության մասնաճյուղի որակավորված ղեկավարները և ապահովագրական բրոքերային ընկերության պատասխանատու անձինք, համապատասխան պաշտոնում աշխատելու համար ապահովագրական ընկերության կամ ապահովագրական բրոքերային ընկերության միջնորդությամբ գրանցվում են Կենտրոնական բանկում՝ սույն կանոնակարգի գլուխ 37-ով սահմանված կարգով:

**(118-րդ կետը խմբ. 01.07.08թ. թիվ 188Ն, փոխ. 01.12.09թ. թիվ 360Ն, լրաց. 20.12.11թ. թիվ 355Ն)**

119. (119-րդ կետը խմբ. 01.12.09թ. թիվ 360Ն, ուժը կորցրել է 20.12.11թ. թիվ 355 Ն որոշմամբ):

120. (120-րդ կետը ուժը կորցրել է 20.12.11թ. թիվ 355 Ն որոշմամբ):

## ԳԼՈՒԽ 28. ՈՐԱԿԱՎՈՐՄԱՆ ՍՏՈՒԳՄԱՆ ՁԵՎԸ

121. Թեկնածուների որակավորման ստուգումն անցկացվում է Կենտրոնական բանկում գրավոր քննության (այսուհետ՝ քննություն) կամ բանավոր հարցազրույցի (այսուհետ՝ հարցազրույց) միջոցով:

121.1. Քննության միջոցով որակավորման ստուգումն անցնում են սույն կանոնակարգի 117-րդ կետում նշված պաշտոններում (բացառությամբ ապահովագրական ընկերության, օտարերկրյա ապահովագրական ընկերության մասնաճյուղի խորհրդի նախագահի և խորհրդի անդամի) աշխատելու համար դիմող թեկնածուները:

122. Կենտրոնական բանկի խորհրդի նիստում հարցազրույցի միջոցով որակավորման ստուգումն անցնում են ապահովագրական ընկերության, օտարերկրյա ապահովագրական ընկերության մասնաճյուղի խորհրդի նախագահի, խորհրդի անդամի պաշտոններում աշխատելու համար դիմող թեկնածուները: Հարցազրույցի ժամանակ ստուգվում են թեկնածուի գիտելիքները սույն կանոնակարգի 186-րդ կետով սահմանված՝

ապահովագրական ընկերության, օտարերկրյա ապահովագրական ընկերության մասնաճյուղի խորհրդի նախագահին և խորհրդի անդամներին վերաբերող թեմաների շրջանակներում: Հարցազրույցի արդյունքներով Կենտրոնական բանկի խորհուրդն ընդունում է որոշում՝ սույն կանոնակարգի 186-րդ կետով սահմանված՝ ապահովագրական ընկերության, օտարերկրյա ապահովագրական ընկերության մասնաճյուղի խորհրդի նախագահին և խորհրդի անդամներին վերաբերող թեմաների շրջանակներում ապահովագրական ընկերության, օտարերկրյա ապահովագրական ընկերության մասնաճյուղի խորհրդի նախագահի կամ անդամի թեկնածուների գիտելիքների համապատասխանության կամ անհամապատասխանության վերաբերյալ: Սույն կետի համաձայն ապահովագրական ընկերության, օտարերկրյա ապահովագրական ընկերության մասնաճյուղի խորհրդի նախագահի կամ խորհրդի անդամի թեկնածուի գիտելիքների համապատասխանության վերաբերյալ Կենտրոնական բանկի խորհրդի որոշման ընդունման դեպքում նշված անձինք համարվում են համապատասխան տեսակի որակավորում ստացած:

122.1. Քննությունը անցկացվում է Կենտրոնական բանկի թեստավորման ծառայության (այսուհետ՝ թեստավորման ծառայություն) կողմից կամ Կենտրոնական բանկի նախագահի որոշմամբ՝ այլ կազմակերպության կողմից: Կենտրոնական բանկի նախագահի որոշմամբ քննություններն այլ կազմակերպությունների կողմից անցկացվելու դեպքում քննության թեստերի կազմման, դրանցում փոփոխությունների և լրացումների կատարման, քննություններին մասնակցելու համար թեկնածուների հերթագրման, փաստաթղթերի ընդունման, քննությունների անցկացման, քննության արդյունքների ամփոփման, բողոքարկման, ինչպես նաև անհրաժեշտ փաստաթղթերը Կենտրոնական բանկ ներկայացնելու կարգը սահմանվում է տվյալ կազմակերպության կողմից՝ համաձայնեցնելով Կենտրոնական բանկի հետ:

123. (123-րդ կետը ուժը կորցրել է 01.12.09թ. թիվ 360 Ն որոշմամբ)

124. (124-րդ կետը ուժը կորցրել է 01.12.09թ. թիվ 360 Ն որոշմամբ)

125. (125-րդ կետը ուժը կորցրել է 01.07.08թ. թիվ 188 Ն որոշմամբ)

**(Գլուխ 28-ը փոխ. 01.07.08թ. թիվ 188Ն, խմբ. 01.12.09թ. թիվ 360Ն, խմբ. 20.12.11թ. թիվ 355Ն)**

## ԳԼՈՒԽ 29. ՈՐԱԿԱՎՈՐՄԱՆ ՍՏՈՒԳՄԱՆԸ ՄԱՍՆԱԿՑԵԼՈՒ ԿԱՐԳԸ
**(Գլուխ 29-ի վերնագիրը խմբ. 01.12.09թ. թիվ 360Ն)**

126. Թեկնածուները (բացառությամբ ապահովագրական ընկերության խորհրդի նախագահի և խորհրդի անդամների) քննությանը մասնակցելու համար պետք է նախապես հերթագրվեն: Թեկնածուները քննությանը մասնակցելու համար կարող են հերթագրվել Կենտրոնական բանկի ինտերնետային կայքի համապատասխան էջում տվյալներ մուտքագրելով:

**(126-րդ կետը փոխ. 01.07.08թ. թիվ 188Ն, խմբ. 01.12.09թ. թիվ 360Ն, փոխ. 07.02.12թ. թիվ 38Ն)**

126.1 Հերթագրվելու նպատակով յուրաքանչյուր եռամսյակի համար սահմանվում են քննության ստույգ օրեր, որի մասին տեղեկությունները հրապարակվում են Կենտրոնական բանկի ինտերնետային կայքում` մինչև տվյալ եռամսյակի առաջին ամսվան նախորդող ամսվա 10-ը:
**(126.1 կետը լրաց. 01.12.09թ. թիվ 360Ն)**

126.2 լրաց. 01.12.09թ. թիվ 360Ն որոշմամբ, ուժը կորցրել է 07.02.12թ. թիվ 38Ն

126.3 Հերթագրվելու համար թեկնածուները հայտնում են հետևյալ տեղեկությունները.

ա. անուն, ազգանուն,

բ. որակավորման տեսակ,

գ. քննությանը մասնակցելու ամիս, օր, ժամ` ըստ հրապարակված ցանկի (ցանկության դեպքում),

ե. անձնագրի կամ անձը հաստատող այլ փաստաթղթի տվյալները,

զ. էլեկտրոնային փոստի (առկայության դեպքում) հասցեն:

դ. հեռախոսահամար,

**(126.3 կետը լրաց. 01.12.09թ. թիվ 360Ն, 07.02.12թ. թիվ 38Ն)**

126.4 Թեկնածուի կողմից նշված օրը և (կամ) ժամին քննության անցկացման անհնարինության դեպքում կամ թեկնածուի կողմից քննությանը մասնակցելու օր և (կամ) ժամ չնշելու դեպքում թեստավորման ծառայության աշխատակիցը թեկնածուի` Կենտրոնական բանկում հերթագրվելու օրվան հաջորդող երեք աշխատանքային օրվա ընթացքում ծանուցում է նրան քննության անցկացման հնարավոր առաջիկա օրվա և (կամ) ժամի մասին:
**(126.4 կետը լրաց. 01.12.09թ. թիվ 360Ն)**

126.5 Թեկնածուները քննությանը մասնակցում են` քննության օրը ներկայացնելով հետևյալ փաստաթղթերը.

1) անձնագիր կամ անձը հաստատող այլ փաստաթուղթ և դրա պատճենը,
2) պետական տուրքի վճարումը հավաստող փաստաթղթի պատճենը,
3) Հավաստագրի պատճենը (Հավաստագիր ունեցող պատասխանատու ակտուարի թեկնածուների համար):

**(126.5 կետը լրաց. 01.12.09թ. թիվ 360Ն)**

126.7 Ապահովագրական ընկերության խորհրդի նախագահի, խորհրդի անդամների թեկնածուները որակավորման և մասնագիտական համապատասխանության ստուգման համար հարցազրույցին մասնակցելու համար ապահովագրական ընկերության միջնորդությամբ Կենտրոնական բանկ են ներկայացնում սույն կանոնակարգի 165.3 կետով սահմանված փաստաթղթերը:
**(126.7 կետը լրաց. 01.12.09թ. թիվ 360Ն, փոխ. 25.12.12թ. թիվ 372Ն)**

126.8. Կենտրոնական բանկն ապահովագրական ընկերության խորհրդի նախագահի, խորհրդի անդամների որակավորման և մասնագիտական

համապատասխանության ստուգման համար հարցազրույցի անցկացման օրվանից առնվազն 1 օր առաջ թեկնածուին տեղեկացնում է հարցազրույցի անցկացման օրվա վերաբերյալ:
**(126.8 կետը լրաց. 01.12.09թ. թիվ 360Ն, խմբ. 25.12.12թ. թիվ 372Ն)**

127. 127-րդ(ուժը կորցրել է 01.12.09թ. թիվ 360 Ն որոշմամբ)

## ԳԼՈՒԽ 30. ՈՐԱԿԱՎՈՐՄԱՆ ՍՏՈՒԳՄԱՆԸ ՄԱՍՆԱԿՑԵԼՈՒ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆԸ

128.

**Գլուխ 30-ը փոխ 01.07.08թ. թիվ 188Ն, ուժը կորցրել է 01.12.09թ. թիվ 360Ն**

129. (129-րդ կետը ուժը կորցրել է 01.07.08թ. թիվ 188Ն որոշմամբ)

## ԳԼՈՒԽ 31. ՔՆՆՈՒԹՅԱՆ ԱՆՑԿԱՑՈՒՄԸ

(Գլուխ 31-ի վերնագիրը փոխ. 01.12.09թ. թիվ 360Ն, 20.12.11թ. թիվ 355Ն)

130. Քննությունն անցկացվում է համակարգչային ծրագրով՝ թեստային եղանակով:
**(130-րդ կետը խմբ. 01.12.09թ. թիվ 360Ն, փոխ. 20.12.11թ. թիվ 355Ն)**

131. Թեստը հարցեր պարունակող փաստաթուղթ է, որը կազմվում է սույն կանոնակարգի 9-րդ բաժնում սահմանված թեմաների ցանկի հիման վրա:
**(131-րդ կետը լրաց. 01.12.09թ. թիվ 360Ն, փոխ. 20.12.11թ. թիվ 355Ն)**

132. Թեստերը, ինչպես նաև դրանցում կատարված լրացումները և փոփոխությունները հաստատվում են Կենտրոնական բանկի նախագահի որոշմամբ և ենթակա չեն հրապարակման: Թեստերը վերանայվում են ըստ անհրաժեշտության:
**(132-րդ կետը լրաց., փոխ. 01.07.08թ. թիվ 188Ն)**

133. Թեստերը և դրանցում պարունակվող հարցերի քանակը տարբերակվում են ըստ որակավորման հետևյալ տեսակների՝

| ՈՐԱԿԱՎՈՐՄԱՆ ՏԵՍԱԿ | Հարցերի քանակ |
|---|---|
| **1. Ապահովագրական ընկերության, օտարերկրյա ապահովագրական ընկերության մասնաճյուղի ղեկավար, այդ թվում՝** | |
| 1) ապահովագրական ընկերության, օտարերկրյա ապահովագրական ընկերության մասնաճյուղի գործադիր տնօրեն, գործադիր տնօրենի տեղակալ,<br><br>2) ապահովագրական ընկերության, օտարերկրյա ապահովագրական ընկերության մասնաճյուղի տնօրենության | 100 հարց |

| | |
|---|---|
| ղեկավար, տնօրենության անդամ, վարչության նախագահ, վարչության անդամ,<br>3) ապահովագրական ընկերության, օտարերկրյա ապահովագրական ընկերության մասնաճյուղի ներքին աուդիտի ղեկավար, ներքին աուդիտի անդամ,<br>4) ապահովագրական ընկերության, օտարերկրյա ապահովագրական ընկերության մասնաճյուղի գլխավոր հաշվապահ, գլխավոր հաշվապահի տեղակալ | |
| 5) ապահովագրական ընկերության մասնաճյուղի տնօրեն<br>6) ապահովագրական ընկերության մասնաճյուղի գլխավոր հաշվապահ | 80 հարց |
| 7) ապահովագրական ընկերության, օտարերկրյա ապահովագրական ընկերության մասնաճյուղի պատասխանատու ակտուար | 50 հարց |
| **2. Ապահովագրական բրոքերի պատասխանատու անձ, այդ թվում՝** | |
| 1) գործադիր տնօրեն,<br>2) վարչության նախագահ,<br>3) վարչության անդամ,<br>4) գործադիր տնօրենի տեղակալ,<br>5) գլխավոր հաշվապահ | 100 հարց |
| 6) ապահովագրական բրոքերի գործառնություններ իրականացնող ֆիզիկական անձ | 40 հարց |

**(133-րդ կետը փոխ. 01.07.08թ. թիվ 188Ն, լրաց. 01.12.09թ. թիվ 360Ն, խմբ. 20.12.11թ. թիվ 355Ն)**

134. Թեստի յուրաքանչյուր հարցին պատասխանելու համար թեկնածուին (բացառությամբ՝ պատասխանատու ակտուարի՝ Հավաստագիր չունեցող թեկնածուի) հատկացվում է միջին հաշվով 1,5 րոպե: Հավաստագիր չունեցող պատասխանատու ակտուարի թեկնածուին թեստի յուրաքանչյուր հարցին պատասխանելու համար հատկացվում է միջին հաշվով 3 րոպե:
**(134-րդ կետը խմբ. 01.12.09թ. թիվ 360Ն, խմբ. 20.12.11թ. թիվ 355Ն)**

135. Թեստերի հարցերից յուրաքանչյուրը պարունակում է 3-ից 4 պատասխան, որոնցից մեկն է միանշանակ ճիշտ:

136. Թեստի հարցի միանշանակ ճիշտ պատասխանը գնահատվում է մեկ միավոր, իսկ սխալ պատասխանը՝ զրո միավոր: Սխալ պատասխաններ են համարվում միանշանակ սխալ և ոչ միանշանակ ճիշտ պատասխան նշելը, մեկից ավելի պատասխաններ նշելը կամ որևէ պատասխան չնշելը:
**(136-րդ կետը փոխ. 01.12.09թ. թիվ 360Ն)**

137. (137-րդ կետը ուժը կորցրել է 01.12.09թ. թիվ 360 Ն որոշմամբ)

138. Հայերեն լեզվին չտիրապետող թեկնածուների գրավոր քննության

անցկացման ընթացքում թույլատրվում է թարգմանչի մասնակցությունը, ընդ որում Կենտրոնական բանկի համապատասխան աշխատակցի ներկայությունը պարտադիր է: Հայերեն լեզվին չտիրապետող թեկնածուների քննության տևողությունը կարող է երկարաձգվել՝ Կենտրոնական բանկի Իրավաբանական վարչության պետի թույլտվությամբ:
**(138-րդ կետը լրաց. 01.07.08թ. թիվ 188Ն, խմբ. 01.12.09թ. թիվ 360Ն)**

139. Քննությունն անցկացվում է առանձնացված սենյակում, որը վերահսկվում է տեսախցիկների միջոցով:
**(139-րդ կետը խմբ. 01.12.09թ. թիվ 360Ն)**

140. Քննության համար առանձնացված սենյակում թեկնածուն նստում է համապատասխան համակարգչի մոտ՝ ըստ ցուցակի: Ուշացած թեկնածուների համար քննության տևողությունը չի երկարաձգվում:
**(140-րդ կետը խմբ. 01.12.09թ. թիվ 360Ն, խմբ. 20.12.11թ. թիվ 355Ն)**

141. Թեկնածուներին տրվում են բացատրություններ քննության անցկացման հետ կապված տեխնիկական հարցերի վերաբերյալ:
**(141-րդ կետը խմբ. 01.12.09թ. թիվ 360Ն)**

142. Քննության սկիզբը հայտարարելուց հետո թեկնածուն ծանոթանում է առաջադրանքներին և յուրաքանչյուր հարցի (խնդրի) ենթադրյալ պատասխաններից ընտրում է մեկ (իր կարծիքով՝ միանշանակ ճիշտ) պատասխան:
**(142-րդ կետը փոխ. 01.12.09թ. թիվ 360Ն)**

143. Քննության ժամանակ թեկնածուին արգելվում է օգտվել տպագիր, մեքենագիր, ձեռագիր նյութերից, էլեկտրոնային սարքերից (բացառությամբ Կենտրոնական բանկի կողմից տրամադրված էլեկտրոնային հաշվիչ սարքերի), ինչպես նաև աղմկել, հուշել, խոսել, հարցեր տալ ներկա գտնվող անձանց, դուրս գալ սենյակից: Եթե թեկնածուն ցանկանում է լքել սենյակը, նրա աշխատանքը համարվում է դադարեցված:
**(143-րդ կետը լրաց. 01.12.09թ. թիվ 360Ն, փոխ. 20.12.11թ. թիվ 355Ն)**

144. Սույն կանոնակարգի 143-րդ կետում նշված պահանջներից յուրաքանչյուրի չկատարման դեպքում թեկնածուն զրկվում է քննության հետագա ընթացքին մասնակցելու իրավունքից, և համարվում է բացասական արդյունք ապահոված:
**(144-րդ կետը փոխ. 01.12.09թ. թիվ 360Ն)**

145. Աշխատանքն ավարտելուց, ինչպես նաև քննության առաջադրանքները կատարելու համար սահմանված ժամանակն սպառվելուց հետո թեկնածուին տրվում է իր հանձնած թեստի արդյունքների վերաբերյալ հաշվետվությունը (երկու օրինակից), որտեղ արտացոլվում են թեկնածուի միավորները տոկոսային արտահայտությամբ: Հաշվետվությունները ստորագրվում են թեկնածուի կողմից. մեկ օրինակը մնում է Կենտրոնական բանկում, մյուսը տրվում է թեկնածուին:
**(145-րդ կետը խմբ. 01.12.09թ. թիվ 360Ն, փոխ. 20.12.11թ. թիվ 355Ն)**

145.1. (145.1 կետը լրաց. 01.12.09թ. թիվ 360Ն որոշմամբ, ուժը կորցրել է

20.12.11թ. թիվ 355 Ն որոշմամբ):

## ԳԼՈՒԽ 32. ԹԵՍՏԻ ԳՆԱՀԱՏՈՒՄԸ ԵՎ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

146. Թեստերի հարցերի գնահատումը կատարվում է հետևյալ կերպ. թեկնածուի կողմից միավորների 70 և ավելի տոկոսը հավաքելու դեպքում թեկնածուն համարվում է դրական արդյունք ապահոված, և թեկնածուին տրվում է որակավորման վկայական:

**(146-րդ կետը խմբ. 01.12.09թ. թիվ 360Ն, փոխ. 20.12.11թ. թիվ 355Ն)**

146.1 Հավաստագիր չունեցող պատասխանատու ակտուարի թեկնածուի երկրորդ թեստի գնահատումը իրականացվում է պատասխանատու ստորաբաժանման աշխատակցի կողմից՝ ճիշտ պատասխանների և թեկնածուի կողմից նշված համապատասխան պատասխանների համեմատության միջոցով: Թեկնածուն թեստի արդյունքների մասին տեղեկացվում է թեստը հանձնելու օրվան հաջորդող եռօրյա ժամկետում՝ հեռախոսի միջոցով այն հեռախոսահամարով, որը ներկայացվել է քննության համար հերթագրվելու ժամանակ:

(146.1 կետը լրաց. 01.12.09թ. թիվ 360Ն)

147. Սույն կանոնակարգի 146-րդ կետով սահմանված պայմաններին չբավարարելու դեպքում թեկնածուն համարվում է բացասական արդյունք ապահոված:

**(147-րդ կետը խմբ. 01.12.09թ. թիվ 360Ն)**

148. Թեկնածուի հարցերի պատասխանների արդյունքները (ելնելով համակարգչային տվյալներից) հաստատում է հանձնաժողովը:

**(148-րդ կետը լրաց. 01.12.09թ. թիվ 360Ն, փոխ. 20.12.11թ. թիվ 355Ն)**

## ԳԼՈՒԽ 33. ԲԱՆԱՎՈՐ ՀԱՐՑԱԶՐՈՒՅՑԸ

149.

(Գլուխ 33-ը ուժը կորցրել է 01.12.09թ. թիվ 360 Ն որոշմամբ)

## ԳԼՈՒԽ 34. ՔՆՆՈՒԹՅԱՆ ԲՈՂՈՔԱՐԿՈՒՄԸ

**(Գլուխ 34-ի վերնագիրը փոխ.. 20.12.11թ. թիվ 355Ն)**

150. «Թեկնածուն կարող է բողոքարկել անցկացված որակավորման քննության արդյունքները՝ քննության անցկացման օրվանից 5 աշխատանքային օրվա ընթացքում՝ գրավոր դիմում ներկայացնելով Կենտրոնական բանկ՝ համաձայն սույն կանոնակարգի Հավելված 11-ի, կամ դիմումը լրացնելով Կենտրոնական բանկի ինտերնետային կայքի համապատասխան էջում: Դիմումն ստանալուց հետո 15 աշխատանքային օրվա ընթացքում Կենտրոնական բանկը տեղեկացնում է բողոքարկողին բողոքարկման արդյունքների վերաբերյալ:

(150-րդ կետը խմբ. 01.12.09թ. թիվ 360Ն, **փոխ. 20.12.11թ. թիվ 355Ն)**

## ԳԼՈՒԽ 35. ՈՐԱԿԱՎՈՐՎԱԾ ՂԵԿԱՎԱՐՆԵՐԻ ԵՎ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ ԱՆՁԱՆՑ ՑՈՒՑԱԿԸ ԵՎ ՈՐԱԿԱՎՈՐՄԱՆ ՎԿԱՅԱԿԱՆԻ ՏՐԱՄԱԴՐՈՒՄԸ

**(Գլուխ 35-ի վերնագիրը խմբ. 01.07.08թ. թիվ 188Ն)**

151. Անցկացված քննության արդյունքներով և հանձնաժողովի դրական կարծիքի հիման վրա թեկնածուին տրվում է որակավորման վկայական ըստ պաշտոնների հետևյալ խմբավորման.

1) ապահովագրական ընկերության և օտարերկրյա ապահովագրական ընկերության մասնաճյուղի պատասխանատու ակտուարի պաշտոնի համար,
2) ապահովագրական ընկերության և օտարերկրյա ապահովագրական ընկերության մասնաճյուղի գործադիր տնօրենի, նրա տեղակալի, տնօրենության (վարչության) նախագահի և անդամի պաշտոնների համար,
3) ապահովագրական ընկերության և օտարերկրյա ապահովագրական ընկերության մասնաճյուղի գլխավոր հաշվապահի, գլխավոր հաշվապահի տեղակալի համար,
4) ապահովագրական ընկերության մասնաճյուղի տնօրենի պաշտոնի համար,
5) ապահովագրական ընկերության մասնաճյուղի գլխավոր հաշվապահի պաշտոնի համար,
6) ապահովագրական բրոքերային ընկերության գործադիր տնօրենի, գործադիր տնօրենի տեղակալի, վարչության (տնօրենության) նախագահի և անդամի պաշտոնների համար,
7) ապահովագրական բրոքերային ընկերության գլխավոր հաշվապահի պաշտոնի համար,
8) ապահովագրական բրոքերի գործառնություններ իրականացնող ֆիզիկական անձի համար,
9) ապահովագրական ընկերության և օտարերկրյա ապահովագրական ընկերության մասնաճյուղի ներքին աուդիտի ղեկավարի և ներքին աուդիտի անդամի պաշտոնների համար:

**(151-րդ կետը լրաց., փոխ. 01.07.08թ. թիվ 188Ն,** խմբ. 01.12.09թ. թիվ 360Ն)

151.1 Որակավորման վկայականը տրվում է քննության դրական արդյունք ապահոված թեկնածուներին թղթային ձևով (համաձայն սույն կանոնակարգի Հավելված 8-ի)՝ քննությունը հանձնելու օրվանից տասնհինգ աշխատանքային օրվա ընթացքում:

**(151.1 կետը լրաց. 01.07.08թ. թիվ 188Ն,** խմբ. 01.12.09թ. թիվ 360Ն)

151.2. Որակավորված անձանց վերաբերյալ տեղեկատվությունը հրապարակվում է Կենտրոնական բանկի ինտերնետային կայքում՝ «Որակավորման վկայական ունեցող անձինք» ցուցակում՝ քննությունը հանձնելու օրվանից տասնհինգ աշխատանքային օրվա ընթացքում: Որակավորված անձանց ցուցակը թարմացվում է որակավորված անձանց որակավորման ժամկետը լրանալու կամ որակավորումից զրկվելու օրվանից երկու աշխատանքային օրվա ընթացքում:

**(151.2-րդ կետը լրաց. 01.07.08թ. թիվ 188Ն,** խմբ. 01.12.09թ. թիվ 360Ն)

152. Որակավորման վկայականները տրվում են ըստ հերթական համարների:
**(152-րդ կետը խմբ. 01.07.08թ. թիվ 188Ն)**

153. Թեկնածուներին որակավորման վկայականները տրվում են ստորագրման պահից հաշված երեք տարի ժամկետով, բացառությամբ սույն կանոնակարգի 153.1 կետով նախատեսված դեպքերի:

(153-րդ կետը լրաց. 01.07.08թ. թիվ 188Ն, խմբ. է 01.12.09թ. թիվ 360Ն, **խմբ. 20.12.11թ. թիվ 355Ն)**

153.1. Ապահովագրական ընկերության, օտարերկրյա ապահովագրական ընկերության մասնաճյուղի խորհրդի նախագահի և խորհրդի անդամի որակավորումը տրվում է մինչև նրանց պաշտոնավարման ժամկետի ավարտը՝ սույն կանոնակարգի 122-րդ կետով սահմանված կարգով: Որակավորում ստացած ապահովագրական ընկերության, օտարերկրյա ապահովագրական ընկերության մասնաճյուղի խորհրդի նախագահը և խորհրդի անդամը իրենց պաշտոնավարման ընթացքում Կենտրոնական բանկի նախագահի որոշմամբ կարող են որակավորման նպատակով հրավիրվել լրացուցիչ հարցազրույցի Կենտրոնական բանկի խորհրդի նիստում: Ընդ որում, լրացուցիչ հարցազրույցը կարող է իրականացվել ոչ հաճախ, քան երեք տարին մեկ անգամ, որի մասին ապահովագրական ընկերությունը, օտարերկրյա ապահովագրական ընկերության մասնաճյուղը տեղեկացվում է առնվազն 30 օր առաջ: Լրացուցիչ հարցազրույցն իրականացվում է սույն կանոնակարգով սահմանված ընթացակարգով: Լրացուցիչ հարցազրույցի արդյունքներով Կենտրոնական բանկի խորհուրդն ընդունում է որոշում՝ սույն կանոնակարգի 186-րդ կետով սահմանված՝ ապահովագրական ընկերության, օտարերկրյա ապահովագրական ընկերության մասնաճյուղի խորհրդի նախագահին և խորհրդի անդամներին վերաբերող թեմաների շրջանակներում ապահովագրական ընկերության, օտարերկրյա ապահովագրական ընկերության մասնաճյուղի խորհրդի նախագահի և խորհրդի անդամների գիտելիքների համապատասխանության կամ անհամապատասխանության վերաբերյալ: Խորհրդի նախագահի կամ խորհրդի անդամի գիտելիքների անհամապատասխանության վերաբերյալ Կենտրոնական բանկի խորհրդի որոշման ընդունման դեպքում, ինչպես նաև սույն ենթակետով սահմանված կարգով լրացուցիչ հարցազրույցին անհարգելի պատճառներով չներկայանալու դեպքում այդ անձինք համարվում են որակավորում չունեցող:
**(153.1-րդ կետը լրաց. 20.12.11թ. թիվ 355Ն)**

154. (154-րդ կետը խմբ. 01.07.08թ. թիվ 188Ն, ուժը կորցրել է 01.12.09թ. թիվ 360 Ն որոշմամբ)

155. (155-րդ կետը լրաց. 01.07.08թ. թիվ 188Ն, ուժը կորցրել է 01.12.09թ. թիվ 360 Ն որոշմամբ)

156. (156-րդ կետը լրաց. 01.07.08թ. թիվ 188Ն, ուժը կորցրել է 01.12.09թ. թիվ 360 Ն որոշմամբ)

157. Որակավորված անձինք որակավորման վկայականը կորցնելու դեպքում

կարող են այդ մասին գրավոր հայտնել Կենտրոնական բանկ՝ ներկայացնելով գրավոր դիմում Կենտրոնական բանկի նախագահի անունով: Դիմումն ստանալուց հետո տասն աշխատանքային օրվա ընթացքում որակավորված անձին տրվում է որակավորման նոր վկայական՝ «Կրկնօրինակ» նշագրումով, իսկ կորցրած վկայականը համարվում է անվավեր:

(157-րդ կետը խմբ. 01.12.09թ. թիվ 360Ն)

157.1 Թեկնածուն կարող է դիմել Կենտրոնական բանկ՝ մեկից ավելի ղեկավար պաշտոնների համար նախատեսված քննություններին մասնակցելու և համապատասխան որակավորման վկայականներ ստանալու համար:

(157.1-րդ կետը լրաց. 01.12.09թ. թիվ 360Ն)

157.2 Բացասական արդյունք ապահոված թեկնածուները կրկին կարող են մասնակցել քննությանը՝ համապատասխան որակավորման վկայական ստանալու համար:

(157.2-րդ կետը լրաց. 01.12.09թ. թիվ 360Ն)

## ԳԼՈՒԽ 36. ՈՐԱԿԱՎՈՐՄԱՆ ՎԿԱՅԱԿԱՆՈՎ ՏՐՎՈՂ ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՇՐՋԱՆԱԿԸ

158. Սույն կանոնակարգի 151-րդ կետի 2-րդ ենթակետով նշված պաշտոնների համար որակավորման վկայական ստացած անձը կարող է աշխատել որպես ապահովագրական ընկերության և օտարերկրյա ապահովագրական ընկերության մասնաճյուղի գործադիր տնօրեն, նրա տեղակալ, տնօրենության (վարչության) նախագահ և անդամ:

159. Սույն կանոնակարգի 151-րդ կետի 2-րդ ենթակետով նշված պաշտոնների համար որակավորման վկայական ստացած անձը կարող է աշխատել նաև ապահովագրական ընկերության մասնաճյուղի տնօրեն:

**(159-րդ կետը փոխ. 01.07.08թ. թիվ 188Ն)**

160. Սույն կանոնակարգի 151-րդ կետի 3-րդ ենթակետով նշված պաշտոնների համար որակավորման վկայական ստացած անձը կարող է աշխատել որպես ապահովագրական ընկերության և օտարերկրյա ապահովագրական ընկերության մասնաճյուղի գլխավոր հաշվապահ, նրա տեղակալ, ներքին աուդիտի ղեկավար և ներքին աուդիտի անդամ, ինչպես նաև ապահովագրական ընկերության մասնաճյուղի գլխավոր հաշվապահ, ապահովագրական բրոքերային ընկերության գլխավոր հաշվապահ:

**(160-րդ կետը փոխ. 01.07.08թ. թիվ 188Ն)**

161. Սույն կանոնակարգի 151-րդ կետի 6-րդ ենթակետով նշված պաշտոնների համար որակավորման վկայական ստացած անձը կարող է աշխատել որպես բրոքերային ընկերության գործադիր տնօրեն, գործադիր տնօրենի տեղակալ, տնօրենության (վարչության) նախագահ և անդամ:

162. Ապահովագրական ընկերության մասնաճյուղը կարող է չունենալ գլխավոր հաշվապահ, եթե մասնաճյուղն ապահովված է այնպիսի համակարգչային ծրագրերով, որոնք ապահովում են մասնաճյուղում կատարվող գործարքների ավտոմատ արտացոլումը ապահովագրական ընկերության հաշվեկշռում:

163. Ապահովագրական ընկերության, օտարերկրյա ապահովագրական

ընկերության մասնաճյուղի, ապահովագրական բրոքերային ընկերության գլխավոր հաշվապահը ի պաշտոնե կարող է լինել տվյալ ապահովագրական ընկերության տնօրենության (վարչության) անդամ՝ առանց տնօրենության (վարչության) անդամի որակավորման վկայական ստանալու:

## ԳԼՈՒԽ 37. ՂԵԿԱՎԱՐԻ ԵՎ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ ԱՆՁԻ ԳՐԱՆՑՈՒՄԸ

164. Սույն կանոնակարգի իմաստով ապահովագրական ընկերության, օտարերկրյա ապահովագրական ընկերության մասնաճյուղի Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի կողմից գրանցվող ղեկավարներն են՝ խորհրդի նախագահը և անդամները, գործադիր տնօրենը, տնօրինության ղեկավարը և անդամները, վարչության նախագահը և անդամները, գործադիր տնօրենի տեղակալը, գլխավոր հաշվապահը և նրա տեղակալը, ներքին աուդիտի ղեկավարը և անդամները, պատասխանատու ակտուարը, մասնաճյուղի տնօրենը, մասնաճյուղի գլխավոր հաշվապահը, իսկ ապահովագրական բրոքերային ընկերության գրանցվող պատասխանատու անձինք են՝ գործադիր տնօրենը կամ վարչության նախագահը, վարչության անդամները, գլխավոր հաշվապահը, գործադիր տնօրենի տեղակալը:

165. Ղեկավարների գրանցումը իրականացվում է 2 ընթացակարգով՝ պարզ և բարդ: Գրանցվող ղեկավարների գրանցման ընթացակարգերը, ըստ զբաղեցրած պաշտոնների, սահմանված է սույն կանոնակարգի Հավելված 3-ով:

165.1 Բարդ ընթացակարգով ղեկավարների գրանցումը ներառում է՝

1) թեկնածուի որակավորման առկայություն՝ Կենտրոնական բանկում գրավոր քննության կամ բանավոր հարցազրույցի միջոցով, համաձայն սույն կանոնակարգի 28-րդ, 29-րդ, 31-րդ, 32-րդ 34-րդ, 35-րդ, 36-րդ և 38-րդ գլուխների, բացառությամբ սույն կանոնակարգի 166.5, 166.6 կետերով սահմանված դեպքերի,
2) թեկնածուի գնահատում՝ սույն կանոնակարգով պահանջվող փաստաթղթերով ներկայացվող տեղեկատվության, ինչպես նաև օրենքով սահմանված մերժման հիմքերի ուսումնասիրության միջոցով,
3) թեկնածուի հետ բանավոր հարցազրույցի անցկացում՝ վերջինիս կողմից համապատասխան պարտականությունները կատարելու ունակության, կոլեգիալ կառավարման մարմնում արդյունավետ գործունեություն իրականացնելու հնարավորության և այլ հմտությունների ստուգման նպատակով՝ սույն գլխով սահմանված կարգով, բացառությամբ սույն կանոնակարգի 166.4 կետով սահմանված դեպքերի:

165.2 Պարզ ընթացակարգով ղեկավարների գրանցումը ներառում է՝

1) թեկնածուի որակավորման առկայություն՝ Կենտրոնական բանկում գրավոր քննության կամ բանավոր հարցազրույցի միջոցով, համաձայն սույն կանոնակարգի 28-րդ, 29-րդ, 31-րդ, 32-րդ 34-րդ, 35-րդ, 36-րդ և 38-րդ գլուխների, բացառությամբ

սույն կանոնակարգի 166.5 և 166.6 կետերով սահմանված դեպքերի,

2) թեկնածուի վերաբերյալ տեղեկատվության ստացում՝ սույն կանոնակարգով պահանջվող փաստաթղթերի ներկայացման միջոցով:

165.3. Անձին որպես ղեկավար գրանցելու կամ ղեկավարների կազմում փոփոխությունները գրանցելու համար ապահովագրական ընկերությունը, օտարերկրյա ապահովագրական ընկերության մասնաճյուղը, ինչպես նաև ապահովագրական բրոքերային ընկերությունը Կենտրոնական բանկ են ներկայացնում հետևյալ փաստաթղթերը.

1) Բարդ ընթացակարգով գրանցվող ղեկավարների գրանցման համար.

ա. անձին որպես ղեկավար գրանցելու կամ ղեկավարների կազմում փոփոխություն կատարելու մասին ապահովագրական ընկերության, օտարերկրյա ապահովագրական ընկերության մասնաճյուղի կամ ապահովագրական բրոքերի միջնորդագիրը՝ համաձայն սույն կանոնակարգի Հավելված 3-ի,

բ. իրավասու մարմնի որոշումը ղեկավարի նշանակման կամ ղեկավարների կազմում փոփոխություն կատարելու մասին:

2) Պարզ ընթացակարգով գրանցվող ղեկավարների գրանցման համար Ընկերությունը պետք է Կենտրոնական բանկ ներկայացնի անձին որպես ղեկավար գրանցելու կամ ղեկավարների կազմում փոփոխություն կատարելու մասին ապահովագրական ընկերության, օտարերկրյա ապահովագրական ընկերության մասնաճյուղի կամ ապահովագրական բրոքերի միջնորդագիրը՝ համաձայն սույն կանոնակարգի Հավելված 3-ի:

165.4. Սույն կանոնակարգի Հավելված 3-ով սահմանված միջնորդագրի 2.6, 2.8, 2.9, 3.3 ենթակետերում, ինչպես նաև 5-9-րդ կետերով սահմանված տեղեկությունների փոփոխությունները նույնպես ներկայացվում են Կենտրոնական բանկ՝ փոփոխությունները Ընկերությանը հայտնի դառնալուց հետո ոչ ուշ, քան եռօրյա ժամկետում: Սույն կանոնակարգի Հավելված 3-ով սահմանված միջնորդագիրը և սույն կանոնակարգի 165.3 կետով սահմանված իրավասու մարմնի որոշման սքան արված տարբերակը Ընկերության կողմից ներկայացվում են էլեկտրոնային տարբերակով՝ Սի-Բի-Էյ-Նեթ համակարգի միջոցով, իսկ անհնարինության դեպքում՝ էլեկտրոնային կրիչով: Սույն կանոնակարգի Հավելված 3-ով սահմանված միջնորդագիրը ներկայացվում է էքսել (excel) ֆայլով՝ հաստատված ապահովագրական ընկերության գործադիր մարմնի ղեկավարի էլեկտրոնային ստորագրությամբ: Ընդ որում, նշված միջնորդագրով ներկայացված տեղեկատվության իսկությունը ստուգելու համար Կենտրոնական բանկը կարող է դիմել համապատասխան իրավասու մարմիններին՝ պահպանելով ձեռքբերված տեղեկատվության գաղտնիությունը:

165.5. Ապահովագրական ընկերությունները, օտարերկրյա ապահովագրական ընկերության մասնաճյուղերը, ինչպես նաև ապահովագրական բրոքերային ընկերությունները պետք է ունենան և Կենտրոնական բանկ ներկայացնեն իրավասու մարմնի կողմից հաստատված ներքին կանոնակարգ, որտեղ առնվազն պետք է նկարագրվեն

«Ապահովագրության և ապահովագրական գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով և սույն կանոնակարգով սահմանված՝ ղեկավարների գրանցման մերժման հիմքերը ստուգելու գործընթացները, վերջիններիս նկատմամբ սահմանված պահանջների պահպանման մեխանիզմները:

165.6. Ապահովագրական ընկերության, օտարերկրյա ապահովագրական ընկերության մասնաճյուղերի, ինչպես նաև ապահովագրական բրոքերային ընկերության ղեկավարների կամ ղեկավարների կազմում փոփոխությունները գրանցելու համար ղեկավարները (բացառությամբ խորհրդի նախագահի և անդամների) պետք է ունենան Կենտրոնական բանկի կողմից տրամադրված որակավորման վկայական, բացառությամբ սույն կանոնակարգի 166.5, 166.6 կետերով սահմանված դեպքերի:

166. Կենտրոնական բանկը պարտավոր է սույն գլխում սահմանված՝ ղեկավարների կազմում կատարված փոփոխությունների գրանցման համար համապատասխան գլուխներով սահմանված փաստաթղթերը ստանալու պահից հետո՝ օրենքով սահմանված ժամկետում գրանցել փոփոխությունները կամ մերժել գրանցումը: Բարդ ընթացակարգով գրանցվող ղեկավարների կազմում կատարված փոփոխությունները գրանցվում են Կենտրոնական բանկի նախագահի որոշմամբ: Պարզ ընթացակարգերով գրանցվող ղեկավարները գրանցված են համարվում Կենտրոնական բանկ փաստաթղթերը մուտքագրվելու պահից օրենքով սահմանված ժամկետի վերջին օրվանից՝ առանց Կենտրոնական բանկի նախագահի որոշման, եթե Կենտրոնական բանկը սույն կանոնակարգի 166.2-166.4 կետերի ուսումնասիրության արդյունքում, Կենտրոնական բանկի հիմնավոր կարծիքով՝ բանավոր կամ գրավոր ծանուցման միջոցով, չի պահանջում անձին գրանցել բարդ ընթացակարգով: Կենտրոնական բանկի կողմից պահանջվող որոշակի փաստեր պարզաբանելու նպատակով օրենքով սահմանված ժամկետը կարող է կասեցվել առավելագույնը երեք ամիս ժամկետով: Ընդ որում, օրենքով սահմանված ժամկետի կասեցման դեպքում կասեցվում է նաև սույն կանոնակարգի 175-րդ կետով սահմանված եռամսյա ժամկետը: Կասեցումը դադարեցնելուց հետո ղեկավարի ժամանակավոր պաշտոնակատարի պաշտոնավարման ժամկետը չի կարող գերազանցել եռամսյա ժամկետի և ժամանակավոր պաշտոնավարման՝ մինչև կասեցումն ընկած օրերի տարբերությամբ առաջացող օրերի քանակը: Եթե Կենտրոնական բանկը սույն կանոնակարգի 166.2-166.4 կետերի համաձայն պահանջում է պարզ ընթացակարգով գրանցվող ղեկավարի թեկնածուին գրանցել բարդ ընթացակարգով, ապա Կենտրոնական բանկը այդ մասին ծանուցում է Ընկերությանը, իսկ Ընկերությունը պարտավոր է ծանուցման օրվանը հաջորդող 5-օրյա ժամկետում ղեկավարի թեկնածուին ներկայացնել բարդ ընթացակարգով գրանցման: Նշված դեպքում պահպանվում են բարդ ընթացակարգով գրանցման ընթացակարգերը:

166.1. Սույն կանոնակարգի 166-րդ կետում նշված ծանուցումը ստանալուց հետո ապահովագրական ընկերությունը կամ օտարերկրյա ապահովագրական ընկերության մասնաճյուղը ղեկավարին (ղեկավարներին) ներկայացնում է բարդ ընթացակարգով գրանցման այնքան ժամանակ, քանի

դեռ Կենտրոնական բանկը գրավոր կամ բանավոր ծանուցման միջոցով չի տեղեկացրել ապահովագրական ընկերությանը կամ օտարերկրյա ապահովագրական ընկերության մասնաճյուղին ղեկավարին (ղեկավարներին) պարզ ընթացակարգով գրանցման ներկայացնելու հնարավորության մասին:

166.2. Եթե ապահովագրական ընկերության կամ օտարերկրյա ապահովագրական ընկերության մասնաճյուղի մոտ առկա է կամ հնարավոր է ֆինանսական վիճակի վատթարացում, կամ Ընկերության մոտ Կենտրոնական բանկի կարծիքով, բավարար մակարդակով պահպանված չեն կորպորատիվ կառավարման սկզբունքները, կամ սույն կանոնակարգի 165.5 կետով սահմանված ներքին կանոնակարգը չի պարունակում պահանջվող բոլոր մեխանիզմները և/կամ դրանք իրականում չեն կիրառվում, ապա այդպիսի դեպքերում Ընկերության բոլոր ղեկավարները կարող են հրավիրվել գրանցման բարդ ընթացակարգով:

166.3. Եթե Ընկերության մասնաճյուղը, Կենտրոնական բանկի կարծիքով, հանդիսանում է Ընկերության գործունեության վրա էական ազդեցություն ունեցող, ապա տվյալ մասնաճյուղի բոլոր ղեկավարները կարող են հրավիրվել գրանցման բարդ ընթացակարգով:

166.4. Եթե ղեկավարի թեկնածուի վերաբերյալ տվյալների ուսումնասիրության արդյունքում Կենտրոնական բանկի ֆինանսական վերահսկողության համար պատասխանատու ստորաբաժանման և (կամ) այլ պատասխանատու ստորաբաժանման կարծիքով առկա են ռիսկեր Ընկերության և (կամ) ֆինանսական համակարգի կայունության, ինչպես նաև ղեկավարի թեկնածուի համբավի վերաբերյալ, ապա տվյալ թեկնածուն կարող է հրավիրվել գրանցման բարդ ընթացակարգով:

166.5. Սույն կանոնակարգով սահմանված ղեկավարների թեկնածուները համարվում են Կենտրոնական բանկի մասնագիտական որակավորման վկայական ունեցող, եթե ունեն իրենց պաշտոնի համար սույն կետով սահմանված հետևյալ որակավորումներից, դիպլոմներից կամ հավաստագրերից որևէ մեկը.

1) ապահովագրական ընկերության, օտարերկրյա ապահովագրական ընկերության մասնաճյուղի, ինչպես նաև ապահովագրական բրոքերային ընկերության գործադիր տնօրեն (վարչության նախագահ), գործադիր տնօրենի (վարչության նախագահի) տեղակալ, տնօրինության (վարչության) անդամ, օտարերկրյա ֆինանսական կազմակերպության մասնաճյուղի կառավարիչ, ապահովագրական ընկերության մասնաճյուղի տնօրեն՝ Սի-Էֆ-Էյ (CFA) կամ Էֆ-Առ-Էմ (FRM) կամ Էյ-Սի-Սի-Էյ (ACCA) որակավորման F1-F9 մակարդակներ կամ Սի-Այ-Այ (CII) որակավորման դիպլոմ,
2) ապահովագրական ընկերության, օտարերկրյա ապահովագրական ընկերության մասնաճյուղի, ինչպես նաև ապահովագրական բրոքերային ընկերության գլխավոր հաշվապահ, գլխավոր հաշվապահի տեղակալ՝ Էյ-Սի-Սի-Էյ (ACCA) որակավորման բոլոր

մակարդակները, ապահովագրական ընկերության մասնաճյուղի գլխավոր հաշվապահ՝ Էյ-Սի-Սի-Էյ (ACCA) որակավորման F1-F9 մակարդակներ,

3) ապահովագրական ընկերության, օտարերկրյա ապահովագրական ընկերության մասնաճյուղի, ինչպես նաև ապահովագրական բրոքերային ընկերության ներքին աուդիտի ղեկավար՝ Էյ-Սի-Սի-Էյ (ACCA) որակավորման բոլոր մակարդակները կամ Սի-Այ-Էյ (CIA) որակավորում, ներքին աուդիտի անդամ՝ Էյ-Սի-Սի-Էյ (ACCA) որակավորման F1-F9 մակարդակներ կամ Սի-Այ-Էյ (CIA) որակավորում:

166.6 Սույն կանոնակարգի 164-րդ կետով սահմանված ղեկավարների այն թեկնածուները, որոնք աշխատել են սույն կանոնակարգի Հավելված 3բ-ով սահմանված միջազգային հեղինակավոր կազմակերպություններում և ստանձնել են համանման պարտականություններ և/կամ նմանատիպ պաշտոններ, համարվում են Կենտրոնական բանկի մասնագիտական որակավորման վկայական ունեցող:

166.7. Սույն կանոնակարգի 164-րդ կետով սահմանված ղեկավարներին սույն կանոնակարգի 165.1 կետով սահմանված բարդ ընթացակարգով գրանցելիս ղեկավարների թեկնածուները բանավոր հարցազրույցի կարող են չհրավիրվել Կենտրոնական բանկի կարծիքով հիմնավորված դեպքերում:

167. Եթե անձին որպես ղեկավար գրանցելու համար նախկինում Կենտրոնական բանկ է ներկայացվել սույն կանոնակարգի Հավելված 3-ով պահանջվող ողջ տեղեկատվությունը և հետագայում Ընկերությունը դիմում է Կենտրոնական բանկ նույն անձին այլ ղեկավար պաշտոնում գրանցելու միջնորդությամբ, ապա սույն կանոնակարգի Հավելված 3-ով սահմանված միջնորդագիրը սույն գլխով սահմանված կարգով Կենտրոնական բանկ ներկայացնելիս կարող են լրացվել միայն միջնորդագրի 1-ին կետի բոլոր դաշտերը, 2.1 (Անուն, ազգանուն, հայրանուն), 2.3 (Ծննդյան ամսաթիվ) դաշտերը և բոլոր այն դաշտերը, որոնցում նախկինում ներկայացված տեղեկատվությունը փոփոխվել է: Ընկերությունը նախկինում ղեկավարների գրանցման համար օրենքով սահմանված կարգով Կենտրոնական բանկ ներկայացրած բոլոր փաստաթղթերը և/կամ տեղեկությունները կարող է չներկայացնել՝ հղում տալով նախկինում ներկայացված միջնորդագրի ամսաթվին, եթե նախկինում ներկայացված տեղեկատվությունը չի փոփոխվել:

167.1. Ապահովագրական ընկերության, օտարերկրյա ապահովագրական ընկերության մասնաճյուղի խորհրդի նախագահի և խորհրդի անդամների գրանցման ժամանակ հիմք է ընդունվում սույն կանոնակարգի 122-րդ կետում նշված՝ Կենտրոնական բանկի խորհրդի որոշումը, բացառությամբ այն դեպքերի, երբ Կենտրոնական բանկն անհրաժեշտ չի համարում հարցազրույցի անցկացումը, որի դեպքում խորհրդի նախագահը և անդամները գրանցվում են առանց հարցազրույցի հրավիրվելու:

168. Եթե ապահովագրական ընկերության, օտարերկրյա ապահովագրական ընկերության մասնաճյուղի, ապահովագրական բրոքերի

ղեկավարը զրկվել է որակավորման վկայականից, ապա ղեկավարին որակավորման վկայականից զրկելու մասին Կենտրոնական բանկի որոշման ընդունման պահից երեք տարվա ընթացքում նա չի կարող գրանցվել որպես ապահովագրական ընկերության (ապահովագրական բրոքերի) ղեկավար:

168.1 Անձին որպես ղեկավար գրանցումը մերժվում է Կենտրոնական բանկի որոշմամբ, եթե

1) անձը չի համապատասխանում «Ապահովագրության և ապահովագրական գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի կամ 90-րդ հոդվածի 3-րդ մասի պահանջներին,
2) ղեկավարի թեկնածուն չի համապատասխանում սույն կանոնակարգի 38-րդ գլխով սահմանված չափանիշներից առնվազն մեկին,
3) ներկայացված փաստաթղթերը թերի են, անարժանահավատ կամ չեն համապատասխանում օրենքի, այլ իրավական ակտերի, այդ թվում՝ Կենտրոնական բանկի կողմից սահմանված պահանջներին:

168.2. Անձին, որպես ղեկավար գրանցումը մերժվում է Կենտրոնական բանկի կողմից, եթե սույն կանոնակարգի 166-րդ կետով սահմանված ծանուցումը ստանալուց հետո 5-օրյա ժամկետում Ընկերությունը ղեկավարի թեկնածուին չի ներկայացնում բարդ ընթացակարգով գրանցման:

**(Գլուխ 37-ը փոխ., լրաց. 01.07.08թ. թիվ 188Ն, խմբ. 10.03.09թ. թիվ 57Ն, փոխ. 22.09.09թ. թիվ 278Ն, խմբ., .րաց. 01.12.09թ. թիվ 360Ն, փոխ., լրաց., խմբ. 20.12.11թ. թիվ 355Ն, խմբ. 25.12.12թ. թիվ 372Ն)**

## ԳԼՈՒԽ 38. ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ

169. Ապահովագրական ընկերության, օտարերկրյա ապահովագրական ընկերության մասնաճյուղի կամ ապահովագրական բրոքերային ընկերության միջնորդությամբ որպես ղեկավար գրանցման ներկայացված անձը պետք է իրազեկ լինի ապահովագրական և ապահովագրական բրոքերային գործունեությունը կարգավորող օրենքներին և այլ իրավական ակտերին, ինչպես նաև ապահովագրական ընկերության, ապահովագրական բրոքերի գործարար ծրագրին, ինչպես նաև ապահովագրական ընկերության, ապահովագրական բրոքերի գործունեությունը կանոնակարգող ներքին ակտերին:

**(169-րդ խմբ. 20.12.11թ. թիվ 355Ն)**

170. Անձը ստորև նշված որևէ պաշտոնում աշխատելու նպատակով գրանցվելու համար պետք է բավարարի նաև հետևյալ չափանիշներին, բացառությամբ սույն կանոնակարգի 170.1 կետով նախատեսված դեպքերի՝

| Պաշտոն | Չափանիշ |
|---|---|
| 1. **Ապահովագրական ընկերության, օտարերկրյա ապահովագրական ընկերության մասնաճյուղի ղեկավարներ, այդ թվում՝** | |
| 1) խորհրդի նախագահ, | ա. բարձրագույն կրթության առկայության |

| | |
|---|---|
| խորհրդի անդամ | դեպքում առնվազն 5 տարվա աշխատանքային փորձ, իսկ<br>բարձրագույն կրթության բացակայության դեպքում՝ առնվազն 10 տարվա աշխատանքային փորձ |
| 2) պատասխանատու ակտուար | ա. ակտուարական, վիճակագրական, մաթեմատիկական, ինժեներա-տնտեսագիտական կրթություն, որը կարող է հավաստվել Հայաստանի Հանրապետության կամ օտարերկրյա պետության բարձրագույն ուսումնական հաստատության համապատասխան դիպլոմով (վկայականով) կամ օտարերկրյա կազմակերպության կողմից տրված ակտուարի որակավորումը հավաստող համապատասխան փաստաթղթով, և (կամ)<br>բ. առնվազն 5 տարվա մասնագիտական աշխատանքային փորձ<br>գ. Կենտրոնական բանկից ստացված որակավորման վկայական |
| 3) գործադիր տնօրեն, տնօրինության ղեկավար, տնօրինության անդամ, վարչության նախագահ, վարչության անդամ, գործադիր տնօրենի տեղակալ, | ա. բարձրագույն կրթություն և<br>բ. առնվազն 5 տարվա աշխատանքային փորձ, որից առնվազն երկու տարին՝ ղեկավար պաշտոնում և<br>գ. Կենտրոնական բանկից ստացված որակավորման վկայական կամ Սի-ԷՖ-Էյ (CFA) կամ ԷՖ-Առ-Էմ (FRM) կամ Էյ-Սի-Սի-Էյ (ACCA) որակավորման F1-F9 մակարդակներ կամ Սի-Այ-Այ (CII) որակավորման դիպլոմ |
| 4) ապահովագրական ընկերության մասնաճյուղի տնօրեն | ա. բարձրագույն կրթության դեպքում՝ առնվազն 1 տարվա աշխատանքային փորձ, իսկ բարձրագույն կրթության բացակայության դեպքում՝ առնվազն 2 տարվա աշխատանքային փորձ ապահովագրության ոլորտում, և<br>բ. Կենտրոնական բանկից ստացված որակավորման վկայական կամ Սի-ԷՖ-Էյ (CFA) կամ ԷՖ-Առ-Էմ (FRM) կամ Էյ-Սի-Սի-Էյ (ACCA) որակավորման F1-F9 մակարդակներ կամ Սի-Այ-Այ (CII) որակավորման դիպլոմ |
| 5) ներքին աուդիտի ղեկավար, ներքին աուդիտի անդամ | ա. բարձրագույն կրթություն և<br>բ. 3 տարվա մասնագիտական աշխատանքային փորձ և,<br>գ. Կենտրոնական բանկից ստացված որակավորման վկայական կամ Էյ-Սի-Սի-Էյ (ACCA) որակավորման բոլոր մակարդակները |

| | |
|---|---|
| | կամ Սի-Այ-Էյ (CIA) որակավորում. |
| 6) գլխավոր հաշվապահ, գլխավոր հաշվապահի տեղակալ | ա. բարձրագույն կրթություն և<br>բ. 2 տարվա մասնագիտական աշխատանքային փորձ և<br>գ. Կենտրոնական բանկից ստացված որակավորման վկայական կամ Էյ-Սի-Սի-Էյ (ACCA) որակավորման F1-F9 մակարդակներ |
| 7) ապահովագրական ընկերության մասնաճյուղի գլխավոր հաշվապահ | ա. բարձրագույն կրթության դեպքում՝ առնվազն 1 տարվա մասնագիտական աշխատանքային փորձ, իսկ բարձրագույն կրթության բացակայության դեպքում՝ առնվազն 2 տարվա մասնագիտական աշխատանքային փորձ և<br>բ. Կենտրոնական բանկից ստացված որակավորման վկայական կամ Էյ-Սի-Սի-Էյ (ACCA) որակավորման F1-F9 մակարդակներ |
| **2. Ապահովագրական բրոքերի պատասխանատու անձ, այդ թվում՝** | |
| 1) գործադիր տնօրեն, վարչության նախագահ, վարչության անդամ, գործադիր տնօրենի տեղակալ | ա. բարձրագույն կրթություն և<br>բ.. առնվազն 3 տարվա աշխատանքային փորձ, և<br>գ. Կենտրոնական բանկից ստացված որակավորման վկայական կամ Սի-Էֆ-Էյ (CFA) կամ Էֆ-Առ-Էմ (FRM) կամ Էյ-Սի-Սի-Էյ (ACCA) որակավորման F1-F9 մակարդակներ կամ Սի-Այ-Այ (CII) որակավորման դիպլոմ |
| 2) գլխավոր հաշվապահ | ա. բարձրագույն կրթություն և<br>բ. 2 տարվա մասնագիտական աշխատանքային փորձ,<br>գ. Կենտրոնական բանկից ստացված որակավորման վկայական կամ Էյ-Սի-Սի-Էյ (ACCA) որակավորման F1-F9 մակարդակներ |
| 3) ապահովագրական բրոքերի գործառնություններ իրականացնող ֆիզիկական անձ | Կենտրոնական բանկից ստացված որակավորման վկայական |

**(170-րդ կետը խմբ. 01.07.08թ. թիվ 188Ն, փոխ., լրաց. 01.12.09թ. թիվ360Ն, խմբ. 20.12.11թ. թիվ 355Ն, խմբ. 25.12.12թ. թիվ 372Ն)**

170.1. Եթե անձը չունի սույն կանոնակարգի 170-րդ կետով նախատեսված աշխատանքային փորձ և (կամ) բարձրագույն կրթություն, ապա նա իրավունք ունի Կենտրոնական բանկ ներկայացնել համապատասխան պաշտոններում աշխատելու համար բավարար գիտելիքների ու հմտությունների առկայության վերաբերյալ համապատասխան փաստաթղթեր, տեղեկություններ և (կամ) այլ հիմնավորումներ: Ներկայացված փաստաթղթերի, տեղեկությունների և (կամ) այլ հիմնավորումների հիման վրա Հանձնաժողովի դրական եզրակացությամբ, Կենտրոնական բանկի նախագահն իրավունք ունի գրանցել անձին համապատասխան պաշտոնում, եթե

համարում է, որ անձը տիրապետում է այդ պաշտոնում աշխատելու համար բավարար գիտելիքների ու հմտությունների:

(170.1 կետը լրաց. 24.06.08թ. թիվ 180Ն, **խմբ. 20.12.11թ. թիվ 355Ն)**

171. Սույն կանոնակարգի 170-րդ կետում նշված աշխատանքային փորձը վերաբերում է գրանցման պահին նախորդող 10 տարիներին, բացառությամբ խորհրդի նախագահի, խորհրդի անդամի համար նախատեսված աշխատանքային փորձի: Սույն կանոնակարգի իմաստով անձը համարվում է բարձրագույն կրթություն ունեցող, եթե նա ավարտել է Հայաստանի Հանրապետության կամ օտարերկրյա պետության բարձրագույն ուսումնական հաստատություն կամ ստացել է Հայաստանի Հանրապետության կամ միջազգային ճանաչում ունեցող ֆինանսական ոլորտի մասնագիտական որակավորման վկայական:

**(171-րդ կետը փոխ. 01.07.08թ. թիվ 188Ն)**

## ԳԼՈՒԽ 39. ՂԵԿԱՎԱՐԻՆ ԿԱՄ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ ԱՆՁԻՆ ԳՐԱՆՑՈՒՄԻՑ ՀԱՆԵԼԸ ԵՎ ԴՐԱ ՀԱՄԱՐ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԸ

172. Կենտրոնական բանկի նախագահի որոշմամբ ղեկավարը հանվում է գրանցումից, եթե՝

1) որակավորման վկայականի գործողության ժամկետը լրացել է, և ղեկավարը կամ պատասխանատու անձը չի ստացել որակավորման նոր վկայական.
2) ղեկավարը կամ պատասխանատու անձը զրկվել է որակավորման վկայականից.
3) ապահովագրական ընկերությունը, օտարերկրյա ապահովագրական ընկերության մասնաճյուղը կամ ապահովագրական բրոքերը դիմել է համապատասխան միջնորդությամբ.
4) խախտվել են օրենքներով և այլ իրավական ակտերով ղեկավարների նկատմամբ սահմանված պահանջները:

(172-րդ կետը լրաց. 22.09.09թ. թիվ 278Ն, լրաց. **20.12.11թ. թիվ 355Ն)**

173. Ապահովագրական ընկերության, օտարերկրյա ապահովագրական ընկերության մասնաճյուղի կամ ապահովագրական բրոքերի միջնորդությամբ ղեկավարին Կենտրոնական բանկում գրանցումից հանելու համար ապահովագրական ընկերությունը, օտարերկրյա ապահովագրաակն ընկերության մասնաճյուղը կամ ապահովագրական բրոքերը ապահովագրական ընկերության, օտարերկրյա ապահովագրական ընկերության մասնաճյուղի կամ ապահովագրական բրոքերի իրավասու մարմնի կողմից փոփոխություններ կատարելու վերաբերյալ որոշում ընդունելու պահից 10-օրյա ժամկետում Կենտրոնական բանկ են ներկայացնում հետևյալ փաստաթղթերը՝

1) Ղեկավարին գրանցումից հանելու վերաբերյալ միջնորդագիր (գրանցումից հանելու պատճառների հիմնավորումներով)՝ ապահովագրական ընկերության, օտարերկրյա ապահովագրական ընկերության մասնաճյուղի, ապահովագրական գործակալի կամ ապահովագրական բրոքերի կառավարման մարմնի կողմից լիազորված անձի ստորագրությամբ՝ վավերացված ապահովագրական ընկերության, օտարերկրյա ապահովագրական ընկերության մասնաճյուղի կամ ապահովագրական բրոքերի կնիքով (առկայության դեպքում),

2) ապահովագրական ընկերության, օտարերկրյա ապահովագրական

ընկերության մասնաճյուղի կամ ապահովագրական բրոքերի իրավասու մարմնի որոշումը կամ արձանագրությունից քաղվածք՝ փոփոխություններ կատարելու վերաբերյալ:

**(173-րդ կետը փոխ. 01.07.08թ. թիվ 188Ն, լրաց.** է 01.12.09թ. թիվ 360Ն, **խմբ. 20.12.11թ. թիվ 355Ն)**

## ԳԼՈՒԽ 40. ՂԵԿԱՎԱՐԻ ԿԱՄ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ ԱՆՁԻ ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐԸ

174. Սույն կանոնակարգի իմաստով՝ ղեկավարի ժամանակավոր պաշտոնակատար են համարվում այն անձինք, որոնք առանց համապատասխան պաշտոնում Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկում գրանցման սույն կանոնակարգով սահմանված կարգով իրականացնում են սույն կանոնակարգի համաձայն գրանցման ենթակա ղեկավարի կամ պատասխանատու անձի պարտականություններ:

175. Ղեկավարի պաշտոններում՝ որպես ղեկավարի ժամանակավոր պաշտոնակատար, պաշտոնավարման ժամկետ կարող է սահմանվել ոչ ավելի, քան 90 օրը: Նշված 90-օրյա ժամկետը սահմանվում է տվյալ ղեկավարի պաշտոնում նշանակվող բոլոր ժամանակավոր պաշտոնակատարների համար, այսինքն՝ միևնույն պաշտոնի նոր ժամանակավոր պաշտոնակատարի նշանակումը չի ընդհատում կամ վերսկսում 90-օրյա ժամկետը:

176. Սույն կանոնակարգի 175-րդ կետով նշված 90-օրյա ժամկետում ապահովագրական ընկերության, օտարերկրյա ապահովագրական ընկերության մասնաճյուղի կամ ապահովագրական բրոքերի կողմից նշանակված՝ անձը սույն կանոնակարգով սահմանված ձևով Կենտրոնական բանկում անցնում է որակավորման ստուգում և գրանցվում Կենտրոնական բանկում:

177. Ապահովագրական ընկերության, օտարերկրյա ապահովագրական ընկերության մասնաճյուղի կամ ապահովագրական բրոքերային ընկերության գործադիր տնօրենի, տնօրենության ղեկավարի (վարչության նախագահի) ժամանակավոր պաշտոնակատար կարող են նշանակվել (նշված պարտականությունները կարող են կատարել) միայն տվյալ ապահովագրական ընկերության, օտարերկրյա ապահովագրաակն ընկերության մասնաճյուղի կամ ապահովագրական բրոքերային ընկերության գործադիր տնօրենի տեղակալը կամ տնօրենության (վարչության) անդամը, կամ գործադիր տնօրենի որակավորման վկայական ունեցող ապահովագրական ընկերության, օտարերկրյա ապահովագրական ընկերության մասնաճյուղի կամ ապահովագրական բրոքերային ընկերության այլ աշխատակիցը:

178. Ապահովագրական ընկերության, օտարերկրյա ապահովագրական ընկերության մասնաճյուղի կամ ապահովագրական բրոքերի գլխավոր հաշվապահի ժամանակավոր պաշտոնակատար կարող է նշանակվել (նշված պարտականությունը կարող է կատարել) տվյալ ապահովագրական ընկերության, օտարերկրյա ապահովագրական ընկերության մասնաճյուղի կամ ապահովագրական բրոքերի գլխավոր հաշվապահի տեղակալը կամ գլխավոր հաշվապահի որակավորման վկայական ունեցող ապահովագրական

ընկերության, օտարերկրյա ապահովագրական ընկերության մասնաճյուղի կամ ապահովագրական բրոքերի այլ աշխատակիցը:

179. Ապահովագրական ընկերության, օտարերկրյա ապահովագրական ընկերության մասնաճյուղի խորհրդի քանակական կազմը ապահովագրական ընկերության, օտարերկրյա ապահովագրաակն ընկերության մասնաճյուղի ներքին իրավական ակտերով նախատեսված թվից պակաս լինելու դեպքում ապահովագրական ընկերությունը, օտարերկրյա ապահովագրական ընկերության մասնաճյուղը Կենտրոնական բանկի գրանցմանն է ներկայացնում թափուր մնացած տեղերի համար խորհրդի անդամի նոր թեկնածուներին՝ սույն կանոնակարգով սահմանված կարգով:

180. Ապահովագրական ընկերության, օտարերկրյա ապահովագրական ընկերության մասնաճյուղի խորհրդի նախագահի և անդամների թեկնածուներն իրավունք ունեն իրականացնել համապատասխանաբար խորհրդի նախագահի և խորհրդի անդամի պարտականությունները միայն Կենտրոնական բանկում համապատասխան պաշտոնում գրանցման պահից: Ապահովագրական ընկերության, օտարերկրյա ապահովագրական ընկերության մասնաճյուղի խորհրդի նախագահի և անդամների ժամանակավոր պաշտոնակատար չի նախատեսվում:

**(Գլուխ 40-ը փոխ. 01.07.08թ. թիվ 188Ն, խմբ. 20.12.11թ. թիվ 355Ն)**

## ԳԼՈՒԽ 41. ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ, ՕՏԱՐԵՐԿՐՅԱ ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՄԱՍՆԱՃՅՈՒՂԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ ԿԱՅԱՑՄԱՆ ՀԱՐՑՈՒՄ ՈՐԵՎԷ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ ՈՒՆԵՑՈՂ ԿԱՄ ԻՆՔՆՈՒՐՈՒՅՆ ՈՐՈՇՈՒՄՆԵՐ ԿԱՅԱՑՆՈՂ ԱՆՁԻՆ ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ, ՕՏԱՐԵՐԿՐՅԱ ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՄԱՍՆԱՃՅՈՒՂԻ ՂԵԿԱՎԱՐ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ

**(Գլուխ 41-ի վերնագիրը լրաց. 20.12.11թ. թիվ 355Ն)**

181. Համաձայն «Ապահովագրության և ապահովագրական գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 21-րդ հոդվածի 3-րդ մասի՝ ապահովագրական ընկերության, օտարերկրյա ապահովագրական ընկերության մասնաճյուղի ղեկավար է հանդիսանում նաև սույն գլխով սահմանած չափանիշներով հիմնավորված՝ Կենտրոնական բանկի կարծիքով որևէ կերպ ապահովագրական ընկերության, օտարերկրյա ապահովագրական ընկերության մասնաճյուղի կառավարման մարմինների կողմից որոշումների կայացման հարցում որևէ ազդեցություն ունեցող կամ ինքնուրույն որոշումներ կայացնող անձը:

182. Ապահովագրական ընկերության կառավարման մարմինների կողմից որոշումների կայացման հարցում որևէ ազդեցություն ունեցող կամ ինքնուրույն որոշումներ կայացնող անձին ապահովագրական ընկերության, օտարերկրյա ապահովագրական ընկերության մասնաճյուղի ղեկավար համարելու հարցը քննարկվում է Կենտրոնական բանկի խորհրդի նիստում:

183. Ապահովագրական ընկերության կառավարման մարմինների կողմից որոշումների կայացման հարցում որևէ ազդեցություն ունեցող կամ ինքնուրույն որոշումներ կայացնող անձին ապահովագրական ընկերության, օտարերկրյա ապահովագրական ընկերության մասնաճյուղի ղեկավար համարելու հարցերը Կենտրոնական բանկի խորհրդի կողմից քննարկվում են ստորև նշված պայմաններից

առնվազն մեկի առկայության դեպքում, երբ՝

1) ապահովագրական ընկերության, օտարերկրյա ապահովագրական ընկերության մասնաճյուղի կառավարման մարմնի որոշումները կամ որոշումների մի մասը ընդունվում են միայն այդ աշխատակցի համաձայնության պարագայում կամ ներկայացմամբ,
2) ապահովագրական ընկերությունում, օտարերկրյա ապահովագրական ընկերության մասնաճյուղում ստեղծված հանձնաժողովներում աշխատակիցը հանդիսանում է հանձնաժողովի նախագահ կամ հանձնաժողովի որոշումները կամ որոշումների մի մասը ընդունվում են միայն իր համաձայնությամբ կամ ներկայացմամբ,
3) ապահովագրական ընկերության, օտարերկրյա ապահովագրական ընկերության մասնաճյուղի գործադիր տնօրենի, վարչության նախագահի կամ գլխավոր հաշվապահի բացակայության (ներառյալ՝ հիվանդություն, գործուղում կամ աշխատանքի վայրից այլ պատճառներով փաստացի բացակայություն) դեպքում աշխատակիցն ի պաշտոնե կամ փաստացի փոխարինում է նրանց,
4) ապահովագրական ընկերության, օտարերկրյա ապահովագրական ընկերության մասնաճյուղի կառավարման մարմիններից կամ ղեկավարներից մեկը լիազորել է ապահովագրական ընկերության, օտարերկրյա ապահովագրական ընկերության մասնաճյուղի աշխատակցին իրականացնել իր իրավասությունները կամ դրանց մի մասը,
5) անձը կարող է ազդել ապահովագրական ընկերության, օտարերկրյա ապահովագրական ընկերության մասնաճյուղի գործունեության ուղղությունների վրա՝ տվյալ ապահովագրական ընկերության նկատմամբ իր ունեցած պահանջի ուժով,
6) անձը լիազորված է տիրապետել ապահովագրական ընկերության, օտարերկրյա ապահովագրական ընկերության մասնաճյուղի այնպիսի սահմանաչափերով միջոցներ, որոնց կորուստը, փչացումը կամ վնասվածքը կարող է էապես ազդել ապահովագրական ընկերության, օտարերկրյա ապահովագրական ընկերության մասնաճյուղի ֆինասական վիճակի վրա:

184. Սույն կանոնակարգի 183-րդ կետում նշված չափանիշները կարող են հիմք հանդիսանալ Կենտրոնական բանկի խորհրդի կողմից ապահովագրական ընկերության, օտարերկրյա ապահովագրական ընկերության մասնաճյուղի աշխատակցին ապահովագրական ընկերության, օտարերկրյա ապահովագրական ընկերության մասնաճյուղի ղեկավար համարելու համար:

185. Կենտրոնական բանկի խորհրդի կողմից ապահովագրական ընկերության, օտարերկրյա ապահովագրական ընկերության մասնաճյուղի աշխատակիցներին սույն գլխի իմաստով ապահովագրական ընկերության, օտարերկրյա ապահովագրական ընկերության մասնաճյուղի ղեկավար համարելու վերաբերյալ Կենտրոնական բանկի խորհրդի որոշումը ընդունելուց հետո մեկշաբաթյա ժամկետում ապահովագրական ընկերությունը, օտարերկրյա ապապովագրական ընկերության մասնաճյուղը Կենտրոնական բանկ է ներկայացնում այդ անձանց գործունեության վերաբերյալ տեղեկանք՝ (միջնորդագրի տեսքով) համաձայն սույն կանոնակարգի հավելված 3-ի և հետագայում տեղեկացնի այդ աշխատակիցների կազմում կատարված փոփոխությունների մասին:

**(Գլուխ 41-ը լրաց. 20.12.11թ. թիվ 355)**

## ԲԱԺԻՆ IX. ԹԵԿՆԱԾՈՒՆԵՐԻ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ՈՐԱԿԱՎՈՐՄԱՆ ՍՏՈՒԳՄԱՆ ԹԵՄԱՆԵՐԻ ՑԱՆԿ

**(Բաժին IX-ի վերնագիրը փոխ. 20.12.11թ. թիվ 355Ն)**

## ԳԼՈՒԽ 42. ԹԵԿՆԱԾՈՒՆԵՐԻ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ՈՐԱԿԱՎՈՐՄԱՆ ՍՏՈՒԳՄԱՆ ԹԵՄԱՆԵՐԻ ՑԱՆԿ

**(Գլուխ 42-ի-ի վերնագիրը փոխ. 20.12.11թ. թիվ 355Ն)**

186. Թեկնածուները Կենտրոնական բանկում որակավորման ստուգումը անցնում են սույն կետում ներկայացված աղյուսակում նշված թեմաներով, ընդ որում, "+" նշանը նշանակում է՝ տվյալ թեման վերաբերում է, "-" նշանը՝ չի վերաբերում: Սույն կետի աղյուսակի 1-ին կետի 80-րդ ենթակետում նշված խնդիրները վերաբերում են նույն աղյուսակի 1-ին կետի 1-79.17-րդ ենթակետերում նշված թեմաներին: Սույն կետի աղյուսակի 2-րդ կետի 5-րդ ենթակետում նշված խնդիրները վերաբերում են 2-րդ կետի 1-4-րդ ենթակետերում նշված թեմաներին:

| Գիտելիքների և ունակությունների բնագավառները | Ապահովագրական ընկերության և օտարերկրյա ապահովագրական ընկերության մասնաճյուղի | | | | | | Ապահովագրական բրոքերի | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | Խորհրդի նախագահ, խորհրդի անդամ | օտարերկրյա ապահովագրական ընկերության մասնաճյուղի գործադիր տնօրեն, տնօրինության ղեկավար և անդամներ, վարչության նախագահ, վարչության անդամներ, գործադիր տնօրենի տեղակալ, | օտարերկրյա ապահովագրական ընկերության մասնաճյուղի ներքին | օտարերկրյա ապահովագրական ընկերության մասնաճյուղի գլխավոր հաշվապահ, գլխավոր հաշվապահի տեղակալ, մասնաճյուղի գլխավոր | Հավաստագիր չստացած ատասխանատու ակտուար | Հավաստագիր ստացած պատասխանատու ակտուար | Գործադիր տնօրեն վարչության նախագահ, վարչության անդամներ, գործադիր տնօրենի տեղակալ | Գլխավոր հաշվապահ | Բրոքերի գործառույթներ իրականացնող ֆիզիկա-կան անձ |
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 | 8 | 9 | 10 |
| **1. Ապահովագրության օրենսդրություն, ենթաօրենսդրական դաշտ և ապահովագրության գործնական խնդիրներ** | | | | | | | | | |
| 1) Ապահովագրության հիմնական հասկացությունները | + | + | + | + | + | + | + | + | + |
| 2) Ապահովագրության ձևերը տեսակները և դասերը | + | + | + | + | + | + | + | + | + |
| 3) Ապահովագրական ընկերությունների իրավական կարգավիճակը | + | + | + | + | + | + | - | - | - |
| 4) Ապահովագրական ընկերության կապիտալում մասնակցության սահմանափակումները | + | + | + | + | + | + | + | - | - |
| 5) Նշանակալից մասնակցությունը | + | + | + | + | + | + | + | - | - |

| | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 6) | Փոխկապակցված անձինք | + | + | + | + | + | + | + | - | - |
| 7) | Ապահովագրական ընկերության կանոնադրական կապիտալին ներկայացվող պահանջները | + | + | + | + | + | + | - | - | - |
| 8) | Շահութաբաժինների վճարումը և վճարման սահմանափակումները | + | + | + | + | + | + | + | - | - |
| 9) | Նշանակալից մասնակցության ձեռքբերման նախնական համաձայնությունը | + | + | + | + | + | + | - | - | - |
| 10) | Ապահովագրական ընկերության կառավարման մարմինները և ղեկավարները | + | + | + | + | + | + | - | - | - |
| 11) | Ապահովագրական ընկերության ղեկավարների մասնագիտական համապատասխանությունն ու որակավորումը | + | + | + | + | + | + | - | - | - |
| 12) | Ապահովագրական ընկերության ղեկավարների նկատմամբ պահանջները | + | + | + | + | + | + | - | - | - |
| 13) | Ապահովագրական ընկերության ընդհանուր ժողովը և նրա իրավասությունները | + | + | + | + | + | + | - | - | - |
| 14) | Ապահովագրական ընկերության խորհուրդը, խորհրդի ձևավորումը, իրավասությունները | + | + | + | + | + | + | - | - | - |
| 15) | Ապահովագրական ընկերության գործադիր տնօրենը, տնօրինությունը | + | + | + | + | + | + | - | - | - |
| 16) | Ապահովագրական ընկերության գլխավոր հաշվապահը | + | + | + | + | + | + | - | - | - |
| 17) | Ապահովագրական ընկերության ներքին աուդիտը | + | + | + | + | + | + | - | - | - |
| 18) | Ապահովագրական ընկերության պատասխանատու ակտուարը | + | + | + | + | + | + | - | - | - |
| 19) | Ապահովագրական ընկերության արտաքին աուդիտը | + | + | + | + | + | + | - | - | - |
| 20) | Ապահովագրական գործունեության լիցենզավորումը | - | + | + | + | - | - | - | - | - |
| 21) | Ապահովագրական ընկերության գործարար ծրագիրը | + | + | + | + | + | + | - | - | - |

| | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 22) Ապահովագրական ընկերության մասնաճյուղը և ներկայացուցչությունը | - | + | + | + | - | - | - | - | - |
| 23) Օտարերկրյա ընկերության` Հայաստանի Հանրապետության տարածքում մասնաճյուղի և ներկայացուցչության գրանցումը | - | + | + | + | - | - | - | - | - |
| 24) Ապահովագրական ընկերության` Հայաստանի Հանրապետության տարածքից դուրս մասնաճյուղ և ներկայացուցչություն ստեղծելը | - | + | + | + | - | - | - | - | - |
| 25) Օրենսդրությամբ սահմանված պահանջների փոփոխությունների գրանցումը | - | + | + | + | + | + | - | - | - |
| 26) Ապահովագրական գործառույթների պատվիրակումը | - | + | + | + | + | + | - | - | - |
| 27) Ապահովագրական ընկերության գործունեության հիմնական տնտեսական նորմատիվները | - | + | + | + | + | + | - | - | - |
| 28) Ապահովագրական ընկերության տեխնիկական պահուստները | - | + | + | + | + | + | - | - | - |
| 29) Վերաապահովագրությանն ու համատեղ ապահովագրությանը ներկայացվող պահանջները | - | + | + | - | + | + | + | - | + |
| 30) Ապահովագրական ընկերության գործունեության նկատմամբ պահանջները | - | + | + | + | + | + | - | - | - |
| 31) Ապահովագրական ընկերության ներդրումային գործունեությունը | - | + | + | + | + | + | - | - | - |
| 32) Ապահովագրական ընկերության և հաճախորդների հարաբերությունները | - | + | + | + | + | + | - | - | - |
| 33) Ապահովագրական ընկերության հետ կապված անձանց հետ գործարքները | - | + | + | + | + | + | - | - | - |
| 34) Ապահովագրական ընկերության կողմից հրապարակվող տեղեկատվությունը, դրա հրապարակումը | - | + | + | + | + | + | - | - | - |

| | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 35) | Ապահովագրական ընկերության հաշվետվությունները | - | + | + | + | + | + | - | - | - |
| 36) | Ապահովագրական միջնորդությունը և դրա տեսակները | - | + | - | + | - | - | + | + | + |
| 37) | Ապահովագրական միջնորդների ռեգիստրը | - | + | - | + | - | - | + | + | + |
| 38) | Ապահովագրական բրոքերների պատասխանատու անձանց նկատմամբ պահանջները | - | - | - | - | - | - | + | + | + |
| 39) | Ապահովագրական միջնորդների ակտիվների առանձնացված հաշվառումը | - | - | - | - | - | - | + | + | - |
| 40) | Ապահովագրական պայմանագրերի կնքման միջնորդության նկատմամբ պահանջները | - | + | + | - | - | - | + | - | + |
| 41) | Ապահովագրական բրոքերների հաշվետվությունները, հրապարակվող տեղեկատվությունը և հաշվապահական հաշվառումը | - | - | - | - | - | - | + | + | + |
| 42) | Ապահովագրական բրոքերային գործունեության լիցենզավորումը | - | - | - | - | - | - | + | + | + |
| 43) | Ապահովագրական բրոքերի՝ Հայաստանի Հանրապետությունում կամ օտարերկրյա պետությունում գործող մասնաճյուղը և ներկայացուցչությունը | - | - | - | - | - | - | + | + | + |
| 44) | Ապահովագրական գործակալի հաշվառումը | - | + | + | - | - | - | - | - | - |
| 45) | Ապահովագրական գործակալի՝ Հայաստանի Հանրապետությունում կամ օտարերկրյա պետությունում գործող մասնաճյուղը և ներկայացուցչությունը | - | + | + | - | - | - | - | - | - |
| 46) | Ապահովագրական գաղտնիքը | - | + | + | + | + | + | + | + | + |
| 47) | Ապահովագրական պորտֆելի փոխանցումը | - | + | + | + | + | + | - | - | - |
| 48) | Ապահովագրական ընկերության վերակազմակերպումը և լուծարումը | - | + | + | - | - | - | + | - | - |
| 49) | Ապահովագրական ընկերության ինքնալուծարումը | - | + | + | - | - | - | - | - | - |

| | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 50) Լուծարային հանձնաժողովի նկատմամբ վերահսկողությունը և հաշվետվությունները | + | + | + | - | - | - | + | - | - |
| 51) Վերահսկողություն և պատասխանատվություն իրավական ակտերի խախտումների համար | + | + | + | + | + | + | + | + | + |
| 52) Պատասխանատվության միջոցները | + | + | + | + | + | + | + | + | + |
| 53) Ապահովագրական ընկերության ակտիվների դասակարգումը և հնարավոր կորուստների պահուստների ձևավորումը | - | + | + | + | + | + | - | - | - |
| 54) Ապահովագրական ընկերության ներքին աուդիտի գործունեության, ներքին հսկողության համակարգին ներկայացվող նվազագույն պահանջները | + | + | + | + | + | + | - | - | - |
| 55) Ապահովագրության տարրերը | - | + | + | + | + | + | + | + | + |
| 56) Ապահովագրողները | - | + | + | + | + | + | + | + | + |
| 57) Ապահովագրության պայմանագիրը | - | + | + | + | + | + | + | + | + |
| 58) Ապահովագրության պայմանագիրը կնքելիս ապահովադրի կողմից տրամադրվող տեղեկությունները | - | + | + | - | + | + | + | - | + |
| 59) Ապահովագրական պատահարը | - | + | + | - | + | + | + | - | + |
| 60) Ապահովագրական ռիսկի գնահատումը | - | + | + | - | + | + | + | - | + |
| 61) Ապահովագրական գումար և ապահովագրական արժեք | - | + | + | + | + | + | + | + | + |
| 62) Ապահովագրական հատուցման նվազեցումը և հատուցման մերժման հիմքերը | - | + | + | - | + | + | + | - | + |
| 63) Համատեղ ապահովագրությունը | - | + | + | + | + | + | + | - | + |
| 64) Ապահովագրավճարը | - | + | + | + | + | + | + | + | + |
| 65) Ապահովագրված անձին փոխարինելը | - | + | - | - | + | + | + | - | + |
| 66) Շահառու | - | + | + | + | + | + | + | + | + |
| 67) Ապահովագրության պայմանագրի գործողության սկիզբը | - | + | + | + | + | + | + | + | + |
| 68) Ապահովագրության պայմանագրի վաղաժամկետ դադարումը և դրա իրավական հետևանքները | - | + | + | - | + | + | + | - | + |

| | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 69) Ապահովագրության պայմանագրի գործողության ընթացքում ապահովագրական ռիսկի մեծանալու կամ նվազելու հետևանքները | - | + | + | + | + | + | + | + | + |
| 70) Ապահովագրության օբյեկտի նկատմամբ իրավունքներն այլ անձի փոխանցելը | - | + | + | - | + | + | + | - | + |
| 71) Ապահովագրական պատահարը տեղի ունենալու մասին ապահովագրողին ծանուցելը | - | + | + | - | + | + | + | - | + |
| 72) Ապահովագրական պատահարից առաջացած վնասները նվազեցնելը | - | + | + | - | + | + | + | + | + |
| 73) Ապահովադրի, ապահովագրված անձի կամ շահառուի մեղքով ապահովագրական պատահարի տեղի ունենալու հետևանքները | - | + | + | - | + | + | + | - | + |
| 74) Ապահովագրական հատուցումը և ապահովագրական գումար վճարելուց ապահովագրողին ազատելը | - | + | + | - | + | + | + | - | + |
| 75) Վնասի հատուցման պահանջի իրավունքն ապահովադրից ապահովագրողին անցնելը | - | + | + | - | + | + | + | - | + |
| 76) Հայցային վաղեմությունն ապահովագրության հետ կապված պահանջներով | - | + | + | - | + | + | + | - | + |
| 77) Վերաապահովագրության պայմանագիրը | - | + | + | + | + | + | + | + | + |
| 78) Պարտադիր ապահովագրությունը | - | + | + | + | + | + | + | + | + |
| 79) Երրորդ անձի կողմից վնաս պատճառելու համար պատասխանատվության ապահովագրությունը | - | + | + | - | + | + | + | - | + |
| 79.1) Ավտոտրանսպորտային միջոցների օգտագործումից բխող պատասխանատվության պարտադիր ապահովագրությունը | - | + | + | __- | _- | - | + | - | _+ |
| 80) Գործնական ապահովագրության խնդիրներ | - | + | + | + | - | - | + | + | - |
| 2. **Ապահովագրություն և ակտուարական հաշվարկներ** | | | | | | | | | |

| | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| *1) Ֆինանսական մաթեմատիկա և ներդրումներ* | | | | | | | | | |
| ա) Ներդրումային պայուսակներ, դրանց եկամտաբերության ու ռիսկայնության գնահատումներ | - | - | - | - | + | - | - | - | - |
| բ) Կապիտալ ակտիվների գնահատման մոդել (CAPM) | - | - | - | - | + | - | - | - | - |
| գ) Ներդրումային նախագծերի գնահատում | - | - | - | - | + | - | - | - | - |
| դ) Աննուիտետներ, դրանց տեսակները | - | - | - | - | + | - | - | - | - |
| ե) Փողի ժամանակային արժեք, դրամական հոսքերի ներկա եւ ապագա արժեքներ | - | - | - | - | + | - | - | - | - |
| զ) Եկամտաբերության ներքին դրույք (IRR) | - | - | - | - | + | - | - | - | - |
| է) Արժեթղթերի (պարտատոմսեր, բաժնետոմսեր, ածանցյալ գործիքներ) գնահատում եւ գնորոշում | - | - | - | - | + | - | - | - | - |
| ը) Տարբեր պարբերականաությամբ հաշվարկվող անվանական, իրական եւ արդյունավետ տոկոսադրույքներ | - | - | - | - | + | - | - | - | - |
| թ) Շարունակաբար (անընդհատ) հաշվարկվող տոկոսադրույք, տոկոսադրույքի ուժ | - | - | - | - | + | - | - | - | - |
| ժ) Տարբեր պարբերականությամբ հաշվարկվող անվանական, իրական եւ արդյունավետ դիսկոնտի (զեղչման) դրույքներ | - | - | - | - | + | - | - | - | - |
| ի) Միջազգայնորեն ընդունված պայմանական նշանակումներ (աննուիտետի, զեղչման գործակիցների,տարբեր վճարման հաճախականությամբ տոկոսադրույքների և այլն) | - | - | - | - | + | - | - | - | - |
| *2) Կյանքի ապահովագրության մաթեմատիկա* | | | | | | | | | |
| ա) Կյանքի ապահովագրության պրոդուկտներ (աննուիտետներ, մահվան, | - | - | - | - | + | - | - | - | - |

| | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| լրակեցության, խառը ապահովագրություն եւ այլն), դրանց հետ կապված ֆինանսական հոսքերի գնահատում | | | | | | | | | |
| բ) Կյանքի ապահովագրության վկայագրերի/պոլիսների, դրանց գծով ապահովագրավճարների և հատուցումների (օգուտների) ներկա եւ ապագա արժեքները | - | - | - | - | + | - | - | - | - |
| գ) Զուտ ապահովագրավճարով վկայագրի արժեքը (net premium policy value ) | - | - | - | - | + | - | - | - | - |
| դ) Միջազգայնորեն ընդունված ակտուարական պայմանական նշանակումների համակարգ | - | - | - | - | + | - | - | - | - |
| ե) Կոմուտացիոն ֆունկցիաներ | - | - | - | - | + | - | - | - | - |
| *3) Ոչ կյանքի ապահովագրության մաթեմատիկա* | | | | | | | | | |
| ա) Ոչ կյանքի ապահովագրության դասերը, դրանց առանձնահատկությունները, համաապահովագրություն | - | - | - | - | + | - | - | - | - |
| բ) Ապահովագրողի սեփական պահում և վերաապահովագրություն, վերաապահովագրության տեսակները: | - | - | - | - | + | - | - | - | - |
| գ) Չհատուցվող գումար՝ ֆրանշիզա | - | - | - | - | + | - | - | - | - |
| դ) Ապահովագրավճարների հաշվարկման մեթոդաբանությունը և հաշվառման սկզբունքները | - | - | - | - | + | - | - | - | - |
| ե) Ապահովագրական պատահարները նկարագրող վիճակագրական բաշխումներ, դրանց հատկությունները | - | - | - | - | + | - | - | - | - |
| զ) Առանձին ապահովագրական պատահարի գծով վնասի չափը նկարագրող վիճակագրական բաշխումներ, դրանց | - | - | - | - | + | - | - | - | - |

| | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| հատկությունները | | | | | | | | | |
| է) Ապահովագրական պորտֆելի գծով ընդհանուր վնասները նկարագրող վիճակագրական բաշխումներ, դրանց հատկությունները | - | - | - | - | + | - | - | - | - |
| ը) Վնասաբերության ցուցանիշը | - | - | - | - | + | - | - | - | - |
| թ) Սպասվող հատուցման գումարների և ապահովագրավճարների հաշվարկման համար վստահության տեսություն ու վստահության գործակիցներ (այդ թվում քառակուսի արմատի կանոնով հաշվարկված): | - | - | - | - | + | - | - | - | - |
| ժ) Օգտակարության տեսություն | - | - | - | - | + | - | - | - | - |
| ի) «Բոնուս-մալուս» կամ NCD համակարգեր | - | - | - | - | + | - | - | - | - |
| լ) Ոչ կյանքի ապահովագրության համար ձևավորվող պահուստներ | - | - | - | - | + | - | - | - | - |
| *4) Հավանականություններ և մաթեմատիկական վիճակագրություն* | | | | | | | | | |
| ա) Հավանականությունների բազմապատկման և գումարման կանոնները | - | - | - | - | + | - | - | - | - |
| բ) Պատահական մեծությունների թվային բնութագրիչները և դրանց հաշվարկման առանձնահատկությունները (մաթեմատիկական սպասում, դիսպերսիա, միջին քառակուսային շեղում/ստանդարտ շեղում, կովարիացիա, կոռելյացիա): | - | - | - | - | + | - | - | - | - |
| գ) Նորմալ բաշխումը և դրա հատկությունները (կետի տվյալ միջակայք ընկնելու հավանականության հաշվարկը, երեք սիգմայի կանոնը): Ստանդարտացված պատահական մեծությունը և դրա վիճակագրական բնութագրիչները | - | - | - | - | + | - | - | - | - |
| դ) Կորելյացիոն և ռեգրեսիոն վերլուծության հիմունքները (երկակի և բազմակի | - | - | - | - | + | - | - | - | - |

| | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| ռեգրեսիաների պարամետրերի գնահատման եղանակները, նվազագույն քառակուսիների եղանակը, t-չափանիշը և դրա հաշվարկը) | | | | | | | | | |
| ե) Նորմալ բաշխման պարամետրերի միջակայքերի գնահատման եղանակները (մաթեմատիկական սպասման և դիսպերսիայի միջակայքերի գնահատումը) | - | - | - | - | + | - | - | - | - |
| զ) Ընտրանքի անհրաժեշտ չափը որոշելու սկզբունքները և բանաձևերը | - | - | - | - | + | - | - | - | - |
| է) Ավտոռեգրեսիա (AR) և սահող միջին (MA) ժամանակային շարքերի առաջին և երկրորդ կարգի մոմենտները (մաթեմատիկական սպասումը և դիսպերսիան) | - | - | - | - | + | - | - | - | - |
| ը) Մարկովյան շղթաներ (անցումային հավանականությունների հաշվարկը n քայլի համար) : Մարկովյան շղթայի ստացիոնար անցումային հավանականությունների հաշվարկը | - | - | - | - | + | - | - | - | - |
| *5) Գործնական խնդիրներ* | - | - | - | - | + | - | - | - | - |
| **3. Ընդհանուր տնտեսական օրենսդրություն և քաղաքացիա-իրավական հարաբերություններ** | | | | | | | | | |
| 1) Քաղաքացիական իրավունքների սուբյեկտներ | - | + | + | + | + | + | + | + | + |
| 2) Պայմանագրից ծագող պարտավորություններ | | + | + | + | + | + | + | + | + |
| 3) Ընդհանուր դրույթներ պարտավորությունների մասին | - | + | + | + | + | + | + | + | + |
| 4) Գործարքներ: Ներկայացուցչություն: Ժամկետներ: Հայցային վաղեմություն | - | + | + | + | + | + | + | + | + |
| 5) ՀՀ կենտրոնական բանկի հիմնական խնդիրը և այլ խնդիրները | + | + | + | + | + | + | + | + | + |
| 6) ՀՀ կենտրոնական բանկի կողմից իրականացվող ստուգումները և վերահսկողությունը | + | + | + | + | + | + | + | + | + |

| | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 7) Բաժնետիրական ընկերության իրավական վիճակը | - | + | + | + | - | - | + | + | + |
| 8) Բաժնետիրական ընկերության և այլ անձանց պատասխանատվությունը | + | + | + | + | - | - | + | + | + |
| 9) Բաժնետիրական ընկերության անվանումը և գտնվելու վայրը | - | + | + | + | - | - | + | + | + |
| 10) Բաժնետիրական ընկերության մասնաճյուղերը և ներկայացուցչությունները | - | + | + | + | - | - | + | + | + |
| 11) Բաժնետիրական ընկերությունների տեսակները | - | + | + | + | - | - | + | + | + |
| 12) Բաժնետիրական ընկերության ստեղծումը, վերակազմակերպումը և լուծարումը | - | + | + | + | - | - | + | + | + |
| 13) Բաժնետիրական ընկերության կանոնադրական կապիտալը, ընկերության բաժնետոմսերը և այլ արժեթղթերը, ընկերության զուտ ակտիվները | - | + | + | + | - | - | + | + | + |
| 14) Բաժնետիրական ընկերության բաժնետերերի ռեեստրը | - | + | + | + | - | - | + | + | + |
| 15) Բաժնետիրական ընկերության ընդհանուր ժողովը | + | + | + | + | - | - | + | + | + |
| 16) Բաժնետիրական ընկերության խորհուրդը և գործադիր մարմինը | + | + | + | + | - | - | + | + | + |
| 17) Բաժնետիրական ընկերության ֆինանսատնտեսական գործունեության վերահսկումը | + | + | + | + | - | - | + | + | + |
| 18) Հաշվառումը և հաշվետվությունները բաժնետիրական ընկերության մասին տեղեկությունները | - | + | + | + | - | - | + | + | + |
| 19) Հիմնական դրույթներ սահմանափակ պատաս-խանատվությամբ ընկերությունների վերաբերյալ | - | + | + | + | - | - | + | + | + |
| 20) Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության սեփականությունը | + | + | + | + | - | - | + | + | + |
| 21) Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության և նրա մասնակիցների պատասխանատվությունը | + | + | + | + | - | - | + | + | + |
| 22) Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության մասնաճյուղերը և | - | + | + | + | - | - | + | + | + |

| | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| ներկայացուցչությունները | | | | | | | | | |
| 23) Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության ստեղծումը | - | + | + | + | - | - | + | + | + |
| 24) Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության մասնակիցները | + | + | + | + | - | - | + | + | + |
| 25) Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության կանոնադրական կապիտալը | + | + | + | + | - | - | + | + | + |
| 26) Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության կառավարումը | + | + | + | + | - | - | + | + | + |
| 27) Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության վերակազմակերպումը և լուծարումը | - | + | + | + | - | - | + | + | + |
| **4. Հաշվապահական հաշվառման օրենսդրություն, հաշվապահական ստանդարտներ , հարկային օրենսդրություն** | | | | | | | | | |
| 1) Ֆինանսական հաշվետվությունները և դրանց տարրերը | - | + | + | + | + | + | + | + | - |
| 2) Ֆինանսական հաշվետվությունների տարրերի ճանաչումը և չափումը | - | + | + | + | + | + | + | + | - |
| 3) Հաշվապահական հաշվառում վարելու և ֆինանսական հաշվետվություններ կազմելու սկզբունքները | - | + | + | + | + | + | + | + | - |
| 4) Կազմակերպության ղեկավարի իրավունքները և պարտականությունները հաշվապահական հաշվառման կազմակերպման գործում | - | + | + | + | - | - | + | + | - |
| 5) Գլխավոր հաշվապահի իրավունքները և պարտականությունները | - | + | + | + | - | - | + | + | - |
| 6) Հաշվապահական հաշվառման վարման հիմնական կանոնները | - | + | + | + | + | + | + | + | - |
| 7) Սկզբնական հաշվապահական հաշվառման փաստաթղթերը | - | + | + | + | + | + | + | + | - |
| 8) Հաշվապահական հաշվառման գրանցամատյանները | - | + | + | + | - | - | + | + | - |
| 9) Ստորագրության իրավունքը հաշվապահական | - | + | + | + | - | - | + | + | - |

| | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| հաշվառման փաստաթղթերում | | | | | | | | | |
| 10) Ակտիվների և պարտավորությունների գույքագրումը | - | + | + | + | - | - | + | + | - |
| 11) Հաշվապահական տեղեկատվության գաղտնիությունը | - | + | + | + | + | + | + | + | - |
| 12) Հաշվապահական հաշվառման փաստաթղթերի պահպանումը | - | + | + | + | - | - | + | + | - |
| 13) Ֆինանսական հաշվետվություններ կազմելը և ներկայացնելը | - | + | + | + | - | - | + | + | - |
| 14) Ապահովագրական ընկերությունների ֆինանսատնտեսական գործունեության հաշվապահական հաշվառման հաշվային պլանը, դրա կիրառման մասին հրահանգը | - | - | + | + | - | - | - | - | - |
| 15) «Ֆինանսական հաշվետվությունների ներկայացում» ՀՀՄՍ1 | - | - | + | + | - | - | - | + | - |
| 16) «Պաշարներ» ՀՀՄՍ 2 | - | - | + | + | - | - | - | + | - |
| 17) «Դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվություն» ՀՀՄՍ 7 | - | - | + | + | - | - | - | + | - |
| 18) «Հաշվապահական հաշվառման քաղաքականություն, հաշվապահական հաշվառման գնահատումների փոփոխություններ և սխալներ» ՀՀՄՍ 8 | - | - | + | + | - | - | - | + | - |
| 19) «Հաշվետու ժամանակաշրջանից հետո տեղի ունեցող դեպքեր» ՀՀՄՍ10 | - | - | + | + | - | - | - | + | - |
| 20) «Շահութահարկ» ՀՀՄՍ 12 | - | - | + | + | - | - | - | + | - |
| 21) «Հիմնական միջոցներ» ՀՀՄՍ 16 | - | - | + | + | - | - | - | + | - |
| 22) «Վարձակալություն» ՀՀՄՍ 17 | - | - | + | + | - | - | - | + | - |
| 23) «Հասույթ» ՀՀՄՍ 18 | - | - | + | + | - | - | - | + | - |
| 24) «Պետական շնորհների հաշվառում և պետական օգնության բացահայտում» ՀՀՄՍ 20 | - | - | + | + | - | - | - | + | - |
| 25) «Արտարժույթի փոխանակման փոխարժեքի փոփոխությունների հետևանքները» ՀՀՄՍ 21 | - | - | + | + | - | - | - | + | - |
| 26) «Ֆինանսական գործիքներ. ներկայացումը» ՀՀՄՍ 32 | - | - | + | + | - | - | - | + | - |

| | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 27) «Միջանկյալ ֆինանսական հաշվետվություններ» ՀՀՄՍ 34 | - | - | + | + | - | - | - | + | - |
| 28) «Ակտիվների արժեզրկում» ՀՀՄՍ 36 | - | - | + | + | - | - | - | + | - |
| 29) «Պահուստներ, պայմանական պարտավորություններ և պայմանական ակտիվներ» ՀՀՄՍ 37 | - | - | + | + | - | - | - | + | - |
| 30) «Ոչ նյութական ակտիվներ» ՀՀՄՍ 38 | - | - | + | + | - | - | - | + | - |
| 31) «Ֆինանսական գործիքներ. ճանաչումը և չափումը» ՀՀՄՍ 39 | - | - | + | + | - | - | - | + | - |
| 32) «Ներդրումային գույք» ՀՀՄՍ 40 | - | - | + | + | - | - | - | + | - |
| 33) «Ապահովագրության պայմանագրեր» ՖՀՄՍ 4 | - | - | + | + | - | - | - | + | - |
| 34) «Ֆինանսական գործիքներ. բացահայտումներ» ՖՀՄՍ 7 | - | - | + | + | - | - | - | + | - |
| 35) Հարկերի և հարկային արտոնությունների տեսակները | - | + | + | + | - | - | + | + | + |
| 36) Հարկ վճարողների իրավունքները, պարտականությունները և հսկողությունը հարկերի վճարման նկատմամբ | - | + | + | + | - | - | + | + | + |
| 37) Հարկային պարտավորություններից ավելի բյուջե վճարված գումարները հարկ վճարողին վերադարձնելու կարգը | - | + | + | + | - | - | + | + | + |
| 38) Հարկվող սուբյեկտները և հարկվող օբյեկտը | - | - | + | + | - | - | - | + | - |
| 39) Համախառն եկամուտը | - | - | + | + | - | - | - | + | - |
| 40) Համախառն եկամտի նվազեցումները | - | - | + | + | - | - | - | + | - |
| 41) Ոչ ռեզիդենտի հարկումը | - | - | + | + | - | - | - | + | - |
| Այլ | | | | | | | | | |
| 1) Ֆինանսական համակարգի հաշտարարը | + | + | + | - | - | - | + | - | + |
| 2) Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքար | + | + | + | + | + | + | + | + | + |

**(186-րդ կետը խմբ. 01.07.08թ. թիվ 188Ն,** խմբ. է 01.12.09թ. թիվ 360Ն, փոխ., լրաց. 20.12.11թ. թիվ 355Ն)

## ԲԱԺԻՆ X. ՆԵՐԴՐՈՒՄԱՅԻՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԳՈՐԾԱՐՔԻ ԿԱՄ ԳՈՐԾԱՌՆՈՒԹՅԱՆ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

## ԳԼՈՒԽ 42.1. ՆԵՐԴՐՈՒՄԱՅԻՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԳՈՐԾԱՐՔԻ ԿԱՄ ԳՈՐԾԱՌՆՈՒԹՅԱՆ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ ՆԱԽՆԱԿԱՆ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆԸ ՍՏԱՆԱԼՈՒ ԿԱՐԳԸ

186.1. «Ապահովագրության և ապահովագրական գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 80-րդ հոդվածի 2-րդ կետով սահմանված գործարքների կամ գործառնությունների իրականացման համար Կենտրոնական բանկի նախնական համաձայնությունն ստանալու նպատակով ապահովագրական ընկերությունը Կենտրոնական բանկ է ներկայացնում հետևյալ փաստաթղթերը՝

1) Ներդրումային գործարքի իրականացման վերաբերյալ Կենտրոնական բանկի նախնական համաձայնությունն ստանալու վերաբերյալ դիմում՝ համաձայն սույն կանոնակարգի հավելված 15-ի:

2) Ապահովագրական ընկերության իրավասու մարմնի որոշումը՝ «Ապահովագրության և ապահովագրական գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 80-րդ հոդվածի 2-րդ կետով սահմանված գործարքի կամ գործառնության իրականացման վերաբերյալ:

3) «Ապահովագրության և ապահովագրական գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 80-րդ հոդվածի 2-րդ կետով սահմանված գործարքի կամ գործառնության իրականացման վերաբերյալ ապահովագրական ընկերության ծրագիրը, որը պետք է ներառի գործարքի կամ գործառնության իրականացման արդյունքում ապահովագրական ընկերության՝ հաջողության հասնելու հավանականության մասին տեղեկություններ, ծրագրում պետք է հիմնավորվի, որ նախատեսվող գործարքը համատեղելի է ապահովագրական ընկերության ֆինանսական վիճակի հետ և այն կնպաստի ֆինանսական շուկայում ապահովագրական ընկերության գործունեության զարգացմանը: Ընդ որում, ծրագիրը պետք է լինի իրատեսական և ծրագրում ներառված բոլոր կանխատեսումները պետք է հիմնավորված լինեն կոնկրետ հաշվարկներով:

4) Տվյալ անձի (անձանց) համաձայնությունն իր ֆինանսական հաշվետվությունները Կենտրոնական բանկ ներկայացնելու նպատակով ապահովագրական ընկերությանը տրամադրելու վերաբերյալ:

5) Տեղեկանք ներդրումային գործունեության հետ կապված գործարքի կամ գործառնության վերաբերյալ՝ համաձայն սույն կանոնակարգի Հավելված 16-ի:

6) «Արժեթղթերի շուկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված ազդագրի (առևտրի ազդագրի) բացակայության դեպքում այն իրավաբանական անձանց վերաբերյալ, որոնց կանոնադրական կապիտալում ընկերությունը ցանկանում է ձեռք բերել (ձեռք է բերել) մասնակցություն, որի արդյունքում ի հայտ են եկել «Ապահովագրության և ապահովագրական գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 80-րդ հոդվածի 2-րդ կետով սահմանված դեպքերը, ներկայացվում են հետևյալ փաստաթղթերը (տեղեկությունները).

ա. իրավաբանական անձի կանոնադրությունը,

բ. իրավաբանական անձի՝ վերջին երեք տարիների և վերջին միջանկյալ հաշվապահական հաշվեկշիռը, ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունը, դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվությունը,

սեփական կապիտալում փոփոխությունների մասին հաշվետվությունը, ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրությունները (երեք տարուց պակաս գործունեություն իրականացրած իրավաբանական անձանց նշված տեղեկությունները ներկայացնում են իրականացրած գործունեության ողջ ժամկետի համար):

դ. անկախ աուդիտորական եզրակացությունը, որը հավաստում է վերջին տարեկան ֆինանսական հաշվետվությունների համապատասխանությունը հաշվապահական հաշվառման այն ստանդարտներին, որոնք համաձայն «Հաշվապահական հաշվառման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի պետք է կիրառվեն տվյալ կազմակերպության կողմից հաշվապահական հաշվառում վարելիս և ֆինանսական հաշվետվություններ կազմելիս և ներկայացնելիս, իսկ օտարերկրյա իրավաբանական անձանց համար՝ ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտներին կամ միջազգայնորեն ճանաչված այլ ստանդարտներին (առկայության դեպքում): Ընդ որում, օտարերկրյա իրավաբանական անձանց համար անկախ աուդիտորական եզրակացության բացակայության դեպքում Կենտրոնական բանկ է ներկայացվում հղում այդ պետության որևէ պաշտոնական ինտերնետային էջին, որտեղ նշված է, որ տվյալ պետության հաշվապահական հաշվառման ստանդարտները համապատասխանում են ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտներին կամ միջազգայնորեն ճանաչված այլ ստանդարտներին:

186.2. Սույն կանոնակարգի 186.1-րդ կետի 6-րդ ենթակետով պահանջվող փաստաթղթերը (տեղեկությունները) չեն ներկայացվում, եթե տվյալ իրավաբանական անձը հանդիսանում է.

1) Կենտրոնական բանկի կողմից վերահսկվող անձ, որը օրենքով կամ այլ իրավական ակտերով սահմանված պարբերականությամբ և կարգով Կենտրոնական բանկ է ներկայացնում սույն կանոնակարգի 186.1-րդ 6-րդ ենթակետով պահանջվող փաստաթղթերը,
2) Կենտրոնական բանկի կողմից «Ա» և «Բ» վարկանիշ ստացած կազմակերպություն՝ վերջինիս կողմից Կենտրոնական բանկ ներկայացված սույն կանոնակարգի 186.1-րդ կետի 6-րդ ենթակետով պահանջվող տեղեկությունները վերահսկողական նպատակներով օգտագործելու վերաբերյալ գրավոր համաձայնության դեպքում:

186.3. Ապահովագրական ընկերությունը «Ապահովագրության և ապահովագրական ընկերությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 80-րդ հոդվածի 2-րդ կետով սահմանված դեպքերում նախատեսվող գործարքի վերաբերյալ Կենտրոնական բանկի նախնական համաձայնությունը կարող է ստանալ, եթե.

1) ներկայացված փաստաթղթերում չեն արտացոլվել անարժանահավատ կամ կեղծ տվյալներ.

2) նախնական համաձայնություն ստանալու վերաբերյալ դիմում Կենտրոնական բանկ ներկայացնելու պահին նախորդող մեկ տարվա ընթացքում ապահովագրական ընկերությունը չի խախտել հիմնական տնտեսական նորմատիվները.

3) տվյալ գործարքը համատեղելի է ապահովագրական ընկերության ֆինանսական վիճակի հետ,

4) տվյալ գործարքը կնպաստի ֆինանսական շուկայում ապահովագրական ընկերության գործունեության զարգացմանը,

5) առկա չեն «Ապահովագրության և ապահովագրական ընկերությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 80-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված հիմքերը:

186.4 Սույն գլխով սահմանված կարգով Կենտրոնական բանկի համաձայնությունը ստանալուց հետո 3 ամսվա ընթացքում գործարքը չիրականացնելու դեպքում այդ համաձայնությունը համարվում է չտրված:

**(Բաժին 10-ը լրաց. 20.12.11թ. թիվ 355Ն)**

## ԳԼՈՒԽ 43. ԱՆՑՈՒՄԱՅԻՆ ԴՐՈՒՅԹՆԵՐ

187. Սույն որոշումն ուժի մեջ մտնելու պահից Հայաստանի Հանրապետության տարածքում գործող ապահովագրական ընկերության վերստուգիչ հանձնաժողովի նախագահը (հսկիչը) և անդամները համարվում են Կենտրոնական բանկում գրանցումից հանված:

188. Սույն որոշումն ուժի մեջ մտնելու պահից ապահովագրական ընկերության վերստուգիչ հանձնաժողովի նախագահի (հսկիչի), վերստուգիչ հանձնաժողովի անդամի որակավորման վկայականները համարվում են ապահովագրական ընկերության ներքին աուդիտի ղեկավարի, ներքին աուդիտի անդամի որակավորման վկայականներ:

**(188-րդ կետը խմբ. 01.07.08թ. թիվ 188Ն)**

189. Սույն որոշումն ուժի մեջ մտնելուց հետո Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2006 թվականի օգոստոսի 1-ի ««Ապահովագրական գործունեություն իրականացնողի լիցենզավորման, մասնաճյուղերի գրանցման և ապահովագրական գործունեություն իրականացնողի կանոնադրական կապիտալում բաժնեմաս (բաժնետոմս) կամ փայամասնակցություն ձեռք բերելու համար նախնական համաձայնություն ստանալու կարգը», «Ապահովագրական գործունեություն իրականացնողների ղեկավարների, ակտուարի և գործակալի մասնագիտական որակավորման պահանջներն ու որակավորման ստուգման կարգը», «Ապահովագրողի գործունեության երեք տարվա գործարար ծրագրի ներկայացման կարգը» հաստատելու մասին» թիվ 476 Ն որոշմամբ տրված որակավորման վկայականները պահպանում են իրենց իրավական ուժը:

«Ապահովագրական և ապահովագրական բրոքերային գործունեության լիցենզավորումը, ապահովագրական գործակալի հաշվառումը, Հայաստանի Հանրապետության տարածքում օտարերկրյա ապահովագրական ընկերության մասնաճյուղի և ներկայացուցչության գրանցումը, ապահովագրական ընկերության կանոնադրական կապիտալում նշանակալից մասնակցություն ունենալու համար նախնական համաձայնություն ստանալու կարգը, ապահովագրական ընկերության գործունեության գործարար ծրագրի ձևը, ներկայացման կարգը և ժամկետները, ապահովագրական ընկերության և ապահովագրական բրոքերային ընկերության ղեկավարների ու պատասխանատու անձանց որակավորումը, ապահովագրական ընկերության ղեկավարներին, ապահովագրական բրոքերի պատասխանատու անձանց ներկայացվող մասնագիտական համապատասխանության և որակավորման չափանիշները, մասնագիտական համապատասխանության ստուգման և որակավորման կարգը, ապահովագրական ընկերության ղեկավարների, ապահովագրական բրոքերի պատասխանատու անձանց թեկնածուների մասնագիտական որակավորման ստուգման թեմաների ցանկը» կանոնակարգ 3/01-ը հավելվածի

# ՀՀ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿ

ԱՊՌ ԹԻՎ XXXX

# ԼԻՑԵՆԶԻԱ

ՈՉ ԿՅԱՆՔԻ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ

*ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ԴԱՍԸ* ------------------------------------------------------------ *Տրված է`* ------- ---------------- *20 թ.*

------------------------------------------------------------ *Տրված է`* ------- ---------------- *20 թ.*

------------------------------------------------------------ *Տրված է`* ------- ---------------- *20 թ.*

------------------------------------------------------------ *Տրված է`* ------- ---------------- *20 թ.*

------------------------------------------------------------ *Տրված է`* ------- ---------------- *20 թ.*

------------------------------------------------------------ *Տրված է`* ------- ---------------- *20 թ.*

Իրավաբանական անձի (մասնաճյուղի) անվանումը`

ՀՀ կենտրոնական բանկի նախագահ` ------------------------------------------------------

*Կ.Տ*

(Հավելված 1ա-ն փոխ. 01.07.08թ. թիվ 188Ն, խմբ. 01.12.09թ. թիվ 360Ն, փոխ 20.12.11թ. թիվ 355Ն)

ԱՊԿ ՀՀ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿ ԹԻՎ XXXX

# ԼԻՑԵՆԶԻԱ

ԿՅԱՆՔԻ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ

*ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ԴԱՍԸ* ------------------------------------------------------------------------------- *Տրված է՝ ------- ---------------- 20 թ.*
------------------------------------------------------------------------------------------*Տրված է՝ ------- ---------------- 20 թ.*
------------------------------------------------------------------------------------------ *Տրված է՝ ------- ---------------- 20 թ.*
------------------------------------------------------------------------------------------*Տրված է՝ ------- ---------------- 20 թ.*
------------------------------------------------------------------------------------------*Տրված է՝ ------- ---------------- 20 թ.*
-------------------------------------------------- ---------------------------------------*Տրված է՝ ------- ---------------- 20 թ.*

Իրավաբանական անձի (մասնաճյուղի) անվանումը՝

ՀՀ կենտրոնական բանկի նախագահ՝ --------------------------------------------

ԿՏ

(Հավելված 1բ-ն փոխ. 01.07.08թ. թիվ 188Ն, խմբ. 01.12.09թ. թիվ 360Ն, փոխ 20.12.11թ. թիվ 355Ն)

Հավելված 1գ

«Ապահովագրական և ապահովագրական բրոքերային գործունեության լիցենզավորումը, ապահովագրական գործակալի հաշվառումը, Հայաստանի Հանրապետության տարածքում օտարերկրյա ապահովագրական ընկերության մասնաճյուղի և ներկայացուցչության գրանցումը, ապահովագրական ընկերության կանոնադրական կապիտալում նշանակալից մասնակցություն ունենալու համար նախնական համաձայնություն ստանալու կարգը, ապահովագրական ընկերության գործունեության գործարար ծրագրի ձևը, ներկայացման կարգը և ժամկետները, ապահովագրական ընկերության և ապահովագրական բրոքերային ընկերության ղեկավարների ու պատասխանատու անձանց որակավորումը, ապահովագրական ընկերության ղեկավարներին, ապահովագրական բրոքերի պատասխանատու անձանց ներկայացվող մասնագիտական համապատասխանության և որակավորման չափանիշները, մասնագիտական համապատասխանության ստուգման և որակավորման կարգը, ապահովագրական ընկերության ղեկավարների, ապահովագրական բրոքերի պատասխանատու անձանց թեկնածուների մասնագիտական որակավորման ստուգման թեմաների ցանկը» կանոնակարգ 3/01-ը հավելվածի

# ՀՀ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿ

ԱՊՎ ԹԻՎ XXXX

# ԼԻՑԵՆԶԻԱ

ՎԵՐԱԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ

*ՈՉ ԿՅԱՆՔԻ ՎԵՐԱԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅՈՒՆ------------------------------------------ Տրված է՝ ------- ---------- 20 թ.*

*ԿՅԱՆՔԻ ՎԵՐԱԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅՈՒՆ--------------------------------------------- Տրված է՝ ------- ------------ 20 թ.*

Իրավաբանական անձի (մասնաճյուղի) անվանումը՝

ՀՀ կենտրոնական բանկի նախագահ՝ -------------------------------------------

ԿՏ

(Հավելված 1գ-ն փոխ., լրաց. 01.07.08թ. թիվ 188Ն, խմբ. 01.12.09թ. թիվ 360Ն, փոխ 20.12.11թ. թիվ 355Ն)

Հավելված 1դ

«Ապահովագրական և ապահովագրական բրոքերային գործունեության լիցենզավորումը, ապահովագրական գործակալի հաշվառումը, Հայաստանի Հանրապետության տարածքում օտարերկրյա ապահովագրական ընկերության մասնաճյուղի և ներկայացուցչության գրանցումը, ապահովագրական ընկերության կանոնադրական կապիտալում նշանակալից մասնակցություն ունենալու համար նախնական համաձայնություն ստանալու կարգը, ապահովագրական ընկերության գործունեության գործարար ծրագրի ձևը, ներկայացման կարգը և ժամկետները, ապահովագրական ընկերության և ապահովագրական բրոքերային ընկերության ղեկավարների ու պատասխանատու անձանց որակավորումը, ապահովագրական ընկերության ղեկավարներին, ապահովագրական բրոքերի պատասխանատու անձանց ներկայացվող մասնագիտական համապատասխանության և որակավորման չափանիշները, մասնագիտական համապատասխանության ստուգման և որակավորման կարգը, ապահովագրական ընկերության ղեկավարների, ապահովագրական բրոքերի պատասխանատու անձանց թեկնածուների մասնագիտական որակավորման ստուգման թեմաների ցանկը» կանոնակարգ 3/01-ը հավելվածի

# ՀՀ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿ

ԱՊԲ ԹԻՎ XXXX

# ԼԻՑԵՆԶԻԱ

ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԲՐՈՔԵՐԱՅԻՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ

*ԲՐՈՔԵՐԱՅԻՆ ԳՈՐԾԱՌՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ՝*

------------------------------------------------------------------------------------------------------------------------
------------------------------------------------------------------------------------------------------------------------
------------------------------------------------------------------------------------------------------------------------
------------------------------------------------------------------------------------------------------------------------
------------------------------------------------------------------------------------------------------------------------
------------------------------------------------------------------------------------------------------------------------

Իրավաբանական անձի անվանումը՝

ՀՀ կենտրոնական բանկի նախագահ՝ ------------------------------------------

*Կ.Տ*

*Տրված է՝ ------ -------------- 200 թ.*

Հավելված 1դ-ն փոխ. 01.07.08թ. թիվ 188Ն

Հավելված 2ա
«Ապահովագրության ոլորտում լիցենզավորման, գրանցման, համաձայնության, թույլտվության տրամադրման, մասնագիտական համապատասխանության ստուգման և որակավորման կարգը» կանոնակարգ 3/01-ի հավելվածի

**ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ (ՕՏԱՐԵՐԿՐՅԱ ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՄԱՍՆԱՃՅՈՒՂԻ) ԳՐԱՆՑՄԱՆ ԵՎ ԼԻՑԵՆԶԻԱ ՍՏԱՆԱԼՈՒ ԴԻՄՈՒՄ**

Կենտրոնական բանկի նախագահ
-------------------------ին

Հարգելի --------------------

----------------------------------------------------------------------------------------------------
(կազմակերպության լրիվ անվանումը)

որոշում է կայացրել -----------------------------------------------------------------------------
(ոչ կյանքի, կյանքի ապահովագրության և վերաապահովագրության)
իրականացման լիցենզիա ստանալու համար դիմելու մասին:

Համաձայն Հայաստանի Հանրապետության օրենքների և այլ իրավական ակտերի՝ կից ներկայացնում ենք լիցենզիա ստանալու համար անհրաժեշտ փաստաթղթերը և դրանց ցանկը: Առդիր՝ --- էջ:

Մենք՝ ներքոստորագրյալներս, հավաստիացնում ենք, որ մանրակրկիտ դիտարկել ենք սույն դիմումին կից ներկայացված յուրաքանչյուր փաստաթղթում արտացոլված տեղեկատվությունը: Հավաստիացնում ենք, որ տեղեկատվությունը արժանահավատ է ու ամբողջական, և գիտակցում ենք, որ որևէ փաստի սխալ ներկայացումը կամ բացթողումը հանգեցնում է օրենքով սահմանված պատասխանատվության և դիմումի մերժմանը:

Խնդրում ենք Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով տրամադրել ստորև նշված ապահովագրության դասերով ապահովագրական գործունեության իրականացման լիցենզիա.

☐ ոչ կյանքի ապահովագրության

-------------------------------------------------------------------------------------
(դասի անվանումը)
-------------------------------------------------------------------------------------
-------------------------------------------------------------------------------------
-------------------------------------------------------------------------------------

 կյանքի ապահովագրության

-----------------------------------------------------------------------------------------

(դասի անվանումը)

----------------------------------------------------------------------------------------

-----------------------------------------------------------------------------------------

 վերաապահովագրության

----------------------------------------------------------------------------------------

(դասի անվանումը)

-------------------------------------------------------------------------------------------

-------------------------------------------------------------------

----------------------------------

Դիմումը ներկայացնող անձ՝

_____________________________________________________________________

/կազմակերպության իրավասու անձի անունը, ազգանունը, ստորագրությունը/

*/հեռախոս, բնակության վայր/*

/

__ ____________ 20 _թ.

**(Հավելված 2ա-ն խմբ. 20.12.11թ. թիվ 355Ն)**

Հավելված 2բ
«Ապահովագրության ոլորտում լիցենզավորման, գրանցման, համաձայնության, թույլտվության տրամադրման, մասնագիտական համապատասխանության ստուգման և որակավորման կարգը» կանոնակարգ 3/01-ի հավելվածի

## ՕՏԱՐԵՐԿՐՅԱ ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑՉՈՒԹՅԱՆ ԳՐԱՆՑՄԱՆ ԴԻՄՈՒՄ

Կենտրոնական բանկի նախագահ
……………………………-ին

Հարգելի --------------------

----------------------------------------------------------------------------------------------------------

(օտարերկրյա ապահովագրա կան ընկերության լրիվ անվանումը)

որոշում է կայացրել Հայաստանի Հանրապետությունում ներկայացուցչություն բացելու մասին:

Համաձայն Հայաստանի Հանրապետության օրենքների և այլ իրավական ակտերի՝ կից ներկայացնում ենք օտարերկրյա ապահովագրական ընկերության մասնաճյուղի գրանցման համար անհրաժեշտ փաստաթղթերը և դրանց ցանկը: Առդիր՝ --- էջ:

Մենք՝ ներքոստորագրյալներս, հավաստիացնում ենք, որ մանրակրկիտ դիտարկել ենք սույն դիմումին կից ներկայացված յուրաքանչյուր փաստաթղթում արտացոլված տեղեկատվությունը: Հավաստիացնում ենք, որ տեղեկատվությունը արժանահավատ է ու ամբողջական, և գիտակցում ենք, որ որևէ փաստի սխալ ներկայացումը կամ բացթողումը հանգեցնում է օրենքով սահմանված պատասխանատվության և դիմումի մերժմանը:

Խնդրում ենք Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով գրանցել օտարերկրյա ապահովագրական ընկերության ներկայացուցչությունը:

*Օտարերկրյա ապահովագրական ընկերության իրավասու անձի անունը, ազգանունը, ստորագրությունը*

______________________________________________ _______________

*/(հեռախոս, բնակության վայր/*

___ ___________ 20__ թ.

**(Հավելված 2բ-ն խմբ. 20.12.11թ. թիվ 355Ն)**

Հավելված 2գ
«Ապահովագրության ոլորտում լիցենզավորման, գրանցման, համաձայնության, թույլտվության տրամադրման, մասնագիտական համապատասխանության ստուգման և որակավորման կարգը»
կանոնակարգ 3/01

## ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՄԱՍՆԱՃՅՈՒՂԻ (ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑՉՈՒԹՅԱՆ) ԳՐԱՆՑՄԱՆ ՄԻՋՆՈՐԴԱԳԻՐ

Կենտրոնական բանկի նախագահ
……………………………-ին

Հարգելի --------------------

------------------------------------------------------------------------------------------------------------
------------

(ապահովագրական ընկերության լրիվ անվանումը)

որոշում է կայացրել Հայաստանի Հանրապետությունում-----------------------------------
-------------

(մասնաճյուղ, ներկայացուցչություն)

բացելու մասին:

Համաձայն Հայաստանի Հանրապետության օրենքների և այլ իրավական ակտերի՝ կից ներկայացնում ենք ապահովագրական ընկերության մասնաճյուղի գրանցման համար անհրաժեշտ փաստաթղթերը և դրանց ցանկը: Առդիր՝ --- էջ:

Մենք՝ ներքոստորագրյալներս, հավաստիացնում ենք, որ մանրակրկիտ դիտարկել ենք սույն դիմումին կից ներկայացված յուրաքանչյուր փաստաթղթում արտացոլված տեղեկատվությունը: Հավաստիացնում ենք, որ տեղեկատվությունը արժանահավատ է ու ամբողջական, և գիտակցում ենք, որ որևէ փաստի սխալ ներկայացումը կամ բացթողումը հանգեցնում է օրենքով սահմանված պատասխանատվության և դիմումի մերժմանը:

Խնդրում ենք Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով գրանցել ապահովագրական ընկերության ________________________________:

(մասնաճյուղը, ներկայացուցչությունը)

*Ապահովագրական ընկերության գործադիր տնօրենի անունը, ազգանունը, ստորագրությունը*

______________________________________________ ____________________

*/հեռախոս, հասցե/*

__ ____________ 200__ թ.

**(Հավելված 2գ-ն փոխ. 20.12.11թ. թիվ 355Ն)**

# ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԲՐՈՔԵՐԱՅԻՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԼԻՑԵՆԶԻԱ ՍՏԱՆԱԼՈՒ ՄԻՋՆՈՐԴԱԳԻՐ

Կենտրոնական բանկի նախագահ
-------------------------ին

Հարգելի --------------------

--------------------------------- (պետական գրանցման համարը՝ _____________)
(կազմակերպության լրիվ անվանումը)

որոշում է կայացրել ապահովագրական բրոքերային գործունեության իրականացման լիցենզիա ստանալու համար դիմելու մասին:

Համաձայն Հայաստանի Հանրապետության օրենքների և այլ իրավական ակտերի՝ կից ներկայացնում ենք լիցենզիա ստանալու համար անհրաժեշտ փաստաթղթերը և դրանց ցանկը: Առդիր՝ --- էջ:

Մենք՝ ներքոստորագրյալներս, հավաստիացնում ենք, որ մանրակրկիտ դիտարկել ենք սույն դիմումին կից ներկայացված յուրաքանչյուր փաստաթղթում արտացոլված տեղեկատվությունը: Հավաստիացնում ենք, որ տեղեկատվությունը արժանահավատ է ու ամբողջական, և գիտակցում ենք, որ որևէ փաստի սխալ ներկայացումը կամ բացթողումը հանգեցնում է օրենքով սահմանված պատասխանատվության և դիմումի մերժմանը:

Խնդրում ենք Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով տրամադրել ապահովագրական բրոքերային գործունեության՝ ստորև նշված բրոքերային գործառնությունների իրականացման լիցենզիա.

 ապահովագրական և վերաապահովագրության պայմանագրերի կնքման նախապատրաստական աշխատանքների, այդ թվում՝ նաև ապահովագրական խորհրդատվության իրականացում.

 ապահովադիրների՝ կոնկրետ ապահովագրողների հետ ապահովագրական և վերաապահովագրության պայմանագրերի կնքման կազմակերպում.

 ապահովագրական և վերաապահովագրության պայմանագրերի կատարման օժանդակում, ներառյալ՝ ապահովագրավճարների հավաքման և հատուցումների փոխանցման իրականացումը՝ ապահովադրի կամ ընկերության թույլատրած չափերով.

Դիմումը ներկայացնող անձ՝

__________________________________________________________________

/կազմակերպության իրավասու անձի անունը, ազգանունը, ստորագրությունը/

*/հեռախոս, բնակության վայր/*

__ ____________ 20 _թ.

**(Հավելված 2դ-ն խմբ. 20.12.11թ. թիվ 355Ն)**

Հավելված 2ե

«Ապահովագրության ոլորտում լիցենզավորման, գրանցման, համաձայնության, թույլտվության տրամադրման, մասնագիտական համապատասխանության ստուգման և որակավորման կարգը» կանոնակարգ 3/01-ի հավելվածի

## ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԳՈՐԾԱԿԱԼԻ ՀԱՇՎԱՌՄԱՆ ԴԻՄՈՒՄ

Կենտրոնական բանկի նախագահ

……………………………-ին

Հարգելի --------------------

----------------------------------------------------------------------------------------------------

*(իրավաբանական անձի համար՝ անվանումը և կազմակերպական-իրավական ձևը, պետական գրանցման համարը, գործունեության հասցեն, հեռախոսահամարը, անհատ ձեռնարկատիրոջ և ֆիզիկական անձի համար՝ անուն, ազգանուն, հայրանունը հաշվառման վայրը, գործունեության վայրը (մարզ, բնակավայր (քաղաք կամ գյուղ)), հեռախոսահամարը)*

որոշում է կայացրել ապահովագրական գործակալի գործառույթներ իրականացնելու մասին:

Համաձայն Հայաստանի Հանրապետության օրենքների և այլ իրավական ակտերի՝ կից ներկայացնում ենք ապահովագրական գործակալների ռեգիստրում հաշվառելու համար անհրաժեշտ փաստաթղթերը և դրանց ցանկը: Առդիր՝ --- էջ:

Մենք՝ ներքոստորագրյալներս, հավաստիացնում ենք, որ մանրակրկիտ դիտարկել ենք սույն դիմումում և դիմումին կից ներկայացված յուրաքանչյուր փաստաթղթում արտացոլված տեղեկատվությունը: Հավաստիացնում ենք, որ տեղեկատվությունը արժանահավատ է ու ամբողջական, և գիտակցում ենք, որ որևէ փաստի սխալ ներկայացումը կամ բացթողումը հանգեցնում է օրենքով սահմանված պատասխանատվության և դիմումի մերժմանը:

Խնդրում ենք հաշվառել ապահովագրական գործակալների ռեգիստրում:

<u>Դիմողի անունից՝</u>

_____________________________________________ _______________

(ապահովագրական ընկերության անվանում, իրավասու անձի անուն, ազգանուն, պաշտոն)

*/հեռախոս, բնակության վայր /*

___ __________ 20__ թ.

**(Հավելված 2ե-ն լրաց., փոխ. 29.11.10թ. թիվ 315Ն, խմբ. 20.12.11թ. թիվ 355Ն)**

Հավելված 2գ

«Ապահովագրության ոլորտում լիցենզավորման, գրանցման, համաձայնության, թույլտվության տրամադրման, մասնագիտական համապատասխանության ստուգման և որակավորման կարգը» կանոնակարգ 3/01-ի հավելվածի

**ԴԻՄՈՒՄ**
**ԿՈՒՏԱԿԱՅԻՆ ՀԱՇԻՎ ԲԱՑԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ**

Կենտրոնական բանկի նախագահ
------------------------------ին

Հարգելի --------------------------

Խնդրում ենք ---------------------------------------------------------------------------
*(կազմակերպության լրիվ անվանումը)*

համար բացել կուտակային հաշիվ՝ օրենքով և այլ իրավական ակտերով սահմանված կարգով կանոնադրական կապիտալի համալրում իրականացնելու համար:

Վճարման հանձնարարական տալու իրավունք ունի (ունեն)

_______________________________________________

(անուն, ազգանուն, հայրանուն, անձնագրային տվյալներ, ստորագրության նմուշ)

_______________________________________________

(անուն, ազգանուն, հայրանուն, անձնագրային տվյալներ, ստորագրության նմուշ)

_______________________________________________

(անուն, ազգանուն, հայրանուն, անձնագրային տվյալներ, ստորագրության նմուշ)

Խնդրում ենք Կենտրոնական բանկի կողմից ապահովագրական ընկերության գրանցման և լիցենզավորման կամ գրանցման և լիցենզավորման մերժման, կանոնադրության փոփոխության գրանցման կամ գրանցման մերժման դեպքում Կենտրոնական բանկում բացված կուտակային հաշվին առկա միջոցները փոխանցել հետևյալ հաշվին

_______________________________________

(բանկի անվանում, հաշվի համար)

_______________________________________________

(դիմումատուի հայեցողությամբ այլ նշումներ)

Դիմումը ներկայացնող անձ (անձինք)՝

___________________________________________________________________________

/կազմակերպության (հիմնադրվող կազմակերպության) իրավասու անձի (անձանց) անունը, ազգանունը, ստորագրությունը/

*/հեռախոս, բնակության վայր /*

___ ___________ 20__ թ.

**(Հավելված 2գ-ն խմբ. 20.12.11թ. թիվ 355Ն)**

**Հավելված 2է-ն եւ 2ը-ն լրաց. 22.09.09թ. թիվ 278Ն որոշմամբ, հանվել են 13.11.12թ. թիվ 311 Ն որոշմամբ**

Հավելված 2թ
«Ապահովագրության ոլորտում լիցենզավորման, գրանցման, համաձայնության, թույլտվության տրամադրման, մասնագիտական համապատասխանության ստուգման և որակավորման կարգը» կանոնակարգ 3/01-ի հավելվածի

***Ներկայացվող փաստաթղթերի ցանկը***

| *№* | ***ՓԱՍՏԱԹՂԹԻ ՏԵՍԱԿԸ*** |
|---|---|
| 1. | |
| 2. | |
| 3. | |
| … | |

________________________________________

**/իրավասու անձի անուն, ազգանուն, ստորագրություն/**

Կ.Տ.

**(Հավելված 2թ-ն լրաց. 20.12.11թ. թիվ 355Ն)**

Հավելված 6ա
«Ապահովագրության ոլորտում լիցենզավորման, գրանցման, համաձայնության, թույլտվության տրամադրման, մասնագիտական համապատասխանության ստուգման և որակավորման կարգը»
կանոնակարգ 3/01

<table><tr><td>

**ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ**
**ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԱՆՈՒՂՂԱԿԻ ՆՇԱՆԱԿԱԼԻՑ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅՈՒՆ ՁԵՌՔ ԲԵՐԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ**

Ես՝ ----------------------------------------------------------------------------------------------------------
*(ֆիզիկական անձի համար՝ անուն, ազգանուն, հայրանուն,*
*իրավաբանական անձի համար՝ անվանումը, կազմակերպական-իրավական ձևը)*

հայտարարում եմ, որ --------------------------------------------------------------------ում իմ մասնակցության
*(ապահովագրական ընկերության անվանումը)*
միջոցով որևէ այլ անձ նույն ապահովագրական ընկերությունում անուղղակի նշանակալից մասնակցություն ունեցող անձի կարգավիճակ ձեռք չի բերում:

Հավաստիացնում եմ, որ սույն տեղեկատվությունը արժանահավատ է: Գիտակցում եմ, որ որևէ փաստաթղթի կամ տեղեկատվության կեղծ ներկայացումը հանգեցնում է օրենքով սահմանված քրեական և վարչական պատասխանատվության:

Համաձայն եմ՝ իմ կողմից ներկայացված վերոնշյալ տեղեկատվության որևէ փոփոխության դեպքում տեղեկացնել Կենտրոնական բանկին՝ փոփոխության օրվանից հետո 10-օրյա ժամկետում:

Ստորագրություն _____________ Ամսաթիվ _________________
*(օր/ամիս/տարի)*

</td></tr></table>

**(Հավելված 6ա-ն փոփ. 01.07.08թ. թիվ 188Ն, փոփ. 01.12.09թ. թիվ 360Ն)**

Հավելված 6բ

*Հավելված 6բ-ն 01.07.08թ. թիվ 188Ն որոշմամբ ուժը կորցրել է*
*01.12.09թ. թիվ 360Ն որոշմամբ լրացվել է Հավելված 6բ*
*20.12.11թ. թիվ 355 Ն որոշմամբ Հավելած 6բ ուժը կորցրել է*

**ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԳՐԱՆՑՄԱՆ ՎԿԱՅԱԿԱՆԻ ՁԵՎ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿ

**ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԳՐԱՆՑՄԱՆ ՎԿԱՅԱԿԱՆ**

Ք. ԵՐԵՎԱՆ

Գրանցված է
ՀՀ կենտրոնական բանկի
---- թվականի թիվ --- որոշմամբ

**ԳՐԱՆՑՄԱՆ ՎԿԱՅԱԿԱՆ** թիվ ---

Համաձայն «Ապահովագրության և ապահովագրական գործունեության մասին» և «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների՝ սույն վկայականը տրվում է

------------------------------------------------------------------------------------------

*(անվանումը, կազմակերպական-իրավական ձևը, գտնվելու վայրը)*

------------------------------------------------------------------------------------------

------------------------------------------ ապահովագրական ընկերությանը

առ այն, որ այն գրանցված է Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկում:

**Գրանցման համարը** ____________________

**Գրանցման ամսաթիվ, ամիս, տարեթիվ** _____________

**Հարկ վճարողի հաշվառման համարը** ___________________

Հայաստանի Հանրապետության
կենտրոնական բանկի նախագահ ____________________

...... ..................... 20 ... թ.

Կ.Տ.

(Հավելված 7ա-ն խմբ. 29.03.11թ. թիվ 79Ն, փոխ. 20.12.11թ. թիվ 355Ն)

**Հավելված 7բ**

«Ապահովագրության ոլորտում լիցենզավորման, գրանցման, համաձայնության, թույլտվության տրամադրման, մասնագիտական համապատասխանության ստուգման և որակավորման կարգը» կանոնակարգ 3/01

**ՕՏԱՐԵՐԿՐՅԱ ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՄԱՍՆԱՃՅՈՒՂԻ (ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑՉՈՒԹՅԱՆ) ԳՐԱՆՑՄԱՆ ՎԿԱՅԱԿԱՆԻ ՁԵՎ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿ

**ՕՏԱՐԵՐԿՐՅԱ ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՄԱՍՆԱՃՅՈՒՂԻ (ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑՉՈՒԹՅԱՆ) ԳՐԱՆՑՄԱՆ ՎԿԱՅԱԿԱՆ**

Ք. ԵՐԵՎԱՆ

Գրանցված է
ՀՀ կենտրոնական բանկի
---- թվականի թիվ --- որոշմամբ

**ԳՐԱՆՑՄԱՆ ՎԿԱՅԱԿԱՆ** թիվ ---

Համաձայն «Ապահովագրության և ապահովագրական գործունեության մասին» և «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների՝ սույն վկայականը տրվում է

____________________________________________

*(օտարերկրյա ապահովագրական ընկերության անվանումը, կազմակերպական-իրավական ձևը)*

__________ օտարերկրյա ապահովագրական ընկերությանը առ այն, որ

____________________________ հասցեում գտնվող

____________________________________________

*(օտարերկրյա ապահովագրական ընկերության մասնաճյուղի կամ ներկայացուցչության անվանումը)*

մասնաճյուղը (ներկայացուցչությունը) գրանցված է Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկում:

**Գրանցման համարը** ______________________________

**Գրանցման ամսաթիվ, ամիս, տարեթիվ** __________

**Հարկ վճարողի հաշվառման համարը** ________________

Հայաստանի Հանրապետության
կենտրոնական բանկի նախագահ ________________

...... .................. 20 ... թ.

Կ.Տ.

(Հավելված 7բ-ն խմբ. 29.03.11թ. թիվ 79Ն, փոփ. 20.12.11թ. թիվ 355Ն)

Հավելված 7գ
«Ապահովագրության ոլորտում լիցենզավորման, գրանցման, համաձայնության, թույլտվության տրամադրման, մասնագիտական համապատասխանության ստուգման և որակավորման կարգը» կանոնակարգ 3/01

## ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՄԱՄՆԱՃՅՈՒՂԻ (ՆԵՐԿԱՅԱՑՈՒՉՈՒԹՅԱՆ) ԳՐԱՆՑՄԱՆ ՎԿԱՅԱԿԱՆԻ ՁԵՎ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿ

ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՄԱՄՆԱՃՅՈՒՂԻ (ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑՉՈՒԹ-ՅԱՆ ) ԳՐԱՆՑՄԱՆ ՎԿԱՅԱԿԱՆ

Ք. ԵՐԵՎԱՆ

Գրանցված է
ՀՀ կենտրոնական բանկի նախագահի
_____ թվականի թիվ ____ որոշմամբ

**ԳՐԱՆՑՄԱՆ ՎԿԱՅԱԿԱՆ** թիվ ---

Համաձայն «Ապահովագրության և ապահովագրական գործունեության մասին» և «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների՝ սույն վկայականը տրվում է

______________________________________________

*(ապահովագրական ընկերության անվանումը, կազմակերպական-իրավական ձևը)*

_____________________ ապահովագրական ընկերությանը

առ այն, որ
________________________________ հասցեում գտնվող

______________________________________________

*( ապահովագրական ընկերության մասնաճյուղի կամ ներկայացուցչության անվանումը)*

մասնաճյուղը (ներկայացուցչությունը) գրանցված է Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկում:

**Գրանցման համարը** _________________________

**Գրանցման ամսաթիվ, ամիս, տարեթիվ** _________

Հայաստանի Հանրապետության
կենտրոնական բանկի նախագահ ____________

……………… …... ……. 200 ... թ.

Կ.Տ.

Հավելված 7դ
«Ապահովագրության ոլորտում լիցենզավորման, գրանցման, համաձայնության, թույլտվության տրամադրման, մասնագիտական համապատասխանության ստուգման և որակավորման կարգը» կանոնակարգ 3/01

## ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԳՈՐԾԱԿԱԼԻ ՀԱՇՎԱՌՄԱՆ ՎԿԱՅԱԿԱՆԻ ՁԵՎ

<table>
<tr>
<td>ՀԱՅԱՍՏԱՆԻ<br>ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ<br>ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ<br>ԲԱՆԿ<br><br><u>ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԳՈՐԾԱԿԱԼԻ ՀԱՇՎԱՌՄԱՆ ՎԿԱՅԱԿԱՆ</u><br><br>Ք. ԵՐԵՎԱՆ</td>
<td><u>Գրանցված է</u><br>ՀՀ կենտրոնական բանկի նախագահի<br>_____ թվականի թիվ ____ որոշմամբ<br><br><u>ՀԱՇՎԱՌՄԱՆ ՎԿԱՅԱԿԱՆ</u> թիվ ---<br><br>Համաձայն «Ապահովագրության և ապահովագրական գործունեության մասին» և «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների՝ սույն վկայականը տրվում է<br><br>______________________________________________<br>(իրավաբանական անձի համար՝ անվանումը և կազմակերպական-իրավական ձևը ՀՎՀՀ, գործունեության հասցեն, անհատ ձեռնարկատիրոջ և ֆիզիկական անձի համար՝ անուն, ազգանուն, հայրանունը, սոցիալական քարտի համարը, իսկ սոցիալական քարտ ստանալուց հրաժարվելու դեպքում՝ սոցիալական քարտ ստանալուց հրաժարվելու մասին տեղեկանքի համարը և ամսաթիվը, գործունեության կամ գրանցման հասցեն)<br><br>____________________________________ապահովագրական գործակալին, առ այն, որ նա հաշվառված է Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի՝ ապահովագրական միջնորդների ռեգիստրում:<br><br>Հաշվառման համարը __________________________<br><br>Հաշվառման ամսաթիվ, ամիս, տարեթիվ _________<br><br>Հայաստանի Հանրապետության<br>կենտրոնական բանկի նախագահ ____________<br><br>……………… …... ……. 200 ... թ.<br><br>Կ.Տ.</td>
</tr>
</table>

(Հավելված 7դ-ն լրաց. 26.10.10թ. թիվ 281Ն)

## ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ (ՎԵՐԱԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ) ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՂԵԿԱՎԱՐԻ, ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՄԻՋՆՈՐԴԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ ԱՆՁԻ ՈՐԱԿԱՎՈՐՄԱՆ ՎԿԱՅԱԿԱՆԻ ՁԵՎ

**Վ Կ Ա Յ Ա Կ Ա Ն N.**

Սույն վկայականը տրվում է

______________________________ -ին ____________________

*Անուն, ազգանուն* *անձը հաստատող փաստաթղթի տվյալներ*

ապահովագրական____________________________________________

*պաշտոնի կամ պաշտոնների անվանումը*

պաշտոնում (պաշտոնններում) աշխատելու համար:

Սույն վկայականն ուժի մեջ է մինչև «____» ________________ 20 թ.:

Հայաստանի Հանրապետության
կենտրոնական բանկի նախագահ՝ ____________________

«________» ________________ 20 թ.:

(Հավելված 8-ը խմբ. 01.12.09թ. թիվ 360Ն)

# ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԵՐԵՔ ՏԱՐՎԱ ԳՈՐԾԱՐԱՐ ԾՐԱԳՐԻ ՁԵՎԸ

## ԲԱԺԻՆ I. ՆԱԽԱԲԱՆ

(3-5 էջ)

### ԳԼՈՒԽ 1. ՆԵՐԱԾԱԿԱՆ ԽՈՍՔ

(1-2 էջ)

Ներկայացվում է ապահովագրական ընկերության կառավարման մարմնի դիրքորոշումը նախորդ մեկ տարում ապահովագրական ընկերության փաստացի (բացառությամբ` ապահովագրական ընկերության ստեղծման լիցենզիա ստանալու համար դիմում ներկայացնող կազմակերպության) և պլանավորվող ժամանակաշրջանում հնարավոր զարգացումների ու ապահովագրական ընկերության ընդհանուր ռազմավարության վերաբերյալ:

### ԳԼՈՒԽ 2. ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՆԿԱՐԱԳԻՐԸ

(1,5-2 էջ)

Ներկայացվում են ապահովագրական ընկերության մասին ընդհանուր տեղեկություններ, այդ թվում` ապահովագրական ընկերության հիմնադրման ամսաթիվը (բացառությամբ` լիցենզիա ստանալու համար դիմում ներկայացնող կազմակերպության), կազմակերպական-իրավական ձևը, մասնաճյուղերի թիվը և աշխարհագրական տեղաբաշխումը, ապահովագրական ընկերության հայեցողությամբ` այլ տեղեկատվություն:

Ներկայացվում է ապահովագրական ընկերության կառուցվածքը սխեմատիկորեն (1 էջ):

**(Գլուխ 2-ը լրաց. 20.12.11թ. թիվ 355Ն)**

### ԳԼՈՒԽ 3. ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԱՐԱՐ ԾՐԱԳՐԻ ՄՇԱԿՄԱՆ ՀԻՄՆԱԴՐՈՒՅԹՆԵՐԸ

(0,5-1 էջ)

Ներկայացվում են ապահովագրական ընկերության գործարար ծրագրի (այսուհետև` ծրագիր) մշակման հիմքում դրված հիմնական ենթադրությունները, մշակող անձի կամ մշակման աշխատանքները կոորդինացնող անձի վերաբերյալ տվյալները (զբաղեցրած պաշտոնը և հեռախոսի համարը):

## ԲԱԺԻՆ I I. ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

(2-4 էջ)

### ԳԼՈՒԽ 4. ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԱՌԱՔԵԼՈՒԹՅՈՒՆԸ

( 0.5 էջ)

Ներկայացվում է ապահովագրական ընկերության առաքելությունը` հեռանկարային նպատակը, որի համար գոյություն ունի ապահովագրական ընկերությունը: Առաքելությունը պետք է արտացոլի ապահովագրական ընկերության` երկարաժամկետ կտրվածքով դերը, տեղը և առանձնահատկություններն ապահովագրական շուկայում:

## ԳԼՈՒԽ 5. ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ

( 0,5-1 էջ)

1. Նշվում են ապահովագրական ընկերության կողմից ընդունված միջնաժամկետ նպատակներն ըստ առաջնահերթության: Նպատակները կարող են լինել և՛ քանակական, և՛ որակական, և՛ ընդհանրական, սակայն իրատեսական և դրանց կատարման արդյունքների տեսանկյունից՝ գնահատելի (չափելի): Նպատակները պետք է արտացոլեն ապահովագրական ընկերության միջնաժամկետ կտրվածքով դերը և տեղը, ինչպես նաև նրա առանձնահատկություններն ապահովագրական շուկայում:

2. Ներկայացվում է սույն գլխում նշված նպատակների ընտրության հիմնավորումը: Եթե սույն գլխի 1-ին կետում նշված նպատակները վերանայվել են, ապա անհրաժեշտ է ներկայացնել դրանց վերանայման պատճառներն ու հիմնավորումը, եթե չեն վերանայվել՝ նպատակների՝ նույնը մնալու հիմնավորումը (բացառությամբ՝ ապահովագրական ընկերության ստեղծման լիցենզիա ստանալու համար դիմում ներկայացնող կազմակերպության):

## ԳԼՈՒԽ 6. ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐԸ

( 0,5-1 էջ)

Հակիրճ նկարագրվում են այն սկզբունքները, որոնցով առաջնորդվում է ապահովագրական ընկերությունն իր քաղաքականությունն իրականացնելիս, այդ թվում՝ քաղաքականությունը հետևյալ ոլորտներում՝

1. հաճախորդների (ապահովադիրների, ապահովագրված անձանց, շահառուների) և գործընկերների (ապահովագրական միջնորդների (բրոքերների, գործակալների), վերաապահովագրողների) հետ հարաբերություններում,

2. ապահովագրական ընկերության ղեկավարների և աշխատակիցների հետ հարաբերություններում (օրինակ՝ կարող է նկարագրվել, թե ապահովագրական ընկերությունն իր մոտ ինչ գործնական կուլտուրա է նախատեսում ներդնել),

3. ապահովագրական ընկերության ցանկությամբ՝ այլ ոլորտներում:

## ԳԼՈՒԽ 7. ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

( 0,5-1,5 էջ)

Բնութագրվում է ապահովագրական ընկերության կողմից գործառնությունների և ծառայությունների ոլորտը՝ պլանավորվող ժամանակաշրջանի համար: Մասնավորապես՝

1. ապահովագրական ընկերության գործունեության մեջ զգալի ծավալ կազմող ապահովագրության դասերը և (կամ) ենթադասերը,

2. ապահովագրական ծառայությունների շուկայի նպատակային հատվածներն ըստ տնտեսության ոլորտների, տարածաշրջանների,

3. ապահովադիրների հիմնական խմբերն ըստ տարածաշրջանների, ռեզիդենտության, իրավական կարգավիճակի և (կամ) այլ չափանիշների,

4. վերաապահովագրությունը՝ ըստ ապահովագրության դասերի:

# ԲԱԺԻՆ I I I. ԻՐԱՎԻՃԱԿԱՅԻՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

(բացառությամբ՝ ապահովագրական ընկերության ստեղծման լիցենզիա ստանալու համար դիմում ներկայացնող կազմակերպության)

(6-13 էջ)

## ԳԼՈՒԽ 8. ՆԱԽՈՐԴ ՊԼԱՆԱՅԻՆ ԺԱՄԱՆԱԿԱՇՐՋԱՆԻ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ ԵՎ ԽՆԴԻՐՆԵՐԸ

(1-2 էջ)

Ներկայացվում են`

1. նախորդ պլանային ժամանակաշրջանի նպատակներն ըստ առաջնահերթության,
2. նախորդ պլանային ժամանակաշրջանի խնդիրներն ըստ առաջնահերթության:

## ԳԼՈՒԽ 9. ՆԱԽՈՐԴ ՊԼԱՆԱՅԻՆ ԺԱՄԱՆԱԿԱՇՐՋԱՆԻ ԽՆԴԻՐՆԵՐԻ ԿԱՏԱՐՈՂԱԿԱՆԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

1. Ներկայացվում է նախորդ պլանային ժամանակաշրջանի (նախորդ մեկ տարվա) խնդիրների կատարման ընթացքը, բացահայտվում են խնդիրների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման հիմնական պատճառները (1-3 էջ):

2. Վերլուծվում է (2-5 էջ) ապահովագրական ընկերության գործունեությունը և դրա վրա նախորդ մեկ տարվա ընթացքում ապահովագրական ընկերության ներքին միջավայրում տեղի ունեցած երևույթների ազդեցությունը, նախորդ մեկ տարվա կանխատեսումների և փաստացի ցուցանիշների (տվյալ տարվա հունվարի 1-ի դրությամբ) շեղումների (եթե շեղումը կազմում է կանխատեսված ցուցանիշի 10% և ավելին) պատճառները, նախատեսված և փաստացի չկատարված միջոցառումների պատճառները հետևյալ կտրվածքով`

ա) ապահովագրական ընկերության կապիտալիզացումը.

բ) ապահովագրավճարների հավաքագրումը, սակագնային քաղաքականությունը.

գ) միջոցների (տեխնիկական պահուստներին համարժեք ակտիվների) տեղաբաշխումը, ներդրումային գործունեությունը.

դ) վերաապահովագրությունը.

ե) ապահովագրական ընկերության շահութաբերությունը, եկամուտները և ծախսերը.

զ) ապահովադիրների քանակը, վերջիններիս փոփոխության դինամիկան.

է) ապահովագրական ընկերության կառավարման համակարգը.

ը) մասնաճյուղերի տեղաբաշխումը.

թ) կադրային քաղաքականությունը. աշխատակիցների թիվը և որակավորումը, աշխատակիցների նկատմամբ որակավորման պահանջները, դրանց փոփոխությունը, աշխատանքի խրախուսման մեխանիզմները.

ժ) նորամուծություններ (ապահովագրության դասերում և ենթադասերում դրանց մատուցման մեխանիզմներում և այլն).

ժա) շուկայավարման քաղաքականությունը:

3. Վերլուծվում են (1-2 էջ) նախորդ մեկ տարվա ընթացքում արտաքին միջավայրում տեղի ունեցած երևույթների ազդեցությունը ապահովագրական ընկերության քաղաքականության և նրա գործունեության արդյունքների վրա` ըստ հետևյալ ազդեցության ոլորտների`

ա) միջազգային շուկաներում.

բ) Հայաստանի Հանրապետության տնտեսությունում.

գ) Հայաստանի Հանրապետության ֆինանսական հատվածում` մանրամասնելով մրցակիցների վարքագծի ազդեցությունը.

դ) օրենսդրական (Հայաստանի Հանրապետության օրենքների, Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի կողմից ընդունված իրավական ակտերի և պետական այլ մարմինների կողմից ընդունված իրավական ակտերի) դաշտում:

## ԳԼՈՒԽ 10. ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՈՒԺԵՂ ԵՎ ԹՈՒՅԼ ԿՈՂՄԵՐԸ

(1 էջ)

Գլուխ 9-ում կատարված վերլուծությունից վեր են հանվում և ամփոփ ներկայացվում են ապահովագրական ընկերության ուժեղ և թույլ կողմերը, որոնք դրական կամ բացասական են ազդել նախորդ ժամանակաշրջանի խնդիրների կատարման ընթացքի վրա:

## ԲԱԺԻՆ IV. ԱՐՏԱՔԻՆ ՄԻՋԱՎԱՅՐԻ ԿԱՆԽԱՏԵՍՈՒՄ

(2-4 էջ)

## ԳԼՈՒԽ 11. ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԱՐՏԱՔԻՆ ՄԻՋԱՎԱՅՐՈՒՄ ՀՆԱՐԱՎՈՐ ԵՐԵՎՈՒՅԹՆԵՐԻ ԿԱՆԽԱՏԵՍՈՒՄ

(1,5-3 էջ)

1. Նկարագրել ապահովագրական ընկերության արտաքին միջավայրում ապահովագրական ընկերության կողմից կանխատեսվող հիմնական այն երևույթները, փոփոխությունները և դրանց հետ կապված ռիսկերը, որոնց հետ ապահովագրական ընկերությունը կարող է բախվել պլանավորվող ժամանակաշրջանում: Մասնավորապես՝

ա) միջազգային շուկաներում. նկարագրել միջազգային շուկաներում տեղի ունեցող իրադարձությունները, որոնք կարող են ազդել ապահովագրական ընկերության գործունեության վրա: Նկարագրելիս կարող են օգտագործվել ապահովագրական ընկերության ռիսկերը վերաապահովագրող երկրներում ֆինանսական, մասնավորապես ապահովագրական շուկան կանխորոշող ցուցանիշները (ապահովագրական սակագների փոփոխության դինամիկա, արժեթղթերի գնի ինդեքս և այլն):

բ) Ներքին տնտեսությունում. նկարագրել Հայաստանի Հանրապետության տնտեսությունում տեղի ունեցող քաղաքական և տնտեսական իրադարձությունները, որոնք կարող են ազդել ապահովագրական ընկերության գործունեության վրա: Նկարագրելիս կարող են օգտագործվել Հայաստանի Հանրապետության մակրոտնտեսական և այլ ցուցանիշներ:

գ) Ապահովագրական շուկաներում. նկարագրվում են Հայաստանի Հանրապետության ապահովագրական հատվածում տեղի ունեցող երևույթների վերաբերյալ սպասումները և դրանց հնարավոր ազդեցությունը ապահովագրական ընկերության գործունեության վրա, այդ թվում՝

- նպատակային հատվածներում ապահովագրական ընկերության մրցակցային դիրքի վրա ազդեցությունը (հիմնական մրցակիցները, նրանց նկարագիրն ու գնահատականը, մասնաբաժինները, ուժեղ և թույլ կողմերը, հնարավոր վարքագծերը և այլն),
- ապահովագրության համակարգում ներդրված կամ ներդրվող նոր ինստիտուտների (օրինակ՝ պարտադիր ապահովագրության դասեր, ապահովագրության նոր մեխանիզմների, ակտուարի ինստիտուտի ներդրում և այլն) ազդեցությունը.

դ) վերաապահովագրության ոլորտում:

ե) Օրենսդրական (Հայաստանի Հանրապետության օրենքների, Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի կողմից ընդունված իրավական ակտերի և պետական այլ մարմինների կողմից ընդունված իրավական ակտերի) դաշտում:

2. Վերլուծությունը կատարել միայն վերոհիշյալ ոլորտներում ապահովագրական ընկերության կողմից կանխատեսվող փոփոխությունները, երևույթները ապահովագրական ընկերության գործունեության վրա ազդեցության տեսանկյունից՝ դիտարկելով դրանք որպես ապահովագրական ընկերության գործունեության զարգացման հնարավորություններ կամ խոչընդոտներ, ռիսկեր, սպառնալիքներ: Խուսափել խիստ վերացական արտահայտություններից: Խուսափել երևույթներ նկարագրելուց՝ առանց ներկայացնելու ապահովագրական ընկերության վրա դրա հնարավոր ազդեցությունը: Եթե նշված ոլորտներից որևէ մեկում զարգացումներն ապահովագրական ընկերության գնահատականներով չեն ազդելու նրա գործունեության վրա (օրինակ՝ միջազգային շուկաներում տեղի ունեցող երևույթները), ապա հակիրճ նշել դրա պատճառները:

## ԳԼՈՒԽ 12. ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԱՐՏԱՔԻՆ ՄԻՋԱՎԱՅՐՈՒՄ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ՍՊԱՌՆԱԼԻՔՆԵՐ

(0,5-1 էջ)

Գլուխ 11-ում կատարված վերլուծությունից վեր հանել և ամփոփ ներկայացնել արտաքին միջավայրում կանխատեսվող երևույթները որպես ապահովագրական ընկերության համար հետագա զարգացման հնարավորություններ և զարգացմանը խոչընդոտող սպառնալիքներ, վտանգներ, ռիսկեր:

## «ԲԱԺԻՆ V.1 ՎԵՐԱԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ԾՐԱԳԻՐ

(այս բաժինը ներկայացվում է միայն առաջիկա մեկ տարվա համար)

(14 – 30 էջ)

### ԳԼՈՒԽ 12.1. ՎԵՐԱԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

(0,5 - 1 էջ)

Սույն բաժնում ներկայացվում է ապահովագրական ընկերության ռազմավարությունը վերաապահովագրության ոլորտում, ինչպես նաև նախորդ տարվա համեմատ վերջինիս փոփոխության կամ անփոփոխ մնալու հիմնավորումները:

### ԳԼՈՒԽ 12.2. ՍԵՓԱԿԱՆ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅԱՆ ԱՌԱՎԵԼԱԳՈՒՅՆ ՉԱՓԻ ՀԱՇՎԱՐԿ

(5 - 11 էջ)

Ներկայացվում են ապահովագրության յուրաքանչյուր դասի (և/կամ ենթադասի) գծով սեփական մասնակցության առավելագույն չափի հաշվարկը՝ մանրամասն մեթոդաբանությամբ, ինչպես նաև հաշվարկման ժամանակ կիրառված վիճակագրական տվյալների աղբյուրները: Սույն գլխով սահմանված հաշվարկները կատարելիս ապահովագրական ընկերությունը պետք է հաշվի առնի «Ապահովագրության և ապահովագրական գործունեության մասին» ՀՀ օրենքի 76-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված պահանջները: Բացի այդ, սույն գլխում ներկայացված հաշվարկները պետք է բավարարեն հետևյալ սկզբունքներին.

1) հաշվարկները պետք է կատարվեն ակտուարական մեթոդներին համապատասխան,
2) հաշվարկի ժամանակ կատարված ենթադրությունները, շեղումներով պայմանավորված ճշգրտումները պետք է հիմնվեն խելամիտ և հիմնավոր դատողությունների վրա,
3) հաշվարկի ժամանակ կիրառված վիճակագրական տվյալները պետք է լինեն արժանահավատ,
4) հաշվարկի արդյունքում ստացված սեփական մասնակցության առավելագույն չափերի արդյունքում ապահովագրական ընկերությունը հաշվետու տարում չպետք է խախտի հիմնական տնտեսական նորմատիվների սահմանաչափերը, ինչպես նաև ապահովագրական ընկերության խորհրդի կողմից հաստատված այլ ներքին սահմանաչափերը (առկայության դեպքում):

### ԳԼՈՒԽ 12.3. ՎՆԱՍԻ ԱՌԱՋԱՑՄԱՆ ՀԱՎԱՆԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՈՒՄ

(2- 3 էջ)

Այս գլխում ներկայացվում են ապահովագրական առանձին ռիսկերի (ապահովագրական պատահարների) գծով վնասի առաջացման հավանականության գնահատման չափանիշներն ու կարգը:

## ԳԼՈՒԽ 12.4. ՎԵՐԱԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ՁԵՎԵՐԸ, ՏԵՍԱԿՆԵՐԸ, ԵՆԹԱՏԵՍԱԿՆԵՐԸ

(3 - 7 էջ)

Ներկայացվում են վերաապահովագրության ձևերի, տեսակների, ենթատեսակների ընտրության չափանիշները և/կամ մեթոդները, ինչպես նաև հաշվետու տարվա համար կատարված ընտրության արդյունքները: Ընդ որում, վերաապահովագրության յուրաքանչյուր ձև, տեսակ կամ ենթատեսակ նշելիս անհրաժեշտ է հակիրճ սահմանել դրանց էությունը և նկարագրել դրանց առանձնահատկությունները:

Այս գլուխը ներկայացվում է միայն այն դեպքում, երբ ապահովագրական ընկերությունը սույն գործարար ծրագրի համաձայն նախատեսում է վերաապահովագրության իրականացում:

**(Գլուխ 12.4-ը փոխ. 20.12.11թ. թիվ 355Ն)**

## ԳԼՈՒԽ 12.5. ՎԵՐԱԱՊԱՀՈՎԱԳՈՂՆԵՐԻ ԸՆՏՐՈՒԹՅԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ

(1- 4 էջ)

Ներկայացվում են ապահովագրական ընկերության կողմից վերաապահովագրողների ընտրության չափանիշները, ինչպես նաև վերաապահովագրողների ֆինանսական վիճակի (հուսալիության) գնահատման մեթոդները:

Այս գլուխը ներկայացվում է միայն այն դեպքում, երբ ապահովագրական ընկերությունը սույն գործարար ծրագրի համաձայն նախատեսում է վերաապահովագրության իրականացում:

## ԳԼՈՒԽ 12.6. ԱՌԱՎԵԼԱԳՈՒՅՆ ԾԱԾԿՈՒՅԹԻ ԱՂՅՈՒՍԱԿ

(2- 4 էջ)

Առավելագույն ծածկույթի աղյուսակը ներառում է սույն բաժնում սահմանված հաշվարկների հիման վրա ապահովագրության յուրաքանչյուր դասի (և/կամ ենթադասի) գծով կազմված սեփական մասնակցության առավելագույն չափերը: Առավելագույն ծածկույթի աղյուսակը ներկայացվում է սույն ծրագրի 16-րդ գլխի 1.6-րդ կետի համաձայն: Ընդ որում, այս գլխում մանրամասն ներկայացվում են, թե սույն հավելվածի աղյուսակ 6-ի համաձայն ներկայացված սեփական մասնակցության առավելագույն չափերից յուրաքանչյուրն ինչ ցուցանիշի նկատմամբ է հաշվարկված (օրինակ՝ ապահովագրական գումար, ապահովագրական հատուցում, վնասաբերության ցուցանիշ և այլն): Եթե նույն դասի (և/կամ ենթադասի) գծով հաշվարկված սեփական մասնակցության առավելագույն չափը հաշվարկվել է տարբեր ցուցանիշների նկատմամբ, ապա այուսակում դրանք արտացոլվում են առանձին տողերով:

**(Բաժին V.1-ը լրաց. 01.12.09թ. թիվ 360Ն)**

# ԲԱԺԻՆ V. ՀԵՌԱՆԿԱՐԱՅԻՆ ԶԱՐԳԱՑՈՒՄ

(4-7 էջ)

## ԳԼՈՒԽ 13. ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ

(1 էջ)

Ներկայացվում են պլանավորվող ժամանակահատվածում իրականացվելիք խնդիրները: Խնդիրները պետք է լինեն խիստ կոնկրետ և դրանց կատարման արդյունքների

տեսանկյունից՝ գնահատելի (չափելի): Բոլոր խնդիրները պետք է ուղղված լինեն նպատակներին, բխեն նախորդ ժամանակաշրջանի խնդիրների կատարողականից, ապահովագրական ընկերության թույլ և ուժեղ կողմերից, արտաքին հնարավորություններից և վտանգներից:

## ԳԼՈՒԽ 14. ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԻ ԼՈՒԾՄԱՆ ՈՒՂԻՆԵՐԸ

(3-6 էջ)

1. Ներկայացվում են պլանավորվող ժամանակահատվածում իրականացվելիք խնդիրների լուծման նախատեսվող ուղիները, ապահովագրական ընկերության գործունեության կանխատեսվող արդյունքները: Ընտրված ուղիները պետք է համահունչ լինեն ապահովագրական ընկերության կողմից արդեն վերլուծված և ներկայացված ներքին ուժեղ և թույլ կողմերին, արտաքին հնարավորություններին և սպառնալիքներին՝ ներկայացնելով թույլ կողմերից խուսափելու և ուժեղ կողմերի կիրառման հնարավորությունները խնդիրների լուծման մեջ:

2. Պլանավորվող ժամանակաշրջանում խնդիրների լուծման ուղիները ներկայացվում են ապահովագրական ընկերության կողմից գործունեության հետևյալ կողմերով՝ տալով դրանց ընտրության հիմնավորում՝

ա) ապահովագրական ընկերության կապիտալիզացիայի ուղիները (կապիտալիզացիայի անհրաժեշտ և բավարար մակարդակի ապահովման համար իրականացվելիք միջոցառումների նկարագրությունը և դրանց իրատեսության հիմնավորումը, արտաքին աղբյուրներ, ներքին աղբյուրներ).

բ) ապահովագրավճարների հավաքագրման (սակագնային) քաղաքականությունը. պարտավորությունների կանխատեսվող ծավալը և կառուցվածքը (ժամկետայնություն, սակագներ և այլն), միջոցառումները՝ ուղղված շուկայի այդ հատվածների և ապահովադիրների տարբեր խմբերի գրավմանը.

գ) միջոցների (պահուստներին համարժեք ակտիվների) տեղաբաշխման քաղաքականությունը. միջոցների տեղաբաշխման համար ֆինանսական շուկայի ընտրվող հատվածները (տեղաբաշխվող միջոցների կառուցվածքը և պայմանները (ժամկետայնություն, տոկոսադրույք և այլն))՝

- ակտիվների կանխատեսվող ծավալի և կառուցվածքի հիմնավորումը,
- միջազգային շուկաներում միջոցների տեղաբաշխման նախատեսվող սխեմաները,
- ներդրումային գործունեություն՝ միջոցների տեղաբաշխում տարբեր տեսակի արժեթղթերում և այլն,
- միջոցների տեղաբաշխում այլ ոլորտներում.

դ) ապահովագրական ընկերության գործունեության կանխատեսվող ֆինանսական արդյունքները. եկամուտների և ծախսերի կանխատեսվող կառուցվածքը, շահույթ, շահութաբերության ցուցանիշների կանխատեսվող մակարդակները և դրանց հիմնավորումը, շահաբաժինների վճարման քաղաքականություն.

ե) ապահովագրական ընկերության կառավարման համակարգի կատարելագործման ուղիները.

- կառուցվածք, համակարգեր, մեխանիզմներ, գործառույթների բաժանում,
- ներքին հսկողության համակարգի կատարելագործման հեռանկարներ,
- ռիսկերի կառավարման քաղաքականությունը. ապահովագրական ընկերության համար պլանավորվող ժամանակաշրջանում առավել կարևոր ռիսկերի ներկայացումը, այդ ռիսկերի գնահատումը և դրանց զսպմանն ուղղված միջոցառումները,

զ) տարածաշրջանային քաղաքականություն (մասնաճյուղերի տեղաբաշխում և վերակազմավորում).

է) կադրային քաղաքականության կատարելագործմանն ուղղված միջոցառումներ՝

- կադրերի ուսուցում և վերապատրաստում (նշել այն մասնագիտացումները, որոնց գծով հաջորդ տարում մեծանալու է որակյալ կադրերի պահանջարկը),
- աշխատանքի արդյունավետության բարձրացման և վարձատրության համակարգերի կատարելագործմանն ուղղված միջոցառումներ.

ը) ապահովագրական ընկերության գործառնությունները և ծառայությունները. ապահովագրության նախատեսված նոր դասերն ու ենթադասերը (ըստ ապահովադիրների, տարածաշրջանների, շուկաների հատվածների, ոլորտների) և միջոցառումները՝ ուղղված դրանց ապահովմանը.

թ) շուկայավարման քաղաքականություն. ի՞նչ շուկայավարման տեխնոլոգիաներ է կիրառելու կամ շեշտադրելու ապահովագրական ընկերությունը պլանավորված գործունեությունը (ապահովագրության ծավալները ընդլայնելու, նոր ծառայություններ (ապահովագրության դասեր և ենթադասեր) ներդնելու, ծառայությունների որակը բարձրացնելու) ապահովելու, պահանջարկը ուսումնասիրելու ուղղությամբ:

## ԲԱԺԻՆ VI. ԾՐԱԳՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԳՆԱՀԱՏՈՒՄ ԵՎ ՀՍԿՈՂՈՒԹՅՈՒՆ

(6-8 էջ)

### ԳԼՈՒԽ 15. ԾՐԱԳՐԻ ՄՇԱԿՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԸ ԵՎ ԾՐԱԳՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՀՍԿՈՂՈՒԹՅՈՒՆԸ

(1 էջ)

Ներկայացնել, թե ինչ կարգով է կատարվում ծրագրի մշակման գործընթացը, ով է կատարում ծրագրի կատարողականի գնահատումը, կատարման հսկողությունը, ինչ գործընթացով է դա իրականացվում:

### ԳԼՈՒԽ 16. ԾՐԱԳՐԻՆ ԿԻՑ ԱՂՅՈՒՍԱԿՆԵՐԸ

(5-7 էջ)

1. Ներկայացնել սույն ծրագրին կից հետևյալ աղյուսակները էլեկտրոնային տարբերակով էքսելի (excel) ֆորմատով Կենտրոնական բանկի կողմից ուղարկված պաշտպանված ֆայլերով՝

*1.1) ապահովագրական ընկերության կանխատեսվող հաշվեկշիռը՝ համաձայն սույն հավելվածի աղյուսակ 1-ի,*

*1.2) ապահովագրական ընկերության եկամուտների և ծախսերի կանխատեսումը՝ համաձայն սույն հավելվածի աղյուսակ 2-ի,*

Ընդ որում, աղյուսակ 2-ում ապահովագրավճարների (վերաապահովագրավճարների) մեծություններն արտացոլելիս նվազեցվում են դադարեցված պայմանագրերի գծով հետ վերադարձվող ապահովագրավճարների (վերաապահովագրավճարների) մեծությունները:

Աղյուսակ 2-ի «Փոփոխություն չվաստակած ապահովագրավճարների պահուստում, այդ թվում՝» տողում արտացոլվում է չվաստակած ապահովագրավճարների պահուստի մեծության փոփոխությունը՝ նվազեցված այդ պահուստում վերաապահովագրողի մասնաբաժնի չափով:

Աղյուսակ 2-ի «Այլ եկամուտներ ապահովագրության գծով» տողում արտացոլվում են զուտ պարգևավճարները վերաապահովագրողներից, սուբրոգացիայի հետևանքով առաջացած պահանջները, ավանդային բաղադրիչի վերագնահատումից եկամուտները, իրական արժեքով վերաչափվող պայմանագրերի, նրանցում ներառված ածանցյալ գործիքների վերագնահատումից եկամուտները , ապահովագրության գծով այլ եկամուտները:

Աղյուսակ 2-ի «Այլ ծախսեր ապահովագրության գծով» տողում արտացոլվում են ապահովագրական գործակալներին տրվող միջնորդավճարների գծով զուտ ծախսերը, վերաապահովագրության փոխանցած ռիսկերի գծով միջնորդներին տրվող միջնորդավճարների գծով զուտ ծախսերը, կարգավորման ծախսերը, զուտ

պարգևավճարները ապահովագրողներին, ավանդային բաղադրիչի վերագնահատումից կորուստները, իրական արժեքով վերաչափվող պայմանագրերի, նրանցում ներառված ածանցյալ գործիքների վերագնահատումից կորուստները, ապահովագրության գծով այլ ծախսերը :

Աղյուսակ 2-ի «Տեխնիկական պահուստների ձևավորման զուտ ծախսեր » և «Տեխնիկական պահուստների հակադարձումից զուտ եկամուտներ» տողերում չեն արտացոլվում չվաստակած ապահովագրավճարների պահուստի և չվաստակած ապահովագրավճարների պահուստում վերաապահովագրողի մասնաբաժնի գծով եկամուտները և ծախսերը:

*1.3) ապահովագրական ընկերության տեխնիկական պահուստներին համարժեք ակտիվների տեղաբաշխման կանխատեսումը՝ համաձայն սույն հավելվածի աղյուսակ 3-ի:*

Ընդ որում, աղյուսակ 3-ում տեխնիկական պահուստներին համարժեք ակտիվների մեծությունը հաշվարկելիս տեխնիկական պահուստները նվազեցվում են տեխնիկական պահուստներում վերաապահովագրողի մասնաբաժնի չափով: Աղյուսակը լրացվում է Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2007 թվականի հոկտեմբերի 2-ի «Ապահովագրական գործունեության հիմնական տնտեսական նորմատիվների չափը, ձևավորման և հաշվարկման կարգը, վերաապահովագրողին չարգելված համարելու չափանիշները» Կանոնակարգ 3/02-ը հաստատելու մասին» թիվ 311 Ն որոշմամբ հաստատված «Ապահովագրական գործունեության հիմնական տնտեսական նորմատիվների չափը, ձևավորման և հաշվարկման կարգը, վերաապահովագրողին չարգելված համարելու չափանիշները» Կանոնակարգ 3/02-ով սահմանված Ն4 նորմատիվի տրամաբանությամբ,

*1.4) ապահովագրական ընկերության ապահովագրական և վերաապահովագրական գումարների կանխատեսումը՝ համաձայն սույն հավելվածի աղյուսակ 4-ի:*

Ընդ որում, աղյուսակ 4-ում լրացվում է հաշվետու ժամանակաշրջանի ընթացքում կնքված և հաշվետու ժամանակաշրջանի ընթացքում դադարեցված ապահովագրության պայմանագրերով նախատեսված ապահովագրական գումարների տարբերությունը և այդ գումարում վերաապահովագրողի մասնաբաժինը

*1.5) ապահովագրական ընկերության կառավարման արդյունավետության ցուցանիշների կանխատեսումը՝ համաձայն սույն հավելվածի աղյուսակ 5-ի,*

*1.6) առավելագույն ծածկույթի աղյուսակը՝ համաձայն սույն հավելվածի աղյուսակ 6-ի:*

*1.7) ապահովագրական ընկերության կապիտալի համարժեքության նորմատիվի կանխատեսումը՝ համաձայն սույն հավելվածի աղյուսակ 7-ի:*

Ընդ որում, աղյուսակ 5-ում կապիտալի համարժեքության նորմատիվին մասնակցող տարրերը, ինչպես նաև նորմատիվի մեծությունը հաշվարկվում է Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2007 թվականի հոկտեմբերի 2-ի «Ապահովագրական գործունեության հիմնական տնտեսական նորմատիվների չափը, ձևավորման և հաշվարկման կարգը, վերաապահովագրողին չարգելված համարելու չափանիշները» Կանոնակարգ 3/02-ը հաստատելու մասին» թիվ 311 Ն որոշմամբ հաստատված «Ապահովագրական գործունեության հիմնական տնտեսական նորմատիվների չափը, ձևավորման և հաշվարկման կարգը, վերաապահովագրողին չարգելված համարելու չափանիշները» Կանոնակարգ 3/02-ով սահմանված կարգով:

(1-ին կետը լրաց. 01.07.08թ. թիվ 188Ն, խմբ., լրաց. 01.12.09թ. թիվ 360Ն, խմբ. 20.12.11թ. թիվ 355Ն)

2. Ծրագրին կից աղյուսակները լրացվում են կիսամյակային կտրվածքով՝ հետևյալ ամսաթվերի դրությամբ (օրինակ, ենթադրենք, ծրագիրը պետք է ներկայացվի Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկ 200X թ. փետրվարի 15-ին)՝

2.1) Փաստացի մեծությունը նախորդ տարվա դեկտեմբերի 31-ի դրությամբ (մեր օրինակում՝ 200(X-1) թ. դեկտեմբերի 31),

2.2) 1-ին պլանավորվող տարվա հուլիսի 1 (մեր օրինակում՝ 200X թ. հուլիսի 1),

2.3) 2-րդ պլանավորվող տարվա հունվարի 1 (մեր օրինակում՝ 200(X+1) թ. հունվարի 1),

2.4) 2-րդ պլանավորվող տարվա հուլիսի 1 (մեր օրինակում՝ 200(X+1) թ. հուլիսի 1),

2.5) 3-րդ պլանավորվող տարվա հունվարի 1 (մեր օրինակում՝ 200(X+2) թ. հունվարի 1),

2.6) 3-րդ պլանավորվող տարվա հուլիսի 1 (մեր օրինակում՝ 200(X+2) թ. հուլիսի 1),

2.7) 4-րդ պլանավորվող տարվա հունվարի 1 (մեր օրինակում՝ 200(X+3) թ. հունվարի 1):

Հավելված 10

(Հավելված 10-ը ուժը կորցրել է 20.12.11թ. թիվ 355 Ն որոշմամբ)

ԴԻՄՈՒՄ
ՈՐԱԿԱՎՈՐՄԱՆ ՔՆՆՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ

Բողոքարկողի անուն, ազգանուն

Բողոքարկողի անձնագրային տվյալներ

Քննության անցկացման օր, ամիս, տարեթիվ

Որակավորման տեսակը

Հեռախոսահամար, էլեկտրոնային փոստի հասցե

Բողոքարկման պատճառ հանդիսացած խնդրահարույց հարցի նկարագրությունը

« » --------- 20  թ. դիմողի ստորագրությունը

**(Հավելված 11-ը լրաց. 01.12.09թ. թիվ 360Ն)**

**ՀԱՎԵԼՎԱԾ 3**

«Ապահովագրության ոլորտում լիցենզավորման, գրանցման, համաձայնության, թույլտվության տրամադրման, մասնագիտական համապատասխանության ստուգման և որակավորման կարգը» կանոնակարգ 3/01

# Միջնորդագիր

## Ղեկավարների (որակավորվող անձի) վերաբերյալ տեղեկություններ

Խնդրում ենք սույն միջնորդագրում նշված անձին գրանցել որպես ղեկավար և կից ներկայացնում ենք նրա վերաբերյալ տեղեկությունները:

| |
|---|
| *Ամրակցեք այստեղ Ձեր լուսանկարը:* |
| ☐ **Այս վանդակում նշում է կատարվում, եթե միջնորդագրում ներկայացվում են միայն փոփոխությունները** |
| **1. Ֆինանսական կազմակերպության վերաբերյալ տվյալները**<br>*(այստեղ նշվում են այն կազմակերպության տվյալները, որի ղեկավար դուք պետք է հանդիսանաք: Ընդ որում՝ սույն միջնորդագրում «ղեկավար» հասկացությունը ներառում է նաև ֆոնդի կառավարչի անունից կամ կազմում ֆոնդի կառավարման գործունեություն իրականացնող ֆիզիկական անձանց, ֆոնդի պահառուի աշխատակցի և ապահովագրական բրոքերների պատասխանատու անձանց:)* |
| 1.1 Ֆինանսական կազմակերպության անվանումը և կոդը(առկայության դեպքում)<br>*(մասնաճյուղերի ղեկավարների համար նշել նաև ֆինանսական կազմակերպության մասնաճյուղի անվանումը և Կենտրոնական բանկի կողմից ֆինանսական կազմակերպությանը տրված կոդը)* |

| |
|---|
| 1.2. Ֆինանսական կազմակերպության տեսակ<br><br>o բանկ<br>o օտարերկրյա բանկի մասնաճյուղ<br>o վարկային կազմակերպություն<br>o ապահովագրկան ընկերություն<br>o օտարերկրյա ապահովագրական ընկերության մասնաճյուղ<br>o ապահովագրական բրոքեր<br>o ներդրումային ընկերություն<br>o օտարերկրյա ներդրումային ընկերության մասնաճյուղ<br>o կարգավորվող շուկայի օպերատոր<br>o Կենտրոնական դեպոզիտարիա<br>o ֆոնդի կառավարիչ<br>o օտարերկրյա ֆոնդի կառավարչի մասնաճյուղ<br>o Բյուրո<br>o Վճարահաշվարկային կազմակերպություն<br>o Դրամական (փողային) փոխանցում իրականացնող կազմակերպություն |
| **2. Անձնական տվյալներ** |
| 2.1 Անուն, ազգանուն, հայրանուն |
| 2.2 Սեռ՝<br>o արական<br>o իգական |
| 2.3 Ծննդյան ամսաթիվ (օր/ամիս/տարի) |
| 2.4 Ծննդավայր |
| 2.5 Քաղաքացիություն |
| 2.6 Անձնագրի համար և սերիա, ում կողմից և երբ է տրված, մինչև երբ է վավեր (առկայության դեպքում լրացվում է նաև հին անձնագրի և գործող այլ անձնագրի համարը և սերիան) |
| 2.7 Հանրային ծառայությունների համարանիշը (սոցիալական ապահովության քարտի համարը) (հանրային ծառայությունների համարանիշ չստանալու վերաբերյալ տեղեկանքի համարը) |
| 2.8 Բնակության վայրը (մշտական և տվյալ պահին) |
| 2.9 Հեռախոսահամար |
| 2.10 Էլեկտրոնային փոստի հասցե |
| 2.11 Նշեք նախկինում Ձեր ունեցած մյուս բոլոր անունները, դրանք կրելու ժամանակաշրջանը,<br><br>Անուն, ազգանուն, հայրանուն<br><br>Կրելու ժամանակաշրջան (օր/ամիս/տարի) |
| **3. Ղեկավար պաշտոն** |

| |
|---|
| 3.1 Ղեկավար պաշտոն, որը Դուք պետք է զբաղեցնեք 1.1 կետում նշված կազմակերպությունում<br>o տնօրենների (դիտորդ) խորհրդի նախագահ (խորհրդի նախագահ)<br>o տնօրենների (դիտորդ) խորհրդի անդամ (խորհրդի անդամ),<br>o գործադիր տնօրեն (վարչության նախագահ, տնօրինության ղեկավար, գործադիր մարմնի ղեկավար)<br>o գործադիր տնօրենի (վարչության նախագահի) տեղակալ<br>o տնօրինության (վարչության, գործադիր մարմնի) անդամ<br>o գլխավոր հաշվապահ<br>o գլխավոր հաշվապահի տեղակալ<br>o ներքին աուդիտի ղեկավար<br>o ներքին աուդիտի անդամ<br>o բանկերի և վարկային կազմակերպությունների կողմից ներդրումային ծառայությունների մատուցման համար պատասխանատու ստորաբաժանման ղեկավար<br>o վերստուգիչ (վերստուգող) հանձնաժողովի նախագահ (ղեկավար)<br>o վերստուգիչ (վերստուգող) հանձնաժողովի նախագահի (ղեկավարի) տեղակալ<br>o վերստուգիչ ( վերստուգող ) հանձնաժողովի անդամ<br>o մասնաճյուղի կառավարիչ (տնօրեն)<br>o մասնաճյուղի գործադիր տնօրեն<br>o մասնաճյուղի գործադիր տնօրենի տեղակալ<br>o մասնաճյուղի գլխավոր հաշվապահ<br>o օպերատորի կարգապահական հանձնաժողովի նախագահ<br>o օպերատորի վերահսկող ծառայության ղեկավար<br>o օպերատորի վերահսկող ծառայության անդամ<br>o ապահովագրական բրոքերի գործառնություններ իրականացնող ֆիզիկական անձ<br>o պատասխանատու ակտուար<br>o ֆոնդի կառավարչի անունից կամ կազմում ֆոնդի կառավարման գործունեություն իրականացնող ֆիզիկական անձ<br>o ֆոնդի պահառուի ղեկավար<br>o ֆոնդի պահառուի աշխատակից<br>o բանկի ներքին դիտարկումների մարմնի աշխատող |
| **3.2 (3.2 ենթակետը ուժը կորցրել է 25.12.12թ. թիվ 372Ն)** |
| 3.3 Մանրամասնորեն նկարագրեք Ձեր իրավասություններն ու պատասխանատվության ոլորտները որպես ղեկավար. |
| 3.4 Եթե հանդիսանում եք բանկի ներքին դիտարկումների մարմնի աշխատակից, նշեք ստորաբաժանման և պաշտոնի անվանումը |
| 3.5. Նշեք նշված պաշտոնում Ձեր պաշտոնավարման սկիզբը, ըստ իրավասու կառավարման մարմնի որոշման (օր/ամիս/տարի) |
| **4.Կրթություն, որակավորում, աշխատանքային գործունեություն** |

4.1

| *Ուսումնական հաստատության անվանումը* | *Գտնվելու վայրը* | *Սովորելու ժամանակաշրջանը(--թ.ից մինչև --թ.)* | *Ֆակուլտետը* | *Մասնագիտությունը* | *Գիտական աստիճանը* |
|---|---|---|---|---|---|
| | | | | | |
| | | | | | |
| | | | | | |
| | | | | | |

4.2 Ի՞նչ լեզուների եք տիրապետում

- հայերեն
- անգլերեն
- ռուսերեն
- այլ *(նշել լեզուն)*

4.3 Նշել վերջին 10 տարվա ընթացքում աշխատանքային գործունեության վերաբերյալ հետևյալ տվյալները. (ընդ որում, պետք է նշել փաստացի աշխատանքային գործունեության վերաբերյալ տվյալները՝ անկախ դրանց՝ աշխատանքային գրքույկում ներառված լինելու կամ չլինելու հանգամանքից)

| *Աշխատանքի ընդունման և ազատման ժամկետներ* | *Կազմակերպության անվանում* | *Գտնվելու վայր* | *Հեռախոսահամար* | *Պաշտոնը, հիմնական պարտականությունները* | *Ազատման հիմքերը* |
|---|---|---|---|---|---|
| | | | | | |
| | | | | | |
| | | | | | |

4.4 Նշեք Ձեզ անձամբ ճանաչող 3 անձանց վերաբերյալ տվյալներ (ներկայացման պահի դրությամբ), որոնք անհրաժեշտության դեպքում կարող են տրամադրել երաշխավորություն Ձեր անձի վերաբերյալ, ընդ որում, այդ անձանցից մեկը պետք է լինի Ձեր վերջին աշխատատեղից (ընդ որում, վերջին աշխատատեղ համարվում է նախորդ կազմակերպությունը, որտեղ Դուք աշխատել եք), իսկ մյուս երկուսը չպետք է լինեն այն կազմակերպությունից, որտեղ նախատեսում եք անցնել աշխատանքի, բայց աշխատում են կամ աշխատել են ֆինանսական համակարգում: Եթե այդպիսի անձը (անձինք) բացակայում է, ապա այլ նշումներ տողում նշեք երաշխավորություն տրամադրող աձի (անձանց) բացակայության վերաբերյալ

| *Անուն, ազգանունը* | *Աշխատանքի վայրը* | *Պաշտոնը* | *Բնակության վայրը* | *Ֆինանսական համակարգում աշխատանքային փարիները* | *Հեռախոսահամար, էլ. փոստի հասցեն* |
|---|---|---|---|---|---|
| | | | | | |
| | | | | | |
| | | | | | |

Այլ նշումներ (այս տողը լրացվում է երաշխավորություն տրամադրող անձի (անձանց)) բացակայության դեպքում)

**5. Ղեկավարների վերաբերյալ տեղեկություններ**

5.1 Արդյո՞ք Դուք օրենքով սահմանված կարգով ճանաչվել եք անգործունակ կամ սահմանափակ գործունակ

- o Ոչ,
- o Այո, ներկայացնել մանրամասներ

5.2 Արդյո՞ք Դուք ունեցել եք դատվածություն դիտավորությամբ կատարված հանցագործությունների համար

- o Ոչ,
- o Այո, (ներկայացնել մանրամասներ, այդ թվում դատվածությունը օրենքով սահմանված կարգով հանված կամ մարված լինելու վերաբերյալ)

5.3 Արդյո՞ք դատարանի կողմից Դուք զրկված եք ֆինանսական, ապահովագրական, բանկային, հարկային, մաքսային, առևտրային, տնտեսական, իրավական ոլորտներում պաշտոններ վարելու իրավունքից

- o Ոչ,
- o Այո, ներկայացնել մանրամասներ

| |
|---|
| 5.4 Արդյո՞ք Դուք ճանաչվել եք սնանկ կամ ունեք չմարված (չներված) պարտավորություններ<br><br>o Ոչ,<br>o Այո, ներկայացնել մանրամասներ |
| 5.5 Արդյո՞ք Դուք ՀՀ կամ այլ պետությունների իրավապահ մարմինների կողմից քրեական գործով ներգրավված եք որպես կասկածյալ, մեղադրյալ կամ ամբաստանյալ<br><br>o Ոչ,<br>o Այո, ներկայացնել մանրամասներ |
| 5.6 Արդյո՞ք Դուք ՀՀ քրեական օրենսգրքով կամ այլ պետությունների քրեական օրենսդրությամբ նախատեսված հանցագործության համար ենթարկվել եք քրեական պատասխանատվության<br><br>o Ոչ,<br>o Այո, ներկայացնել մանրամասներ |
| 5.7 Արդյո՞ք ՀՀ տարածքում կամ այլ պետություններում գործող ֆինանսական կազմակերպություններում Ձեր պաշտոնավարման կամ գործունեության ընթացքում ֆինանսական կազմակերպությունը ճանաչվել է անվճարունակ կամ սնանկ, կամ Ձեր գործողությունների կամ անգործության հետևանքով ՀՀ տարածքում գործող ֆինանսական կազմակերպության ֆինանսական վիճակը, համաձայն ՀՀ կենտրոնական բանկի խորհրդի կողմից հաստատված չափանիշների, վատթարացել է:<br><br>o Ոչ,<br>o Այո, ներկայացնել մանրամասներ |
| 5.8 Արդյո՞ք Հայաստանի Հանրապետությունում կամ օտարերկրյա պետությունում գրանցված ֆինանսական կազմակերպությունում Ձեր պաշտոնավարման ընթացքում Ձեր գործողությունների կամ անգործության հետևանքով տվյալ ֆինանսական կազմակերպությունը հայտարարվել է անվճարունակ կամ սնանկ:<br><br>o Ոչ<br>o Այո, ներկայացնել մանրամասներ |
| 5.9 Արդյո՞ք որպես ֆինանսական կազմակերպության ղեկավար Ձեր պաշտոնավարման ընթացքում Ձեր նկատմամբ Կենտրոնական բանկի կամ տվյալ ֆինանսական կազմակերպության կողմից կիրառվել է որևէ պատասխանատվության միջոց վերջին 1 տարվա ընթացքում<br><br>o Ոչ,<br>o Այո, ներկայացնել մանրամասներ |

5.10 Արդյո՞ք Դուք զրկվել եք որակավորման վկայականից 1.2 կետում նշված ֆինանսական կազմակերպության գործունեությունը կարգավորող համապատասխան օրենքով սահմանված կարգով և հիմքերով

- Ոչ,
- Այո, ներկայացնել մանրամասներ (այդ թվում՝ որակավորման վկայականից զրկվելու հիմքերը)

**6.Նշանակալից մասնակցություն և փոխկապակցվածություն**

6.1 Նշեք այն ֆինանսական կազմակերպությունները, ինչպես նաև ոչ ֆինանսական կազմակերպություն հադիսացող հաշվետու թողարկող ընկերությունները, որոնց կանոնադրական հիմնադրամում (կապիտալում) ունեք կամ վերջին 5 տարվա ընթացքում ունեցել եք նշանակալից մասնակցություն

*Մասնակցությունները նշել սկսած ներկայումս առկա ամենախոշորներից*

*(Ընդ որում՝ 6.1-6.3 կետերում հաշվետու թողարկողներին վերաբերող դրույթները լրացվում են միայն ներդրումային ծառայություններ մատուցող անձանց, կարգավորվող շուկայի օպերատորի, Կենտրոնական դեպոզիտարիայի, ֆոնդի պահառուների ղեկավարների, ինչպես նաև ֆոնդի կառավարչի անունից կամ կազմում ֆոնդի կառավարման գործունեություն իրականացնող ֆիզիկական անձանց և ֆոնդի պահառուի աշխատակցի կողմից)*

| *Ֆինանսական կազմակերպության (ոչ ֆինանսական կազմակերպություն հանդիսացող հաշվետու թողարկողի) անվանումը* | *Ժամանակահատվածը (նախկինում ունեցած մասնակցության համար նշել նշանակալից մասնակից լինելու ժամանակահատվածը)* | *Մասնակցության չափը (%),* | *Բաժնետոմսերի քանակը* | *Ընդհանուր գումարը (դրամով)* |
|---|---|---|---|---|
| | | | | |
| | | | | |
| | | | | |

6.2 Իրազեկ լինելու դեպքում նշեք այն ֆինանսական կազմակերպությունները, ինչպես նաև ոչ ֆինանսական կազմակերպություն հադիսացող հաշվետու թողարկող ընկերությունները, որոնց կանոնադրական հիմնադրամում (կապիտալում) Ձեզ հետ փոխկապակցված անձինք ունեն կամ վերջին 5 տարվա ընթացքում ունեցել են նշանակալից մասնակցություն

*Մասնակցությունները նշել սկսած ներկայումս առկա ամենախոշորներից*

| *Ֆինանսական կազմակերպության (ոչ ֆինանսական կազմակերպություն հանդիսացող հաշվեպու թողարկողի) անվանումը* | *Ժամանակահատվածը (նախկինում ունեցած մասնակցության համար նշել նշանակալից մասնակից լինելու ժամանակահատվածը)* | *Մասնակցության չափը (%)* | *Բաժնետոմսերի քանակը* | *Ընդհանուր գումարը (դրամով)* |
|---|---|---|---|---|
| | | | | |
| | | | | |
| | | | | |

6.3 Նշեք Ձեզ հետ փոխկապակցված՝ ֆինանսական համակարգում, ինչպես նաև հաշվետու թողարկող ընկերություններում աշխատող կամ աշխատած անձանց վերաբերյալ հետևյալ տվյալները (եթե այդպիսիք կան)

(*Փոխկապակցվածությունը պետք է դիտարկվի 1.2 կետում նշված ֆինանսական կազմակերպության գործունեությունը կարգավորող համապատասխան օրենքի, հաշվետու թողարկողների դեպքում՝ «Արժեթղթերի շուկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի համաձայն:* Սույն կանոնակարգում ընտանիքի անդամների վերաբերյալ տեղեկությունները լրացվում են միայն ծնողների, ամուսնու, երեխաների, քրոջ և եղբոր (եթե համատեղ տնտեսություն են վարում:)

| *Անուն,ազգ անուն* | *Ժամանակահատվա (նախկինում ֆինանսական համակարգում (հաշվետու թողարկող ընկերություններում) աշխատած անձանց համար նշել համապատասխան ֆինանսական կազմակերպությունում (հաշվետու թողարկող ընկերություններում) աշխատելու ժամանակահատվածը* | *Անձնա գրի համար* | *Փոխկապա կցվածությա ն ձև* | *Աշխատանքի վայր* | *Պաշտո ն* | *Հեռախոսա համար* |
|---|---|---|---|---|---|---|
| | | | | | | |
| | | | | | | |
| | | | | | | |

**7.Դրամային (կամ այլ) պարտավորություններ**

7.1 Արդյո՞ք Դուք ունեք դրամային (կամ այլ) պարտավորություններ այն ֆինանսական կազմակերպության նկատմամբ, որի ղեկավար պետք է հանդիսանաք

- o Ոչ ,
- o Այո, ներկայացնել մանրամասներ (գումար, ժամկետ, այլ)

7.2 Արդյո՞ք Ձեզ հետ փոխկապակցված անձինք ունեն դրամային (կամ այլ) պարտավորություններ այն ֆինանսական կազմակերպության նկատմամբ, որի ղեկավար պետք է հանդիսանաք (պատասխանել իրազեկ լինելու դեպքում)

- o Ոչ ,
- o Այո, ներկայացնել մանրամասներ (գումար, ժամկետ, այլ)

7.3 Արդյո՞ք Դուք ունեք կամ ունեցել եք ՀՀ տարածքում գործող ֆինանսական կազմակերպությունների հանդեպ ժամկետանց պարտավորություններ

- Ոչ,
- Այո, ներկայացնել մանրամասներ (ֆինանսական կազմակերպության անվանումը, գումար, ժամկետ, այլ)

7.4. Արդյո՞ք Ձեզ հետ փոխկապակցված անձինք ունեն կամ ունեցել են ՀՀ տարածքում գործող ֆինանսական կազմակերպությունների հանդեպ ժամկետանց պարտավորություններ (պատասխանել իրազեկ լինելու դեպքում)

- Ոչ ,
- Այո, ներկայացնել մանրամասներ (գումար, ժամկետ, այլ)

**8.Այլ տեղեկատվություն**

8.1 Այս մասում նշվում է Ձեզ հետ փոխկապակցված ֆիզիկական անձանց վերաբերյալ հետևյալ տվյալները, (բացառությամբ 6.3 կետում նշված անձանց)

| *Անուն, ազգանուն* | *Անձնագրի համար* | *Փոխկապակցվածության ձև* | *Աշխատանքի վայր* | *Պաշտոն* | *Բնակության վայր* | *Հեռախոսահամար* |
|---|---|---|---|---|---|---|
| | | | | | | |
| | | | | | | |
| | | | | | | |

8.2 Նշեք Ձեզ հետ փոխկապակցված իրավաբանական անձանց վերաբերյալ հետևյալ տվյալները.

| *Կազմակերպության անվանում* | *Գտնվելու վայր* | *Փոխկապակցվածության ձև* | *ՀՎՀՀ* | *Հեռախոսահամար* |
|---|---|---|---|---|
| | | | | |
| | | | | |
| | | | | |

**9. Ձեր կարծիքով արդյոք առկա են այլ կարևոր տեղեկություններ,** *որոնք կցանկանայիք նշել*

- Ոչ
- Այո,, ներկայացնել մանրամասները

**10. Այլ փաստաթղթեր**

**10. 1 Այս կետը լրացվում է միայն բանկի խորհրդի անդամների կողմից.**

Ծանոթացել եմ «Խորհրդի անդամների գործունեության ուղեցույց» փաստաթղթի հետ

- o Այո
- o Ոչ

**11. (11-րդ կետը ուժը կորցրել է 25.12.12թ. թիվ 372 Ն որոշմամբ)**

**12.** *Հավաստիացնում եմ, որ*

*ա. սույն փաստաթղթում պարունակվող տեղեկատվությունը արժանահավատ է և ամբողջական,*

*բ. բացակայում են ղեկավարի գրանումը մերժելու համար համապատասխան օրենքներով և կարգերով սահմանված հիմքերը,*

*գ. վերոնշված անձը համապատասխանում է համապատասխան օրենքներով և կարգերով սահմանված պահանջներին*

*Ֆինանսական կազմակերպության կառավարման մարմնի կողմից լիազորված անձի ստորագրություն*

*Ֆինանսական կազմակերպության կառավարման մարմնի կողմից լիազորված անձի անուն, ազգանուն* ----------------------------

*Ամսաթիվ (օր/ ամիս/տարի)* -------------------------------

*Ստորագրություն* --------------------------------

*Գրանցման ներկայացված ղեկավարի ստորագրություն* ---------------------------------

(Հավելված 3-ը խմբ. 01.07.08թ. թիվ 188Ն, խմբ. 10.03.09թ. թիվ 57Ն, լրաց. խմբ. 22.09.09թ. թիվ 278Ն, լրաց., խմբ. 01.12.09թ. թիվ 360Ն, խմբ. 02.05.11թ. թիվ 120Ն, լրաց., խմբ. 20.12.11թ. թիվ 355Ն, փոխ., խմբ. 25.12.12թ. թիվ 372Ն)